

ԱՐԱՔՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

—
1888
—

ԳԻՐԲ Բ

ՄԱՅԻՍ

—
Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՐԻՆՈՒԴՈՎԻ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 іюня 1888 года.

~~~~~  
Типографія И. К. Скорсходова (Надеждинская, 39).

## ԾԱՆՈԹՈՒՄ

Այս հրկրորդ գրքով Արատը կնքում է իր ղեցութեան առաջին տարին:

Թէ Արատը իր բովանդակութեամբ որքան կարող եղաւ իրադրածել այն նպատակը, որին ուղղում է ծառայել, այդ մասին մեզ վայել չէ խօսելու. սակայն կարևոր ենք համարում յիշել, որ Արատի Ա. և Բ. գրքերի հրատարակութեան առիթով մենք այնպիսի խոչընդոտների հանդիպեցանք, որոնք, կարծում ենք, շատ հաղիւ կարող են պատահել ուրիշ հրատարակութիւնների հետ:

Արատի բաժանորդագրութիւնը բանալիս, մենք յայտարարել էինք, որ իւրաքանչիւր գիրքը կըբաղկանայ 12 տպագրական թերթից, այն ինչ մենք առաջին գիրքը թողինք 14<sup>1</sup>/<sub>8</sub>, իսկ հրկրորդ գիրքը 19 թերթից, չհաշուելով մեր հանդիսի 17 նկարներից առանձին թերթերի վրայ տպուած 12 նկարը: Հետևապէս մենք ոչ միայն ճշտութեամբ կատարել ենք մեր խոստումը, բայց դեռ 9<sup>1</sup>/<sub>2</sub> տպագրական թերթ էլ աւելի ենք տուել, որոնք մեզ արժեցին 250 ռուբլուց աւելի:

Պաշտով Արատի նկարների որակիսութեանը՝ պէտք էասենք, որ այս տարուայ ընթացքում մենք աշխատել ենք հայ հասարակութեանը տալ ընտիր նկարներ, որոնց համար չենք խնայել ոչ աշխատանք և ոչ գրամական միջոցներ (Արատի Բ. գրքում Ֆոտոտիպական միայն հրէք նկարները արժեն 131 ռ.):

Մեր հանդիսի Ա. գիրքը մամուլի տակից դուրս գալիս, մենք ունէինք ընդ ամեն 86 բաժանորդ. մի ամսից յետոյ, երբ գրքերը բաժանորդներին ուղարկուեցին՝ ստորագրողոցների թիւը զգալապէս ստուարացաւ, և այժմ Արատի բաժանորդների թիւը յանգում է 438 ի (սոցա թվումն են ապագիկները, որ տեղի ունեցան դէպքերի բերմամբ, և նրւէրները):

Մտադիր լինելով Պետերբուրգից մի երէք ամիս հեռանալու, մենք այժմից անկարող ենք որոշել Բ. տարուայ հրատարակութեան ժամանակը, մանաւանդ որ մտադրութիւն ունենք Արատի արտաքին ձեւը փոփոխելու և ամսական հրատարակութիւն շինելու, եթէ բաժանորդների թիւը աւել-

լանայ: Արաբի Բ. գիրքը, անտարակոյս, լոյս կտեսնէր մայիսի վերջերին, սակայն եղան մի քանի արգելքներ՝ որոնց դէմ մաքառելը մեզ անկարելի էր: Ուշանալու գլխաւոր պատճառն հղաւ «Նիր թագաւորի» շարունակութիւնը, որ 8<sup>1</sup>/<sub>2</sub> թերթ դուրս եկաւ մինչդեռ մենք ենթադրում էինք 5 թերթ: Բացի այս՝ կրքեմն, այլևայլ պատճառներով, մեզ հարկ հղաւ արդէն տպագրուած թերթերը վերստին տպագրել տալ: Այս պատճառներով իսկ, չնայելով մեր բոլոր ցանկութեանը, մեր դրամական յօշոփելի փնտնելին՝ մենք այնու ամենայնիւ անկարող եղանք Արաբի մէջ տպագրելու հետեւեալ լուրջ ու մեծ խնամքով պատրաստուած դրութիւնները, որոնք ի միջի այլոց կամոսն մեր հանդիսի յետագայ գրքերին մէջ:

Պաղթականութեան խնդիր

Հայոց վիճակագրութեան մասին

Արեւմտեան Աւրոպիոյ (ոչ Տաճկահայերի) հայերի մասին  
Աստուածաշնչի խնդիր: Հողային խնդիր ի Արեւիկա.

Աւգոստիական կեանք

Աւգոստիոյ դաւառի ժողովրդեան բարոյական անկեալ  
վիճակը

Ամասիոյ քաղաքի տեղագրութիւնը

Արեւիկոյ ժողովրդի սովորութիւններից, աւանդութիւններից

Հայ համալներ Պոլսում

Յաւերակունս Հռոմիւլայ

Տուրգենեւի Ասեա նորավէպը

Mal d'Orient (Արեւելքի ցաւը), Վեսնի Բէյի գրքի  
վերայ քննադատութիւն


Մի քանի Ֆրանսիական թերթերի հայերի մասին գրած-  
ների առիթով

Պոլսի հայերը և նոցա մամուլը

Պետերբուրգի հայ տպագրութեան պատմութիւնը և ըն:

Խնդրում ենք 130 երեսում վերագրից յետոյ աւելցնել «Տօլստոյից» բաւը,  
որ վերականգնի դուրս է ձգուած:

Ալեք. Պալանջեանց.







Տ. Տ. ՄԱԿԱՐ Ը.

ԾԱՅՐԱԳԱՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՄԵՆԱՆՆԵՆ ՀԵՅՈՑ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

### ՏԱԺԿԱՅԱՅԱՍՏԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Աշտի» առաջին զրքում խօսելով Տաճկահայաստանի ներկայ վիճակի մասին, այն միաքը յայտնեցինք, որ այդ երկիրը միանգամայն կարօտ է օրինաւոր ուսումնասիրութեան: Այժմ մենք դառնում ենք այդ խնդրի երկրորդ կէտին, այն է, թէ ի՞նչ միջոցներով կարելի կ'լինի այդ ուսումնասիրութիւնը:

Ամեն դք գիտէ անշուշտ, որ երկրի ուսումնասիրութեան հարցը այնքան մի դիւրին խնդիր չէ, որ նորան: կարելի լինի իսկոյն մի կարուկ վճիռ տալ ասելով թէ այսպիսի մի միջոցով կարելի է զիտնականապէս ուսումնասիրել երկիրը և թէ ամեն մի երկիր, նայելով նորա աշխարհագրական, քաղաքական, քաղաքակրթական վիճակին, ժողովրդի կեանքին, և այլն, միևնոյն եղանակով չէ կարելի ուսումնասիրել: օրինակ այսօր Տաճկահայաստանի ուսումնասիրութեան խնդրի վճիռը համարեա ամեն մի քայլափոխում, բաղմամբիւ խօչնդոտներ կարող է առաջ բերել այն ինչ որ և է մի եւրոպական երկրի ուսումնասիրութիւնն ազատ կ'լինի այդ արգելափակ չանգամանքներէ:

Ո՞ւր յայտնի չէ, որ մի երկիր, մի ժողովուրդ կարելի է ուսումնասիրել այլ և այլ տեսակէտներէ: օր. անասական, ժողովրդագրական, վիճակագրական, աշխարհագրական, քաղաքական, կրթական, կրօնական, ազգային, ղենուորական երկրաբանական և այսպէս բաղմամբիւ կողմերից. սակայն մասնաւորելով մեր խօսքը Արևելիոյ և ընդհանրապէս Տաճկահայաստանի և տեղի ժողովրդի վերայ, դէթ մեր կարծիքով մեզ հետաքրքրական և կարևոր է այդ ուսումնասիրութիւնն առաւելապէս ազգային—եկեղեցական, կրթական, ընկերական, բա-

բոյական, տնտեսական, վիճակագրական, արդիւնաբերական և տեղագրական կողմերից. օրինակ թէ երկրի այն մասերն, ուր տարւում են հացերը աշխարհագրական ինչ դիրք են ներկայացնում, այդ կողմերի արդիւնաբերութիւնն ի՞նչ վիճակի մէջ է կամ աւելի ի՞նչ արտադրելու յարմարութիւն ունի. կա՞ն արդեօք բնական հարստութիւններ, հանքեր, ի՞նչ ուղիներ ունի երկիրը և ի՞նչ վիճակի մէջ են դառնում նոքա, ի՞նչով են պարպւում կամ ի՞նչ գրութեան մէջ են հայերը. նոցա փոխադարձ յարաբերութիւնները շրջակայ աղբիւրի հետ և նոցա բնաւորութիւնների յատկանիշները և վերջապէս նոցա կրօնափոխութեան, զաղթականութեան պատճառները, և այլն:

Ահա մօտաւորապէս այն խնդիրներն, որոնք անհրաժեշտ է ի նկատի ունենալ, երբ խօսւում են Տաճկահայաստանի ուսումնասիրութեան վերայ. սակայն պարզ է, որ այս բոլորի մասին մի զրքում և այն էլ մի յօդուածում, եթէ ոչ անկարելի, դէթ գծուարին է խօսել. ուստի այս կենսական խնդրի մասին մաս մաս խօսելը թողնելով առաջիկայ գրքերում, մենք այստեղ կ'խօսենք միայն այն միջոցների վերայ, որոնցով ձեռնարկուելու է այս կարևոր գործը:

Անտարակոյս այս խնդիրն ոչ միայն մեզ, այլ նաև տրորող կառավարութեան համար այնքան կարևոր է, որ «Արապ» իր նուիրական պարտականութիւնն է համարում ամեն գրքում պարապելու այս խնդրով, որի համար հանգիսի տեղագրական բաժինը միշտ ընդարձակելու ենք և ճշգրիտ տեղեկութիւնների վերայ յիշուելով՝ նորան այն աստիճան հետաքրքրական ենք դարձնելու, որքան նա կարևոր է ժողովրդի քաղաքաբլթական վերածնութեան համար:

Ուստի այս տեսակետով մենք դառնում ենք մեր խորհրդածութեանը՝ Տաճկահայաստանի ուսումնասիրելու հարցին: Բայց նախ քան խօսենք սորան ձեռնարկելու միջոցների մասին, պէտք է որ մի ընդհանուր հայեաքք՝ ձգենք Փոքր Ասիոյ վիճակի վերայ ընդհանրապէս և Տաճկահայաստանի մասնաւորապէս: Հարկաւոր ենք դառնում ասել, որ մենք մեր առաջարկելի միջոցների մէջ երկրի արտաքին ու ներքին պատկերի մասին, որն արտայայտիչ է իշխող պետութեան վիճակի, լինելու ենք համեստ, քանի որ մեր ցանկութիւնն է դործին



նպաստել և ոչ թէ դրել միայն զրելու համար, առանց կարենալու մեր զրաճն օգտակար դարձնելու:

Փոքր Ասիայի բոլոր բնական հարստութիւններն, աշխարհադրական և ժողովրդադրական կողմերն ընդհանրապէս ներկայումս այնքան անուշադիր են մնացած ուսումնասիրութեան կողմից և այնքան անյայտ, որ դժուար թէ նորա վիճակին ենթակուած դանուկ ուրիշ փոքր ի շատէ մի լուսաւորուած երկիր:

Մենք այստեղ ի հարկէ հաշուի չենք առնում երկրի վիճակի այն ուսումնասիրութիւնն, այն էլ սոսկ զինուորական, անասնական, առևտրական տեսակէտներով, որը կատարվում է Անգղիոյ զործակալների և զանազան պաշտօնեաների ձեռքով, սակայն որը մեծ մասամբ թէ գաղանի է մնում և թէ հասարակութեանն անմատչելի լինելով հանդերձ՝ և շատ միակողմանի է:

Եւ այսպէս չ'նայելով այն բոլոր ճանապարհորդութիւններին, շարադրութիւններին, որոնք ժամանակ առ ժամանակ լոյս են տեսնում զանազան լեզուներով, թէ լրագրութեան մէջ և թէ առանձին գրքերում, Փոքր Ասիոյ վերայ ընդհանրապէս, իսկ Տաճկահայաստանի մասնաւորապէս, դժբաբոյրն էլ մինչև օրս երկրի վիճակն ոչ մի կողմից մեղ կատարելապէս չեն պատկերացնում, մանաւանդ հայ ժողովրդի նկատմամբ, և այդ բոլորը թերի, կիսակատար այս ու այնտեղից ժողոված, լոյս չեն արծարծում և ոչ մի խնդրի վերայ, հետեւապէս այսօր այդ երկրի վիճակը շատ փոքր բացառութեամբ բոլորի համար էլ մի անորոշ պատկեր է ներկայանում. սակայն մի բան, որ ճիշտ է, այդ էլ այդ երկրի թշուառ ու անմխիթար վիճակն է, որին այժմ ականատես ենք և մենք ժամանակակիցներս:

Այսպէս ուրեմն, Տաճկահայաստանի ուսումնասիրութեան հարցով զբաղուելու և նորան բարոյապէս և անաստապէս բարեշրջելու համար, անհրաժեշտ է պատկառելի դժ, մեծ եռանդ, տոկուն կամք և թէ նպատակին հասնելու համար զործին ձեռնարկուելու է հաւաքական մասնագէտ դժերով:

Այս տեսակէտով, այն է, քանի որ երկրի ուսումնասիրութեան համար մինչև այժմ համարեա ոչինչ չէ արած, այլ բոլորը դեռ իր նախնի վիճակի մէջ է դանդաղում, անհրաժեշտ

է կազմել մի ընկերութիւն, որին և յանձնուելու է երկրի ուսումնասիրութեան խնդիրը:

Այս ընկերութիւնն, անտարակոյս, ամենեւին պէտք չէ որ նմանի մեր մի կարգ այն ընկերութիւններին, ուր ով ուզում է անդամ է ընտրվում և ինչպէս ցանկանում դործում է. հետեւապէս երկիրը ուսումնասիրելու նպատակով կազմելիք ընկերութեան վերայ չ'պէտք է նայել թիթե, վերաբերուել նորան հարեանցօրէն, ըստ որում այս ընկերութիւնն ըստ էութեան դիտական ընկերութիւն է լինելու և ընկերութեան անդամներն ու ամբողջ մարմինը լինելու են կրթութիւն առած մարդիկ, մասնագէտներ:

Ուսումնասիրելու նպատակով կազմելիք ընկերութիւնն, անտարակոյս, նախ քան դործի սկսելն, պէտք է ծանօթանայ զոնէ հարեանցի կերպով երկրի ընդհանուր բնական և քաղաքան պատմութեան հետ, որպէս զի ըստ այնմ կազմէ ուսումնասիրութեան ծրագիրը: Ենքն ըստ ինքեան պարզ է, որ ամբողջ երկիրը բաժանուելու է մի քանի կարևոր մասերի և դործին ձեռնարկելու համար ուսումնասիրութիւնը սկսուելու է աւելի կարևոր կենդրոններից:

Այս դործը նիւթականի կողմից արդիւքների չենթարկելու համար, տարուայ սկզբում կազմուելու է յառաջիկայ տարուայ ուսումնասիրութեան տարեհաշիւը:

Երբ իրականութիւն դանի այս գաղափարը, անշուշտ, դործին նուիրուած մարդիկ կարող կ'լինին հոգալ ընկերութեան և նիւթական կողմը, օրինակ այս նպատակով ամեն տարի յօգուտ այս ընկերութեան կարելի կ'լինի երեկոյթներ տալ, դասախօսութիւններ անել, նուիրատվութիւններ հաւաքել, և այլն:

Եւ այսպէս, ընկերութիւնն իր անդամներից կամ հակառակ դէպքում դործին յարմար կողմնակի մարդկանցից ընտրելու է մի քանի անձինք, որոնց ուսումնասիրելու համար ուղարկելու է վանազան կողմեր. սոքա, անշուշտ, իւրաքանչիւրն իր մասնագիտութեան հմուտ պէտք է լինին, որպէս զի կարողանան յաջող կերպով իրագործել իրենց յանձն առած ուսումնասիրութիւնը: Առքա՝ իրենց յանձնարարած ծրագիրը կատարելով, տարուան վերջին պատրաստելու են իրենց տե-

ղեկագիրն և ուղարկելու ընկերութեան կենդրոնական վարչութեանը:

Ընկերութիւնը ստանալով տեղեկագրերը, ինքն իր կողմից դոցա նորից ենթարկում է խմբագրութեան և այնուհետև ամեն տարի Հրատարակութեան յանձնում այդ տեղեկագրերը:

Այսպիսի մի ընկերութիւն կազմելու համար Ռուսաստանում, անշուշտ, կառավարութիւնը թոյլտվութիւն կ'տար, ինչու որ ընկերութեան նպատակը կառավարութեան շահերին մասնաւորապէս ձեռնտու լինելով և լուսաւորութեան գործին ծառայելով Ռուսաստանում արդէն այդպիսի հիմնարկութիւնները բաւականին մեծ թուով տարածուած են<sup>\*)</sup>։ Բայց մեզ յայտնի չէ, թէ ինչպէս կ'նայի այդպիսի ընկերութեան վերայ Տաճկաստանը, որովհետեւ մեր առաջարկելիք ընկերութիւնը տաճկահայերի ներկայ վիճակի պայմաններին համաձայն յարմար է կազմել Պոլսում, ուր դուրս իրագործումն աւելի շուտ և զիւրին միջոցով իրականութիւն կ'դնենք:

Անկասկած երկիրը սոսկ ուսումնասիրելու նպատակով կազմելիք ընկերութեան համար թոյլտվութիւն պէտք է խնդրել թուրք կառավարութիւնից։ Բարձրագոյն Վրան առաջ հեղինակութիւն ունեցող անձինքների միջոցով, բացատրելով դործի լոկ գիտական նպատակ ունենալն, ինչպէս որ և է: Թոյլտվութիւնը ստանալու համար ապահով միջոցներից մինն էլ այս է լինելու, որ կազմուելու ընկերութիւնը Պոլսոյ հայոց պատրիարքի հովանաւորութեան ներքոյ դրուի, ինչպէս են և Միացեալ ընկերութիւնք: Այս թոյլտվութիւնն աւելի ևս ապահովելու համար, խիստ նպատակայարմար կ'լինէր ընկերութեան վարչութեան անդամներ ընտրուէին և գործին տեղեկ այնպիսի հայ պաշտօնեաներ, որոնք կառավարութեան առաջ լաւ համարմունք ունին:

Բայց եթէ ինչ ինչ տեսակէտներով այս ընկերութիւնը առայժմ զլուխ չեկու, որ անտարակոյս, շատ ցաւալի կ'լինի, այն ժամանակ այս անհրաժեշտ գործն երեսի վերայ չթողնելու համար կարելի կ'լինի աւելի սահմանափակ շրջանակի

<sup>\*)</sup> Օր. վեր առնենք հէնց Աւստրիոյրդի Աշխարհագրական Ընկերութիւնն, որի կողմից ամեն տարի ուսումնասիրութեան նպատակով գիտնական մարդիկ են ուղարկվում զանազան կողմեր:



մէջ հետեւեալ միջոցին դիմել. այն է ուսումնասիրութեանը ձեռնարկին կամ մասնաւոր անձինք որոշ ծրագրերով կամ թէ, որ աւելի դրական և հաւանական միջոցն է, Պատրիարքարանը և Միացեալ ընկերութիւնք: Օրինակ Միացեալ ընկերութեան տեսուչները կամ կարող մանկավարժները մեծ գիւրութեամբ կարող են ուսումնասիրել երկրի սոսկ կրթական վիճակն, իսկ պատրիարքարանը իր առաջնորդների, յաջորդների ձեռքով կարող է յանձնարարել ուսումնասիրելու ազդային — եկեղեցական, վիճակագրական, բարոյական վիճակն, իսկ ինչ մտում է կեանքի և երկրի միւս կողմի ուսումնասիրելու կէտերին, կարծում ենք, այդ ճիւղերն էլ կարող էին յանձն առնել այդ դաղափարին համակրող մասնաւոր անձինք:

Այսպէս, եթէ Հայ Հոգեւորականութիւնը և ուսուցչական մարմինը ցանկանան խղճի մտօք կատարել իրենց յանձնարարելի ուսումնասիրութիւնը, չնչին դրամով կրկին կարեւոր դործ կարելի կլինէր կատարել, թէև ինքնին պարզ է, որ սոցա աւել աւելի կարող անձինք, մասնագիտական ընկերութիւն աւելի քան յաջող արդիւնք ցոյց կ'ապին և այս ուսումնասիրութիւնը հաստատ հիմքերի վերայ դրուած կ'լինէր:

Անտարակոյս երբ յոյժիր քիչ լինին և միջոցները սակաւ, հարկաւոր է, որ ուսումնասիրութեան ձեռնարկող անձինք սկսեն աւելի գլխաւոր կենդրոնից և դործի կարեւոր կողմից, որովհետև աւելի լաւ է և նպատակայարմար սահմանափակ միջոցներով գոնէ մի փոքր բան անել, քան թէ մեծ դործի անկարելիութիւնը տեսնելով ոչինչ չ'ընեն և հետեւապէս դործին փնասել:

Այսպիսի ձեռնարկութիւնը մինչև անգամ եթէ սպասելի որ և է արդիւնք չ'արտադրի, այլ միայն անյաջողութիւն ունենայ, այն ժամանակ ևս դործն ոչ միայն չէ տուժում, այլ մինչև իսկ օգտւում է, ըստ որում այդ սխալներից օգուտ քաղելով, կարելի կ'լինի նորից սկսելն չերկրորդել այդ սխալներն և ուսումնասիրութեանն աւելի նպատակայարմար ուղղութիւն տալ: Այսպէս թէ այնպէս՝ անհրաժեշտ է որ առաջ ձեռք դարնել այդ ուսումնասիրութեանը:

Այս խնդրին մենք դարձեալ կ'վերադառնանք:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յաւելով պէտք է տեսնք, որ մենք հայերս, որ այսքան զարկը պահպանել ենք մեր զոյութիւնը մեր հողի և հողագործ ժողովրդի շնորհիւ, մինչև այսօր չունենք ոչ տնտեսական զրականութիւն, ոչ բարեւոքուած գիւղատնտեսութիւն և ոչ գիւղատնտեսութեան աստարիղում զործող երիտասարդութիւն: Ճշմարիտ է, մեր գրականութիւնը զուրկ չէ եղել տնտեսական յօդուածներէց, բայց մեր խօսքն այդ գրականութեան վերայ չէ: Մենք շատ լաւ ենք յիշում այդ տեսակի զբոռածքները մեր պարբերական մամուլում, մանաւանդ Մշակո՞ւծ, որի մէջ շոշափուել են տնտեսական բազմախղճմանի հարցեր:

Մեր հասարակութիւնը գիւղատնտեսութեան և հողային յարաբերութեանց քիչ նշանակութիւն է տուած միշտ, կամ դոնէ, քիչ հոգ է տարած նոցա բարեւոքման համար: Բայց թէ Դրբան մեծ է հողի ոյժը, ոչ միայն նեղ տնտեսական կեանքի մէջ, այլ և ամենամեծ քաղաքական հարցերում, այդ զրծուար է մինչև անգամ, կարճ կերպով նկարագրել: Յիշենք միայն որ հողի տիրապետութեան հարցը, կամ հողային յարաբերութեանց անբաւականացուցիչ ձեւը և ուրիշ երևոյթներին հիմքն եղել են պատմական ամենամեծ զործողութիւնների, անթիւ պատերազմների, յեղափոխութիւնների և շատ ազդերի ոչնչանալու պատճառը: Ո՞վ չգիտէ այժմ այն մեծ ներքին շարժման մասին, որը կատարվում է Անգղիայում և որը զուտ հողային հարց է, ուրիշ ոչինչ: Ի՞նչ են ծնել այն բազմախառն քաղաքական հարցերն այն երկրներում, ուր տարածուած է եղել աւատականութիւնը, կամ թէ հողային ճորտութիւնը, ևայլն. այս բոլորը հողի տիրապետութեան և նորա անկանոն դաստնորութեան վերայ է հիմնուած:

Մենք կցանկայինք մեր ընթերցողներին մտանայոյց անել հաղար ու մէկ գէպքեր, երբ մի ուրեւ ազդ աննկատելի կերպով անհետացել է, իբրեւ ազդ, զրկուելով իր հողէց, որի զինն և պատիւը նա իր ժամանակին չէ հասկացել, կամ թոյլ է եղել պաշտպանելու: Բաւական է միայն կարդալ կիրովոնների և բաշկիրների չուկու պատմութիւնը, կամ աւելի լաւ

անձամբ լսել նոցանից, որ հասկանալի լինի, թէ երբեմն որ-  
քան հեշտութեամբ և արագ կարող են կատարուիլ ամենա-  
մեծ և սարսափելի պատմական փոփոխութիւններ, մինչև ան-  
գամ մեր օրերում: Այդ երկու ազգերը մի 50—60 տարուայ  
մէջ զրկուել են հազարաւոր վերադ տարածութեամբ հողից,  
իրենք հեռանալով դէպի արևելք և թողնելով իրենց հայրե-  
նի հողը նորեկներին, քրիստոնեայ դադթականներին: Մինչև  
այժմ միայն հողի կորուստ է եղած, բայց այսպէս շարունակ-  
ուելով, վերջ ի վերջոյ, պէտք է զրկուին և ամենից:

Մեր հայրենիքը առհասարակ և Աովկասը մասնաւորա-  
պէս, անկասկած շատ հարուստ և առատ երկիր է իր աշ-  
խարհագրական դրութեամբ, հողի և ջրի յատկութեամբ. նա  
ընդունակ է իր ժողովրդին տալ այն բարիքն, որը շատ սա-  
կաւ երկիրներ կարող են տալ: Բայց մի երկրի, մի ժողովրդի  
հարստութիւնն ո՛չ թէ նորա բնական հարստութիւններն,  
կամ նորա արհեստից զարգացումն և անտեսական արգեանց  
արտահանութիւնն է: Ո՛չ երկիրը կարող է հարուստ լինել,  
իսկ ժողովուրդը դարձեալ աղքատ. երկիրը կարող է լինել  
առատ զործարաններով և արհեստանոցներով, իսկ բաղդը  
դարձեալ հեռու նորա ժողովրդից: Գուցէ փոքր ինչ անբնական  
երևայ այսպիսի դատողութիւնը, բայց մեր խօսքն այն դէպքի  
վերայ է երբ մի որ և է երկրի բնիկ ժողովուրդը մասնակից չէ  
այդ երկրի հարստութեանցը, երբ արհեստը և արդիւնաբե-  
րութիւնը նորա սեպհականութիւնը չեն, այլ օտարինը: Մեր  
լրագրութեան մէջ նոյնպէս իր ժամանակին խօսուած է այս  
մասին, բայց իրերի դրութիւնը մինչև օրս էլ մնում է այն-  
պէս, ինչպէս էր 10—20 տարի առաջ: Ինչ որ այն ժամա-  
նակ զուշակում էին հասկացող մարդիկ, այժմ իրազործվում  
է: Մենք, այսինքն բնիկներս՝ հայ, ռուս, վրացի, թուրք և այլն,  
համարեա թէ տէր չենք մեր բնական հարստութիւններին:

Մեր նաւթային զործն, որ վերջի 10—15 տարուայ ըն-  
թացքում այնքան առաջադիմութիւն է արել, ստեղծելով ա-  
հազին արդիւնահանութիւն և տասնեակ միլիոնների վաճա-  
ռականութիւն, մի՞թէ Ռուսաստանի բնիկ ժողովրդի հար-  
ստութիւնն է այսօր, բառի բուն նշանակութեամբ: Ո՛չ, այլադ-  
ղիների՝ շվեդացիների, արտասահմանեան հրէաների հարս-

տութեան աղբիւր է նա զլխաւորապէս, և ո՛րքան որ աւելի մեծ զարգացում է ստանում գործը, այնքան աւելի ու աւելի այդ այլազգիների ձեռքն է անցնում: Ինչ ասել կուզէ, որ հրէշաւոր գումարների դէմ, որը գործ են զնում այլազգիները, պարագլուխ ունենալով շվեդացի Նոբել և ընկ. Ռոշելդ և այլն, չէ կարող մրցիլ մեր թեթեւ կարողութեան տէր գործարանատէրը՝ լինի նա ռուս, հայ, թուրք և այլն, կապիտալը կճնշէ և կամաց կամաց բոլորովին նորան կոչնչացնէ, և դա արդէն մասամբ իրագործվում է: Օրինակներս սկսեցինք նաւթից, որովհետեւ նա աւելի աչքի ընկնող է, մեծ ահազին արդիւնաբերութիւն է: Բայց կան աւելի նշանաւոր, թէև չերևացող կողմեր մեր տնտեսական կեանքի մէջ, որոնք մեր ժողովրդի ձեռքից դուրս են պրծնում, դարձնելով նորան տէրից բանւոր: Վորքա այն արդիւնաբերութիւններն են, որոնք ունենալով ընդարձակ ապագայ ինչպէս մեծ վաճառականութեան նիւթեր, միւլնոյն ժամանակ կազմում են բուն ժողովրդական հարստութիւն:

Աովկասի գինեգործութիւնը այնքան մեծ է, նորա խաղողների տեսակները և երկրի պայմանները այնքան լաւ են, որ մեր գինիները վաղուց արդէն իրենց վերայ են դարձրել այլազգիների օր. Ֆրանսիացիների ուշադրութիւնը: Թէև Աովկասը որքան գինի կարող է արդիւնաբերել, դորա մասին խօսելն էլ աւելորդ է, դա ամենքին պարզ է: Մեր գինիները զլխաւորապէս կամ մնում են տանը և խմվում անհաշիւ և անօգուտ, կամ քացախ են դարձնվում: Իբրեւ վաճառահանութեան նիւթ էլ մեր գինիները մեծ մասամբ աժանագին ապրանք են համարվում: Ան երկիրների, որոնք թէև չլինելով աւելի հարուստ, քան Աովկասը, գինեգործութիւնը դարձրել են իրենց հարստութեան զլխաւոր աղբիւրը: Մի՞թէ չէր կարող Աովկասն էլ միւլնոյնն անել, օգտուելով այն բարիքներից, որն ինքը բնութիւնն է նորան տալիս: Մենք դորա մասին չենք մոռաժած, չենք հոգացաժ, իսկ հեռու չէ այն ժամանակը, երբ այդ հարստութիւնն էլ կկլնէ մեր ձեռքից օտար հարստացի գումարատէրերը, իսկ մենք այդ գործում կընդունենք ամենաժանր և ամենավատ դերը, այսինքն բանւորների դրութիւն կրճենք, իսկ շահը և աշխատանքը



մեր ձեռքից կրկին: Պրանսիացի, գերմանացի, մասամբ և հրէայ մեծ գումարատէրերն արդէն սկսում են Սովիասում հողեր գնել խաղողանոցներ ձգելու համար և մտադրութիւն ունին միւլենոյն ժամանակ գնել և ժողովրդի արգիւնաբերած գինին, ի հարկէ, ըստ կարելւոյն արժան, յետոյ նորան մաքրելով և պահելով բարձր գնով ծախեն: Բանը կրնորենէ դարձեալ գործարանական բնութիւն և մանր արգիւնաբերողն, ի հարկէ, անկարող կլինի նոցա հետ մրցել:

Բամբակի առևտուրը մեր երկրում տարուց տարի աւելի լայնանում է: Սովիասի բամբակը, որ յաճ տեսալիներէց մէկն է հաշվում, դարձեալ միշտ ծախվում է Ռուսաստանի գործարաններում, և դեռ աւելի մեծ քանակութեամբ կծախուի, միայն թէ նորա քանակութեան հետ միասին բարձրանար և բամբակի յատկութիւնը: Սովիասը ունէ բազմատեսակ պայմաններ, թէ տաք կամ չոր, թէ բարեխառն կամ խոնաւ եղանակ և ամեն տեսակ բոյսեր կարող են մեղանում մշակուել իրենց յարմար տեղերում: Ուրեմն, պէտք չէ՞ր արդեօք, ուշադրութիւն դարձնել աւելի բարձր տեսակի ամերիկական և եգիպտական բամբակի մշակման վերայ: Եւ այս փոփոխութիւնները, կրկնում ենք, պէտք է պիտուանից մտցնել մեր գիւղը, քանի որ դեռ մենք կարող ենք մանր արգիւնաբերութեան պտուղները ազատ վաճառահանել: Եւրոպացի մեծ գումարատէրերն այս ղէպքումն էլ արդէն ուշադրութիւն են դարձրել այս գործի վերայ և մեծ հողային տարածութիւններ են ձեռք բերվում բամբակի պլանտացիաներ ձգելու համար: Բայց զուտ գիւղատնտեսական հարցերում մեծ գումարատիրոջ և մանր արգիւնաբերողի մէջ եղած մրցումն ուրիշ կերպարանք է ստանում, այստեղ գումարատէրը չէ կարող այնպէս ճնշել գիւղացի արգիւնաբերողին, ինչպէս գործարանական արգիւնաբերողութեան մէջ: Նա կարող է մրցիլ ապրանքի բարձր յատկութեամբ, իսկ գնով չէ կարող, որովհետև որքան էլ որ նա աշխատէ վարձկան մշակների աշխատութեամբ արժան արգիւնաբերել, դարձեալ աւելի թանկ պէտք է նստէ, քան գիւղացուն, որն իր աշխատանքը չէ հաշվում: Անկասկած այստեղ էլ մեծ գումարատէրը լաւ ապրանք ստանալով և հեշտութեամբ վաճառահանելու յարմարութիւն ունենա-

լով, կարող է սաստիկ փնասել ժողովրդական արդիւնաբերութեան: Ուրեմն, ինչպէս և իցէ, գիւղացի հողատէրը կարող է մրցիլ գումարատիրոջ հետ միայն իր արդիւնքների բարձր յատկութիւններով:

Ինչ որ ասացինք բամբակի առիթով, միևնոյնն էլ կարելի է կրկնել և ծխախոտի մշակելու մասին: Աւերջինս էլ ինչպէս վաճառահանութեան նիւթ մեծ ապագայ պէտք է ունենայ և երկրի հարստութեան մի մասը պէտք է կազմի: Աւ միթէ վարձկան մշակի աշխատանքը կարող է համեմատուիլ մանր հողատիրոջ աշխատանքի հետ, երբ առաջինն ակամայ պէտք է աշխատէ, ամենևին չմոռճելով լաւ պտուղ ստանալու մասին, որովհետև դորանից նա շահ չունէ, իսկ երկրորդն ամենայն ուշադրութեամբ պէտք է հետեւէ իր արտին, իր ցանքին և այլն. որովհետև լաւ թէ վատ ապրանք ստանալուց է կախուած նորա աշխատանքի վարձատրութեան չափը: Բայց եթէ մեր մանր հողատէրը շարունակէ արդիւնաբերել այնպէս ցած տեսակի ծխախոտ, ինչպէս մինչև այժմ էր, անկասկած անկարող կլինի մրցել պլանտատորի հետ, որը պէտք է աշխատէ ծխախոտի ամենալաւ տեսակները մշակել:

Մեր շերամապահութիւնը և մետաքսի մշակումը, չնայելով յաջող պայմաններին շատ դանդաղ քայլերով է առաջ ընթանում: Մեր մետաքսը, իբրև մշակուած և վերջնական վաճառահանութեան նիւթ, դեռ շատ պակասութիւնների ունէ: Շերամապահութեան, իսկ առաւել մետաքս քաշելու դործը դարձեալ դործարանական արդիւնագործութիւն է և այստեղ օտար եւրոպացի գումարատէրը կարող է միևնոյնը անել, ինչ որ նաւթահանութեան և գինեգործութեան ասպարիզում: Այլազգին՝ Ֆրանսիացին կամ մի ուրիշը կխլէ մեղնից մեր ժողովրդին հաց աուռող աղբիւրներից մէկն էլ, անկարելի դարձնելով որ և է մրցում, որովհետև անփողը չէ կարող այնպէս յարմարութիւններ ստեղծել և մեքենաներ ձեռք բերել մետաքս պատրաստելու համար, ինչպէս հարուստը:

Հարկաւոր է արդեօք հաշուել այլ ևս, թէ ինչ ինչ աղբիւրներ կան, որոնք մեր երկրի հարստութիւնն են կազմում, և որոնք պէտք է պահպանենք և զարգացնենք ինքներս, որ աւելի աշխատասէր և գուցէ աւելի շահասէր օտարը չք

խլէ մեզնից: Շատ երկիրներում մրդապաճառութիւնը, մեղուապահութիւնն և այլն, մեծ տնտեսական հարցեր են կազմում: Իսկ մեզ համար դոքա այնքան չնչին հարցեր են երևում, որ դոցա մասին մտածելն էլ աւելորդ է թվում: Եւ չենք ասում, որ այսօրուան օրը բացվում են դեռ շատ նոր հարցեր, որոնց մենք ուշիմութեամբ պէտք է հետևենք, բայց հազիւ թէ ամենքս զիտենք նոցա գոյութեան մասին: Առկասեան երկաթուղին միացնելով Ասպից ծովը Աւ ծովի հետ, այժմ բացած է շատ նիւթերի վաճառահանութեան յարմարութիւն. օրինակ, ցորենի և առհասարակ հացահատիկների առևտուրը առաջնակարգ հարցերի շարքն է ընկել այժմ:

Այսպէս եթէ մարդ մի հայեացք ձգէ մեր տնտեսական կեանքի մանրամասնութիւնների վերայ, զուցէ այն եզրակացութեան գայ, թէ մեր վերքերը բժշկելու համար հարկաւոր են կամ գումար, կամ զիտութիւն, որոնք առայժմ բացակայ են մեզանում: Աւ ճշմարիտ, մեր վաճառական և գործավար մարդիկ միշտ այդպէս են առարկում, թէ «մենք չենք կարող, մեր բանը չէ», դա փողաւոր մարդի գործ է», և այլն: Բայց, իսկապէս, գումարի պակասութիւնից է դա կախուած, թէ կան ուրիշ աւելի էական պատճառներ: Ոչ մի երկրում, սկսած ամենափոքրից մինչև ամենահարուստ եւրոպական տէրութիւնը, երբէք մեծ գործեր չեն կատարվում միակ մարդկանց հարստութեամբ, այլ որքան էլ որ մեծ գումարատէրներ լինին գործ ձեռնարկողները, նոքա միշտ աշխատում են կազմել ընկերութիւն, որովհետև այդպէս աւելի հաստատ գործ կարելի է հիմնել և իւրաքանչիւր ընկերացի դրամաբաժինն աւելի ապահով կլինի: Գումարատէր մարդիկ շատ անգամ փոխանակ մի որ և է գործ միայնակ սկսելու և ամբողջ ձեռնարկութեան յաջողութիւնը կամ վնասն իրենց վրիճն առնելու, աւելի գործնական են համարում միւսնոյն գումարը զեւտել մի քանի ձեռնարկութիւնների մէջ, որոնցից իւրաքանչիւրը ընկերացական սկզբունքի վերայ է հիմնուած: Գործնական օգուտը պարզ է. եթէ մի ձեռնարկութիւն վնաս է տալիս, փոխանակ ամբողջ վնասը իր վերայ առնելու, ընկերակիցը կրում է միայն նորա այն մասն, որը համապատասխանում է նորա դրամաբաժնին. իսկ մի ուրիշ ձեռնարկու-



Թեան մէջ, որտեղ դարձեալ բաժին ունէ, օգուտ է ստանում: Անդդիպում ամէն մի չնչին ձեռնարկութեան համար՝ համարեա ամէն օր նոր ընկերութիւններ են կազմվում և կամ մեծ գործեր են կատարվում, կամ թէ իւրաքանչիւր ընկերակցի համար փոքր ֆեստով գործը խափանվում է: Եսկ երբեմն փոխանակ ընկերութիւնը ցրուելու, փոխում են միայն ձեռնարկութիւնը:

Այդպիսով մենք տեսնում ենք, որ գումարի պակասութիւնն ամենևին առանձին անհատներից չէ կախուած: Մինչև անգամ, եթէ ասենք, մեզանում լինէին շատ հարուստ մարդիկ և այն ձեռնարկութիւններն, որ այժմ եւրոպացիների ձեռքն են անցնում, նոցա սեպհականութիւնները լինէին, մի՞թէ դորանով գործը շատ կլաւանար և խնդիրը կվճռուէր: Ոչ իրերի դրութիւնը համարեա թէ միւլենոյնը կֆնար, այն զանազանութեամբ միայն, որ օտար կապիտալիստի տեղ կլինէր մեր բնիկը, որի անձնական շահերը միւլենոյն կերպով կարող էին ճնշել ընդհանուր ժողովրդական շահերը:

Ընկերակցական ոգին այն մեծ ոյժն է, որի դէմ ոչ մի անհատական ոյժ պատերազմել չէ կարող: Կնշով է ուժեղ Պերմանիան, եթէ ոչ այդ իսկ ընկերական ոգւով, միւլենոյնը և Ռուսաստանը ևայլն: Պերմանիայի ընկերութիւններին հաշիւ չկայ, իւրաքանչիւր քաղաքում, զիւղում անգամ ընկերութիւն է կազմվում սկսած ամենալուրջից մինչև ծիծաղալի նըպատակներին ծառայող: Բայց պէտք չէ կարծել, թէ այդ ընկերութիւնները միայն իրենց կանոնադրութեան որոշած նըպատակին ծառայելու նշանակութիւնն ունին. այդ անկասկած. բայց նոքա միւլենոյն ժամանակ ունին իրրեւ մի ամբողջ կազմուածք և իրենց հասարակական նշանակութիւնը: Եւրաքանչիւր ընկերութիւն, նոյն իսկ դարե՛ջրի և որսի կամ մարմնամարզութեան ընկերութիւնն, դէպք եղած ժամանակ իր համակրութիւնը, կամ հակակրութիւնն է յայտնում այս կամ այն երևոյթին, կամ խնդրին: Այս բոլորիս առաջներիս է Պերմանիայի փոքրիկ զաւառներից մէկի Շլէզվիկի Շօլշէյնի տարեհաշիւն, որից երևում է, որ այդ փոքր տարածութեան մէջ Շլէզվիկի Շօլշէյնը ունէր 1886|87 թուին 104 միայն զիւղատնտեսական նպատակներին ծառայող ընկերութիւններ: Կնչ ասել կուզէ, որ իւրաքանչիւր անգամը միայն մի չնչին

գումարով է մասնակցում ընկերութեան, բայց ամենքը միասին իրենց ցանկութիւնը կատարելու մեծ յարմարութիւն, կարողութիւն են ստանում: Այդ պարզ ճշմարտութիւնը շատ լաւ են հասկացել գերմանացիները և նոքա գիտեն այն նշանաբանի ոյժն, որը նոքա տալիս են իրենց ընկերութեանց, այն է «Alle für einen-Einer für alle», այսինքն—ամենքը իւրաքանչիւրի համար, իւրաքանչիւրն ամենքի համար—: Աւելի է համեմատենք փոքրիկ Շվեյցիկ Զուրիքը մեր հայրենիքի հետ, կտեսնեմք թէ յորքան գեռ մենք հեռու ենք նոցանից. մենք 104ի փոխարէն գոնէ 4ն էլ չունենք: Աւելացրէք այդ թուի վերայ և բազմութիւն առեւտրական, գիտնական, դործարանատէր և ուրիշ ընկերութիւնների քանակութիւնը, աչքի առաջ առէք, որ այդ երկիրը գոնէ 20 անգամ աւելի փոքր է մեր հայրենիքից, այն ժամանակ պարզ կլինի, թէ ի՞նչ է պատճառն, որ մենք չնայելով մեր բնական նախանձիկ հարստութիւններին, մեր իսկական հարստութիւնով և ուժով չենք համարձակուիլ մինչև անգամ համեմատուիլ նորա հետ:

Աւելի իսկապէս, առնենք նոյն իսկ նաւթային գործը, մի 15 տարի սորանից առաջ ո՞վ էր այդ արդիւնաբերութեան տէրը և զլիաւորը, եթէ ոչ բնիկը: Նա էր զբաղուած նաւթահանութեամբ և առեւտրով և նա չկարողացաւ պահել իր անդրանկութիւնը այդ գործում: Այն միջոցին, երբ նաւթը սորսափելի առատացաւ, շատրուաններով սկսեց հոսալ, հում նիւթը աժանացաւ և հետեւապէս նաւթի գործարանատէրերի հարստանալու և էլ առաւել բարձրանալու ժամանակն եկաւ, նոքա ընդհակառակը սկսան աւելի երկիւղով իրենց գործը վարել, որովհետեւ ստիպուած էին և անկարող էին, միևնոյն ժամանակ, մրցել շվեյցական և ուրիշ գումարատէրերի հետ: Նոքիւր լաւ հասկանալով այդ հարստութեան անսպառ աղբիւրի նշանակութիւնը, միանգամից սկսեց ահագին գործարաններ շինել, նաւթանցքեր (խողովակներ) քաշել, շոգենաւեր և յատուկ նաւթի շոգեկառքեր գնել, ծախսելով միլիոններ, հաւատացած լինելով, որ բոլորը կվերադարձնուի իր ժամանակին: Բայց գործը գեռ կարգի չբերած, նորա փողը սպառում է և նա դառնում է Բաղուի գործարանատէրերին, առաջարկելով ընկերութիւն կազմել և ընդհանուր ոյժով գոր-

ծըն առաջ տանել: Ինչ ասել կուզէ, որ ոչ ոքի մաքրոյն էլ չանցաւ մի այդպէս բան անել, նորա մերժեցին: Այն ժամանակ Սօբել դառնում է իր հայրենակիցներին, շվեդա, որոնք նոյն բոպէին կազմում են ընկերութիւն և Սօբել նորից միլիոններ է ստանում և գործը գլուխ բերում: Բնիկը իրեն միայն այն մաքով էր մխիթարում, թէ Սօբելը սաստիկ վնասներ է կրում: Իսկ վերջինս լաւ կարգադրած լինելով իր գործն, աներկիւղ շարունակում էր նորան: Այժմ Սօբելի նաւթի շոգեկառքերը հազարներով տարածուած են ոչ միայն ամբողջ Ռուսաստան, այլ և Գերմանիա, Ռանիմարքա, Շվեյցար:

Այսպէս բնիկները իրենց մանր, կոպէկանոց հաշուով յետ մնացին, այն ինչ նորանք կարող էին ահազին, ուժեղ և հարուստ ընկերութիւն կազմել, ապահով լինելով, որ բացի ընդհանուր օգտից, նոքա կունենային և այն առաւելութիւնն, որ իբրև բնիկներ, աւելի արածնութիւններ կարող էին ստանալ տէրութենից, քան այլազգիները:

Սարող էինք շարունակել միւսնոյն խորհրդածութիւնները և ուրիշ արդիւնաբերութիւնների առիթով, բայց աւելորդ կնք համարում, որովհետև պէտք է կրկնէինք միւսմենք: Մեր խորհրդածութիւնները վերջացնելով, պէտք է նորից կրկնենք, որ ընկերակցական, այդ բարձր բարոյական և մի և ժամանակ, տրնտեսական կեանքում մեծ գործնական նշանակութիւն ունեցող գաղափարի բացակայութիւնը մեր գլխաւոր չարիքներից մէկն է: Մենք ձգտում են ամեն մէկս առանձին մեր անձնական կեանքով ապրել, վախենալով ուրիշի միջամտութիւնից, միշտ երկիւղ կրելով և կարծելով թէ իւրաքանչիւրս առանձնապէս մեզ համար աւելի մեծ գործ կատարենք:

Բայց ժամանակ է թողնել այդ արդէն հնացած և հազար անգամ իւր անհիմնութիւնը ապացուցուած կարծիքն, օգտուելով իրական կեանքի մեզ տուած դառն, բայց իրաւացի խրատից: Չմոռանանք, որ կեանքը չէ սպասում, նա օրէցօր աւելի արագ քայլերով է առաջ ընթանում և իթէ մենք չվազենք նորա հետ միասին, մի օր պէտք է տեսնենք, որ արդէն շատ յետ եմք մնացել և ուրիշները մեր առաջն են անցել: Այն ժամանակ արդէն ուշ կլինի:

Ա.:



## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԺԱՆ ԺԱԿ ԲՈՒՍՍՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վե՛ղ, ոչ երբէք, ժան-ժակ Ո՛ռւսսո,  
Պիտի մոռնայ աշխարհ:

Ընմահ էս դու, ոգի արգոյ,

Թէ՛կ հազար սահի դար:

Վո երկնաշունչ մեծ զործերը

Յաւիտեան պիտի ծաղկին

Ընթառամ է քո պսակը

Թո՛ղ ազգեր գան, թո՛ղ կորչին:

Պիտե՛մ, վրադ շատ հաչեցին

Տգիտութեան շուները

Վեղ շատ անգամ քարկոծեցին

Կեղծաւորաց խումբերը:

Բայց դու մենա՛կ, մարդ քաջարի,

Մի՛շտ անդղորդ անասան,

Կանգնած նման ապառաժի՝

Ձեռք պարզեցիր մարդկութեան:

Եւ ցնցեցիր հազարամեայ

Ըլթաները ծանրացած,

Հզօր ձեռքիցդ՝ այն երկաթեայ

Կապանքն ընկան փշոված...

Թէ՛կ այսօր պի՛ղծ բերաններ

Ոմանք, դարձեալ քո ընդդէմ

Ոռնան ինչպէս քաղցած գայլեր

Վե՛ղ ինչ, չե՞ն դոքա «արք սեւադէմ»:

«Եստ հանգչում է բնութեան մարդը,

Մարդը և ճշմարտութեան»:

Ժիրարդէնի զրեց ձեռքը,

Տապանաքարիդ վրան:

Ծո՛ւնը եմ դնում ես այդ քարին,

Ութսուն հօթը տարուց յետ՝

Վեղ պատւում է . . . .

Եւ նա, մարդ է, վարդապետ:

Մեր մի աշխատակցից ստացել ենք Արաթի առաջին գրքի  
տոթիւ մի գրութիւն «Նորածին Արաքսն և իմ տպաւորու-  
թիւնները» վերնագրով: Խմբագրութիւնս մի քանի հանգա-  
մանքներ ի նկատի առած՝ չկարողացաւ այդ յաջող գրութեան  
ամբողջովին տպագրել: այլ հրատարակում է նրա մէջ զրտ-  
նութեամբ երկու ոտանաւորները միայն, որոնցից մինը վերաբե-  
րում է Արաթի երեսի նկարին, իսկ միւսն Արաթում զետե-  
ղութեամբ Ռէյթունցուն:

Պոքա ևն ահա՛.

Ահա իմ առջեւ, որպէս ծով անհուն,  
Աղատ փռութեամբ է դաշտն Արարատեան  
Եւ այնտեղ ծաղկած մշտաբեր գարուն  
Ապտուում, ժպտում է սիրով մանկական:

\* \*

Ահա ալեղարդ հսկայ Արարատ—  
Հայոց անցեալի դարեւոր վիան,  
Ոսկեզօծելով իւր վսեմ ճակատ՝  
Ինձ դուշակում է հայի ապագան...

\* \*

Ահա և Արաքս—գետակ հայրենի—  
Մերթ լուռ, հեղատահ և մերթ փրփրան,  
Իւր պարզ ջրերում, որպէս հայելի,  
Ինձ նկարում է հայ ազգի ներկան...

\* \*

Ահա անձկալի, ահա հարազատ  
Ինձ ողջունում են սրբազան վայրեր.  
Ահա Մայր Աթոռ և Վաղարշապատ,  
Ահա Հինաւուրց սուրբ մենաստաններ:



Ահա և առիւծ, հերոս Ռէյթունցին,  
Ննյաղթ զաւակն աղատ բնութեան  
Ձեռքում հրացան, սուսերը մէջքին՝  
Աննդամ է առջեւ: Նայեցէ՛ք նրան,  
Ռադիսի՛ հսկայ և պարթև հասակ,

Ուրախի՛ր ուժեղ, հղօր բազուկներ,  
Թիկունքը ամուր, կուրծքը լայնարձակ—  
Ահա՛ քաջութեան կենդանի պատկեր,  
Ահա՛ հայ հերոս, որի քաջ հոգին  
Վառուած է հրով վեհ ազատութեան,  
Եւ որի առջև ոսոխ թշնամին  
Վոզում է, որպէս տերէն աշնան:

\*  
\* \*

Նա ահռելի է...բայց աւա՛ղ, այսօր  
Մի ինչ-որ ծանր, սրտամաշ թախի՛ծ՝  
Խեղդած հսկայի ձայնը ահաւոր՝  
Արցունք է քամում նրա աչքերից...  
Արցունք... ո՛հ հերոս, ես չեմ հաւատում,  
Մի՛թէ ողբում է, իրաւ, քո հոգին,  
Պատմի՛ր, ի՞նչ վիշտ է քո սիրտը կոծում,  
Այդ ի՞նչ մռայլ է քո զուարթ դէմքին...  
Հերոսը լուռ է...բայց ահա՛ յանկարծ  
Բնդհատովում է այդ խորին լռութիւն,  
Եւ ես լսում եմ արցունքից խեղդուած  
Վաճի մրմունջը. «Այրվում է Օւէյթուն...»

\*  
\* \*

Այրվում է Օւէյթուն...ողբալի՛ պատկեր,  
Նայեցէ՛ք ահա բոցը կատաղի  
Լափում է անխնայ և դարձնում տւեր  
Մնառիկ վայրը հայ հերոսների...  
Այրվում է Օւէյթուն...սոսկալի՛ հարուած,  
Սարսափ է տիրել ամբողջ Տաւրոսին  
Ողբում են հայրեր՝ ծխի միջ խեղդուած,  
Ողբում են մայրեր՝ որդիքը զրկին...  
Այրվում է Օւէյթուն...օգնեցէ՛ք, հայի՛ր,  
Պա՛ռն է ճգնաժամ, տխուր է վայրկեան...  
Ո՛հ, մեր հարազատ եղբարք ու քոյրեր  
Մեռնում են քաղցից...հասէ՛ք օգնութեան:

Եւ Նապոլեոնի



## ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

### ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՐԲԵՐԴ ԳԱԽԱՌԻ

#### ՔԱՐԲԵՐԴ ԵՒ ԻՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Վարբերդ կամ Խարբերդ Չորրորդ Հայոց Նոսիաց աշխարհի Հանձնիք գաւառն է, որ երկայնութեան 40-րդ, և լայնութեան 39-րդ աստիճաններուն տակ կիյնայ, և ծովէն գրեթէ 3,000 անգղ. ոտք բարձր է: Վաղաքը՝ լեռան վրայ հաստատուած ըլլալով՝ յառաջնոյ կը գիտէ արևելեան հարաւային կողմի Ուլ (Օ)վա կոչուած դաշտերն ու Սաստար և Հաջար-Պապա լեռներն, որք շղթայ մը կազմելով կը շրջապատեն յիշեալ դաշտերն, իսկ իյետ կուսէ արևմտեան և հիւսիսային կողմանց Խուջ (Օ)վա կոչուած ընդարձակ դաշտերուն վրայ կարճանանայ: Իյետ կուսէ քաղաքին՝ իբրև երեք ժամ հեռի, կգայ կանցնի Արածանի գետն, որ յարևելից կուսէ Բալուի սահմաններէն կսկսի և գէպի յարևմուտս Կապան-Սատէնի քովերէն անցնելով կը միանայ Նփրատ գետի հետ և Սալաթիոյ առաջքէն գէպի հարաւ գառնալով կը վազէ ի Չընքուշ և Տիգրիսի ջրերուն հետ խառնուելով կերթայ կը թափի Պարսից ծոցը: Այսպէս Վարբերդի գաւառը Տիգրիսի հովտին վերնակողմը՝ Միջագետաց առաջին գաւառը կը լինի:

Վարբերդի գաւառը՝ կուսակալութիւն (վիլայէթ) է և միայն կեդրոնն իւր սահմանովը 6,144 քառակուսի հազարամէթր տարածութիւն ունի:

#### ՃՈՒՐ ԵՒ ԾՈՎԱԿ

Վարբերդի գաւառին մէջ վազող ջրերն առհասարակ պաղ և անոյշ են, միանգամայն առատ:—Ուլ (Օ)վայի հարաւային արևմտեան ծայրէն Խարա անուն գետակ մը կը բղխի, որ յիշեալ դաշտին մէջէն անցնելով՝ տեղ տեղ պատահած առուակներէն կը ճռխանայ և կերթայ գէպ յարևելս՝ Արածանի գետը կը թափի: Այս

գետակն, արդարեւ, Ուլ ( ) վայի դաշտերն ոռոգանելու համար նախախնամութեան մի մասնաւոր շնորհն է: Ուլ ( ) վայի մէջ ամեն գիւղ իւր աղբիւրներն և առուակներն ունի, և որոց շատերը ջաղաքներ կը դարձնեն:

Խուլ ( ) վայի մէջ Լյոդրուկ անուամբ վտակ մը կայ՝ որ համանուն գիւղէն սկսելով իւր շուրջ գտնուած դաշտեր կ'ոռոգէ, և ի հիւսիսոյ կողմանէ կերթայ կը թափի Լըածանիի մէջ:

Խուլ ( ) վայի գիւղերն ալ Ուլ ( ) վայի գիւղօրէից նման՝ իրենց առատ աղբիւրներն ու առուակներն ունին: Պէյրիմազ անուն քրդաբնակ արգասաւոր դաշտ մ'ալ կայ, որ իւր մէջ անոյշ և պաղ առատ ջրեր ունի:

Սաստար և Հաջար-Պապա լեռանց ետեւի կողմը՝ Օուլք կոչուած լիճ մը կայ, որ համանուն գիւղ մ'ալ ունի իւր եղբւրքը: Ս. Նշան անունով վանք մը՝ բոլորովին աւերակ՝ կղզիացեալ կը մնայ այժմ այդ լճին մէջ, և, կերեւի թէ՛ ջուրն ամբողջապէս աւերած է այդ վանքն ու կղզիացուցած: Վուիրական յիշատակ մ'է այս վանքն, յորում Շնորհալին Վերսէս իւր հոգեշունչ երգերէն մի քանիներն երգած է: Լյս լիճն իւր մէջ մեծ ու փոքր գեղեցիկ ձկներ ալ կը պարուկէ. ջուրն մշտաբուրդի է, և, ասկից յառաջ երթալով կընդարձակուէր լեռներէ հոսած ջրերովը, սակայն վերջերս վերոյգրեալ Պէյրիմազի դաշտին մէջէն իւր հոսանաց ճամբայ գտնելով՝ այժմ կերթայ կը թափի Լըղնի-Սաստէնի գետակին մէջ և անտի ի Տիգրիս:

Տեղական կառավարութիւնը ժամանակին ջանադիր եղած է այդ լճակին ջուրը Ուլ ( ) վայի դաշտերուն վրայ դարձնելու և չէ կարողացած. սակայն և այնպէս այդ լիճն՝ իւր ներկայ դրից մէջ, Ուլ ( ) վայի դաշտի առատ աղբիւրներուն ջրամբարն է:

## ՀԱՆՔ

Երեք պղնձի հանքեր կան. մին՝ Բալուի կողմերն է, 12 ժամ հեռի կեդրոնէն: Երկրորդը՝ Վրեաղթայի մէջ, որ դեռ նոր գտնուած է և տակաւին գործադրութեան չէ ենթարկուած: Իսկ երրորդն՝ որ ամենէն գլխաւորն է՝ Լըղնի Սաստէնի մէջ ըլլալով խիստ առատ հանք կարտադրէ: Կըսուի թէ ամենէն բանուկ տարին մինչ 400,000 լիտր պղնձ կը հանէ, բայց հիմա չէ տես-

նուած որ 60,000 լիտրէ աւելի արտադրէ: Այս հանքը կառավարութեան արտօնութեամբ եթէ ընկերութեան մը յանձնուի՝ կրնանք ըսել թէ՝ տարեկան մինչև մէկ միլիօն լիտր պղինձ կըրնայ արտադրել: Հիշեալ հանքերն իրենց մօտակայ անտառներն ունին, և վառելու փայտերն այդ անտառներէն կը հոգացուին:

Վարբերդէն գրեթէ 10 ժամ հեռի Կապան-Սատէն կոչուած գաւառակին մէջ, արծաթի հանք մը կայ, որոյ համար, կըսուի թէ՝ առատ և ազնիւ արծաթ ունի, և ասկից գրեթէ 50 տարի առաջ խիստ բանուկ է եղեր, իսկ այժմ քսան տարիէ հետէ անգործածելի մնացած է:

Տօրոսի լեռանց մէջ՝ որք գրեթէ 10—15 ժամ հեռի են Վարբերդէ, ոսկոյ, երկաթի և այլ հանքեր նշմարուած են, բայց գեռ յերևան չեն եկած:

Հանքածուխ խիստ շատ կը գտնուի Նալուի լեռանց մէջ: Պէյրիմաղի մէջ ալ աղահանք կայ, իսկ Ներրիի քով, Նաշավանքի մէջ, որ գրեթէ 8 ժամէ Վարբերդէ, ջուր մը կայ՝ զոր շըրջակայ գիւղացիք աղի տեղ կը գործածեն:

Վարահանք, որոցմէ կելենն աղօրիքի համար լաւ քարեր, Սարը-Լագուպ կոչուած գիւղի բլուրներուն մէջ կը գտնուին՝ 4 ժամ հեռի ի Վարբերդէ: Նոյնպէս 3 ժամ հեռի՝ դէպի հիւսիս՝ Վօրփու գիւղի մէջ, Պալլը-Վայա անուամբ սպիտակ քարի հանք մը կայ՝ որ խիստ առատ է, և քաղաքիս ամեն կարգի շէնքերու համար գործածելի. երկու մէթրօ երկայնութիւն, և 20 մատ տըրամագիծ ունեցող սեան քարեր, նոյնպէս 2<sup>1</sup>/<sub>2</sub> մէթրօ երկայնութիւն, մէկ մէթրօ լայնութիւն և 15 մատ տրամագիծ ունեցող գերեզմանաքարեր՝ այդ բլուրներէն կելեն: Այս քարերուն անտաշն՝ հանդերձ փոխադրութեան<sup>1)</sup> ծախիւք 40 դահեկան կարծէ, մէկ մէթրօ երկայնութիւն և 8 ական մատ լայնութիւն և տրամագիծ ունեցող անտաշ քարեր՝ 4 դահեկան արծէք ունին, իսկ տաշուածներն 1<sup>1</sup>/<sub>2</sub> դահեկան աւելի՝ կարծեն, և շէնքերն ընդհանրապէս այս քարերէ կը կանգնուին:

Կան նաև սալաքարեր և չէչաքարեր (քէֆէկէ), մանաւանդ հասարակ պատ հիւսելու քարերն՝ ամենուրեք առատ են, այնպէս որ՝ մէկ քառամէթրօ պատ հիւսելու համար պէտք եղած քարը՝

1) Փոխադրութեան ծախք ըսելով պիտի իմանամք 3 ժամ տեղ, այսինքն Քօրփուէն մինչ ցՍէզրաս, որ է կեդրոնատեղի կուսակալութեան:



կարժէ մէկ դահեկան: Այլ գտնուի նաև կրաքար որ խիստ առատ է և վառելու ու փոխադրութեան ծախքովն հանգերձ միջին գնով լիտրը՝ մինչև մէկ դահեկան արժողութեամբ կիր կարտադրէ:

Հրաշալիք մը կոչուելու իրաւունքը կստանայ Վարբերդի հիւսիսային արևելեան կողմը գրեթէ մէկ ժամ հեռի պարտէզներու մէջ գտնուող բլուր մը՝ որուն քարէ բնական հիւսուածքներուն մէջ խորշեր բացուած են, և որոց մէջ սանդիւնաձև քարեր կան՝ որք կը տանին ստորերկրեայ լայն և բնական սենեակ մը՝ որոյ կամարաձև բնական գմբեթէն ջրոյ կաթիլներ կը վաղեն, որք ամրան տօթի ժամանակ կը սառնին և ձմրան սաստիկ ցրտի ժամանակ՝ ընդհակառակն գաղջ կը մնան և մինչև իսկ կը գոլորշիանան: Ըստ սենեակին մէջ ուրիշ ծակ մ'ալ կայ՝ յորմէ աւելի խորերը կիջնուի և ուր սառահասնները միայն կրնան իջնել: Վարբերդէ 15 ժամ հեռի ջրամուկ գաւառակի մէջ տաք ջրոյ աւազան մը կայ՝ որ նշանաւոր է իւր օգտակարութեամբ և գեղեցկաշէն բաղանիքովն, ուր կը յաճախեն ամեն կարգի՝ ամեն տեսակ հիւանդներ, ջուրը խիստ առատ է, տաք և ծծմբային: Այնպէս Վարբերդէ 8 ժամ հեռի Սարը-Խամիշ գիւղի մէջ՝ տաք ջրեր կը գտնուին, սակայն այնքան նշանակութիւն չունին:

## ՕԴ ԵՒ ԵՂԱՆԱԿ

Վարբերդի գաւառին կլիման առողջարար է և շրջակայ քաղաքաց բաղդատմամբ եղական: Ըմրան տօթը՝ ~~հեռի~~ ջերմաչափին մինչև 25°—27° աստիճանը կրնայ հասնիլ, և հազիւ կըրնայ պատահիլ որ արևակէղ տօթոյ ժամանակ՝ ջերմաչափին սնդիկը՝ մինչև 30°—32° աստիճան բարձրանայ, նոյնպէս ձմրան սաստիկ ցուրտը զրոյէն մինչև 5°—6° աստիճան կիջնէ: Տարուան չորս եղանակներն իրենց պաշտօնն ամենայն հաւատարմութեամբ կը կատարեն, առանց մին զմիւսն զրկելու: Ձմեռն առատօրէն ձիւն կը տեղայ, և զարնան ժամանակ անձրևներն յորդ են ու Վարբերդի ընդարձակ դաշտը կանաչներով և գոյնզգոյն ծաղիկներով, և բազմաթիւ պարտէզներն ու անտառներն սաղարթներով կը զարդարին, և զանոնք բուն կը կազմեն սոխակներու ու այլազան թուռչուններու: Ի մասնաւորի, զմայլելի տեսարան մ'ունի Վարբերդի դաշտը, յորում ցորենի հասկեր հասուննալով կը գեղնին թէև,

սակայն ծառերն ու պարտէզներն, որք Վարբերդի գաւառի մեծ մասը կը գրաւեն, տարւոյն մէջ՝ ամբողջ ինն ամիս իրենց կանաչազարդ, գեղեցիկ տեսարանը երբէք չեն փոխեր:

### ԲՈՅՍՔ

Սոյն գաւառն իւր օդոյն բարեխառնութենէն և հողոյն արգասաւորութենէն բազմատեսակ արմտիք կարտադրէ, որոց տեսակներն ու արժէքը կը ցուցնեմք հետեւեալ ցուցակաւ:

| ՅՈՒՅԱԿ ԲՈՒՍՈՅ ԵՒ ԱՐՄՏԵԱՅ ԵՒ ԱՐԺԷԻՑ ՆՈՅԻՆ |       |         |     |        |     |        |
|------------------------------------------|-------|---------|-----|--------|-----|--------|
| ՏԵՍԱԿ                                    | 2 ա փ | Յաճ գին |     | Միջակ. |     | Բարձր. |
|                                          |       | դրշ.    | փք. | դրշ.   | փք. |        |
| Յորեան . . . . .                         | Քոռ.  | 25      | —   | 40     | —   | 50     |
| Գարի . . . . .                           | »     | 15      | —   | 20     | —   | 30     |
| Եղիպտացորեն . . . . .                    | »     | 15      | —   | 20     | —   | 30     |
| Կըկըկ . . . . .                          | »     | 12      | —   | 17     | —   | 23     |
| Կորեակ . . . . .                         | »     | 12      | —   | 17     | —   | 23     |
| Կտաւատ . . . . .                         | »     | 35      | —   | 45     | —   | 70     |
| Հուշմա . . . . .                         | »     | 35      | —   | 45     | —   | 70     |
| Սիսեռ . . . . .                          | »     | 20      | —   | 35     | —   | 50     |
| Լուբիա . . . . .                         | »     | 40      | —   | 54     | —   | 80     |
| Ոսպ . . . . .                            | »     | 25      | —   | 40     | —   | 60     |
| Բակլայ . . . . .                         | »     | 15      | —   | 20     | —   | 30     |
| Ֆիթ . . . . .                            | »     | 15      | —   | 20     | —   | 30     |
| Քուշնա . . . . .                         | »     | 20      | —   | 30     | —   | 40     |
| Ճուլպանտ . . . . .                       | »     | 18      | —   | 28     | —   | 40     |
| Ընկոյզ . . . . .                         | »     | 30      | —   | 35     | —   | 40     |
| Բրինձ . . . . .                          | Լիտր  | 8       | —   | 12     | —   | 16     |
| Նոյստ շոր . . . . .                      | »     | 1       | —   | 1      | 10  | 1 20   |
| Գետնախնձոր . . . . .                     | »     | —       | 30  | 1      | —   | 1 20   |
| Բաթաթէս . . . . .                        | »     | 1       | 20  | 2      | —   | 2 20   |
| Շողգամ . . . . .                         | »     | —       | 20  | —      | 30  | 1      |
| Բողկ . . . . .                           | »     | —       | 20  | —      | 30  | 1      |
| Ստեպղին . . . . .                        | »     | —       | 20  | —      | 30  | 1      |
| Սոխ . . . . .                            | »     | 1       | —   | 1      | 20  | 2      |
| Խստոր . . . . .                          | »     | 4       | —   | 6      | —   | 9      |
| Նրմատ (բանջարի) . . . . .                | »     | —       | 30  | 1      | —   | 1 20   |
| Բամպակ . . . . .                         | »     | 30      | —   | 40     | —   | 50     |
| Ծխախոտ . . . . .                         | »     | 30      | —   | 42     | —   | 48     |
| Վաղամբ . . . . .                         | »     | —       | 25  | —      | 35  | 1 20   |
| Բանչար . . . . .                         | »     | —       | 20  | —      | 30  | 1      |
| Նղատղեղ . . . . .                        | »     | 1       | 20  | 2      | —   | 2 30   |
| Մնանուխ . . . . .                        | »     | 1       | 20  | 2      | —   | 2 20   |
| Բէհան . . . . .                          | »     | 1       | 20  | 2      | —   | 2 20   |
| Հաղար . . . . .                          | »     | —       | —   | —      | —   | —      |
| Դըդուժ . . . . .                         | »     | —       | 20  | 1      | —   | 1 20   |
| Չբանսի . . . . .                         | »     | —       | 20  | 1      | —   | 1 20   |

Ս. Գնոց այս երեք աստիճաններն տեսակին տարբերութիւնը չ'են ցուցներ, այլ տարւոյ առատութիւնն ու նուազութիւնը:

Բ. Քարքերգի մէկ բուր 53 էն մինչև 60 օրս կը կշռէ. և մէկ օրսան հաւասարէ 1,280, կրամի:

Գ. Ատաւատէն վառելու ձեթ կելլէ:

Դ. Հուշմայէն ուտելու իւշ կելլէ, որոյ անունը կը կոչուի շիրիկ եաղը:

Ե. Մէկ լիտր 6 օրայի հաւասարէ:

Չ. Գաւառիս վաճառականութեան մէջ կարեւոր տեղը կը բռնէ բամպակի առուտուրը: Կանայք կը մանեն զայն և այս մանուածը բուն բամպակին մէկուկէսը կարժէ, այս բամպակէն հաստ կտաւ կը դործեն, որուն մէկ ծրարը (թօփ) կարժէ 1½ գհկն. է մինչև 3—6 գհկն, բացի դործողէրէ, որ թօփին չափուն համեմատ կտորիս Մէկ ծրար կտաւը 12 կնգն. երբեմն. և 5/8 կնգն. լայնութիւն ունի, միկ կանգունը 68 սանթիմէթոյի հաւասարէ:

Ը. Ծխախոտը՝ բէփի սահմանած դնոյն կ'ոսայի:

| ՏԵՍԱԿ                    | 2 ափ  | Ցած գին |     | Միջակ. |     | Բարձր. |     | ԾԱՆՕԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ            |
|--------------------------|-------|---------|-----|--------|-----|--------|-----|----------------------------|
|                          |       | դր.     | փր. | դր.    | փր. | դր.    | փր. |                            |
| 2 մերուկ . . . . .       | 1 հոր | —       | 30  | 1      | —   | 1      | 20  | Ը. Հազար. կանկառ. սա-      |
| Սեխ . . . . .            | »     | 1       | 20  | 2      | —   | 2      | 20  | լաթ. ելակ, սորա որոշ գին   |
| խաղող . . . . .          | »     | 1       | 20  | 2      | —   | 3      | —   | չունին, և մասնաւորաց պար-  |
| 2 ամիշ . . . . .         | »     | 5       | —   | 7      | —   | 9      | —   | տեղներուն մէջ կը գտնուին:  |
| Հիւրա . . . . .          | »     | 1       | 20  | 2      | —   | 3      | —   | Թ. Մէկ կաղամբը կէս         |
| Գինի . . . . .           | »     | 5       | —   | 7      | —   | 9      | —   | լիտրէն մինչև չորս լիտր     |
| 2 որ թուլթ . . . . .     | »     | 2       | —   | 2      | 20  | 3      | —   | կը կշռէ:                   |
| 2 որ ծիրան . . . . .     | »     | 8       | —   | 10     | —   | 12     | —   | Ժ. Եֆիօնը՝ Եւրոպայի        |
| Սաւոր . . . . .          | »     | 1       | —   | 1      | 20  | 2      | —   | գնդին կը նայի:             |
| Մահլաթի միջուկ . . . . . | »     | 18      | —   | 24     | —   | 32     | —   | Ժ. Ղէհրեն նոյնպէս:         |
| Ճէհրի . . . . .          | »     | 25      | —   | 40     | —   | 50     | —   | Ժ. Խաղող. զրեթէ 20         |
| Կտաւտի ձեթ . . . . .     | Օխա   | 3       | —   | 3      | 20  | 4      | —   | տեսակ կայ. յուլիս ամսէն    |
| Հուշմայի . . . . .       | »     | 3       | —   | 1      | 3   | 20     | 4   | սկսեալ նոր բերքը կը հաս-   |
| Եֆիօն . . . . .          | »     | 120     | —   | 180    | —   | 240    | —   | նի՝ և մինչև յառաջի կայ     |
| Կանաչ սոխ . . . . .      | »     | —       | 5   | —      | 10  | —      | 15  | մայիս թարմ խաղող կը        |
| Պատինճան . . . . .       | »     | —       | 10  | —      | 15  | —      | 20  | գտնուի, և որ աստէն ուզուի  |
| Տօմաթէս . . . . .        | »     | —       | 10  | —      | 15  | —      | 20  | առատ է:                    |
| Կեռաս . . . . .          | »     | —       | 15  | —      | 20  | 1      | —   | Ժ. Գինւոյ ամենալաւ         |
| Վիշնէ (բալ) . . . . .    | »     | —       | 20  | —      | 30  | 1      | —   | տեսակները խիստ առատ կը     |
| Թարմ թուլթ . . . . .     | »     | —       | 10  | —      | 15  | —      | 20  | գտնուին և ցաւէ որ յուլիս   |
| » ծիրան . . . . .        | »     | —       | 15  | —      | 20  | —      | 30  | պէտք կը վատնուին. 10 անձէ  |
| Տանձ . . . . .           | »     | —       | 20  | —      | 30  | 1      | —   | բաղկացեալ տան մը մէջ տա-   |
| Խնձոր . . . . .          | »     | —       | 20  | —      | 30  | 1      | —   | րեկան 60 օխայէն մինչև      |
| Կուռն . . . . .          | »     | —       | 20  | —      | 30  | 1      | —   | 900 օխա գինի կապառի,       |
| Կուշի միջուկ . . . . .   | »     | 6       | —   | 8      | —   | 10     | —   | եթէ գինւոյ վաճառականու     |
| Օղի . . . . .            | »     | 3       | —   | 4      | —   | 5      | —   | թիւնը ԸԼԼայ՝ քարբերդի      |
| Դեղձ . . . . .           | »     | —       | 30  | 1      | —   | 1      | 20  | գաւառն՝ ընդարձակ ասպա-     |
| Սերկէիլ . . . . .        | »     | —       | 20  | —      | 30  | 1      | —   | րեզ մէ այդ առևտրոյն:       |
| Կաղին . . . . .          | »     | 2       | 20  | 3      | —   | 4      | —   | Ժ. Խնձորի և տանձի          |
| Հէրամոխովակ . . . . .    | »     | 10      | —   | 15     | —   | 18     | —   | զրեթէ 20 տեսակը կը ԸԼԼայ և |
| Պամիայ 100 ը . . . . .   | »     | —       | 8   | —      | 10  | —      | 15  | մինչ ց' մայիս կը գիմանայ:  |
| Պղպեղ . . . . .          | »     | —       | 30  | 1      | —   | 1      | 20  | Ժ. Ե. Օղին չամիչէն, թու-   |
| Վարունդ . . . . .        | »     | 2       | —   | 5      | —   | 7      | 20  | թէն, խաղողէն և աղւալէն     |
| Պրասայ . . . . .         | »     | —       | 10  | —      | 20  | —      | 30  | կը հանեն:                  |

Տունկերն են, թթենի, կաղնի, բարտի, ուռենի և ըն: Հէն-  
քի համար ընդհանրապէս բարտի ծառ կը գործածուի, իսկ վառե-  
լու համար կաղնի (մէշէ), որուն մէկ լիտրն եղանակին համեմատ՝  
20, 25 և 30 փարա կարժէ: Պարտեղներէն եկած պողպատու և  
ոչ-պողպատու ծառոց փայտերն օ<sub>10</sub> 25 դահեկան պակաս արժողու-  
թիւն ունին: Կառնիի անտառները Վարբերդէն չորս ժամ հեռի  
և արևմտեան հարաւային կողմը Սարը-Ս'էշէ ըստած լեռներուն  
մէջ կը գտնուին. Տօրոսի և Չարսանճագի կողմերն ալ ընդարձակ  
անտառներ կան: Վարբերդի փայտը գրեթէ չորս ժամ հեռի տե-  
ղերէ կգայ և ածուխին մէկ լիտրը՝ ժամանակին համեմատ 35  
փարա, 1 ղուրուշ և 1 <sup>1</sup>/<sub>4</sub> ղուրուշ:

Հէնքի համար գործածուելիք ատաղձը՝ բարտի ծառէն կը



կտրեն, այս ծառն ամեն գիւղ առատօրէն կը գտնուի, սակայն Վարբերդէ՝  $\frac{3}{4}$  ժամ հեռի Վէսիրիկ կոչուած գիւղը կեդրոն կրնայ համարուիլ այդ ծառին:

Մայրի փայտն ու տախտակը՝ Վարբերդի հիւսիսակողմը՝ կէրճանիշ կոչուած անտառներէն՝ կելլէ և Նփրատի միջոցաւ կը փոխադրուի: Նփրատն՝ յիշեալ անտառին առաջքէն կանցնի և Վարբերդէ 6 ժամ հեռի Մշուան ըսուած գիւղին եզերքը կը թափէ իւր բերած փայտերն, ուստից սայլերով կը փոխադրուին ի կեդրոնավայրն:

### ԲԱՐՏԻ ԾԱՌՈՅ ԳԵՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԺԷՔԸ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՉ

|                                |                             |                         |                 |  | Պ. ր ու շ |
|--------------------------------|-----------------------------|-------------------------|-----------------|--|-----------|
| 12 կանգ. <sup>1</sup> ) երկայն | 18 մատ տրմգիծ ունեցող       | գերանը                  | 80—90           |  |           |
| 12 » »                         | 15 » » » »                  |                         | 45—50           |  |           |
| 8 » »                          | 12 » » » »                  |                         | 16—20           |  |           |
| 6 » »                          | 10 և 12 » » » »             |                         | 10—12           |  |           |
| 6 » »                          | 8 » » » »                   |                         | 8—9             |  |           |
| 5 $\frac{1}{2}$ » »            | 6 » » » »                   |                         | 5—6             |  |           |
| 5 $\frac{1}{2}$ » »            | 5 » » » »                   |                         | 3—4             |  |           |
| 2 $\frac{1}{2}$ » »            | 1 $\frac{1}{2}$ »           | Թանձր 12 մատ լայն տախտկ | 3—              |  |           |
| 2 $\frac{1}{2}$ » »            | 1 » » 8 » » »               |                         | 1 $\frac{1}{2}$ |  |           |
| 2 $\frac{1}{2}$ » »            | 3 $\frac{1}{4}$ » » 6 » » » |                         | 1—              |  |           |

### ԿԵՆԴԱՆԻՔ

Ընտանի և վայրի կենդանեաց ամեն տեսակները կան. ինչպէս նաև թռչնոց ամեն տեսակներն. իսկ միջատներուն մէջ գրէխաւոր տեղը կը բռնեն շերամի որդն և մեղուն:

1) Մէկ կանգունը 2  $\frac{1}{2}$  մատի հաւասար է, որ տեղական բառովն աճարի կը կոչուի և 76 սանթիմիթրօ է:

ԿԵՆԴԱՆԵԱՅ ՄԱՏԱԿԱՐԱՐԱԾ ՆԻԻԹՈՅ ԱՐԺԵՐԸ:

| ՏԵՍԱԿ                       | Զ ա փ | Յաճ գին |     | Միջակ. |     | Բարձր. |     | ԾԱՆՕԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ                                                                                      |
|-----------------------------|-------|---------|-----|--------|-----|--------|-----|------------------------------------------------------------------------------------------------------|
|                             |       | շրշ     | փր. | շրշ    | փր. | շրշ    | փր. |                                                                                                      |
| Կարագ . . . . .             | Լիտր  | 30      | —   | 40     | —   | 45     | —   | Ա. Եղան միսը ձմեռը կը դորձածուի և լաւ ապուխդ կը շինուի, որուն լիտրը կարժէ առառաւելն 60 դրշ:          |
| Պանիր թարմ. . . . .         | »     | 12      | —   | 15     | —   | 20     | —   |                                                                                                      |
| » Տիկի . . . . .            | »     | 20      | —   | 25     | —   | 30     | —   |                                                                                                      |
| Մեղր . . . . .              | »     | 18      | —   | 24     | —   | 30     | —   |                                                                                                      |
| Ջարպ . . . . .              | »     | 18      | —   | 22     | —   | 28     | —   |                                                                                                      |
| Բուրդ լուացած . . . . .     | »     | 36      | —   | 42     | —   | 48     | —   | Բ. Ուշտարի մսին ամէնէն բարձր գինը ձմեռն է. ամառը միջին գնով կը ծախուի. իսկ աշնան ժամանակ խիստ արժան: |
| » անլուայ . . . . .         | »     | 18      | —   | 24     | —   | 28     | —   |                                                                                                      |
| Գոմէշի մորթ. . . . .        | »     |         |     |        |     |        |     |                                                                                                      |
| Եղան . . . . .              | »     |         |     |        |     |        |     |                                                                                                      |
| Կաթ. . . . .                | Օհա   | —       | 20  | —      | 25  | —      | 30  |                                                                                                      |
| Կովու միս . . . . .         | »     | 1       | 20  | 2      | —   | 2      | 20  | Գ. Տարրակ. աղանի, սա-րեակ. դակաւ են. խիստ արժան գնով կը վաճառուին:                                   |
| Ուշտարի, այծի միս . . . . . | »     | 1       | 10  | 1      | 30  | 3      | —   |                                                                                                      |
| Մեղրամամ. . . . .           | »     | 10      | —   | 12     | —   | 14     | —   |                                                                                                      |
| Հաւ . . . . .               | Հատ   | 1       | —   | 1      | 20  | 2      | —   |                                                                                                      |
| Հաւկիթ . . . . .            | »     | —       | 2   | —      | 3   | —      | 4   |                                                                                                      |
| Ուշտարի մորթ . . . . .      | »     | 5       | —   | 7      | —   | 9      | —   |                                                                                                      |
| Սյճի . . . . .              | »     | 6       | —   | 9      | —   | 12     | —   |                                                                                                      |
| Սանսարի . . . . .           | »     | 40      | —   | 50     | —   | 60     | —   |                                                                                                      |
| Գայլի . . . . .             | »     | 8       | —   | 12     | —   | 18     | —   |                                                                                                      |
| Սղուէսի . . . . .           | »     | 8       | —   | 12     | —   | 20     | —   |                                                                                                      |
| Նապատակի մորթ . . . . .     | »     | 1       | 10  | 1      | 20  | 2      | —   |                                                                                                      |
| Մածուն. . . . .             | Թաս   | —       | 20  | —      | 30  | 1      | —   |                                                                                                      |

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔ ԵՒ ԲՆԱԿԻՉՔ

Վարբերդի գաւառին կուսակալութիւնը Սամուրէթ-իւլ-Լ-զիլ կը կոչուի, և իւր կեդրոնաւայրն է Սէզիրէ կամ Մեղրաւ կոչուած աւանն՝ որ բուն քաղաքէն գրեթէ մէկ ժամ հեռի է և խճուղեաւ միացեալ:

Այս կուսակալութիւնը մէկ միւլթեսարրըջութիւն ունի, որոյ իրաւասութեան ներքեւ են Աղձա-տաղ, Պէհէսնի, Հիւսնի-Սանսուր և Վաղթա գաւառակներն, որոց իւրաքանչիւրն ուրոյն գայմագամութիւն կը կազմէ բազմաթիւ գիւղերով, իսկ բուն կուսակալութեան կեդրոնի ներքեւ երեք գլխաւոր կուսակալութիւններ կան, որք են Ահն, Արաբկիր և Կապան-Սատէն: Ասկից յառաջ Սամուրէթ-իւլ-Աղիլ կուսակալութեան միացեալ էին Չըմըշկաճագ, Չարսանճագ և Տօրոս (Տէրսիմ) գաւառակներն, սակայն մի քանի տարիէ հետէ զատուելով առանձին կուսակալութիւն (վիլայէթ) հռչակուեցան: Այնպէս Բալու, Արդնի-Սատէն, Արդնի, Ջերմուկ, Չընքուշ և Սէվերէկ գաւառակներն, յայնժամ այն

կուսակալութենէ զատուելով՝ միացան Տիգրանակերտի: Այս գաւառակներն թէև զատուած՝ սակայն առևտրական սերտ յարաբերութեամբ դարձեալ միացած են գաւառիս հետ:

Երեք գլխաւոր ազգեր՝ Վարբերդի գաւառը կը կազմեն, Հայք, Թուրք և Վուրդք: Այս վերջինները գրեթէ Թրքացեալ են և լեզունին միայն կը պահեն. կրօնքով մահմետական են և կառավարութեան օրինաց հլու և երկրագործ ժողովուրդներ: Ենչան մաս մ'ալ Ասորի ազգէն կայ, որ լեզու և գրականութիւն կորուսած ըլլալով՝ հայերէն կը խօսին և կը գրեն, սակայն եկեղեցական արարողութիւննին ասորերէն է:

Գաւառակներն ի բաց առեալ՝ միայն կեդրոնին մէջ 111,920 բնակիչ կայ, որոյ 43,814 հայ և 68,104 թուրք և քուրդ են<sup>1)</sup>:

Խոն քաղաքը՝ Վարբերդ և կուսակալանիստ աւանը՝ Սէրիէ երկու քաղաքապետական (պէլէտլէ) շրջանակի բաժնուած է:

Սէրիէ և ասկից քսանական վայրկեան հեռի՝ Սէրիէի արուարձաններն համարուող Վէսիրիկի, Եղեգիի և Սիւսիւրիւի մէջ 9,546 բնակիչ կայ, որոն 7,620 զայ և 1,926 թուրք են:

Վաղաքի՝ և ասկից գրեթէ  $\frac{1}{4}$  ժամ հեռի՝ իւր արուարձաններն համարուող Հիւսէյնիկի և Սէրայի մէջ 16,306 բնակիչ կայ, որոն 7,700 զայ և 8,606 թուրք են:

Վարբերդի և Սէրիէի շրջակայներէ դուրս գտնուող գիւղորէից բնակիչներն են 28,494 հայ և 57,574 թուրք և քուրդ:

### ՔԱՐԲԵՐԴԻ ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ ԳՏՆՈՒՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅ ԲՆԱԿՉԱՅ ԹԻՒՆ

|                           |        |                                                                     |
|---------------------------|--------|---------------------------------------------------------------------|
| Կեդրոնին մէջ . . . . .    | 43,814 | } Այս թուահամարը կառավարութեան տուած է: Գտնուող գիւղերն անհամար են: |
| Կապան-Սառնի . . . . .     | 478    |                                                                     |
| Երաբկի . . . . .          | 9,652  |                                                                     |
| Ենայ և Եղնի . . . . .     | 11,014 |                                                                     |
| Սալաթի . . . . .          | 7,224  |                                                                     |
| Հիւսիւ-Սանսուրի . . . . . | 2,710  |                                                                     |
| Պէհէսնի . . . . .         | 1,486  |                                                                     |
| Եղճատաղի . . . . .        | 418    |                                                                     |
| Վեաղվայի . . . . .        | 1,376  | }                                                                   |
| Համագումար                | 78,172 |                                                                     |

1) Բնակչաց թիւը կառավարութեան մարդահամարի տեղականներէն առնուած է:



### ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԵՆԵՍ ԲԱԺՆՈՒԱԾ ԳԱԻԱՌԱԿԱՅ ՀԱՅ ԲՆԱԿԻՉ

Պոխագրեալ գումար 78,172

|                                |        |                                                               |
|--------------------------------|--------|---------------------------------------------------------------|
| Չըմշկածագի մէջ . . . . .       | 6,500  | } Երկու համարը հը-<br>մուտ անձանցմէ<br>նայն ինամով<br>ուած է: |
| Չարսանճագի և Տէրսիմի . . . . . | 22,200 |                                                               |
| Բալուի . . . . .               | 23,000 |                                                               |
| Երղընի-Սատէնի . . . . .        | 1,500  |                                                               |
| Երղընի . . . . .               | 2,500  |                                                               |
| Չընքուշի . . . . .             | 4,200  |                                                               |
| Չէրմուկի . . . . .             | 2,400  |                                                               |
| Սևերէկի . . . . .              | 3,100  |                                                               |
|                                | 65,400 |                                                               |

$78,172 + 65,400 = 143,572$ : Ստուար թիւ մը հայ բնակիչ՝ կեդ-  
րոնին և իւր մերձակայ գաւառակաց մէջ:

### ՔԱՐԲԵՐԴԸ ԾՐԱՊԱՏՈՂ ԳԱԻԱՌԱՅ ԵՒ ԳԱԻԱՌԱԿԱՅ ՀԵՌԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քարբերդի արևելեան կողմը կիյնան՝ Բալու՝ 12 ժամ, Տիգ-  
րանկերտ՝ 24, Սուշ՝ 40, Բաղէշ՝ 56: Երևելեան հարաւային  
կողմը կիյնան՝ Երղընի Սատէն՝ 12 ժամ, Երղընի՝ 16: Հարա-  
ւային կողմը կիյնան՝ Չընքուշ՝ 12 ժամ, Չէրմուկ՝ 21, Սէվե-  
րէկ՝ 32, Եդեսիա 48, Եյնթափ՝ 40: Հարաւային արևմտեան  
կողմը կիյնան՝ Սալաթիա՝ 18 ժամ, Պէհէսնի 28, Հիւսնիւ-  
Սանսուր՝ 30, Սարաշ 36: Երևմտեան կողմը կիյնան՝ Կապան-  
Սատէն՝ 10 ժամ: Քարբերդի արևմտեան հիւսիսային կողմը կի-  
նան՝ Երաբկիր՝ 18 ժամ, Տէփրիկէ կամ Տիվրիկէ՝ 30, Շապին-  
Կարահիսար՝ 38, Սեբաստիա 60: Հիւսիսային կողմը կիյնան՝  
Էկն՝ 24 ժամ, Չըմշկածագ՝ 12, Խողաթ՝ 12, (կեդրոն Տէրսի-  
մի կուսակալութեան) Երիզա՝ 36: Հիւսիսային արևելեան կողմը  
կիյնան՝ Սանազկերտ՝ 14 ժամ, Կարին 48:

### ԳԱԻԱՌԻՍ ԹՈՎՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Գաւառս հաղորդակցութիւն ունի հինգ նաւամատոյցներու  
հետ, որոց չորսը՝ Սեաւ ծովու և մին՝ Սիջերկրականի վերայ է:  
Սեաւ ծովուն վրայ դտնուող նաւամատոյցներուն առաջինն է  
Սամսոն որ խճուղեաւ միացած է Քարբերդի հետ: Սաճառա-

բարձ և ճանապարհորդաց կառքեր ամառը՝ 13 օրէն, իսկ ձմեռն՝ առ առաւելն 16 օրէն կերթեկեն: Այս ճանապարհէ կանցնի Ռաբելոնի թղթատարութեան սուրհանդակն՝ որ Պօլսոյ և Վարբերդի միջև՝ 9 օրէն կերթեկէ:

Երկրորդ նաւամատոյցն է՝ Տրապիզոն, որոյ խճուղին մինչև Երիզա շինուած է, ուստից մինչ ցԽոզաթ՝ որ կեդրոնատեղին է Տէրսիմի, շինուելու վրայ է. իսկ Խոզաթէն մինչև ցՆերդակ շինութիւնն աւարտած ըլլալով՝ անտի մինչ ցՎարբերդ՝ երկու ժամ տեղ մնացած է որ անմիջապէս պիտի շինուի, և հետեապէս յառաջիկայ տարուան մէջ, Տրապիզոնէն մինչև ցՎարբերդ՝ կատարելագործուելով՝ Տրապիզոն՝ ութ, իսկ Կ. Պօլիս տասն և մէկ աւուր ճանապարհ պիտի ըլլայ Վարբերդի համար:

Երրորդ նաւամատոյցն է՝ (Ռ)տու, որոյ խճուղին իսկ մինչև ցՏէփրիկէ շինուած և Արաբկիրի հասնելու համար վեց ժամու ճանապարհ մնացած է և շինուելու վրայ է. իսկ Արաբկիրէն ցը Վարբերդ թէև շինուած է, սակայն մի քանի ձորերու վրայ շինուելիք կամուրջները տակաւին աւարտած չեն, եթէ ի մօտոյ աւարտին այդ կամուրջներ՝ յայնժամ Վարբերդէ մինչ ցծովեզը 6, իսկ մինչ ցՊօլիս ինն աւուր ճանապարհ պիտի ըլլայ:

Չորրորդ նաւամատոյցն է՝ Կիրասոն, ուստից խճուղին մինչ ցՇապին-Պարահիսար կատարելապէս աւարտեալ և մինչև ցՏէփրիկէ աւարտելու վրայ է: Այս ևս, համանման վերնոյն ամենակարճ միջոցն է Պօլսոյ և Վարբերդի:

Հինգերորդ նաւամատոյցն է՝ Սիջերկրականի ծովուն վրայ՝ Խաբէնտէրուն, ուստից մինչև ցՆերիա՝ որ 30 ժամ է՝ խճուղին շինուած է և մինչ ցՎարբերդ թէև շինուելու վրայ է, սակայն չկարծուիր թէ խիստ կարճ միջոցի մէջ կկատարելագործի: Այժմ Վարբերդէ մինչև ցՍիջերկրական ծով՝ կարաւանի ընթացքով՝ 13 աւուր ճանապարհ է, եթէ խճուղին աւարտի ութ աւուր մէջ պիտի կրնայ ոք Վարբերդէ Երեւանէրուն երթալ:

### ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՔԱՐԲԵՐԴԻ

Վարբերդի վաճառականութիւնն բանուկ է ըստ բաւականին: Թէ արտածողք և թէ ներածողք կրնան հաւասարապէս գործ տեսնել:

Ընցեալ 1885 տարւոյ վաճառականական ճշգրիտ ցուցակ մը՝ զոր քաղաքիս հետաքրքիր անձանց մին՝ ստոյգ աղբիւրներէ քաղելով պատրաստած է՝ կրնայ լիովին գաղափար մ'ընծայել գաւառիս վաճառականութեան նկատմամբ:

Նոյն տարին գաւառէս միայն յԵւրոպա ղրկուած է՝ աֆիօն 42,000 անգղ. լիւրա, խաշխաշ 6,500, այծի մորթ 7,500, ճէհ-րի 1,333, բուրգ 1,000, գորգ 1,700, չոր ծիրան 500, ուլի սև մորթ 660, վայրի կենդանեաց մորթ 3,000, մետաքս 230, այլ և այլք 500: Ընդհանուր գումար **64,923**

Իսկ Տաճկաստանի ուրիշ երկիրներ ղրկուածներն են, բամբակ՝ (նոյն տարին թէ գինն արժան և թէ նուազելով հանդերձ 17,600 անգղ. լիւրա, պտուղ և կանանչեղէն 17,000, տարազա-գործեալ մետաքսեղէն և մանած 21,000, կօշիկ 3,500, կաշի խաղախորդեալ 2,000, աճառ 2,300, ատաղձ 2,500, մետաքսի և շերամի հունտ 2,500, մեղր և մեղրամոմ 1,500, գինի 3,000, եւրոպական մթերք 22,000: Ընդհանուր գումար **95,400**: Նոյն 1885 տարւոյ մէջ Եւրոպայէ ներածեալներն են՝ մանած 22,500 անգղ. լիւրա, կտակեղէն 21,575, պամայ 15,000, գոմէշի կաշի 15,000, շաքար 7,500, բրդեղէն 6,825, լեղակ 5,800, թուղթ 4,250, խազվէ 4,650, մետաքսախառն բրդեղէն 4,500, երկաթ 3,800, քարիւղ 4,100, գարֆիճա 2,400, պղինձ 2,100, ներկ 1,576, լուցկի 1,425, եալմա 973, ֆէս 3,000, կաշի 1,300, անագ և օշինդր 1,300, Պարսկաստանի մթերք, ևայլն 11,000, Տաճկաստանի քաղաքներէ եկած մթերք 78,100: Ընդհանուր գումար **219,174**: Եւրոպ. գաւառին նոյն տարւոյ արտա-ծութիւնք են յԵւրոպա 64,923 անգղ. լիւրա, յայլ և այլ գաւառս Տաճկաստանի 95,400: Համագումար **160,323**: Իսկ Եւրոպայէ և այլ քաղաքաց ներածութիւնք են **219,174** անգղիական լիւրա: Ուրեմն նոյն տարւոյ մէջ գաւառէս ելած գումարն է (219, 174—160, 323) **58,851** անգղ. լիւրա:

Սոյն արտածութեանց և ներածութեանց ցուցակին մէջ տես-նուած 58,851 անգղ. լիւրայի բացն՝ երկրին դրամական բաց մ'է որ կրնայ փակուիլ ուրիշ միջոցներով:

Ս՝ աճառականաց յարաբերութեան կեդրոններն են գլխաւորաբար Կ. Պօլիս, Բերիա, Տրապիզօն և գաւառիս շրջակայ քաղաքները՝ Սուսուլի, Սէրտինի, Պէյրուծի, Եւգոկիոյ, Եմասիոյ



Սէրգուֆուներ, Օլիէի, Լտանայի, Կեսարիոյ և Օմիւռնիոյ հետ ալ յարաբերութիւն ունի տեղական վաճառականութիւնն. իսկ ի հարկին կրնայ յարաբերութիւն ունենալ նաև Վանայ, Բաբելոնի, Ղաճապոսի և Նգիպոսի հետ: Ալ գտնուին նաև հայ վաճառականներ՝ որոնք ուղղակի Նւրուպայի, Լմերիկայի հետ առևտուր ունին: Ալ վաճառականութեան մեծ մասը հայոց ձեռքն է:

Կերմուծեալ ապրանքները, բացի փոխադրութեան ծախքէ,  $0 \frac{1}{10} 5$  շահով կը վաճառուին աստ: Սանիֆաթուրայի վերաբերեալ մթերից փոխադրութիւնքն և յանձնարարողչէքի, և շն. ծախքերն  $0 \frac{1}{10} 7 \frac{1}{2}$  է, որ վաճառականին  $0 \frac{1}{10} 5$  շահուն վրայ բարդուելով, բուն տեղական գնոյն վրայ  $0 \frac{1}{10} 12 \frac{1}{2}$  յաւելում մը կը գոյացնէ. իսկ կըշռական (գանթարիէ) մթերից փոխադրութեան միջին ծախքն է օխային մէկ դահէկան, և յանձնարարողչէքի և շահու ծախքերը առնելով  $0 \frac{1}{10} 6 - 7 \frac{1}{2}$  կաւելնայ բուն գնոյն վրայ:

Ղաւառիս վաճառականութեան չընդարձակուելուն գլխաւոր մէկ պատճառն այս է, որ վաճառականք՝ իրենց աւելցուցած ստակն ընդհանրապէս արտի, այգիի և այլ հողային կալուածներու կը ծառայեցնեն, և այդ կալուածները գիւղացի կարող երկրագործներու (մարապա) կը յանձնեն, և այսպէս  $0 \frac{1}{10} 5 - 7$  հաստատուն և կամուտ մը ձեռք կը բերեն, որ թէև ապագային համար իրենց ստակներու ապահովութիւն մ'է, սակայն վաճառականական յառաջագիմութեան ալ մեծ արգելք:

Աղանաւորութիւնն ալ բաւական դեր կը կատարէ գաւառիս մէջ:

Լրհեստք գրեթէ իրենց նախնի դիրքն ունին և գլխաւորներն են, ոսկերչութիւն, ժամագործութիւն, երկրագործութիւն, ձուլածութիւն, պայթարութիւն, պղնձագործութիւն, գերձակութիւն, կօշկակարութիւն, մետաքսեղէն տարազագործութիւն, որմնադրութիւն, հիւսնութիւն, քարակոփութիւն, խաղախորդութիւն, հրացանաշինութիւն, ներկարարութիւն, և անք:

Լրհեստաւորաց մեծ մասն հայ և ընդհանրապէս Պօլիս ուսած և աշխատած են: Մետաքսեայ պարզ և ծաղիկայ (չիւէքլի) կէզի երկու գործարան կայ, մին ի Սէզլէ և միւսն ի Վարբերդ:

## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ներկրագործութիւնը մեծ տեղ բռնած է գաւառիս մէջ: Բնակեցողները 796,192 արտավար գետին ունի, որուն <sup>1</sup>/<sub>3</sub> մասն ամեն տարի կը ցանուի. այս տարածութեան վրայ 300-ի չափ գիւղ և ավան կը հաշուին, որոց իւրաքանչիւրը 20էն մինչև 300 տուն բնակիչ ունին: Այս գիւղերուն մէջ 60է ավելին հայաբնակ և ընդարձակ գիւղեր են, որոց բնակիչք Ուլ ( ) վայի և Խուլ ( ) վայի արգաւանդ գաշտերը կը մշակեն, և խիստ աշխատաւոր մարդիկն են. սոցա մէջ են մարապա կոչուածներն, որք, ինչպէս քիչ մը յառաջ ըսինք, այլոց հողը կը մշակեն, այսինքն, հողատէրը սերմը կը բաշխէ և մարապան կալուածական տուրքը կը վճարէ. իսկ հասութիւն տասանորդական տուրքը վճարուելէն յետոյ՝ ֆնացեալ արդիւնքն հողատիրոջ և մարապային միջև կը բաժնուի հաւասարապէս: Հողը խիստ յարգի ըլլալով՝ մարապաներն ստիպուած են հողատեսարց համար ամեն կարելի միջոցներն ի գործ դնել, որպէս զի հողն ուրիշին չյանձնեն: Բնցեալ տարուան գաւառիս տասանորդական տրոց գումարն էր 2,972,078 դահկան:

Ներկիրը մեծաւ մասամբ թրքաց և քրդաց ձեռքն է. բայց այժմ հայք ալ սկսած են գնել, և գրեթէ երկրին <sup>1</sup>/<sub>4</sub> մասը ձեռք անցուցած են և հետզհետէ կանցնեն:

## ՏՈՒՍԱՐԱՍԱԾՈՒԹԻՒՆ

Ներկրին ամենամեծ մասը մշակուած է. գիւղերն խիտ և բազմամարդ լինելուն առթիւ, ընդարձակ արօտատեղիներ չունի գաւառս, և այս պատճառաւ միայն իւրաքանչիւր գիւղացի իրեն պէտք եղածին չափ կրնայ տուար պահել, սակայն դրացի Տէրսիմցիք գրեթէ ամբողջովին տուարաբոյժ են և գաւառիս սոյն պակասը սորքա կը լեցնեն. նոյնպէս Բալու և Չարսանձագ:

## ԿԵՆՑԱՂ

Գաւառիս կլիմայէն, պարտէզներէն ու բանջարեղէնի և ազդի ազդի մրգեղէններու առատութենէն կրնայ հասկցուիլ որ մարդ-

կային կենցաղն այստեղ խիստ անդորր է: Ամեն մարդ կը վայելէ աստանօր կենաց և ընչից ապահովութիւն: Օճեղծմունք և եղեռնագործութիւնք դուն ուրեք կը պատահին, ազգ ազգի հետ սիրով կապին:

Կենաց սոյն անդորրութեան մէջ մարդկային սեռի աճումն ալ բնական է:

Ասկից զրեթէ քառորդ դար առաջ գաւառէս պանդխտողներ հաղիւ կը պատահէին, բայց այժմ կերևի թէ երկիրն նեղ կուգայ, յորմէ ստիպեալ բազումք կը գաղթեն:

Խիստ ցաւալի է տեսնել որ Ամերիկայի մէջ Վարբերդի գաղթականութիւնն օր ըստ օրէ յառաջ երթալու վրայ է. մինչև ցայսօր 1,000 հոգւոյ չափ գաղթած են և դեռ կը գաղթեն, կարծելով թէ անգիրենց շահու աղբիւր մը պիտի գտնեն, մինչդեռ չարաչար կը սխալին և առաւել կը թշուառանան:

Սարգիկ ընդհանրապէս երկարակեաց են այս գաւառին մէջ և 110—120 տարի ապրողներ իսկ կը գտնուին:

Ղաւառիս բնակչաց 100էն 2ը՝ 90էն մինչև 100 տարի կապրի, իսկ 50 և 70 տարի ապրողներու թիւը սովորական է:

Ղալով ծննդոց՝ արու և էգ հաւասար են, և ամուսնութիւնք յաճախ:

## ՎԱՆՕՐԱՅՔ

Ղաւառիս մէջ չորս վանք կայ, գաշտի գիւղօրէից զրից համաձայն չորս կողմ կառուցուած. մին՝ որ Օարդարիչ գիւղին մօտ՝ Ապտիւլ-Սէսէհի վանքն է, Վարբերդէ 6 ժամ հեռի Սաստառ լեռան կուրծքը բարձր գրից վրայ կառուցեալ է, գեղեցիկ պարտէզով և առատ ջրով և առողջարար օդով, շրջապատեալ ի բազում հայաբնակ գիւղօրէից: Ենքն է կիսաւեր և հողը սակաւ, և զրեթէ անմշակ վիճակի մէջ է:

Սիւսն է Ղատմայ Ս. Զովհաննու վանքն՝ որ քաղաքին հարաւակողմը կիյնայ և 2<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռի է անտի: Սա՛ ևս բազմահայ գիւղերով շրջապատեալ է, 60 քող<sup>1)</sup> սերմ կը ցանէ, ունի պարտէզներ. ջրեր և տարեկան 80 օսմ. ոսկւոյ հասոյթ մը:

1) Գող. ըսելով պիտի իմանանք 60—62 օխայ:



Եթէ լաւ խնամուի կրնայ մինչև 150 ոսկի տարեկան հասոյթ գոյացնել:

Խուջ ( ) վայի մէջ Վուլէ գիւղին մօտ, յանուն սրբոյն Վահորդայ՝ կանգնուած վանք մ'ալ կայ, որ քաղաքիս արեւմտեան հիւսիսակողմը կիյնայ, և գրեթէ մէկ քառորդ ժամ հեռի է անտի, և կեդրոն է հայաշատ գիւղօրէից: ( ) դը խիստ առողջարար, ունի զով ջրոց աղբիւրներ և փոքրիկ՝ բայց գեղեցկաշէն նշանաւոր մատուռ մ'որ հնութիւն մ'է, հիմնեալ՝ ինչպէս կը կարծուի, ի (մ)ադէոսէ սրբազան առաքելոյն:

Լսյս վանքն ըստ բաւականին շէն է և ունի ձեռագիր տըպեալ ընտիր մատեաններ: Այլ թսուկ քոռ սերմ կը ցանէ և տարածութեան համար բաւական արօտավայր ունի:

Վաւառին վանօրէից մէջ ամենէն կարեւորագոյն տեղը կը բռնէ Ուլ ( ) վայի մէջտեղ՝ Սիւրսիւրիւ Ս. Վհորդայ վանքն իր համանուն հայաբնակ գիւղէն 10 վայրկեան, իսկ քաղաքէն 75 վայրկեան հեռի և նորա հարաւային արեւմտեան կողմն: Լսյս վանքն իւր արտերովը՝ Օլիւ թէփէ կոչուած մեծ բլրոյ մը կուրծքը զետեղուած է, իւր ճակատ պարզած է դէպի հիւսիսային արեւելք և կդիտէ քաղաքն ու Հիւսէյնիկ, Սօնիկ, Վէսիւրիկ, Եղեգի, Սէզիւրէ և Սիւրսիւրիւ գիւղօրէքն, իսկ իյետ կուսէ հարաւ դարձած է: Սէզիւրէէն մինչև վանքին հողերուն սահմանն հասնող վտակն՝ իւր դիրքովն հաւասար է Սէզիւրէի և իւր շրջակայ հողերուն մակերեւութին, իսկ յիշեալ վտակէն անմիջապէս անդին՝ վանքին հողերն են<sup>1)</sup>, որք տակաւ առ տակաւ կը բարձրանան և մինչև վանքն՝ որ գրեթէ 10 վայրկեան տեղ է, 200 մէթրօ բարձրութիւն կստանան բաղդատմամբ Սէզիւրէի, և 170 մէթրօ ցածութիւն՝ բաղդատմամբ Վարբերդի: Այլ վանքին արտօրէից մէջ չորս բլրակ կան, առաջնոյն վրայ կանգնեալ է բուն վանքին շէնքն, և ասկից գրեթէ 2—3 վայրկեան հեռի դէպի հարաւային արեւմուտք՝ երկրորդ բլուրն է, որ վանքին բլրէն 5 մէթրօ ցած է և ուր կանգնուած է Սարգիս վարդապետի սեպհական տունն: Երրորդն է Դուսաղբիւր կոչուած բլուրը՝ վանքին արեւելեան կողմը՝ և 5 վայրկեան հեռի, 20 մէթրօ բարձրութեամբ քան զվանքի բլուրը, չորրորդն է վանքէն 10 վայրկեան դէպի արեւելք

1) Ինչպէս որ կարմիր դժով նշանակուած է յիշեալ վանքին քարտեզին մէջ, որը սակայն խմբագրութիւնս տպագրութեան չէ յանձնած:

ձգուած Պօղ-Թէփէ կոչուած բլուրն՝ որ վանուց բլրէն 30 մէթ-  
րօ բարձր է:

Վանուց առջեւէն անցնող վտակը քառորդ ժամաւ հեռի լճէ  
մը կը բղխի և կը կոչուի վերի ծով: այս վտակ իւր ջուրց ամե-  
նանուազ ժամանակն երկու աղօրեաց քար կարող է դարձնել: Վա-  
նուց օդը զով և խիստ առողջարար է. հողն սպիտակ, կարմիր ու  
սեւաւ է. ձմրան սառնամանիքը սաստիկ է, այնպէս որ քաղաքին  
սառնամանեաց հետ կը մրցի: Ձմրան սկիզբը տեղացող ձիւներն՝  
որք դաշտին մէջ կը հալին, վանուց հողերուն մէջ գրեթէ կը  
սառնին:

Ղուսաղբիւրի բլրակի ետեւէն աստիճանաբար բարձրացող մէկ  
քիլօմէթրէ աւելի երկայնութեամբ միացեալ արտերու գետին մը  
կայ Փէրինտուզ անունով, որ վանուց բլրէն 95 մէթրօ բարձ-  
րութիւն ունի և որուն դիրքն ու տեսարանը, մանաւանդ օդն՝ ա-  
պաքէն սքանչելի է, հիւսիսային զով քամին ամրան ամենատօ-  
թագին ժամանակն իսկ կը շնչէ: Որքան երջանիկ կըլլար Վար-  
բերդի հայն որ այսպիսի գեղազուարճ տեղ մը վարժարան մը  
կանգնէր՝ միացնելով բոլոր վանօրէից հասոյթներն՝ որք եթէ լաւ  
մատակարարուին և յոմպէտս չվատնուին, կարող են բաւական  
ըլլալ մի կեդրոնական գիշերօթիկ վարժարան պահելու:

Սոյն վանքը 480 քոռ ցանուելիք արտ ունի, 265 քոռ ան-  
մշակ հող, տասը արտավար այգի, 11 արտավար արօտ և 94 ար-  
տավար պարտէզ:

Եւս վանուց հողերն այնքան արգասաւոր են՝ որ գաւառիս  
ամեն տեսակ բերքերու ամենաազնիւը կարտագրէ, մանաւանդ ցոր-  
եանն ու լուբիան ի մէջ այլոց՝ ազնուագոյն է: Հողերուն մեծ մա-  
սը ջրոյն այն վտակն է՝ որուն համար ի մասնաւորի խօսեցանք  
քիչ մ'առաջ: Իսկ բաց այտի՝ բուն վանքին հողերէն հինգ աղ-  
բիւր կը բղխի, որոց իւրաքանչիւրէն երկու կամ երեք ծորակ  
(մասուրա) ջուր կը վազէ ջրոց խիստ նուազ եղած ժամանակը:

Հողերուն <sup>2</sup>/<sub>3</sub> մասը ջրարբի է, և եթէ սակաւ ինչ խնամ  
տարուի՝ ամբողջապէս ջրարբի կրնայ ըլլալ. ջուրերն զով և ա-  
նոյշ են:

Եւս վանքին տարեկան եկամուտն է 80—90 ոսկի օսմ.  
եթէ կանոնաւորապէս հոգացուի մինչև 150—160 ոսկի տարե-  
կան եկամուտ կրնան ունենալ:

Վանուց շէնքն ու մատուռը խիստ անշուք վիճակ մ'ու-  
նին, և ցաւալի է որ մինչև ցայսօր այսպիսի գեղեցկադիր վանքի  
մը յառաջագիմութեան կարևորութիւն չարուելով անխնամ թող-  
ուած, և միայն նորա գեղեցիկ հողերէն արտադրեալ հասոյթներ-  
րով շահամոլ անձինք իրենց կոկորդն յագեցուցած են, և այդմ  
իսկ չբաւականնալով իրենց մասնաւոր տուներ ալ կանգնած են:

### ԿՐՕՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՀԱՅՈՑ

Այդք ընդհանրապէս կրօնասէր են, առանց ուսումնասիրել  
կարենալու կրօնի հիմնական կէտն, և Այաստանեայց եկեղեցւոյ  
սկզբունքն:

Այս ուսումնասիրութիւն՝ որոյ ներշնչողն է անշուշտ կղերն՝  
յեկեղեցւոյ, իսկ դպրոցաց մէջ կրօնի կրթական պաշտօնեայք,  
երբէք ցայս վայր նշանակութիւն չէ ունեցած գաւառիս հայոց  
մէջ:

Վպրոցի մէջ ուսումնասիրելի կրօնական վիճակն՝ աստ մէկդի  
թողլով՝ անցնինք կրօնի այն ներշնչման որ եկեղեցւոյ մէջ պի-  
տի ըլլայ:

Վարբերդ ի վաղուց անտի առաջնորդանիստ է, և առաջ-  
նորդական վիճակն ալ ընդարձակ, որ ամբողջ 68 գիւղ թեմա-  
կան ժողովուրդէ կը բաղկանայ, որոց թիւն է, արու և էգ մէկ-  
տեղ հաշուելով՝ 70,000: Այսքան ստուար թիւ մը ժողովուրդեան,  
փոխանակ բարոյական և կրօնական յառաջագիմութեան նիւթ ըլ-  
լալու հոգևոր առաջնորդութեան, դժբաղդութիւն մ'է տեսնել՝  
որ ժամանակի առաջնորդաց քսակներն լեցնելու և նոցա կոկորդն  
յագեցնելու գործիք եղած են:

Իրաց այս վիճակին մէջ, կրօնի յառաջագիմութիւն, և կրօ-  
նի զգացում բնականաբար անհնար է. քանզի կրօնքն՝ առաջնոր-  
դին կամքն էր եղած, և ժողովուրդը պարտ էր հնազանդ ըլլալ  
նորա կամաց, իսկ առաջնորդին կամքն ալ իւր բնական կամաց  
յագուրդն էր:

Ժողովուրդն, կրօնի այս վիճակին մէջ՝ բոլորովին կոյր մը-  
նալով, միայն իւր քրիստոնեայ ըլլալը բաւական սեւագած, իսկ  
քրիստոնէութեան հանգամանաց մէջ բնական մարդ, և իւր աղատ



կամացն և եթ չմոռտ եղած էր, առանց գիտնալու իւր ի գործ դրած զեղծումներն՝ և առանց ուսանել կարենալու զայս, յորոց որ անկ է:

Բողոքական միսիօնարք՝ որք սովոր են մարդորսութեան, և առ այս ամեն քաղաք և ամեն գիւղ ման գալով, իրենց շահագիտական նպատակն յառաջ տանելու խիստ ճարպիկ, իրենց բոլոր կենաց մէջ՝ չեն կրցած գտնել այնքան հակամէտ ժողովուրդ մը իրենց շահուն ծառայեցնելու, որքան Վարբերդի և նորա թեմօրէից ժողովուրդն:

Այդ միսիօնարք ասկից գրեթէ 30 տարի յառաջ թեակոխելով Վարբերդի գաւառն՝ ըստ ամենայնի քնոյ մէջ խորդացող ժողովուրդ մը գտած են, որ թէև նախանձախնդիր կրօնի, սակայն ձայնի մը պէտք ունէր, արթննալու իւր քնէն և զկրօնն ուսումնասիրելու: Այս ձայնն, այն ատեն յիշեալ միսիօնարք տըւած են այդ դժբաղդ ժողովրդեան, փոխանակ հայ կղերին, և Աւետարան ի ձեռին փաղաքշաբար քարոզելով, Աւետարանի քողին ներքեւ յաջողած են ուր ուրեմն մոլորեցնել զմիամիտ ժողովուրդն և ուժացնել զնա ի փարախէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, և այսպէս յառաջանալով մինչև ցայսօր քարբերդաբնակ հայոց մէջ 5,000 բնակիչ հայ իրենց ուռկանն որսացած են, թէև գաւառիս հայերն քիչ շատ ուսումնասիրել կրցած են այս մօտերս, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ճշմարտութիւնն և բողոքական երեակայեալ կրօնի նպատակը, սակայն և այս դողդոջուն վիճակ մ'ունի ցարդ, և կը հարկաւորի գործօն, անձնուրաց և հմուտ եկեղեցական հովիւներու, մանաւանդ կանոնաւոր և յառաջադէմ վարժարաններու, որպէս զի ազգային մանկտին ի հիմանէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կրթութիւն ստանայ, և առ ի չգոյժ վարժարանաց, չիյնան բողոքական միսիօնարաց և քարոզչաց և նոցա վարժարանական կրթութեանց ծուղակը:

### ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՀԱՅՈՑ

Հայք՝ նիւթական և քաղաքական տեսակէտով յաջող և նախանձելի դրից մէջ կը գտնուին թէպէտ, սակայն վարժարանաց կողմանէ խիստ անշուք վիճակ մ'ունին, որ յիրաւի արգահատա-

նաց արժանի է: Ամերիկեան միսիօնարք ինչպէս կրօնական մասին մէջ, նոյնպէս և հայոց կրթական սոյն վիճակի յետադիմութիւնն իրենց գործառնութեանց յարմար նպատակ սեպելով զՔարբերդ, իւր շրջակայ գաւառներուն մէջ կեդրոն ընտրած են:

Ինչպէս հայոց կրօնական վիճակի պարբերութեանը մէջ բացատրեցինք, միսիօնարք 1853 թուականէն սկսեալ երկու տարի այս գաւառին մէջ դեգերած և 1855ին քաղաքիս Ս. Հակոբ թաղին կից ընդարձակ տարածութեամբ շէնք մը գնելով անմիջապէս քարոզիչներ պատրաստելու համար՝ նախ աստուածաբանական վարժարան մը բացած են: Առաջին անգամ իրենց քսակէն ամսաթոշակ վճարելով 40ի չափ հասակաւոր ուսանողներ ճարած և անընդհատ եղանակաւ տասը տարի շարունակելով, կարգ մը քարոզիչներ պատրաստած ու գիւղերը շրջած են առաքելութեան պաշտօնին, և հետզհետէ փորձով իմանալով որ հայք կրօնասիրութեան հետ մէկտեղ ուսումնասէր ալ են և չունին իրենց մէջ վարժապետներ ու վարժարաններ, սկսած են իրենց նպատակ ընտրել կրթական միջոցն, որպէս զի հայ մանկտին՝ կարենան հաճոյակամ մտցնել իրենց փարախն, ուստի կը բանան նախակրթարաններ, և առանց թոշակի աշակերտներ ընդունելով տակաւ առ տակաւ կսկսին թոշակ տալու վարժեցնել զանոնք, և թոշակագինն հետզհետէ կը բարձրանն, այնպէս որ, խեղճ ժողովուրդ հայոց, անզգալապէս կը վարժուի այդմ, և այժմ մինչև իսկ շրջակայ գաւառներէ բազում աշակերտք, թոշակագին ի ձեռին կուգան մտնել այդ վարժարաններն: Իրենց ընդարձակ շէնքին մէջ չորս կարգի բաժնուած երկսեռ մեծ վարժարաններ ունին, որոց 1886 տարւոյ ուսանողաց թիւն էր 283 արական սեռէ, իսկ 209 իգական սեռէ, և իրենց ստացած թոշակներն են նոյն տարւոյ մէջ 30,542 դահեկան արական սեռէ, 8740 դահեկան իգական սեռէ:

Ս. Երոյգրեալ 283 արական սեռի ուսանողաց 94ը գիշերօթիկ են, որք գաւառներէն և մօտակայ գիւղերէն եկած են, ասոնցմէ միայն 56ը վարժարանի սեղանէն կը սնանին, և միայն 9 ամսուան համար ճական օսմ. ոսկի կերակուրի ծախք կը վճարեն, նոյնպէս ճրագի, փայտի, լուացքի և ննջարանի վարձուց համար մէկ մէկ օսմ. ոսկի. իսկ գասագիրք, ղգեստ, և լն. աշակերտն ինք

կը վճարէ, և այսպէս գիշերօթիկ մը տարեկան 15 օսմանեան ոսկի ծախք մը կընէ:

Վոյնպէս վերոյիշեալ 209ը աշակերտութիւններէն 78 գիշերօթիկ են և վարժարանի սեղանէն կը կերակրուին, և բացի զգեստէ ու դասագիրքէ, միւս պիտոյից համար 5ական օսմ. ոսկի ևս կը վճարեն տարին:

Մհաւասիկ կը ներկայեմք յիշեալ վարժարանի տարեկան ելումից ցուցակը.

Ինչպէս.

ԵԼՔ.

ՄՈՒՏՔ.

|                                                                     | ԴՐՆ.    | ՓՐ. |                                              | ԴՐՆ.    | ՓՐ. |
|---------------------------------------------------------------------|---------|-----|----------------------------------------------|---------|-----|
| Արական սեռի վարժարանի միսիօնար տեսուչը կ'ընդունի տարեկան թոշակ. . . | 19,460  |     | 283 ուսանողներէ թոշակագին. . . . .           | 30,542  |     |
| 20րդ փրօֆէսօս երկու դիւթէօս և ութ վարժապետի տարեկան. . . . .        | 85,636  |     | 56 գիշերօթիկներէ առնուածը. . . . .           | 42,336  |     |
| 56 գիշերօթիկ աշակերտաց համար տարեկան ծախք. . . . .                  | 42,333  |     | 209 աշակերտութիւններէ թոշակագին. . . . .     | 8,740   |     |
| Իգական սեռի վարժարանի համար 12 վարժուհեաց տրկն. . . . .             | 24,120  |     | 78 գիշերօթիկ աշակերտութիւններէ. . . . .      | 42,120  |     |
| 78 գիշերօթիկ աշակերտութեաց տարեկան ծախք. . . . .                    | 48,360  |     | Ամերիկայի միսիօնարաց մատուկէն վճարեալ. . . . | 96,171  |     |
|                                                                     | 219,909 |     |                                              | 219,909 |     |

Վարբերդի և իւր գիւղօրէից մէջ բողոքականաց վարժարանի ամբողջ հայ ուսանողաց թիւն է 3,432:

Միսիօնարք Վարբերդի մէջ հաստատուելէ ի վեր վարժարանաց և վարժապետներու տուններու համար 7,600 օսմ. ոսկի ծախս բրած են:

Հայոց կրթական յետադիմութենէն Վատինք ևս օգուտ քաղելով, բաւական ժամանակէ հետէ դաւառս մուտ գտած են, սակայն բարեբաղդաբար սակաւք հետեւած են, սոքա ևս բողոքականաց սկզբան հետեւելով, հայ մանկտուոյն դաստիարակութեանը ձեռնարկեցին, առանց թոշակի ուսանողներ ընդունելով, և ումանց ալ գիրք և զգեստ նուիրելով:

Մըրողը դաւառիս մէջ 280 հայ աշակերտ ունին, և հազիւ 7,500 դահեկան վարժարանաց համար տարեկան ծախք մը կ'ենեն:



Հայերը գրեթէ 1864 թուականէն սկսած են կրթական գործին ձեռնարկել. թէ՛ քաղաքին և թէ՛ գիւղերուն մէջ՝ տասնի չափ ընկերութիւններ կազմած են, որոց երեքն ըստ բաւականին գործ տեսած, և մնացածներն ալ ոմանք ցրուած և ոմանք խարխուլ վիճակի մէջ ըլլալով՝ դեռ նոր կսկսին վերածնանիլ:

Եւթմու ընկերութեանց զխաւորներն են Վարբերդի մէջ Սմբատեան և Հոգեսէր, Հիւսէյնիկի մէջ Լ'նձնուէր, և Սէզիրէի մէջ Ուսումնասիրաց և Եղգասիրաց ընկերութիւններն, որք կիգր. Սարչուլեան Խառն ժողովոյ կողմանէ ծրագրեալ կանոնագրոյն համեմատ՝ ըստ բաւականի կը գործեն դպրոցաց հոգն ստանձնելով և երբեմն ալ անյաջողութեանց մատնուելով, և այս անյաջողութեան սկզբնապատճառն է կարող դասատուաց չգոյութիւնը:

Վարբերդի Ս. Հակոբ թաղի մէջ մի քանի ուսումնասէր եռանդուն անձանց նուիրատուութեամբն ու գործակցութեամբ նոր վարժարան մը բացուած է, որուն շէնքին համար 250 օսմ. ոսկի ծախք եղած է. վարժարանը չորս մնայուն և մի այցելու դասատու ունի, որոց 20,000 դահեկան տարեկան թոշակ կը տրուի, և այս ծախուց փոխարէն 10,000 դահեկան գումար մը թոշակաւոր աշակերտներէն կստացուի, և մնացած 10,000 դահեկանի պակասը՝ թաղին ընկերական սնտուկէն կը վճարուի: Հիշեալ սընտուկն այսօր 100 օսմ. ոսկի խնայողութեամբ աւելցուցած և օր քան զօր աւելցնելու կաշխատի: Եւս դպրոցի մէջ 180 ուսանողներ կան, որք նախապատրաստական երկու կարգի՝ և ուսումնարանական վեց կարգի բաժնուած են: Եւանդուած դասերն են կրօնագիտութիւն, ֆրանսերէն, անգղիերէն և թուրքերէն լեզուները, պատմութեան, աշխարհագրութեան, մաթեմատիքի և բնական պատմութեան գիտութիւններն իրենց ամեն ճիւղերովն և գեղագրութիւն ու ձայնագրութիւն:

Եղջկանց վարժարան մ'ալ կայ այս թաղին մէջ որ տարեկան 1,500 դահեկան ծախք ունի, և կը կառավարուի մէկ վարժուհեաւ: Եւաշակերտուհեաց թիւն է 90: Իսկ միւս վարժարաններն գրեթէ աննշան վիճակի մէջ են, և ամէնէն բարձրագոյնն որ Սէզիրէի Ս. Եստուածածնայ թաղի վարժարանն է տարին 8,000 դահեկան ծախք ունի, զոր Ուսումնասիրաց ընկերութիւնը կը մատակարարէ և կաշխատի այդ վարժարանն յառաջացնելու:

Վարբ. Եղ. Եւս:

## ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԻՆԿԻՈՅ

### Ս Ի Ս

Եթէ այսօր կայ աշխարհիս մէջ վայր մը, որ Արարատեան Սայր-Լճոռէն անմիջապէս վերջ, իրաւամբ գրաւէ համայն հայոց միտքն ու սիրտն ի սփիւռս աշխարհի, այդ ալ Հայկական Կիլիկիոյ վաղեմի մայրաքաղաքն է, որ դարերու կատաղի ալիքներուն առջև խորտակուած նաւու մը պէս, հազիւ կը ներկայանայ մեզ իր տխուր բեկորներովը:

Փորձենք ուրեմն պատմութեան փոշիները քրքրել մի ակընթարթ և հայեացք մը ձգել այս նուիրական աւերակներուն վրայ:

### Ա.

Պատմութիւնը ոչինչ կաւանդէ պայծառապէս, Սիս քաղաքի ծագման վրայ: Սիքթոր Լանկլուա, որ 1853ին յատկապէս ուղեւորեց ի Կիլիկիա, ուրիշ պատմիչներէ առնելով կը կարծէ թէ Սիս հաստատուած է Ֆլավիոս կամ Ֆլավիսքօլիս անուն քաղաքի մը տեղը: Թէև Հռովմէական հնութիւններ չեն տեսնուիր հոն, սակայն կը թուի թէ անհետացած լինին Լեոն Բի նորդութեանց ժամանակ: Մի ուրիշ ուղեւորի, Պարքըրի համեմատ Սիս հին Բինդէնիսոս քաղաքն է, որ Կիկերոնի, Կիլիկիոյ Հռովմէական իշխանին ձեռք պաշարուած է:

Ելլեայլ ուղեւորներ ԺԲ. դարէն սկսեալ այցելութիւն տըւած են այս քաղաքին, որոցմէ գլխաւորներն են Ուիլլըպրանդ տ'Օլտէնպուրկ, Մեծին Լեոնի ժամանակակից և ի վերջէ Ղէսիէ, Պարքըր, Լանկլուա և այլք:

ԺԲ. դարու վերջը, Լեոն Բի ժամանակ Ուուբինեանց գահը Ենարզաբայէ փոխադրեցաւ ի Սիս, որոյ նորոգ շինութիւնները սկսան 1187ին Մեծն Լեոնէ, և շարունակեցան մինչև 1266 իրեն յաջորդող Օլապէլի և Հեթումի ձեռք: Եւայլ որ ամբողջ շինութեանն յետոյ դար մը միայն փայլեցաւ այս փառապանծ մայրաքաղաքը, և 1374ին անկաւ իսպառ վերջին Լեոնի հետ՝ եգիպտական աւերիչ բանակին առջև:

Սիս հաստատուած է ընդարձակածաւալ դաշտի մը մէջ, սեպացեալ լերան մը կողին վրայ, հին զօրաւոր բերդի մը ստորոտը, ուր բնական գիրքով մը իրաւամբ կիշխէ Աիլիկեան դաշտին: Լերան ստորոտէն կը հոսի Սէս լայը կամ Տէլէ սոս անուն վտակը, որ գոթաղգաբար երբեմն կը ցամաքի և անհուն գոգաւորութեան կենթարկէ ժողովուրդը: Սիսի գիրքը որոշելու համար լաւ է յիշել այն վայրերը՝ որոնք զինք օղակի մը պէս կը շրջապատեն աւելի կամ նուազ հեռաւորութեամբ և որք են Սահկայ, Հաճըն, Կապան, Ֆրնուզ, Օւշիթուն, Վարս-բաղար, Լնարզաբա, Լտանա, Լամբրոն բերդ ևայլն:

Սինչև քսան տարի առաջ Վօղանեան բռնաւորաց ձեռքը մնալէ յետոյ, այժմ Սիս, Լտանայի վիլայէթին ենթարկեալ մասնաւոր սահմադէ կեդրոն է, ուր կը նստի Վօղանի Դիւանապետը:

Սիս, իբրեւ գաւառագլուխ, նոր սկսած է շինութիւններով ծաղկիլ, բայց տեղւոյն օդը, որ ամառն անտանելի տաք կ'ընէ, արգելք մ'է քաղաքին զարգացման և բնակիչք կստիպուին ամեն տարի 3—4 ամիս հեռանալ ամառանոցներ:

Լոյս անպատեհութեան առաջին առնել կարելի է, միայն, քաղաքը փոխադրելով Սոյ լերան հիւսիսային կողին, կամ հանգիստեաց բլուրներուն վրայ: Լոյսյժմ հազիւ ներելի է քաղաք անունը տալ այս ողորմելի շէնքերուն, որոց մէջ միայն կառավարութեան պալատը, մի քանի երեւելեաց տուները, Սիսացեալ-Նկերութեանց վարժարանն ու կաթոլիկ և բողոքական հայոց եկեղեցիները, բաղդատմամբ լաւագոյններն են:

Սիսի մէջ չը գտնուիր այսօր այնքան հնութիւն որչափ կըսպասենք: Եւստանակի աւերիչ հոսանքը խիստ անողորմ եղած է քչելու անհետացնելու բազում ինչ որ կարէր լոյս արձակել Հայկական Աիլիկիոյ պատմութեան վրայ:

Վժուարամատոյց լերան անկանոն ժայռերուն վրայ հաստատուած բերդը միայն կը տեսնուի իր երեք գոներովն ու երեք պարիսպներուն հետքերով:

Սորա հարաւակողմն է ներքնաբերդը, որ պատերազմի ժամանակ կը պատսպարէր արքունի ընտանիքն ու գանձը: Հոս կանգուն է տակաւին շէնք մը, որ գահլիճն էր պալատան և որոյ ներքին պատին վրայ արձանագրութիւն մը կայ հայերէն, զոր ան-



կարելի եղաւ ինձ կարդալ: Գուցէ Ս. Լանկլուայի յիշած հետեւեալ բառերը սոյն արձանագրութեան մասերն ըլլան:

« Ի թուականին Հայոց  
... . հիշա. Լշրահ  
... . հի Հեթմոյ թագ. »

Վերքնաբերդի հիւսիսային կողմը կը նշմարուի սանդուխ մը որ կառաջնորդէ ջրամբարը: Վոյնպէս կը տեսնուին մատրան մը հետքերն և աղբիւր մը բերդին դագաթը, որոյ ջուրը կըսուի թէ հեռաւոր լեռանց միոյն հետ կը հաղորդակցի:

Բերդին հարաւային ծայրն է խոնաւ և ընդարձակ սրահ մը, մեծ մասամբ քարափոր, որ կէջերէնէն (աղաւնոց) կըսուի:

Սքանչելի տպաւորութիւն կը կրէ մարդ այս բերդի գագաթէն դիտելով շրջակայ դաշտերու անհուն ընդարձակութիւնը, հիւսիսէն Տորոսի բարձրաբերձ լեռները, հարաւէն Սիջերկրականի վաճառաշահ ափերը . . . ու այս տեսարանը իրաւունք կուտայ ըսելու թէ «Սոյ ըրերդն է թագաւոր»:

Բերդէն զատ քաղաքին մէջ նշանակելի են միայն հին արքունի պալատը, կամ դարպասը, որոյ հսկայ պարիսպը միայն մընացած է կիկլոպեան քարերով շինուած, նոյնպէս և բերդին շուրջը հաստատուած պահականոցներ: Կոստանդին Գ. Լուսինեան թագաւորի ոսկի դրամին վրայ գրոշմուած է այս պալատը որ աշտարակի ձև ունի:

Լոյս դարպասը կը շրջապատէր Լևոն Բ.ի պարտէզն, զոր ժամանակակից ուղեորք, մանաւանդ ( )լտէնպուրկի կանոնիկոսը հիացմամբ կը նկարագրեն: Լոյս պարտէզին վրայ շինուած կենթադրուի այժմեան կառավարութեան պալատը:

Կը տեսնուին նաև աւերակներն հին Կաթողիկոսարանին և Ս. Սոփիա եկեղեցւոյն, որոյ երեք սեղաններուն վրայ արձանագրութիւններ կան, ըստ Հ. Ինճիճեանի՝ Հեթում Լուսինոյ և Լևոն Արրորդի անուան նուիրեալ:

Կանգուն կը մնայ դեռ Ս. Սարգիս եկեղեցին՝ Հեթում թագաւորէ շինուած, սակայն աւերեալ են Պօղոս Պետրոս, Ս. Յակոբ և Ս. Լստուածածին եկեղեցիք:

Սոյ մէջ վախճանած այնքան թագաւորաց և հայրապետաց դամբարանք կորսուած լինելով, միայն մի քանի տապաններ կը

տեսնուին վերջին ժամանակաց գործ, որք են Յովհաննէս Ե. (1734ին վախճանեալ, Ղուկաս (1738ին), Սիքայէլ Ե. (1757ին) և Թորոս Գ. (1795ին) կաթողիկոսաց:

Հայոց կաթողիկոսական աթոռը 1294ին Հռոմկայէն փոխադրուած է ի Սիս և 1734ին կաթողիկոսարանը նորոգուած է Լճապահեան Ղուկաս կաթողիկոսի ձեռք՝ եկեղեցեալ մը՝ Ս. Լուսաւորչի անուան նուիրեալ: 1810ին Կիրակոս Ե. Սեծագործ կաթողիկոսը վերաշինած է զայն եկեղեցիով, պարտեզով ու բոլոր մանրամասնութիւններով:

Եփսոս որ 78 տարիէ ի վեր Սոյ աթոռը չէ ունեցած Ե. Կիրակոսի պէս մեծ գահակալ մը, որպէս զի պայծառ մնար այս վանքը, որ այժմ դժբաղդաբար ամայացեալ և լքեալ է գրեթէ...: Եփսոս, կաթողիկոսարանն է Սիսի միակ շինութիւնը, որով այս նուիրական քաղաքը գէթ իտէական նշանակութիւն մ'ունի և առանց որոյ, ի զԵր պիտի թափառէր հետաքրքիր այցելուն՝ բան մը գտնելու իբրև նշանակ հայկական կեանքի՝ հայկական հին մայրաքաղաքի մը մէջ:

Կիլիկիոյ արդի գահակալ Տ. Մկրտիչ կաթողիկոս իր ընտրութենէն ի վեր (1871) գրեթէ միշտ աստանդական բնակութիւն մ'ունենալով Եփեմազ, Հալէպ, մանաւանդ Մարաշ քաղաքները, Սիսի վանքը մեռելութեան դատապարտուած է: Եփս վանքը բերդին կողին վրայ և քաղքին գլխուն վերև ընտիր և ընդարձակ դիրքով հաստատուած է և բարձր պարսպով պատուած\*): Խսկ, այսքան մեծ տարածութեան վրայ խուց մ'անդամ չկայ հիւր ընդունելու, և պահապանները (Տ. Կիրակոս եպիսկոպոս Բէքմէյճեան և մի քանի վարդապետներ) ողորմելի սենեակներու մէջ ողորմելի կեանք մը կը վարեն սպասելով լաւագոյն օրերու . . . :

Վանքին մէջ նշանակելի է առաջին անգամ Ս. Եկեղեցին գեղեցիկ ճարտարապետութեամբ շինուած: Վերջերս երկրաշարժէ մը փոքր ինչ վնասուած է սակայն: Կաթողիկոսական գահը պուշ

\*) Սը պատմութի թէ Եգիպտացի հռչակաւոր Իպրահիմ փաշա 45 տարուայ չափ յառաջ Սուրիայէն Փոքր-Ասիա արշաւելու պահուն Սիս գալով կայցելէ այս վանքը և փափաք յայտնելով հիմնարկողին գերեզմանը տեսնել անոր վրայ արտասուագին կը բացականչէ. «Ո՛վ Անառողի առիւծ, երանի՜ թէ ասրէիւր այսօր, ուր Արապիս-թանի (Սուրիոյ) առիւծը պէտք ունի քեզ նման մեծախորհուրդ անձի մը»: Պէտք է գիտնալ որ Կիրակոս Ե. թունաւորուելով վախճանած է:

սեցի արհեստաւորաց ձեռօք շինուած ճերմակ մարմարիոնէ, գըլ-  
խաւոր զարդն է եկեղեցւոյն:

Եկեղեցւոյ գանձարանը, որոյ բանալին Սարաշի ամարանոց  
#էրխան անուն կաթողիկոսարանը կը մնայ այժմ, կը պարունակէ  
ծանրագին հնութիւններ, ինչպէս նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի,  
Օմիւռնիոյ Կիկողայոս Սքանչելագործի, Հռովմի Սեղբեստրոս  
հայրապետի և Պարսում ճգնաւորի աջերը:

Յատուկ յիշատակութեան արժանի է ոսկեհոռու եմիփորոն  
մը՝ Հալէպ շինուած 1234ին, Յակոբ կաթողիկոսի ատեն և Հը-  
ռովկայէն փոխադրուած ի Սիս: Արան ասեղանկարուած է հե-  
տեւալ արձանագրութիւնը.

Վկարեցաւ

Եմիփորո

նա: ի քաղ

աքն ի հալապ ի վայելում

ըն: տէր յակոբ քաջ ըաբ

ունապետին: զոր տր ած մեր

բարով վայելել տացէ: ամէն.

Նշանակելի են նաեւ երկու արծաթապատ աւետարաններ  
Լևոն Ե.ի (1333) և Կոստանդին Գ.ի (1345) վերաբերեալ:  
Նոյնպէս Ս. Սիւրբնի արծաթաձոյլ կաթսայն՝ պոլսոյ հռչակա-  
ւոր Տիւղեան ընտանեաց կողմէ ընծայեալ:

Ս. Եկեղեցիէն վերջ նշանակելի է ընդարձակ վերնատունը,  
որ երբեմն կաթողիկոսի նախագահութեամբ գումարուած թեմա-  
կան ժողովքի յատկացած սրահն է եղեր: Ելլեայլ գունաւոր նը-  
կարներ կը զարդարեն ներքին պատը: Եէնքը որ արեւելեան ճա-  
շակով և #օյլ մը նմանութեամբ հաստատուած է բարձր գիւղի  
մը վրայ, իր առջև կը պարզէ ընդարձակ տեսարան մը, որ գրե-  
թէ Սոյ ամբողջ գաշտը կը պարունակէ:

Բայց չը կարծուի թէ պատրաստ և բնակելի է այս վեր-  
նատունը: Հիւրանոց, խոհանոց, լոգարան, աւազան, պարտէզ,  
ագարակ, և ամեն ինչ որ պատրաստուած է երբեմն կաթողիկո-  
սական վանքին մէջ՝ կիսակործան վիճակ մ'ունին այսօր, և այն  
չէնքը, զոր Տ. Սկրտիչ կաթողիկոս կառուցած է իր շարժա-  
կան ժառանգաւորաց վարժարանին \*) համար, գրեթէ կը ներ-

\*) Այժմ Մարաշ փոխադրուած:



կայացնէ մի ամայացեալ բնակարան՝ աստանդական վրանաբնակ-  
ներու:

Աստուած միայն գիտէ թէ, իրաւի պիտի երկարի Սիսի կա-  
թողիկոսական վանքին այս տխուր կացութիւնը, բայց, տարա-  
կոյս չունինք, թէ արեւտաբեր պիտի ըլլայ—եթէ մինչև ցարդ չէ  
եղած— ազգային կենսական շահուց համար:

Հայտնի է որ Կիլիկիոյ ժողովուրդը ամեն տարի կը վճարէ  
իր պտղիներն ու տուրքերը յանուն Սիսի վանքին, վեց եօթը  
տարիէ ի վեր ( ) գոստափառ Սուլթանն ևս բարեհաճութիւն ու-  
նեցած է ամսական 35 ոսկւոյ նպաստ յատկացնել ի պայծառու-  
թիւն Կիլիկիոյ Ս. Լ. Թոռն, բայց ո՛չ ոք կը համարձակի հարցը-  
նելու, թէ կայսերական շնորհը կը գործածուի՞ իր նպատակին...:

## Բ.

Բնական է մակաբերել թէ ո՛չ դիւանատուն և ո՛չ գրադա-  
րան կայ վանքին մէջ: Հատ կարեոր գիրքեր, մանաւանդ ձեռա-  
գիրներ անհետացած են:

Աջապահեան ընտանեաց անդամներէն Սատթէոս վարժա-  
պետի մօտ կան մի քանի կարեոր ձեռագիրներ, որոց պատուա-  
կանագոյնն է մի Սաղմոս, Լեոն Դ. ի վերաբերեալ, 1303ին  
գրուած: Այս սաղմոսէն կօրինակեմ հետեւեալ յիշատակարանները,  
որք կրնան հաճելի ըլլալ:

Սաղմոսի երկրորդ կանոնի վերջի յիշատակարանը

Օչոյս բան գրեցաք մեք թրական.

Ի վեց հարիւր ու երեքտասան:

Ի յանբարի ժամ տրտմական.

Օչի քրիստոնեայք իսպառ. անգան:

Անտիոքու զաւրքն հարան.

Ի զաւրագլուխքն ըմբռնեցան:

Ի յաւգոստոս երեքտասան,

Չորեքշաբաթ աւր տըխրական:

Վասն մեղաց որ բազմացան.

Բարերարին կամք բարկացան:

Անաւրինացըն մատնեցան.

Օչի յաւրինաց նորա դարձան:

Բայց աջն հաւրն պահպանական.

Պահեաց զիշխանն հայկական:  
 Օթորոս անուն յոյժ վեհական:  
 Ազգաւ սերեալ ընաւ բինեան:  
 Շնորհեաց մեղ ձիր պարգեական:  
 Եւ աշխարհի իւր սեփհական:  
 Լուաւ զձայն աղաւթական,  
 Որ ի բնաւիցըս մատուցան:  
 Որպէս մանգունքն Բաբելոնեան,  
 Ապրեալ հայցմամբ Ղանիէլեան:  
 Կամ մարգարէն մեծն Յունան,  
 Յորովայնէ փրկեալ ձրկան:  
 Արդ դուզնաբեայ գրեալ այս բան,  
 Յերկիր սորին գոլ տիրական:  
 Ի Կաստաղան ուխտ սրբազան,  
 Յիւրոց նախնեացն դամբարան:  
 Սինչ ճանապարհ մեղ ուղղեցան,  
 Գալ ի Ալայէն հըռովմէական:  
 Ի տեսութիւն իւր ըղձական,  
 Պատուասիրեալ սիրոյ բաղձման:  
 Որում հայցեմք պարագայցամ,  
 Գերալըրապէս անդրուական:  
 Ենճառաւք մինչ ի վախճան,  
 Յաղթել իսպառ որք ներհական:  
 Սիրել զբարին աստուածական,  
 Ետեւ զչարն դիւական:  
 Օհ անդ բարեացն, որ խոստացան,  
 Արժանասցի միշտ յաւիտեան: Ամէն:

Ա Է Բ Է Զ Կ Ե Լ Խ Ծ Ծ

Սիրոյ եղկելի նպաստիք նըւաստիս:  
 Ապրիւ Հոգեով ողորմելոյս յանշէջ հրոյն: Ամէն:

«Սի նախանձիր» կանոնի վերջի յիշատակարանը

Ի թուականիս Հայոց ՉՕՕ, ի նոյեմբերի ի ԺԼ, աւրն  
 սպանաւ ավագ պրն Հայոց Հեթում և զեղուղէշ և ամենաբարի  
 պատանին եղբար որդին իւր Ահոն որդի պրն Թորոսի ի ստո-

րոտս Անարզարու յանաւրէն Պիլարդոյէ, և սուգ մեծ թողին ազգիս Հայոց, արդ աղաչեմք զամենեսեան յիշեցէք սրտի մտաւք զվերոյասացեալն պին Հայոց զՀեթում և զբարեպաշտ թագաւորն զԱհոն, որք նահատակեցան ի վերայ ազգիս Հայոց, զի դասեսցէ զնոսա յաջակողմեանն իւրիւմ Վրիստոս Աստուած որ աւրհնեալն է յաւիտեանս, ամէն:

Վայ և զնահատակիցիցս նոցին զԱւշին սպարապետն Հայոց և զպին Ասակ հար եղբայրն իւրեանց:

#### Սաղմոսին վերջի յիշատակարանը

Այս ամենունակ բարեաց գանձարանի սիրեցող եղեալ բարեպաշտ և աստուածասէր արքայն Հայոց, թագաւորն Ահոն պայազատ և ժառանգաւոր թագի թագաւորութեանս Հայկազեան զարմի: Սերեալ ծնենամք յՍոբենէ իշխանէ որ յազգականութենէ Ռաբրատունի և ի տանէ և ի տոհմէ Արծրունի:

Որոյ հրամանաւ գրեցաւ երգ սաղմոսացս Վաւթի, ի զարդ եկեղեցւոյ և ի վարժումանն մանկանց նորոյս Սիովնի: Աւ իւր իսկ բաղձանս ունելով երգել սովաւ և սաղմոսել և խաւսել ընդ Աստուծոյ անզբաղապէս: Աւ մնալ նմա յիշատակ բարեաց ապագայս ժամանակի:

Գրեցաւ սայ ի թուականիս Հայոց 213 ի թագաւորանիստն մայրաքաղաքն ի Սիս:

Արդ որք աւգտիք ի սմանէ յիշեալիք զամենաբարեաց արժանաւոր թագաւորն Հայոց զԱհոն և զնախնիս իւր, և յիշողացդ և յիշեցելոցն ողորմեսցի Վրիստոս Աստուած մեր յոյսն արարածոց որ է աւրնեալ ընդ Հար և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտեանից, ամէն:

Յիշեցէք և ընդ նմին զաստուածասէր և զբարեպաշտ պին զԱւշին պին թորոսենց և զծն իւր զհայրն իւր Ստեփանոս և զհայրն իւր և թողութիւն մեղաց հայցեցէք ի Վրիստոս իւր և ծնողաց իւրոց, և որոյ իշէ ինքն յիշեալ լիցի առաջի Վրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

Ով դասք քահանայից որք հանդիպիք սուրբ սաղմոսիս առ ի Վաւթի երգարանիս, զպարգևոյն Սաղմոսիս: Հայոց ազգիս թագաւորին: Ահոն Չորրորդ որդի Աւշին սուրբ և ընտրեալ թագաւորին: Բզսա արա յիշեալ առ ի բարին և իւր մեղացն թո-



դուրիւն, նաև ծնողացն և զարմին: Զանգչիլ ի գող նահապետին  
Մարաշամու յարքայութիւնս և որ յիշէքդ յիշեալ լիցիք յարքա-  
յութեանն Վրիստոսի:

Գ.

Սիս կը պարունակէ այսօր 800 տուն, որոյ 600ը հայ է  
և 200ը մահմետական: Այս մահմետականներն ալ յառաջ եկած  
են հայ, թուրք և թիւրքմէն ցեղերէ: Վեռ կապրին շատեր, ո-  
րոց ծնողք հայ եկեղեցիէն բաժնուած են: Եկեղեցի մը, որ կը  
կոչուի Չամբրանկապէ քիւսասը կը յիշեցնէ այն նշանաւոր ըն-  
տանիքը, որ մահմետականութիւն ընդունած է դեռ մօտ ատեն-  
ներս: Կան նաև շատ մահմետական ընտանիքներ, որոց անունը  
աղաւաղումն է հայկական բառերու, զոր օրինակ Տիվան օղլու  
(Լիվան օղլու կամ Լևոն օղլու): Ինձ հաւաստեցին թէ վան-  
քին մէջ գտնուած է մի ձեռագիր (այժմ անհետացած) որ կաւան-  
դէ թէ Վերջին Լևոն թագաւորէ յետոյ հակոբ և թորոս ա-  
նուն իշխաններ գոյութիւն ունեցեր են, թէ 30,000 հայ ընտա-  
նիք ի Վրաստան գաղթեր են, թէ Լևոն օղլու տաճկացած իշ-  
խանն հին Մստուածածնայ վանուց մէջ 36,000 հոգի նահատա-  
կեր է, և այլն, և այլն:

Զը գիտեմ, ինչ աստիճան ստուգութիւն ունին այս աւան-  
դութիւնները, բայց արժանի են ազգային բանասիրաց ուշա-  
գրութեան:

Իրենց գիմագծութենէն, կենցաղավարութենէն և ընդհա-  
նուր բարքէն դատելով իսկ, կարելի է հաւատալ որ Սիսի մահ-  
մետականաց մեծ մասը հայ ծագում ունի: Կը կարծուի որ Մշար  
կոչուած քաջ ժողովուրդը որ կը բնակի Վիլեկիոյ և Փոքր Զա-  
յոց մէջտեղ, Մշակունի ցեղին կը վերարկեր: Իրենց աւանդու-  
թիւններն ու սովորութիւններն ոյժ կուտան այս կարծեաց:

Սիսի մէջ կապրի տակաւին տաճկացած հարութիւն եպիս-  
կոպոս, որ այժմ կստորագրէ Եփն Սոթիկեան, և ունի հայ կին  
և հայ փեսայ: Իր զաւակները թէ՛ հայ և թէ՛ տաճիկ կրնան  
նկատուիլ՝ իրենց անունէն դատելով:

Իսիստ ողբալի և յուսահատական է ազգային կեանքն ի Սիս:  
Հայութեան ուրուականը միայն կը հսկէ տխրատեսիլ վանքի բար-

ձուռքէն, և մարդ, պահ մը դիտելով այս բարոյական անկենդանութիւնը բնական ամայութեան վրայ, չը հաւատար որ Անն Ռի մեծափառ պետութեան կեդրոնն եղած լինի աստ:

Սիսի ժողովուրդին համար հայութիւնը երեւակայական բառ մ'է սոսկ, լեզու, աւանդութիւն, բարք, զգացմունք խորթ են բոլորովին: Արօնական ջիղն իսկ անհետացած է կարծես և փշշելու, բահելու, նստալու, նիւթահ, մանասներ, ևայլն, ևայլն տաճկական բառերը Ստեցիներու լեզուէն ի բաց կը մերժեն մինչև իսկ հայկական-կրօնական բառերը:

Եկեղեցական իշխանութեան չարաչար գործածումը, հոգևորականաց ղեղձումը և կաթողիկոսական աթոռին անկումը մէկ կողմէն և կրթութեան ու զարգացման բացարձակ պակասը միւս կողմէն՝ ոչնչացուցած են ամեն բարոյական զօրութիւն՝ յաջս Սիսի ժողովուրդին: Տէրտէրը խեղճ արարած մ'է, որ գլխուն սև փածթոցով ու ոտքին պատռած փափուկ մինչև իսկ—եթէ սխալ չէ հաղորդուած ինձ—ի հարկին իշխան չօրպաճիններու ձեռքը ջուր կը թափէ՝ լուացուելու համար:

Այսչափը բաւական է, կարծեմ, գաղափար մը տալու Սիսի հայ ժողովուրդի բարոյական կացութեան վրայ, զոր բարեւաւելու և բարձրացնելու համար Ա. Պոլսոյ Աթոցեալ Անկերութիւնը 7 տարիէ ի վեր վարժարան մը հաստատած է: Բաւական ծառայութիւն մատուցած է այս վարժարանը Սիսի ժողովուրդին: Ատարեալ պիտի ըլլար յաջողութիւնը, եթէ վարժարանի բարեկարգութիւնը չունենար երբեմն խանգարում, խանգարում՝ որոյ առաջին պատճառն է տեղացւոց անպատշաճ ընթացքը:

Տեղացիներու ձեռքով հաստատուած մանչերու և աղջիկներու դպրոցներ ալ կան, բայց այնչափ խեղճ դրութեան մէջ, որ հազիւ կարժէ նշանակել:

Օգարմանալի չէ ուրեմն, որ հոս ալ, օտար կրօնական քարոզիչներ հասած ըլլան: Այ՜հ, կաթողիկ և բրօդէսթանդ ժողովրդոց յատուկ նոր եկեղեցիներ տեսնել հայկական մայրաքաղաքի մը մէջ, ուր հայկական եկեղեցիները հինցած են և անխնամ, արգարե ցաւ կը պատճառէ: Բայց որքան ևս աւելի դառն է տեսնել որ պապական վարդապետն իր Ատանայի եպիսկոպոսին շնորհիւ, անհուն գեր կը կատարէ մեր ազգային գործոց մէջ և կա-

ուսման թեման յոժը կը գործածէ ի նպաստ պապականութեան զարգացման և ի վնաս ազգային կրթութեան ծաւալման:

Սիսի մէջ չկայ աղգային ժողով մը, մարմին մը: Սի քանի իշխան-չօրպաճիներ միայն, անձնական շահերու համեմատ իրարու հետ մերթ միարան և շատ անգամ թշնամի՝ կը վարեն ազգին բաղբը: Ասոնց փառասիրական և շահասիրական ձգտումներն են որ առիթ կուտան օտար հոգեւորականաց՝ դադտնի կամ յայտնի պաշտպանութիւն ընծայելու սոցա միոյն կամ երկուսին և փոխադարձ աջակցութիւն ստանալու՝ ի նպաստ իրենց Բարձրապետին: Թէ՛ կուսակալութեան կեդրոնին (Ատանայի) և թէ՛ Սիսի և ուրիշ գաւառներու մէջ կաթոլիկ տարրը մեծ ազդեցութիւն ունեցած է այս ուղղութեամբ:

Ար է թէ Կիրակոս Առաջնոյ պէս Սեփակաւորիկոս մը հասնէր, վերականգնելու Կիլիկիոյ քայքայեալ աթոռն ու անկեալ ժողովուրդը . . . . . :

Արշէ



## ԱՏԱՆ Ա\*)

Ատանա որ այժմ ( )սմանեան պետութեան մի առանձին կուսակալութեան մայր քաղաքն է, գիւղերու և աւաններու խումբերէ շրջապատուած գրեթէ Կիլիկիոյ միջովայրը կը գրաւէ:

Ատանա հնոց ծանօթ չ'էր, և նորա հաստատութեան մասին ևս որոշ տեղեկութիւն մը չը պատմուի: Աստ առասպելաբանութեան հոլանաց, Արկնի և Երկրի որդին Ատանոսի անուան շինուած է այս քաղաքը, որ առաջին անգամ պատմութեան մէջ կը ներկայանայ մեզ՝ Սիհրդատեան պատերազմաց ժամանակ, հազիւ 50 տարի առաջ քան զՔրիստոս:

Այս թուականին մեծն Պոմպէոս սոյն քաղքին մէջ խել մը գերի ծովահէններ բռնութեամբ բնակեցուց, և ստիպեց զանոնք երկիրը մշակելու և բարգաւաճելու: Ճամանակ մը վերջ չ'ուզէական քաղաքաց կարգը անցաւ:

Ատանա քաղաքը յառաջագոյն ամրութիւններէ զուրկ ըլլալով՝ Խաւրացոց յարձակմամբ աւերակ դարձաւ, 'ի վերջոյ Օ. գա.

\*) Պատկերը Ա. գրքում:



րուն մէջ Յուստինիանոս կայսեր հրամանաւ դարձեալ նորոգուեցաւ:

Ետանա Կիլիկիոյ միւս քաղաքաց նման թատր եղած է Երաբական և Իլիզանդական արշաւանաց և աղետալի հարստահարութեանց. բայց թորոս Ի. ի ժամանակամիջոցին (1144) ծաղկեալ և միանգամայն բազմամարդ էր:

Եռաջին խաչակիրք թուրքաց ձեռքէն գրաւեցին այս քաղաքը, յետոյ կրկին անգամ Տանկրէտ առաւ Յունաց ձեռքէն, և զայն Ենտիոքոս իշխանութեան հետ միացուց:

Տանկրէտի յաջորդաց ձեռքէն Լևոն թագաւորը ազատեց զԵտանա, սակայն ժամանակ մը դարձեալ կորսնցուց, և Լևոնի որդին թորոս Ի. և թուրք Ուուքէն Ի. վերստին գրաւեցին զայն:

Ետանա՝ Եգիպտացուց Կիլիկիոյ յարձակումէն քիչ մը վերջ կ'սկսի պատմութեան մէջ նշանակութիւն ստանալ, վասն զի 1310 թուականին պապին նուիրակին առջև Սիպրոսի թագաւոր Էնրիկոս Ի. ի և եղբօր Էմաւրիոսի մէջ եղած դաշինքը հոն հաստատուեցաւ:

Դարձեալ 1316ին վերջի աշխարհաժողով սիւնհոգոսն հոն ժողովեցաւ, և այս դիպուածին համար Ետանա՝ հոյակապ և Խառնորական քաղաք ևս կանուանուի, և ժողովատեղին ալ տաճար Ս. Միքայայ, որ թագաւորական պալատան մէջ կը գտնուէր:

Սոյն Ս. Սինաս եկեղեցիէն զատ կը յիշուին նաև Լամբէր և Ընհամբէր Ս. Աստուածածին, Մարթն և Ս. Արեփանոս եկեղեցիներն: Սակայն սոյն եկեղեցիներն այժմ մզկիթներու վերածուած են:

Յին Յունական եկեղեցի մ'ալ այս բաղդին վիճակած է և ծանօթ է այժմ Ուլու-ճաֆի անուամբ:

Ետանա ունէր բրգաձև բերդ մը՝ որ մինչև յետին ժամանակներս կանգուն էր, վերջերս կործանեցաւ Սուհամմէտ Ելիի հրամանաւ, երբ իր որդին Խպրահիմ փաշա տիրեց քաղաքին: Եւթմ նորա հիմը միայն կ'երևի:

Ետանայի մէջ Սէյհան գետոյն վրայ 400 կանգուն երկայնութեամբ մեծ և հոյակապ կամուրջ մը կը գտնուի, որ 22 կամարներու վրայ շինուած է քարէ: Սորա ևս հիմնարկութեան թուականը անծանօթ է, սակայն կը կարծուի թէ Յուստինիանոս կայսրէն առաջ շինուած ըլլայ: Սինչև հիմա շատ անգամներ նորոգուած է:

Եւթմ Ետանայի կուսակալութեան ամբողջ բնակչաց թիւն է հանդերձ գիւղերով և աւաններով 370,000 հոգի, որք ցե-

ղով Հայ, Յոյն, Թուրք, Լրաբ, Թիւրքմէն, Չէրքէզ, Վիւրդ, Պարսիկ, Լիւան և Գլնչու են:

Խուն քաղաքին, Լտանայի բնակչաց թիւը 20,000 հոգի է, և այս ժողովուրդը միայն Հայ, Յոյն, Թուրք, և Լրաբ ցեղերէ կը բաղկանայ: Լուսաւորչական հայոց թիւն է 6,000, կաթողիկէներուն՝ 250, և բողոքականաց՝ 350:

Հայք՝ Լտանայի մէջ 2 եկեղեցի, 7 դպրոց ունին արական և իգական սեռերու յատկացեալ: Սակայն ցաւալի է որ ժամանակին և տեղւոյն արժանի հաստատութենէ մը զուրկ են: Վաթմիկներն ևս 1 եկեղեցի, 2 դպրոց, 1 եպիսկոպոս, 2 վարդապետ և 1 քահանայ ունին: Իսկ բողոքականք 1 ժողովարան, 1 քարոզիչ և 2 դպրոց ունին:

Յաւալի է որ Լտանայի հայերն ալ թրքախօս են: Հայախօսներու համեմատութիւնն է 10<sup>0</sup>/<sub>0</sub>: Հայերէն լեզուն գործածութենէ դադարած է 300 տարի է ՚ի վեր: Սակայն այսօր Հայք ջերմ փափագ կը տածեն ազգային լեզուին և կրօնին համար:

Լտանայի հողը բարերեր է: ()դը տաք, սակայն առողջարար, ջուրն ևս հաճելի:

Լտանայի բնական արտադրութիւնը խիստ առատ է: Լեռքերն են ցորեն, գարի, ընտիր բամբակ, շուշմայ, կորեկ, վարսակ, վուշ, սիսեռն, ոսպ, լուբիա, շաքարեղէգ, ծխախոտ, գեղձ, ծիրան, սերկէիլ, նուռն, սալոր, թուզ, խաղող, անուշ և թթու լեմոն, թուրինջ, սեխ, ձմերուկ, վարունկ, թուֆ, նարինջ, խնձոր, տանձ, նուշ, ընկոյզ, կաղին, կեռաս, մամուլ, բալ ևն: Լայց յայսցանէ ազգի ազգի բանջարեղէնք:

Ձեռագործութիւնը զանազան լինելով կը պարունակէ այլ և այլ զարդարանաց ապրանքներ, արծաթեղէններ, անձեռոցներ, թաշկինակներ, կարպետ, կաշի, պարկ, քուրձ, տեսակ մը հաստ կտաւ, տպածոյ, համետ, թամբ, խեցեղէն, կղմինտր, կօշիկ, թաղիք և գլխու վարչամակ ևն:

Վաղքին ժողովուրդը կը պարապի ընդհանրապէս երկրագործութեամբ և արհեստով: Վիսաւոր արհեստաւորք են դերձակ, կօշկակար, երկաթագործ, ժամագործ, թիթեղագործ, բրուտ, կտաւագործ, շաքարագործ, դանակագործ, մեքենակործ, զինագործ, պղնձագործ, ոսկերիչ, դարբին, խաղախորդ, հիւսն, ատաղձագործ, մետաքսագործ, որմնադիր, պայտառ, համետագործ, աղիքագործ,

հրուշակագործ ևն: Բաց ի սոցանէ կան 7 գործարան բամպակի և ալիւրի համար, 2 հատ եւրոպական կղմինտրի համար, 10 օղիի, մէկ կաշէոյ, 5 պրասայի, մէկ կերպասի: Քաղքին վաճառականութիւնը ընդհանրապէս Հայոց ձեռքն է: Վ. Ասլան:



## ԱՅՆԹԱՊ ՔԱՂԱՔ

Միջերկրական ծովին և Եփրատ գետի մէջտեղ 2500 ոտք բարձր լեռնագագաթի մը վրայ հաստատուած Կիլիկիոյ նշանաւորագոյն քաղաքներէն մին է գեղեցիկն Այնթապ որ իրաւամբ ժառանգած է արաբներէն «Արուսը Արապիսթան» (Սուրիոյ հարօք) տիտղոսը: Իւր հիւսիսային կողմն է Տէլէօս լեւը և 6—7 ժամ հեռաւորութեամբ, արեւելեան կողմն է հին (մպտալարի) գաւառը: Այս երկու անունները ծանօթ են միջին դարու ազգային պատմիչներու\*):

Այնթապ միւնիցոյն գծի վրայ երեք բլուրներու վերև հաստատուած է և կ'երկարի արեւելքէն դէպ յարեմուտս: Չը գիտցուիր կատարելապէս թէ Այնթապի հայերն ո՞ր կից և ե՞րբ գաղթած են, սակայն ըստ ամենայն հաւանականութեան բնիկ Վողթն գաւառէն են և հաստատուած են հետզհետէ յԱյնթապ՝ Հայլերան (Կեալուրտաղի) վրայէն:

Այնթապ բառը արաբական է և կը նշանակէ *ալիստապ* և կը համաձայնի քաղաքիս աղբիւրներէն միոյն, որ *ալիստապ* ալիսինքն «աղբիւր ջերմի» կը կոչուի:

Եգիպտոսի կուսակալ Մէհմէտ Ալի փաշայի որդին Իպրահիմ փաշա երբ օսմանեան կառավարութենէ ապստամբելով՝ Նիզիպի պատերազմը մղեց ընդդէմ Հիւսէյին փաշայի և յաղթեց օսմանեան հըօր բանակին, Կիլիկիոյ վրայ արշաւելով այլ և այլ քաղաքներ գրաւեց ընդ որս և Այնթապը: Տեղացի ծերք տակաւին գովեստիւք կը պատմեն Իպրահիմ փաշայի կառավարութիւնը և համակրութիւնը դէպի քրիստոնեայս:

Այնթապի բերդն ալ զոր Մատթէոս Ուռհայեցի կը յիշէ իբրև անուանի և անառիկ՝ շատ նշանաւոր եղած է ժամանակաւ:

\*) Մատթէոս Ուռհայեցի (տպ. յերուսաղէմ) էջ 383, 395, 419, 501, 504—507:



Սոյն բերդը, այժմ աւերակ, եւրոպացի այցելուաց ուշադրութեան առարկայ է: Ստորին յարկին տակ կայ 2 ընդարձակ ջրամբար, որոց մին անոյշ և միւսն դառն ջուր կը պարունակէ: Ունի նմանապէս այլ և այլ մանուածապատ ճամբայներ և կողերուն վրայ լուսամուտի ձևով փոքրիկ ծակեր:

Այնթապ, օգոյ մաքրութեամբ, ջրոյ առատութեամբ և դիրքին գեղեցկութեամբ նշանաւոր է: Ղաթաղգաբար հոս ալ ընդհանուր է գրեթէ տեսակ մը վէրք՝ որ կը գոյնայ մարմնոյ ո՛ր և է մասին վրայ և տարւոյ մը չափ մնալէ յետոյ հետք մը թողլով կը բուժի:

Տուները մեծաւ մասամբ հին ձևով ըլլալով, տանիքը թանձր հողով ծածկուած է, որոց վրայ գլանաձև քարերէ շինուած լոյլէր կան դրուած, որով կը յարգարեն և կը ճնշեն տանեաց հողերը: Սակայն այլևայլ քարահանքեր դիւրացուցած են նորանոր շինուածները և օր ըստ օրէ նորանոր ճաշակով շինուած և կղմինտրով ծածկուած գեղեցիկ և կոկիկ տուներ բազմանալու վրայ են, այնպէս որ այցելու մը նոյն վիճակի մէջ չալիտի գտնէ զայն ինչ որ էր ասկէ 15—20 տարի յառաջ:

Ղաղաքացոց տնական կարասիք և տարազք ընդհանրապէս խառնուրդ մ'են սուրիական և եւրոպական ճաշակի: Ղորաձեւութիւնը չալէպէն կը հասնի անմիջապէս, ինչպէս և քաղաքավարական ձևակերպութիւններ և սովորութիւններ:

Բնակիչք ընդհանրապէս գործօն և աշխատասէր են: Չմեռը արհեստներով կղբաղին և շատերն ալ ամառն այգիները քաղելով և չամիչ և անուշեղէն շինելով:

Տեղւոյն բերքերն են ցորեն, ընկոյղ, չամիչ, գարի, կորեկ, սիսեռ, ոսպ, եգիպտացորեն և խիստ առատ խաղող ընտիր տեսակէն: Աղուց անտի Այնթապի թուզը (պէքմէզ) խիստ յարգի է: Աշանաւոր է նաև ճերմակ և կարմիր կտաւը, կապերտ և այլ փռոցներ, կօշիկ, սօլ (եէմէնի), հողաթափ (փապուճ) և այլ կաշեղէն շինուածքներ:

Չալէպէն ինչպէս նաև ուղղակի Ալլոպայէն կը բերուի ճերմակ և կարմիր մանած, ասուեղէն, մետաքսեղէն և կտաւեղէն տարաղներ:

Աճառականութիւնը բաւական ծաղկած է և գլխաւոր արհեստներն են ատաղձագործութիւն, խաղախորդութիւն, կօշկակարութիւն, ներկարարութիւն, ոսկերչութիւն, որմնագրութիւն:

Այնթապի տեղական կերպարը, այսինքն մանուսան (ալա-  
ճա) տեղւոյն վաճառականութեան ամենամեծ աղբիւրներէն է, սո-  
րա շնորհիւ է որ կապրին այսօր հաղարաւոր երկսեւ գործաւորներ:

Սանուսան տեղական սպառումէն զատ կը շրջուի նաև Ռադէշ,  
Սան, Տիգրանակերտ, Կարին, Քարբերդ և Աւրոպական Տաճկաստան:

Պիստակը՝ որ շո՛ք ֆրայդը անուամբ, կը շրջուի մեծ քա-  
նակութեամբ յԱւրոպա, ինչպէս և դեղին բանուած կաշին՝ յԱ-  
գիպոս և ի Դոնուզ:

Այնթապ վաճառականական յարաբերութիւններու շնորհիւ  
օր ըստ օրէ աւելի յառաջդիմելու և զարգանալու ընդունակ է:

Քաղաքը կը պարունակէ միայն թուրք և հայ 43,000 հո-  
գի: Հայք 16,000 հոգի են, որոց 12,500ը Առսաւորչական  
և մնացեալք բողոքական, պապական և անկիւքան են:

Ապիսկոպոսական կամ անգլիքան հայ հասարակութիւնը ծա-  
գում առած է Սոյ նախկին կաթողիկոսական տեղապահ Սկրտիչ  
եպիսկոպոս Աջապահեանի ծանօթ հերձուածէն: Սա երբեմն Այն-  
թապի հայոց առաջնորդն էր: Սակայն ի վերջոյ ժողովուրդը տե-  
ղեկանալով նորա անվայել արարքներուն, հրաժարեցուց: Սկը-  
տիչ եպիսկոպոս ամուսնութեան փափաք ևս ունենալով, անգլի-  
քան բողոքականութեան յարեցաւ, Անտոն գնաց և գրամական  
նպաստ բերելով Անգղիայէն՝ եկեղեցի մը հիմնեց և սկսաւ իբր  
թէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ մէջ բարեկարգութիւն մուծա-  
նելու, այլ անյաջող մնաց, որովհետև հապիւ 20—30 խեղճ հե-  
տեորդներ ունեցաւ: Սկրտիչ եպիսկոպոս շատ զղջացած կերևի,  
մանաւանդ իր երիտասարդուհի ամուսինը, որ իր միակ մխիթա-  
րութիւնը պէտք էր լինել, կը լքանէ զինք այժմ:

Բողոքականութիւնը 30 տարի առաջ մուտ գտած է աստ,  
թէ՛ տեղւոյն բնակչաց տգիտութենէն օգտուելով և թէ՛ անձնա-  
կան շահերէ: Ամերիկեան քարոզիչք բազմութեամբ կը դիմեն  
յԱյնթապ, թէ՛ գրամով, թէ՛ ողորջանք և թէ՛ զանազան շահե-  
րու շլացումով որսալու հայերը: Բողոքականութիւնը կորզած է  
3000 հոգիներու ժողովուրդ մը: Սոքա անգլիքաններու բազ-  
դատմամբ ունին այսօր աւելի հաստատ արմատ և յառաջագեմ  
վիճակ: Արեք ժողովարան, վեց նախակրթարան, մի որբանոց, մի  
աղջկանց ուսումնարան, մի հիւանդանոց և գոլէճ, գլխաւոր բո-  
ղոքական հաստատութիւններն են:

Վաղաքէն 15 վայրեան հեռու գէպս յարեմուտս գեղեցիկ  
և ընդարձակ բլրակի մը վրայ շինուած հոյակապ շէնք մ'է այս  
վարժարանը, որ կը կառավարուի ամերիկացոց ձեռամբ, Սէնթ-Էլ  
թիքս Գօլէճ (Լեգրո, Թուրքիոյ Գօլէճ) անուամբ: Ունի բաւական  
թուով ամերիկացի և հայ-բողոքական բրօքէսօրներ որք իւրեանց  
կրթութիւնը Մերիկա ստացած են: Տաճկաստանի ամեն կողմերէ  
բողոքական և լուսաւորչական հայեր կը գիմեն հոս՝ ստանալու  
կրթութիւն մը, յորոյ տարերց մէջ հայութիւնը ստուեր մ'է սոսկ:  
Հարկ չեմ համարիր մանրամասնօրէն գրել, ամեն հայ կրնայ խորհիլ:

Ֆրանսայի տարագիր Ֆրանչիսկեան հարք, ինչպէս այլուր,  
նոյնպէս աստ սկսած են ձրի ուսում տարածել հայ ժողովրդեան  
մէջ:

Սեց տարիէ ի վեր Ֆրանչիսկեան պատերայք հաստատուած  
են աստ: Ունին մի հրապուրիչ վանք ծառերու և ծաղիկներու  
մէջ հաստատուած, ուր կուսանին այժմ 200ի չափ հայ մանչեր  
և աղջիկներ: Ֆրանսական հիւպատոսութիւն մը այս կրօնաւորաց  
գործը պաշտպանելու դիտմամբ հաստատուած է յԼՆԹապ՝ վեց  
տարիէ ի վեր:

Իսկ ի՞նչ պատուար ունին հայերը սոյն քաղաքական և դը-  
րամական հսկայ յարձակմանց դէմ, ի՞նչ ոյժ ունին սոյն ազգա-  
կուլ մրցմանց դէմ . . . . . :

— ԼՆԹապի տեղ մը՝ յորում Պորտի և Սատիկանի անձան-  
ձիր մշակները տիւ և գիշեր իրենց անձնուէր մեքենայութիւն-  
ները յառաջ կը տանին, ի՞նչ կրնան ընել խեղճ հայերը, գէթ  
պահպանելու ազգի գոյութիւնն: Ի բաց առեալ մասնաւոր ջան-  
քերը, ցաւ է ինձ խոստովանիլ որ հայոց վիճակը անմիջական օգ-  
նութեան կարօտ է . . . . . :

ԼՆԹապի հայք, նշանակելի շէնքեր չունին: Ութսուն տա-  
րի առաջ շինուած հին եկեղեցին անբաւական ըլլալով, երկար  
ատենէ ի վեր ձեռնարկուած է փառաւոր եկեղեցի մը կառուցա-  
նելու: Սոյն եկեղեցւոյ կից է և Սարգանեան ընկերութեան հո-  
յակապ վարժարանը, որ նոյնպէս թերի է:

Վկասելով հանգերձ որ ԼՆԹապի Թրքալօս հայերը եր-  
կար ատեն տգիտութեան թանձր քօղին տակ մնացած և հարստա-  
հարութեանց և օտար յարձակմանց ենթարկուած են, գովելի  
ջանք ևս ցուցուցած են ի վաղուց անտի:



Լճն թափի մէջ կրթական շարժում մը զգալի է միշտ: Հայք ունին այժմ 7 վարժարան մանչերու և աղջիկներու յատուկ: Լճս վարժարանաց մէջ իրաւամբ առաջին տեղը կը գրաւէ Վարդանեան կրթարանը:

( ) Թար Հաստատութիւնները այցելելով ազգային ոգւոյ բացակայութենէն դիտող ճշմարիտ ազգասէր մի, արդեօք յորքան ուրախութեամբ պիտի համակի երբ տեսնէ այս վարժարանը զոր կը կառավարէ Վարդանեան ընկերութիւնը վեց տարիէ ի վեր մեծ զոհողութիւններով: Լճս վարժարանը մեծապէս նպաստած է ազգային կրթութիւն ծաւալելու և իր սահմանափակ շրջանակին մէջ անհուն դեր ունեցած է ժողովուրդը լուսաւորելու, թէև յոռետես ոմանք խստապահանջ գտնուած լինին . . . . . :


Լզգային Վերսէսեան վարժարանը ունի 400ի չափ աշակերտներ, որոնք նախակրթութիւն մը կառնուն: Լճս վարժարանին ծախուց յատկացած է ազգային խանի եկամուտը:

Լսոնցմէ զատ կան նաև երկու մասնաւոր վարժարաններ, որոնք յաւէտ կամ նուազ բարեկարգ վիճակի մէջ կրնն թանն: Լսոնք են Լիւթեալեան և Հայկազնեան անուն ընկերութեանց դպրոցները:

Լճն թափի իգական սեռն ալ կրթական գործին կաշխատակցի: Հիփոթեանց Պարպասիբայ անուն ընկերութիւն մը որ իւր Գրդ տարեշրջանին մէջ է, ունի այսօր 300 անդամուհի, որք կը կառավարեն 250 աշակերտուհիներէ բաղկացեալ 5 դպրոց:

Լնթերցողը կրնայ մակաբերել թէ քանի՞ անհրաժեշտ է ազգուազոյն զարկ մը տալ Լճն թափի նման կարևոր քաղաքի մը կրթութեան գործին և փութացնել մայրենի լեզուի և ընդհանուր լուսաւորութեան ծաւալումը:

Վարդ



## ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԵՐԷՆ ՔԱՂՈՒՍԺՔ

Թէև Լճն թափի հայերը հիմա թուրքերէն կը խօսին, բացի դպրոցական մանչերէ և աղջիկներէ, սակայն կերևայ որ դեռ մօտ ատեններս մոռցուած է մայրենի լեզուն, վասն զի կը գտնուին ծերեր, մանաւանդ պառաւներ, որոնք գիտեն հայերէն: Հիմակ

ալ հասարակ թուրքերէնի մէջ հայերը կը գործածեն դեռ խել մը հայերէն բառեր, զոր օրինակ՝ մազմուրց, մոմար, պատիւ, թագաւոր աղա, մօրքեր, հօրքեր, քարկին, կապոց, հատիկ, մանիճ, սխտորձեղ, քարաննուխ, մուխ, աննուխ, անգահ, անշահ, անշընորք, աննուշ, կենդանութիւն, պարի զաւակ, առօք փառօք, պարով, ասծու պարին, պարլոս, շնոփոր Նոնոնդ և Յայտնութիւն, Քրիստոս յայրաւ ի մեռելոց, օշնեալ է յարութիւն Քրիստոսի, կոհանամ Լսվալ, օշնեալ Լսվալ, պարկեշտ, սըկըրթած, շիացած, կալ ու կաղան, իշխան, մենծ աղալար, մենծ մարդ, կեղասը, թաղական խորհուրդ, ճամկոս, տէր պապա, իրիսկին, վարպետ, վարժապետ, վարձատուն, վաստակ, աղէկ, կէշ, օղորմութիւն, Լսվալ օղորմութիւն անչափ, Լսվալ օղորմալ:

Երբ՝ փեսայ հագուեցնելու ատեն

Շնափոր շնափոր, հագար շնափոր,

Լս մեր փեսին, շապիկ շնափոր,

Լս թագաւոր լոս:

Սերջին տողը կը կրկնեն հագուստին իւրաքանչիւր մասը հագցնելու միջոցին:

Լըթք պառաւանց (հիւանդի վրայ)

Տէր կարողացում, Տէր տեսե կացում, Լննիկի օրթի, Լստծու ծառայ, զարա եէլէն ուրխուճ, զըղըլ եէլէն ուրխուճ, աքքհարէ իսէն ուրխուճ, եթէ էս օր վրայէն չերթաս, 66 հայրապետին, վարդապետին, ճգնօրուն, էպօսուն, կպօսուն, ահլ սէնի տութուն:

Երախայի վրայ երբ

Ղօր ճօր ճօր մամա,

Ել մամայիդ տուն կնա,

Տես մամագ ինչ էփէր է,

Պուլղուր ապուր թարխանա,

Կեր կեր կշտացիր:

Ղօր ճօր ճօր մամա,

Քանդի մաման ճամլննա,

Կօրկօտ ապուր պիշիննէ,

Եաղը վրան խաշըննա:

Լիօ դիս կանչըննա:

Ղօր ճօր ճօր ընենք,

Սը զօշը զուրպան ընենք,

Սիսը ուտենք չօրպան խմենք

Սորթը կարենք քիւրք ընենք:

Պէրճ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԿԻՆԿԵՑԻ ՀՈՎԻՐԸ

Պալար են լեռներ, դալար են դաշտեր  
Այգուն վարդակաթ նշոյլ բուրէ սէր  
Եստ կ'երգէ սոխակ, անդ սուլէ զեփիւռ  
    Լոյս տեղաց 'ի սփիւռ:

Թարմիկ են մարմանդք, շող շող ցոլանան  
Որպէս մարգարիտ, ցօղք տռաւօտեան,  
Զինջ են աղբիւրներ, գիւ գիւ կը հօսեն  
    Փրփուրներ ցայտեն:

Օմակ քաղցրաբոյր, պուրակ ծաղկաւէտ  
Օորեն ծաւալեն նեկտար կենսաւէտ  
Լօռուտ աղառաժք, լերինք բացական  
    Սնան յաղթական:

Ենդ բեկորք, աւերք, նշխարք հայկական  
Եստ խոր յանտառին, հիւղակ շինական:  
Եւ 'ի գերեզմանն Վաջին աննկուն  
    Լայ կոյս մի սիրուն:

Ու գէտ, Զեփիւռին 'ի շունչ սիրազեղ  
Հովուիկն ածէ սրինդն 'ի գեղգեղ,  
Նուռ են իւր շրթներ, վարդ ունի պտեր  
    Եւ հոն ունի հեր:

Պարմանեղն յաչաց կայծ ու բոց ցոլան,  
Մատաղ է իւր սիրտ, անբիծ գէտ շուշան,  
Իւր Բօճալ՝ դառանց հետ բիւր հաճոյքով  
    Խայտայ անվրդով:

... — Բայց, ով հաճոյից, պատիր խաբուսիկ,  
Թաղնին, բաբէ, աչկունքն անուշիկ,  
Եւ հովին 'ի տես շիրմաց մահատուեր  
    Լինի կարեւլ:



Լսել էր մամէն, թէ այդ կոյտ լռիկ  
Իւր քաջ պապերուն բերդն էր անառիկ:

Լսել էր թէ այդ գերբուկը թափուր

Ոստան մ'էր ամուր:

Նա այլ տրտում է . . . իւր սիրտը մատաղ

Հոսանքով արեան կը յուզուի, աւաղ,

Սեւեւ գոչէ, և բիբէ իւր փայլուն

Երաստուրք ընուն . . . :

Պարսկ

## ԲՆՈՒԹԵԱՆ ԳՐԿՈՒԾ

### I

Սքանչելի պատկեր: Սանաչ պարտիզում

Ո՛հ, ի՛նչ ոգելից շարժում է տիրում:

Ամեն ինչ ծաղկած՝ ամեն ինչ փթթած՝

Նոր կեանք է շնչում: Նւ ևս ներշնչում,

Անսոս դիտում եմ այդ կախարդական

Սկզբանութիւնը գեղազարդ գարնան:

Ահա փչում է զեփիւս հովասուն,

Երգում է սոխակ, և նրա զգայուն,

Սիրալից ձայնը, կարծես թէ մոգնիս,

Պէտք ինքն է քարշում միտքս ու հոգիս . . .

Բայց միայն ևս չեմ ակնապիշ այդպէս

Լսում սոխակին:—Ո՛չ, ամբողջ պարտէզ

Սախարդում ինչպէս կը շնչէ ոգեշունչ,

Լսում է նրան, լսում անմոռն . . .

### II

Ահա ժպտում է և՛ ծաղիկների

Պսեմ թաղուհին—վարդը նազելի

Նւ նրա գէմքին չքնաղ սիրալի

Կարծես կարգում եմ. «Պատանի՛, նայի՛ր,

«Այն իմ ժպիտն է, ժպիտ կուսական

«Ոգի ներշնչել կը շնչէ բնութեան.

«Այն իմ հայեացքն է—անարժան, պայծառ,

«Որին նա վառում ձօնում է քնար»:

Նայում եմ շուրջս—անձ, ձախ, յետ, առանձ.

Ճօճում են ծառեր, ծփում է կանաչ,  
 Եւ մանիշակը հեզ, կապուտաչիկ  
 Ժպտում է թագուն: Բացում է յամիկ,  
 Բացում են և այլ ծաղիալից թփեր  
 Եւ շուրջ տարածել հովասուն ստուեր:

### III

Անգիրջ տեսարան... Առաջ հմ գնում  
 Եւ որքան առաջ, նոյնքան իմ սրտում  
 Բոցավառվում են սրբազան կայծեր...  
 Ես աղթում հմ... և հոգոյս լալեր  
 Ազատ հնչելով՝ Մեծ Բարեկարին  
 Փառաբանում են երգով սրտազին...  
 Բայց ահա ինձ հետ և օղասլաց  
 Երգում են մուսայք: Նայեցէ՛ք նրանց,  
 Տեսէ՛ք իրախի անխարդախ սիրով  
 Եւ քաղցրահնչիւն մեղեդիներով  
 Նոյնպէս օրհնում են Արարչի անուն,  
 Եւ երկնքիցը յաւէտ վառվում են  
 Լուսոյ աղբիւրը սփռելով շողեր՝  
 Ոսկեզօծում է այդ դիւթիչ պատկեր:

### IV

Հրձկում է հոգիս... բայց, աւանդ, յանկարծ  
 Տխրութեան ամպեր իրար կուտակուած՝  
 Ծածկում են աչքիցս այդ անպատմելի  
 Սրբազան պատկեր—սրբազան Արարչի,  
 Դառն զգացմունք է պաշարում հոգիս,  
 Եւ պապիկների քն նկարվում աչքիս...  
 Մինչդեռ բնութեան լայնարձակ զրկուս  
 Փոխադարձ սուրբ սէր և կեանք է եռում,  
 Մարդկային կեանքը... Օ՛հ, Արարի՛չ Տէր,  
 Ո՛րպիսի տաղտուկ, դառն Հակապատկեր—  
 Բռնութիւն, կապանք, թխ դժոխային  
 Շնչում, խեղդում են կեանքը մարդկային...  
 Եւ ճւր է անկիւն այս նեղ աշխարհում,  
 Ուր թոյն, անդորը չի հարստահարվում...

## Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Տ. Տ. Մ Ա Կ Ա Ր Ա

#### ՃԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վ. Ե. Հափառ Սակար կաթողիկոսը ծնած է Տաճկահայաստանում, Պոլսանըբ գաւառի թեղուտ գիւղում 1813 թուականին: Ութամեայ հասակում, 1821 թուին, նա բերուած է Վաղարշապատ և յանձնուած Ս. Լ. Զմիածնի վանքը կրթութիւն առնելու: Ս'ի քանի տարի սովորելուց յետոյ, մտնում է Սայր Լ. Թոռի Դառանգաւորաց դպրոցն, որտեղ և յաջողապէս 1834 թուին աւարտում է իր ուսման ընթացքը և նոյն թուին արժանանում է Հովհաննէս Լ. կաթողիկոսից դպրութեան աստիճանին: Չորս տարի անցնելուց յետոյ, 1838 թուին ապրիլի 12-ին ձեռնադրւում է սարկաւազ, իսկ 1842 թուին մարտի 25-ին՝ վարդապետ: Սորանից յետոյ նորա առջև բացւում է գործունէութեան լայն ասպարէզ: Լ. յապէս նոյն թուին նշանակւում է նա Դառանգաւորաց դպրոցի աւագ ուսուցիչ, իսկ հետեւեալ տարին օգոստոսի 21-ին Սինօղի կարգադրութեամբ կարգւում է տեսուչ նոյն դպրոցի:

Ներսէս Լ. կաթողիկոսի հաճութեամբ և առաջարկութեամբ 1847 թուին ապրիլի 30-ին նշանակւում է Սինօղի անդամ, իսկ հետեւեալ տարին, Նորին Օծութեան հրամանով գնում է Պարսկաստան՝ հայերէն հին ձեռագիրներ որոնելու: Լ. յս պաշտօնը կատարելուց յետոյ, վերադառնում է Ս. Լ. Զմիածին և 1849 թուին նշանակւում է Ս. Լ. Թոռի Սատենադարանի վերատեսուչ: 1851 թուին փետրուարի 14-ին նա իր ջերմեռանդ օգնասիրութեան և հաւատարմութեան համար երջանկայիշատակ Ներսէս Լ. կաթողիկոսից վարձատրւում է վարդապետական տիանակոտ խաչով: Սորանից մի տարի յետոյ, 1852 թուին ապրիլի 12-ին բարձրանում է ծայրագոյն վարդապետի աստիճանը, որից յետոյ, նոյն թուի օգոստոսի 15-ին Ներսէս կաթողիկոսից ձեռնադրւում է եպիսկոպոս և նոյեմբերի 10-ին նշանակւում է Սայր Լ. Թոռի



վանական կառավարութեան անդամ և ծախսարար: Ըստ թուականներին, իյիշատակ արևելեան պատերազմին, արժանանում է բրօնզեայ խաչի և մեդալի. իսկ 1854-ին մայիսի 22ին ստանում է եպիսկոպոսական պնակէ:

1858 թուին Սատթէոս կաթողիկոսի ընտրութեան առիթով, նորին սրբազնութիւնը Սինօդի կողմից նշանակւում է պատգամաւոր Պօլիս գնալու, որպէս զի այնտեղից ուղեկցի նորընտիր կաթողիկոսին դէպի Ս. Լլքմիածին: Ըստ պաշտօնավարութեան միջոցին, Սատթէոս կաթողիկոսի միջնորդութեամբ, թուրքաց կառավարութիւնը վարձատրում է նորան Սէճիտիէ պատուանշանով:

1859 թուին մարտի 10-ին ազգիս Ս. Նիսի հայրապետից արժանանում է արքեպիսկոպոսական կոչման և նոյն թուին յուլիսի 13-ին Սինօդի օրագրութեամբ նշանակւում է Սայր Ըթուռի աւագ լուսարար: Ընտելանալով Սակար եպիսկոպոսի գործունէութիւնը փոխադրւում է Թիֆլիս: Ըստպէս, 1861 թուին ապրիլի 2-ին ուղևորւում է Թիֆլիս՝ կարգաւորելու համար Երեսիսեան դպրանոցը, որ այդ ժամանակ խիստ շփոթ վիճակի մէջ էր գլտնւում: Յաջորդ 1862 թուին, օգոստոսի 9-ին Սատթէոս կաթողիկոսից նշանակւում է Թիֆլիսի թեմի կառավարիչ. իսկ 1864 թուի մարտի 15-ին Ս. Երաստանի և Խմէրէթի հայոց թեմի վիճակաւոր առաջնորդ: Հայ եկեղեցու բազմաժամանակեայ հաւատարիմ ծառայութեան համար, 1863-ի օգոստոսի 30-ին Սատթէոս կաթողիկոսի առաջարկութեամբ նա վարձատրւում է Ս. Սլատիմիրի Գ. աստիճանի պատուանշանով. իսկ 1869 թուի մայիսի 9-ին Ս. Ե. Գէորգ կաթողիկոսի առաջարկութեամբ Ստանիսլաւի առաջին աստիճանի. նոյնպէս 1881-ին յունւարի 1-ին Ս. Ըննաշի Ը. աստիճանի պատուանշաններով:

1876 թուի փետրվար 20-ին Գէորգ Գ. կաթողիկոսի առաջարկութեան համեմատ՝ արձակուելով Թիֆլիսի առաջնորդութիւնից՝ նշանակւում է Եր. Երեմիայեանի և Երեսարաբիոյ վիճակաւոր առաջնորդ. միևնոյն պաշտօնի մէջ մնալով հանդերձ՝ 1883 թուի յունւարի 7-ին հաստատւում է Ս. Սինօդի անդամ:

Ի Տէր հանգուցեալ Գէորգ կաթողիկոսն իր մահուան անկողնում՝ սրբազան Սակար արքեպիսկոպոսին նշանակում է տեղակալ, և 1883 թուին, թագաւոր կայսրից հաստատուելով այս պաշտօնում, գնում է Սայր Ըթուռ և ստանձնում է Սինօդի ան-

դամութեան և ատենապետ տեղակալի պաշտօնը: Նոյն թուին, Սայր Լ. թուի կողմից որպէս պատգամաւոր ներկայ է գտնվում Լ. Ղեքսանդր Պ. կայսեր թագադրութեանը: 1884 թուին մայիս ամսում տեղի ունեցած կաթողիկոսական ընտրութեան ժողովներին մեծ խոհեմութեամբ և օրինակելի կարգապահութեամբ նախագահելուց յետոյ վերադառնում է իր թեմը:

Ինչպէս յայտնի է՝ այս առաջին ընտրութիւնը անհետեանք մնաց. իսկ երկրորդ ընտրութեան ժամանակ՝ որ տեղի ունեցաւ 1885 թուին ապրիլի 19—21-ին, Տ. Տ. Սակար ընտրուեցաւ երկրորդ կաթողիկոսացու և թագաւոր կայսեր հրովարտակով օգոստոսի 2-ին հաստատուեց Պայրապոյն Պատրիարք և Կաթողիկոս ամենայն Հայոց:

Սեր այս համառօտ կենսագրական ցուցակից երևում է, որ Վ. Ե. Սակար կաթողիկոսը դեռ մանկական հասակից իր բարեմասնութիւնների շնորհիւ արժանացել էր մեր վերջին չորսհինգ հայրապետների մասնաւոր ուշադրութեան և վարձատրուել է զանազան եկեղեցական պատիւներով և պետական շքանշաններով: Եւ արդարեւ, Տ. Տ. Սակարն իր բոլոր պաշտօնավարութեան միջոցին միշտ մեծ համարմունք է վայելել մեր յայտնի բարձրաստիճան հոգեւորականներից, մանաւանդ երջանկայիշատակ Ներսէս Լ. տարակեցի կաթողիկոսից, որ դեռ Նորին ( ) ծովեան վարդապետ ժամանակը անուանում էր նորան խոհեմ և գործունեայ վանական, որովհետեւ հանգուցեալ հայրապետը մեծ վստահութիւն ունէր նորա ընդունակութեան վերայ և կարեւոր գործերի համար միշտ նրան էր գտնում ամենայարմարաւոր անձ. այսպէս երբ Ներսէս Լ. ի յանձնարարութեամբ գնաց Պարսկաստան հին հայերէն ձեռագրեր որոնելու, մեծ յաջողութեամբ կատարեց այս յանձնարարութիւնը, ըստ որում Ս. Լ. ջմիածնի գրատան ներկայ ձեռագիրների մի մասն արդի հայրապետի հաւաքածներն են, որոնք նա ժողոված է Պարսկաստանի, ինչպէս նաև Ռուսաստանի զանազան վանքերի խորշերից:

Պէտք է մի ընդհանուր հայեացք ձգել մեր ուսսահայ հոգեւորականութեան վերայ անցեալում և մօտ ներկայում՝ համոզուելու համար, որ արժանաւոր հայ եպիսկոպոսների մէջ Նորին ( ) ծովեան առաջիններից էր, նա միւսներից աւելի տեղեակ էր ազգի, Ս. Լ. ջմիածնի և Ռուսաստանի հանգամանքների հետ: Նոր-

րա հեռատեսութիւնն և գործունէութիւնն աւելի լաւ ասպարէզ գտան (Թիֆլիսում հայ մանկտու ուսման գործում, երբ նա վիճակաւոր առաջնորդ էր Վլաստանի և Ղազարի (Թեմին)։ Վա է եղել գլխաւոր աջակիցն ու պաշտպանն այն ժամանակուայ հայ գործիչներին, որոնք տքնում էին հայ մանկանց կրթութեան վերայ։ Վորին ( )ծուծեան օրով, հայ երկուց սեռից դպրոցների թիւը տարէցտարի այնքան բազմացաւ և միեւնոյն ժամանակ կանոնաւոր ընթացք ստացաւ, որ այնուհետեւ (Թիֆլիսի հայ մանկանց կրթութեան գործը հաստատ հիմքերի վերայ շարունակեց իր գոյութիւնը։


Այս դպրոցների վերայ ընդհանրապէս խօսելով, չէ կարելի մասնաւորապէս չիշատակել (Թիֆլիսի յայտնի Վայիանեան օրիորդաց դպրոցն, որի յաջողութիւնն Վորին ( )ծուծեանը շատ է նշապատել։

(Թիֆլիսի նման մի առաջնակարգ թեմ կառավարելու համար այն էլ 60 ական թուականներում, երբ տեղական հայ հասարակութեան մէջ հետզհետէ երեւան էին գալիս մի կարգ կնճռոտ խնդիրներ և սաստիկ խռովութիւններ էին տիրում, առաջնորդը պէտք է ունենար մեծ խոհեմութիւն, հեռատեսութիւն և գործունէութիւն, որ կարողանար խաղաղ վիճակի մէջ պահել իր հօտը և տեղիք չտալ զանազան երկպառակութիւնների։

Այժմ երբ մեր ներքին գործերը պարտ ու պատշաճ վիճակի մէջ դեռ չեն գտնվում, երբ հարիւրաւոր առաջնակարգ խնդիրներ կան կարգաւորելու և լուծելու, խիստ ուրախալի է տեսնել, որ Տ. Տ. Սակար կաթողիկոսը արժանաւայել տնօրինութիւններ է անում, պարտազանցներին զգուշութեան հրաւիրում, ու ազգի հաւատարմութիւնն ի չարն գործադրողներին քննութեան ենթարկում, ինչպէս է օրինակի համար Պարսկաստանի ու Լնդկաստանի առաջնորդ Վրիգորիս եպիսկոպոսի փնասակար գործունէութիւնը։

Նոյնպէս, անտարակոյս, բովանդակ հայ ժողովուրդը գոհ պէտք է լինի, որ Վ. Ե. Սակար կաթողիկոսը մեծ եռանդով ձեռնարկել է Սայր Տաճարի, Ս. Լ. Զմիածնի նորոգութեան գործը, որ անտարակոյս հայ հասարակութեան ջերմեռանդն նուիրատուութեամբ պիտի հասնի յաջող կատարածի և անշուշտ պիտի կազմէ Վորին Վ. համառութեան գործոց պսակը։







*Святитель Феофан Затворник*

## ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. Տ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Եթէ այսօր հայ մարդը արծարծէ իր մտքում այն դարերը, երբ ապրում էին մեր եկեղեցու սուրբ հայրապետներն, և մտաբերէ նոցա կենդանի պատկերն ու գործերը, եթէ նա իր հոգու, աչքերին առաջ ներկայացնէ Ս. Սահակ, ՍԵՍՐՈՎԷ, ՎԵՐԱԷՍ, ազգիս այդ ամենանուիրական անձերը՝ նա բնազդամբ կ'յիշէ ներկայումս մի մեծ անձնաւորութիւն, որ իր բոլոր կեանքով ու գործունէութեամբ հարազատ աշակերտ և հետևող է եղել մեր այն պատկառելի հայրապետներին և հայրերին, նա կ'մտաբերէ Խրիմեան հայրիկին, որի մէջ մարմնացած է բովանդակ հայ ժողովրդի գաղափարը, այն ազգային պահպան հրեշտակին, որին տեսնելիս, մեծահուշակ հայ բանաստեղծին հետ իւրաքանչիւր հայ պիտի արտասանէ Ս. Լ. Ետտարանի խօսքը, թէ «Լուրդ արձակեա զճառայս քո ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր ժողովրդեան քում Խորայելի»:

Եւ ճշմարիտ, ո՞ր հայը, ծեր թէ մանուկ, այր թէ կին, Հայրիկին յիշելիս, չէ բորբոքվում վառ զգացմունքներով, և սուրբ յիշատակներով. ո՞րի հոգու ու սրտի վերայ չէ ներգործում նա ամենաքաղցր և զօրաւոր կերպով:

Խրիմեան Հայրիկը այսօր հայ ժողովրդի այն միակ պատկառելի և միանգամայն սիրելի և նորա բոլոր վստահութիւնն ու համակրութիւնը գրաւող անձն է, որ իր երկարամեայ նուիրական անաղարտ անցեալով հայութեան կենդանի ոգին է ներկայացնում.

Հայրիկ, այս դիւթական անունը, որ մի քանի տասնեակ տարիներէ ի վեր հայ մարդի ականջին հնչում է մի առանձին քաղցրութեամբ, հայ ժողովրդի և իր գործերի զաւակն է, տեղեակ և շօշափող նորա ցաւերին, որոնց դարմանելու համար նորա հայրենասէր սիրտը մօտաւորապէս կէս դար այնչափ զօրաւոր ճիգերէ թափած:

Հայ եկեղեցու այս զօրաւոր ախոյեանն, լինելով ինքը ժողովրդի որդի, ցաւակից է եղած նորա ցաւերին և ուրախակից նորա ուրախութիւններին, ուսումնասիրած է իր ազգն, նորա բնա-



ւորութիւնները, սովորութիւնները, ցաւերն ու պիտոյքները, ոչ թէ հայրենի հողից դուրս՝ մամուլի և գրքերի միջոցաւ, զանազան ճանապարհորդական գրուածներից և տեղեկութիւններից, այլ ինչպէս շինականի խրճիթի, Պօլսի խանների մէջ, նոյնպէս և Հայաստանի դաշտերի և լեռների մէջ։ Եւ այս պատճառով այսօր գրեթէ համայն հայ հոգեւոր գասի մէջ չ'կայ ոչ ոք, բացի Հայրիկից, որ կատարելապէս ճանաչէր հայ ժողովուրդը (Սուրբայում, Սուսաստանում, Պարսկաստանում և հետևապէս տեղեակ լինէր նորա վիշտերին, քանի որ նա բուն հայրենի հողի վերայ շօշափած և ականատես եղած է հայի ցաւերին։

Հայրիկ, որպէս եկեղեցական, բանաստեղծ, հայրենասէր, նշանաւոր աղգային գործիչ, ճշմարիտ հայ, հրապարակասօս, մեծ քարոզիչ այնքան մեծ ծառայութիւններ է մատուցել հայ ազգին և այնպիսի եղակի երևոյթ է ներկայանում որ ամեն հայ մարդի նուիրական պարտականութիւն պէտք է լինի ուսումնասիրել նորա օրինակելի մաքուր կեանքը, հայրենանուէր սիրտը, կարգալ նորա հոգեշունչ երկասիրութիւնները ու վարդապետութիւնները, որոնք մօտ կէս դար անդադար յուղել, շարժել են թշուառութեան և ստրկութեան մէջ անզգայացած և մեռած հայութիւնը և ամենուրեք ծաւելել են նոր դադափարներ, եղբայրական և հայրենասիրական նոր զգացումներ։

Հայրիկ գիւղում թէ վանքում, մայրաքաղաքում թէ գաւառներում զանազան պաշտօնների մէջ, սկսեալ ուսուցչական ասպարիզից մինչև պատրիարքական գահը ամենուրեք եղած է միշտ ճշմարիտ հայ գործիչ և շարունակ տքնել ու աշխատել է ազգի բարեւաւորութեան համար։

Հայ ազգի նման մի ժողովրդի համար Հայրիկի կեանքը, նորա անցեալն ու ներկան կարող է օրինակելի տիպար լինել, որին պարտաւոր է հետևի ամեն ոք։ Օրամանալ պէտք է միայն նորա հոգու ազնուութեան և անկեղծութեան և սրտի վեհանձնութեան վերայ, նորա բարոյականութիւնը, անարատ ու առաքինի կեանքը միայն բաւական է, որ մարդ պաշտէ հայ եկեղեցու այդ նուիրական հոգեւորականին։

Հայրիկ իր զօրաւոր ժողովրդականութիւնը ձեռք է բերել, երբ գեռ իբրև վարդապետ գործում էր Հայաստանի մէջ և այսօր, դագաթնակէտին հասած այդ ժողովրդականութիւնն միակ պատ-

ճառն է, որ նա՝ իր սիրած հայրենիքից դուրս՝ ապրում է բիւզանդիոնի երկնքի տակ:

(Թող հայ ժողովուրդ կարգայ հայրիկի կեանքը, կարգայ նորա գրական գործերը, կարգայ նորա սրտից բղխած ու արտասուեալ քով ողորդուած թուղթերը, որպէս զի իր առօրեայ կեանքի մէջ ընկերական, տնտեսական և հայրենասիրական ընտիր դասեր առնէ, որոնք անշուշտ կաղնուացնեն նորա հոգին ու սիրտը \*):

Խրիմեան ծնած է 1820 թուականին ապրիլի 4-ին, Վանայ Ադեմտանները, հանկուսներու թաղը, ուր կան մինչև ցայսօր իւր եղբորորդիք և հայրենական տունն, որ կը կոչուի «Արմցոնց տուն»։ Խրիմեան մկրտուած է «Սկրտիչ» անուամբ՝ նոյն թաղի Ս. Մստուածածին եկեղեցւոյ աւագանին մէջ:

Խրիմեանի մանկութեան օրերը վարժարանք չկային Վանայ մէջ, բայց կարգալ գրեւ կը սորվէին մանկունք տէրտէրէն, տիրացուէն, և արհեստի վարպետն՝ քերական և սաղմոս ևս կը սորվեցնէր իւր մանուկ աշակերտին: Խրիմեանի հօր տունը հագուստի համար տարազներ կը գործուէին, և աշակերտողք *սեփ-սեփ* ալ կ'ուսանէին նոյն յարկին տակ՝ մի կարի եռանդուն, բարեպաշտ, համեստ և ընթերցասէր վարպետէ մը, նա էր Խրիմեանի հօրեղբայրն:

Խրիմեանի հայրն տարազներ կը փոխադրէր Վանէն դուրս ի վաճառ, սովորաբար նորա յաճախ դնացած ու եկած տեղն էր Խորիմը, ուր ի նախնեաց յարաբերութիւն կար: Այս է պատճառ «Արմցոնց տուն» և «Խրիմեան» կոչուելուն:

(Թէ՛ ի բացակայութեան և թէ՛ յետ մահուան հօրն Սկրտիչին, թէպէտ իւր մայրն գգուանքով և գորովով կը սնուցանէր որդին, բայց յատկապէս հօրեղբայրն էր խնամակալ, դայեակ և

\*) Հայրիկի գործունեութեան ընդարձակ տեսութիւնը իբրև եկեղեցականի, գրագետի և ազգային վարչական գործիչի մենք կտեղաւորենք Արաքսի յաջորդ համարներից մէկում: առ. այժմ այստեղ կ'գնենք նորա կենսագրութիւնը, քաղելով «Արեւիկ» օրագրից (1885 թ.), որ Հայրիկի միւս բաղմաթիւ կենսագրութիւններին մէջ նախընտրելի է իր լիութեամբ և ճշգրտութեամբ: Այս յօդուածը ստորագրուած է «Աշակերտ» բառով: և մենք ուրախ ենք որ այդ մեծ վարժապետի արժանաւոր «աշակերտին» հաղորդած տեղեկութիւնները իր Հայրիկի մասին կ'ընդհանրացնենք այսօր «Արաքսի» միջոցով:

դաստիարակ մանկանն, նա է արձանագրած Հայրիկի ծննդեան թուականն. Խորիմեան մեծցեր է նորա գգուանաց համբոյրներով, նորա հրահանգիչ և քաղցր խօսքերով, նորա անձանձիր ուսուցմամբ, նորա առաքինութեան օրինակաւ, նորա գլծած և կակուղ սրտով. նորա հոգին ներշնչած է Խորիմեանին լինել աստուածասէր, մարդասէր, ազգասէր. նա բռնելով մանկան ձեռքէն ամէն գիշերային ու առաւօտեան և երեկոյեան ժամերգութեանց յեկեղեցին կը տանէր, Ս. Երզոց, ընթերցուածոց ու աղօթից միտքը բացատրելով, ունկնդիր ընելով ժամանակին լաւ քարոզիչ վարդապետաց և ծանօթացնելով նոցա, որոց օրհնութիւն միշտ խրնդրուած է և զեղեալ ի գլուխ Սկրտչին:

Երիտասարդութիւնը, այն երջանիկ հասակն է մարդկային կենաց, որ թեւեր կուտայ և կը խոյացնէ զմարդ քան զմարդն ի վեր, անհունութեան եզրները, մանաւանդ այն մարդուն ոյր հոգին ծանօթ է բարձրութեան, կարողութեան, գեղեցկութեան, բարութեան, սիրելու, որոնելու, գտնալու, գիտնալու, որոց կը բաղձայ, կ'երազէ, կը թռի՝ հասնելու. երիտասարդութիւնը և այս հոգեկան վիճակը տիրած էին Խորիմեան Սկրտչին. նեղ կուգար իրեն հօր տունն և Յանկուսներու թաղն և կը հակէր ընտրել վարդապետական կարգը, իբրեւ ազգին մէջ ընդարձակ ասպարէզ ունեցող վիճակ:

Սակայն դեռ կապրէր իւր մայրիկն, նա որ արեւ տուեր էր Սկրտչին, որուն սիրտը կը շրջէր իբր ստուեր անբաժան իւր որդւոյն արեւուն ետեւէն, և հոգին կը հսկէր կը գիտէր իւր զաւկի հոգւոյն գաղտնիքը, նա որ ցաւ քաշած էր, կաթով տածած էր իւր հոգւոյն հատորը, իւր աչքին լոյսը, նա խնդրած էր Երարչէն ուխտիւ որ տեսնէր Սկրտչի թագն ու պսակը: Ընհնարին էր դիմագրել ծնող մօր, և նախախնամութիւնը թոյլ տուաւ որ կատարուի այդ բարի մօր ուխտը, վերապահելով կատարելու նաեւ Սկրտչին ալ ուխտը:

Խորիմեան Սկրտիչ նշանուած ու ամուսնացած եղաւ Սեիկեանց Ս. Յովհաննէսի դստեր հետ, որում մի գուստր պարգեւեց Ըստուած. հարսն մի և թոռնեակ մի ունէր Սկրտչին մայրը, իւր հոգաբարձին հասած էր, և կը գոհանայր Երարչէն:

Սակայն այդ ամուսնութիւնը չկրցաւ կապ դնել Խորիմեանի մտաց եռանդին և հոգւոյ թեւերուն: Երբ առաջին անգամ Ս



նէն դուրս ելնելու պատճառն կամ պատրուակն եղեր է զինուորագրութիւնը, երբ գաւառներէն հայ զինուորներ կը ժողվէին: Սկիւտիէն ճիշտ զինուորական տարիքն ունէր, և ինչպէս շատերը՝ նոյնպէս և Խորիմեանը փախուցին ի Պարսկաստան: Իւր ընկերն էր Տապաղեան Լաքրիպպասն, որոյ հետ՝ մինչև մեռաւ նա, միշտ մըտերմութիւնը կը պահէր: Ընցնելով Խոյ քաղաքէն, Երասխի ջուրը, Սասիսին շուքն, Երարատայ հողը, Ս. Լճմիածնի տաճարն և նշանաւոր վանորայքը ու վայրերը ողջունելով, համբուրելով առաջին ջերմութեամբ, հիացումն, սէր, գորով, լոյս ճառագայթալից պայծառացուցին, ընդարձակեցին և լցին իւր մտաց և սրտի հորիզոնը. այն օրէն յօրինեցաւ նորա քնարն, նա ինքնին դարձաւ քնար, որով պիտի երգէր զԵրարատ և հրաւիրակ լինէր նորա տարածեալ որդւոց:

«Որք, թէ ոչ ոտիւք, գէթ անձկայրեաց սրտին սիրով,  
«Գան ճեմել ի հայրենի վայր տարփատենչ և վայելուչ»:

Սիւնոց մը շրջելով, դադար կ'առնու Լաքսանդրապօլ նազելի Լնիին բարելի Շիրակայ փարելով կուլայ, և կ'անցնի ի Լոստանդնուպօլիս:

Կ. Պօլիս այն ժամանակ մեծ հայեր կային, մեծամեծ ասպարէզներ ունէին, մեծամեծ զոհողութիւններ կը լինէր շքեղ եկեղեցիներ և վարժարաններ կառուցանելու, հայկական գաւառները սկսած էին քիչ մը մօտէն ծանօթանալու և հայ ամիրաներուն խնամքն ու առատաձեռնութիւնը վայելելու: Սայրաքաղաքացի հայք օսմանեան պետութեան բարձր պաշտօններու մէջ հաւատարմաբար ծառայելով հանգերձ՝ կը մտածէին, կը հոգային ազգն, կ'օգնէին գաւառացւոյն իրենց պաշտօնին և յաջողութեան միջոցաւ: Եւ հայոց մեծ կեդրոնն Խասգիւղն էր յայնժամ:

Խորիմեան Խասգիւղի հայոց աղջկանց վարժարանին ուսուցիչ կը կոչուի. միւսնոյն ժամանակ ունին դնելով վարժապետաց, և լրտող լինելով երեւելեաց խորհրդոց ու խօսակցութեանց, յորս միշտ նշանաւոր գրագէտ և ուսումնական անձինք կը գտնուէին, շատ օգուտ կը քաղէ նա իւր այս վիճակէն, իւր հետաքրքրութիւնն, իւր համակրանք ազգով գէմքն ու տարիքը, իւր քաղցր և հայրենախօս լեզուն, իւր համեստ բնաւորութիւնը սիրելի կ'ընեն

զինքն բաղմաց, և նշանաւոր ընտանեաց մէջ կ'ընդունուի իբրեւ զաստիարակ և իբրեւ բարեկամ:

Ալսոյ և Կիլիկիոյ կրթութեան մասին այն ժամանակ հոգ կը տանէր ազգը, և ահա Խորիմեան կը տնօրինուի վարժապետ, այցելու, տեղեկագրող յուղարկուիլ այն կողմերը Պատրիարքարանի յանձնարարութեամբ: Ալսոյ Կիրակոս Վաթողիկոսն, որ բանգէտ և մարդ ճանչցող մէկն էր, կը տեսնայ թէ ի՞նչ գեղեցիկ և թանգ մատաղ մի իւր ոտքով եկեր է վանքին դուռը, կը ջանայ, կը փայփայէ, որպէսզի բռնէ զԽորիմեան իւր գաւթին մէջ, բայց նա իւր պաշտօնին միայն կը հետեւէր:

Խորիմեան կը վերադառնայ Կ. Պօլիս. ի Կիլիկիա այցելու թիւնը գոհացուցիչ էր գաւառին և Լճաքողներուն ու Լճաքելին միանգամայն. աճեցաւ Խորիմեանի համբաւն, և աւելի ազգային եղաւ, երբ նա գրեց ու հրատարակեց իւր հրաւիրականեր «Լրարատեան և Երկրին Լեւտեաց»:

Խորիմեանի գրական մի գործն է տետրակ մը «ընդգէմ պապականութեան» հրատարակուած, զոր գրած է եռանդուն ջատագովութեամբ՝ իբրեւ Հայկական եկեղեցւոյ հարազատ՝ պարսաւելով Վատիկանի գերիշխանութիւնը իբրեւ հակառակ Քրիստոսի խոնարհ թագաւորութեան և Ս. Լեւտարանի հոգւոյն: ( )րուան հարկն ստիպեր է այդ տետրակն ի լոյս ածել. զի այդ օրերը Վատիկանի վանականք և Վոլքճեանք կը թակադիտէին մինն զմիւսն դերազանցել չարախօսելու Հայոց եկեղեցին, որպէս զի անմեղադիր երեւէին ինքեանք Պապին աչքին: Եւ դոցա ելեւէջներն ու շփոթք կ'ալէկոծէին Կ. Պօլսոյ Հայերը, պապականութեան նուիրականեր Կ. Պօլիս եկած էին փորձելու հայ Հռովմէականաց հաւատքը, և միեւնոյն ժամանակ Կաթօլէօն Վ. ի քաղաքական պապութիւնը, կամ պապական քաղաքականութիւնը կը շլացունէր և կը շարժէր նոյն իսկ բուն Հայերու գաղափարը: Եւսն ատենուան եկեղեցականերէն և ամիրաներէն ումանք իրենց անձն ու ազգեցութիւնը նուիրած էին այն նուիրակութեան՝ փառասիրութեամբ, և մեծ շփոթ կար ազգի գաղափարին ու վիճակին առջև:

Երգէն Խորիմեանի ամուսինն և դստրիկ թողած էին զաշխարհ, և այս անգամ երբ վերադարձաւ Վան՝ պսակուեցաւ Հայաստանեայց եկեղեցւոյ հետ, 1854 թուին. կատարուեցաւ իւր նախկին ուխտը: Եղծամարայ տաճարին մէջ ձեռնադրուեցաւ վարժապետ Վանայ

առաջնորդ Վարդիէլ արքեպիսկոպոսէն, որ այն ժամանակ Աղթա-  
մարայ կաթողիկոսութեան տեսչութիւնն ևս կը վարէր: Խորիմեանի  
իղձն էր այդ մեծ վանքին մէջ ծառայել. արդէն նախապատրաս-  
տուած էր որ մամուլը և ժառանգաւորաց վարժարան պիտի հաս-  
տատէր այդ տեղը, և լուսաւորէր այդ վանքին մոլոր ու խաւարի  
մէջ ընկղմեալ թեմական հայ ժողովուրդն և հայ եկեղեցին, ժո-  
ղովուրդ՝ որոյ մէջ բազմաթիւ հայք քրդերէն կը խօսէին, անգէտ  
և անծանօթ մնալով ազգային լեզուին և ամէն բանին, ինչպէս կը  
գտնուէին մինչև այսօր: Պօլսոյ մտածող և զգացող հայ անձինք  
այդ խորհուրդը տուած էին իրեն, և խոստացեր էին ինչ որ հար-  
կաւոր էր: Բայց Աղթամարայ միաբանք և Ալապուրականի գոր-  
ծի վրայ եղողներ մերժեցին Խորիմեանն և ծիծաղեցան նորա յոյ-  
սերուն վրայ: Խորիմեանին բաժին մնաց Ալանայ բեմը, իւր քա-  
րողութիւնք նոր ճանապարհաւ էին, աստուածային ու ազգային,  
երկնային և երկրային, հոգեւոր և մարմնաւոր կենաց վարդապե-  
տութեամբ. նա զօրավարի մը պէս պատերազմ կը մղէր տգիտու-  
թեան, կեղծաւորութեան, սուտ բարեպաշտութեան և նախապա-  
շարմանց դէմ, և կը գերէր կը գրաւէր նոր սերունդն ամբողջ՝ լու-  
սաւորութեան գրօշակին ներքեւ կամաւորաց բանակ մը ձգելով  
իւր ետակէն: Առանց անագանելու ծագեցաւ նախանձ, և հալա-  
ծանք տարագրեց զինքն վերստին ի Վ. Պօլիս:

( ) տեանց հայրն, անմահ Պօղոս աղան, իր տունն և սեղա-  
նը և քսակը ազգին էր նուիրած, ամէն օր և գիշեր լի էին այն-  
տեղ եկեղեցական, գիտնական ազգասիրաց կաճառը, կը խորհէին,  
կը կամէին, կուտային, կը պատրաստէին, կը խօսէին, կը գրէին  
ինչ որ ազգին յառաջագիմութիւն և կենդանութիւն կը համարէին:  
Սահմանադրութիւնն ևս այդ յարկին տակ և այն դայեկաց ձեռ-  
քով ծնած է:

Այդ կաճառին մէջ կը գտնուէր, կ'ընդարձակուէր, կը լսէր  
և կ'ըսէր Խորիմեանն ալ, բայց սա միշտ իւր «Ապաստան»ն կը  
յեղյեղէր, և զինքն Ապաստանին գործիչ կը ներկայէր: «Արմա-  
տը կենդանացնել պէտք է», կ'ըսէր հայոց, և վերջապէս կը յա-  
ջողէր տպագրութեան մամուլ մը ձեռք բերել և «Ալապուրա-  
կան Աթոռի» ամսաթերթ կը հրատարակէր ընդ հովանեաւ թե-  
ւոց Խաչին: Իւր հայրենասիրական ձայնը ի հեռաւորս կը հասնէր:

( ) տեանն էր այն հոյակապ հոգին որ ամենէն մեծ գումար



մը կը գնէր Խորիմեանի յաջողութեան, և իրեն նմանեաց հետ քաջալերելով զվարդապետն՝ կը վերադարձնէին «Վասպուրական Լրճուին» ի Վասպուրական (1856):

Խորիմեան հասնելով Վան, թէպէտ ժողովուրդն և երիտասարդութիւնը և երեւելիներէն դաս մը շատ համակիր եղան իրեն, բայց իշխանաց մեծ մասն, որոց ձեռքն էր առաջնորդարանն և առաջնորդն, և վանականք և վանօրայք մեծ ընդդիմութիւն և թըշնամանք ունեցան նորա դէմ: անմիջապէս երկու բանակի բաժնուեցաւ Վան, բայց բուն բաժանարարութեան պատճառը Պօլսէն էր: Հակառակողք կը դիմէին Պօլսոյ երեւելեաց այն դասուն, որք հակառակ էին ()տեանց կամ ()տեանց տան խմբին, և նոցա հըրահանգով կը մերժէին Խորիմեանն և իւր ձեռնարկն ու առաջարկը. բայց Խորիմեան ալ պաշտպանութիւն կը վայելէր այն դասէն, որ յետոյ կոչուեցաւ «Ղուսաւորեալք» և միւսք «Խաւարեալք»: Ես անգամ ևս Խորիմեանին աչքը Լիթամարն էր, սակայն անկարելի եղաւ յաջողիլ. ուստի Վարապայ վանքը խնդրեց, որ Վանին աւելի մօտիկ էր, ընդարձակ և պատրաստական շէնքեր ունէր, բայց Վարազն ևս առաջնորդին և իշխանաց վանքն էր, զբօսավանքն: Յետ մեծամեծ դժուարութեանց և աղմկալից անցքերու, վերջապէս Պօլսոյ Պատրիարքարանը՝ որ այն ատեն Ղուսաւորելոց ազդեցութեան տակն էր, անկախ Վանայ առաջնորդարանէն յանձնեց Խորիմեանին, ուր փոխադրուեցաւ մամուլն, սկսաւ ժառանգաւորաց գիշերօթիկ վարժարանն և հրատարակուեցաւ «Վասպուրական Լրճուին»: սակայն շարունակուեցաւ Վանի հակառակորդաց ջանքն՝ խափանելու այն գործերը, չարախօսութիւն գնելով Խորիմեանին վրայ և զանազան դաւեր գործելով. իսկ Խորիմեան զենքն կը պաշտպանէր իր գրչով, իր քարոզներով և Կոստանդնուպօլսոյ բարերարներով:

Փորձառուն գիտէ թէ՛ տպարան և գիշերօթիկ յոբան ծախուց գուռ կը բանան, մանաւանդ երբ ամէն պէտքը Պօլիսէն պիտի փոխադրուէր. արդարեւ «բարերարները» մեծ զոհողութիւն ըրեր էին նպաստելով վարդապետին, բայց վերջապէս յետ երեք տարւոյ ընկձեցաւ գործողին ոյժը, և հարկ եղաւ նորագոյն նպաստ հանգանակելու համար գիմել Առևտրատանի հայոց: 1860ին անձամբ կ'երթար Խորիմեան ի Ս. Լիմիածին, Վանայ առաջնորդ Խոնատիոս վարդապետին հետ, սա եպիսկոպոսանալու կ'երթար: Հո-

գեղոյս Սատթէոս կաթողիկոսն երբեմն սառն, երբեմն ջերմ տեսակցութիւն կ'ընէր Խորիմեանին. միաբանութեան միջև ևս համակրողք կային, սակայն մեծ մասն արհամարհոտ աչքով կը նայէին այդ ժողովրդական վարդապետին. բայց բարեբաղդութիւն էր որ Վաղարշապատցի Սալինցեան Վրիգոր աղան, Կաթողիկոսին, Սիւնօղին և միաբանութեան առջև պատկառելի և ազդեցիկ անձն այն տեղն էր, ծանօթ և սիրող Խորիմեանի գործոց և համբաւոյն, այլ զոր անձամբ դեռ նոր կը տեսնէր. նա յաջողեց կոնդակ և հրաման ստանալ և յուղարկաւորել պատուով Խորիմեան ի Թիֆլիզ:

Թիֆլիզի վիճակաւորն էր այն ժամանակ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսն: Վա մեծ պատուով ընդունեց Խորիմեանը և առաջնորդարանը հիւրընկալեց, կոնդակը հանդիսապէս ընթերցուց տուաւ, ինքն անձամբ դրուատեց զԽորիմեան, նպաստելու յորդոր կարդաց, և շէն գումար մը ստորագրեց հանգանակութեան տուամարին գլուխը. իւր կառքով այցելութեան կը շրջեցնէր նշանաւոր անձանց, բայց ամէն կերպով կը հսկէր որ առանձին տեսուելու մարդ չերթար Խորիմեանին, և ոչ Խորիմեան այլոց՝ առանց իրեն: Խորիմեան սկսած էր քարոզել Թիֆլիզի եկեղեցիները. ժողովրդեան թիւը չկար որ կուգային լսելու, հասկնալու, ոգևորուելու Մեստարանի ճշմարտութենէն և հայ վարդապետի մը ճշմարտախօսութենէն ու քաղցրութենէն:

Խորիմեան «Վռունկ»ի մէջ նշանաւոր յօդուած մը գրեց հայ եկեղեցականաց պարտականութեան վերաբերեալ, որ համաձայն էր իւր քարոզներուն: Խորիմեանին լսողն և ընթերցողն միանգամայն համակրուեցան: «Մհա վարդապետ» կ'աղաղակէին. և կը շրջապատէին զինքն համբուրիւ և գովեստներով, անձամբ և գրով. չտեսնուած ոգևորութիւն մի ծագեցաւ ժողովրդեան մէջ, և նախանձը յայտնուեցաւ Ջալալեանի և իւր կուսակիցներու կողմէն, աշխարհական և կղերական դասէն. անտանելի էր նոցա համար Խորիմեանի վայելած ժողովրդականութիւնը: Վորա բացած ճանապարհը, վառած ջահն կ'առաջնորդէր ազգին ճանչնալու և ընտրելու լաւն վատէն, անկեղծն կեղծաւորէն, լոյսն խաւարէն, կուռքը խաչէն, և ինչ: Միմիջապէս վնասեալ դասն խորհեցան, գրեցին Սատթէոս կաթողիկոսին և որոց անկ էր ի Ս. Եմիանին, և ժողովրդեան մէջ ևս համբաւ հանեցին, որպէս թէ Խորիմեանի գրիչն ու բերանը պետութեան ընդդէմ խօսելով, կառավարու-

Թիւնը ծանր նկատած էր, և հրամայած էր որ Ռուսաստանէն զուրս հանեն: Ենպէս չէր սակայն, Խորիմեան կանչուած էր Սատթեմի կաթողիկոսէն, գնաց Խորիմեան Վանձակ, Վարաբաղ, իջաւ ի Ս. Լ. Եւփածին, դարձաւ Երեւան, Էին Ստիսիլեան, Լ. գուլիս, ապա Լ. տրպատական, և անտի ի Ս. ան: Կաթողիկոսն առեր էր Խորիմեանի ձեռքէն իւր տուած կոնդակը, բայց նա ունէր Լ. ետարան, ուր որ գնաց քարողեց և սիրալիւր ընդունելութիւն գտաւ, և Ս. արագայ տպարանին ու վարժարանին նպաստներ մատուցուցան: Թիֆլիզի («Խաւարեւոյ») և («Լուսաւորեւոյ») ճակատամարտի զոհն էր եղած Խորիմեան և ոչ ռուսական կառավարութեան: Ինչպէս երբեմն Կ. Պօլսոյ Շէմարանն՝ նոյնպէս Թիֆլիզի համար ևս Սերսիսեան վարժարանն էր և է ասպարէզ կուռի, եպիսկոպոսն և խումբ մը՝ իրենց սեպհականած էին այդ վարժարանի ներքինն և արտաքինն, այլ ուրիշ խումբ մը զանոնք մէկ կողմն կը հրէին, մինն զմիւսն կ'անուանէր մատնիչ, միւսն զսա կը կոչէր լուտերական, անկրոն, երկու կողմն ևս բարեմիտներ կը գտնուէին հաւատալով և հետեւելով: Խորիմեանը ճանապարհի ուղղութեամբ կ'ընթացար թէպէտ, բայց լուսաւորեւոյ բանակն աւելի մերձ կը թրւէր, ոյժ կ'առնուին սոքա վարդապետին ընթացքէն, բայց այնքան ուժով չէին որ պաշտպանէին իրենց զոհը, դեռ հասած չէր, բայց պիտի հասնէր վերջապէս այն օրը, երբ ջալալեան սրբազան կոչուէր նոյն Սատթեմի կաթողիկոսէն թողլու Թիֆլիզը, և Սերսիսեան վարժարանին հետ՝ այդ վիճակի ազգային բոլոր ասպարէզը գրաւէին ժողովրդեան կուսակիցը: Լ. հա թէ Խորիմեանն ի շահ որո՞ց ֆլաս և տարագրութիւն կրեց: Կարևոր տեղ մը կը բռնէ Խորիմեանի այս ուղևորութեան պատմութիւնը, զոր բաւական մանրամասնօրէն գրած էր Ս. արագայ աշակերտներէն Սրբուանձտեանց Վարեգինն (այժմ՝ եպիսկոպոս), որ հրատարակուած է Կոստանդնուպօլսոյ «Սեղու»ի մէջ նոյն տարին՝ ռուսահայոց լեզուաւ:

Ս. արագայ վանքը իւր վարժարանն ու տպարանը պայծառացոյց այս միջոցին, և «Լ. թուի Ս. ասպուրական»ն թուրքիոյ և Ռուսիոյ հայաբնակ ամէն քաղաքները կ'ընդունուէր և կը կարգացուէր յօժարութեամբ ու գոհունակութեամբ:

1862ին Կ. Պօլսոյ Պատրիարքարանը կը կարգէր զԽորիմեան Ս. շոյ վիճակին առաջնորդ և Ս. Կարապետի վանահայր, նորա ձեռ-



քը թողլով և Վարագը: Այս ժամանակ Վարագայ աշակերտներ զարգացած էին բաւական և «Արծուի Վասպուրականը» կը խրմբագրէին. խումբ մի ևս իրենց վարդապետին հետ Սշոյ վանքը կուգային հանդերձ մի մամուլով, վանքին մէջի վարժարանն՝ վարժարան կը լինէր. և միւս տարին դարնան «Արծուիկ Տարօնոյ» թերթիկ մը կը հրատարակուէր Տարօնոյ մամուլէն՝ խմբագրութեամբ Սրուանձտեանց Վարեգնին: Ամենէն մեծ և դղրդիչ գէպքն է Խորիմեանին համար Սշոյ պաշտօնավարութեան միջոցը: Այստեղն էր երբ նախ աշակերտք և ապա համայն Սշոյ ժողովուրդք «Հայրիկ» կոչեցին Խորիմեան վարդապետը, և որ ընդհանրացաւ ապա համայն հայոց մէջ:

Խորիմեան Հայրիկը Սշոյ աշխարհի և Ս. Կարապետի վանքին մէջ մեծ և դժուարին հակառակութեանց հանդիպեցաւ, այդ պատմական, նուիրական և միշտ սիրելի հայոց վայրը խորին տրդիտութեան և անկարգութեան մէջ էր. կ'ուտէին, կը յափշտակէին և առ ոտն կը կոխէին դաս մը մարդիկ և վանականք այդ վանքին սրբութիւնն ու ճոխութիւնը և ժողովուրդին բաղմնութեան հոգին ու արիւնը, առանց խիղճ ընելու և պարտականութիւն կամ պատասխանատուութիւն յանձն առնլու, ժողովուրդն ևս համակերպած էր տալու, լռելու, տեսնելու և հլուութեամբ ու յօժարութեամբ կրելու այդ ամէնը, համարելով իւր ճակատագիր կամ ժամանակի և տեղական օրէնք, բայց երբ Հայրիկէն իրաւանց և լուսաւորութեանց ձայներն լսեց, երբ «Տարօնոյ Արծուիկ» սկսաւ կարգաւ բացուեցաւ իւր աչքը. խօսիլ, դատել և բողոքել սկսաւ, ուժգին ցնցում մի տեղի ունեցաւ և ուտիչներ զգալով իրենց վտանգն ու չկրնալով դիմանալ այդ ահագին յեղափոխութեան՝ զանազան դաւեր, զրպարտութիւններ և մատնութիւն ի գործ դրին Հայրիկի անձին, նորա պաշտօնին և աշխատակցաց դէմ, և իրենց օժանդակ ունեցան Կարնոյ մէջ չարութեամբ ծերացեալ քահանայ մը, որ այն ժամանակ առաջնորդական փոխանորդութեան պաշտօն կը վարէր, զի Տ. Յարութիւն սրբադանն Կ. Պօլիս էր: Այդ քահանայն՝ գործակցութեամբ քանի մը անուանի աշխարհականաց՝ պաշտօնապէս կը հաստատէր Կարնոյ կուսակալին վճիռը, Հայրիկին վրայ Սշոյ չարախօսաց գրածները, և Կ. Պօլսոյ մէջ պարբերաբար կը հրատարակէր «Սէճմուլայը Հավատիս» լրագիրն՝ դայթակղեցնելու համար զհառավարութիւն և զպղծ Հայրիկին վրայ:

Այդ սոսկալի մատնութեան վաշտն մեծաւ մասամբ կը բաղկանար կղերէն, որոց զօրապետ էին մի հինաւուրց եպիսկոպոս ինչպէս և մի խիզախ ու փառասէր վարդապետ որք պաշտօն վարած էին վանքին և Մշոյ մէջ, և ամէն բան կ'ընէին կըսէին անպատկառ, հասնելու համար վերստին նոյն պաշտօնին. իսկ նոցա հրահանգիչներն էին աշխարհական դասէն ազդեցիկ անձինք, որոց համար պատրաստ սեղան մի եղեր էր Սուշն ու վանքը, և խորտիկ ու ըմպելի վանքին գանձն ու ժողովրդեան արցունքը:

Ահա ճիշդ այդ միջոցները Հայրիկ կ'ուղևորէր Վ. Պօլիս, կայսերական կառավարութենէն և ազգէն այցելութիւն և խնամք խնդրելու ժողովրդեան կացութեան մասին: Հարախօսութիւնք այնքան զարհուրելի էին որ անոնց առջև ոչ միայն Հայրիկը, այլ և Մշոյ ամբողջ հայութիւնը կորստական դատաստան կը կրէին. բայց կառավարութիւնը յանձնաժողով մը կազմել տնօրինեց, այս բաները արդարութեամբ քննելու համար:

Հանձնաժողովը անաչառապէս մանրամասն քննութեան առաւ խնդիրներն և տեղեկագրեց (Ն. Դրան, հերքելով ամբողջ ամբաստանութիւնը և ցոյց տալով թէ Խրիմեան Հայրիկն ծառայած էր խղճի մտօք տէրութեան և ազգին: Ա'արդարանար Հայրիկն և կը հաստատուէր իւր պաշտօնին մէջ: Այդ միջոցները արդէն դարբեր էր մամուլն, հալածուէր էին չարչարանօք Խրիմեանի աշխատակիցներն և վարժարանի որբերը լեռներ ու դաշտերը փախած, որոցմէ ոմանք ուղղելով իրենց աղէտը հասկցնել Հայրիկին, չը գտնելով գրիչ և մելան, իրենց բազկի երակը ծակեր, արիւնով և խոտի ցօղունով գրած էին թուղթ:

Խրիմեան նորէն կը դառնար Վ. Պօլսէն. կրկին կ'ենթարկուէր դաւաճանութեան, կրկին կ'ամբաստանուէր նա միաբանից և միաբանելոց կողմանէ Մշոյ իշխանութեան ատենանը, ուր կը հրաւիրուէր պատասխանելու. և երբ կը տեսնէր թէ գիւրին չէր իսկոյն իւր անմեղութիւնը հաստատել, այսպէս կը խօսէր ատենին մէջ. «Իմ հակառակորդացս ոսկին պիտի հատնի, բայց իմ համբերութիւնս չը պիտի սպառի. կը համբերեմ, մինչև արդարութիւնը հասնի ու պաշտպանէ զանմեղութիւնը»: Արդարութիւնը սակայն բաւական հեռուն կը գտնուէր յայնժամ: Մեծ ցասմամբ լցուած ժողովուրդ և գիւղապետք Խնուսայ, Պուլանընի և դաշտի հայոց՝ ժողովեցան և Խրիմեան Հայրիկը առաջնորդեցին տանելու:

վանքը, սակայն վանքին ագարակին մէջ պաշարուեցան զինեալ Վարդերէ և վանուց շուրջ եղած դաս մը հայերէ, որ զրկուած էին վարդապետներէն՝ արգիլելու համար Հայրիկը, բանը այնտեղ հասաւ, որ պաշարողք բաղխեցան իրարու, և ահա կենաց վտանգներ սկսան երեւան գալ, հաղիւ մէջ կը մտնէր Հայրիկն, և զինքն առաջնորդողները կը համոզէր, յարձակողները կ'ամոքէր, իսկ ինքն իւր ուղին կ'ուղղէր ի Սարին: Այնականներ հասկացան իրենց ծանրագոյն պատասխանատուութիւնը, ուստի անմիջապէս յերկրեցին զրպարտութիւններ գրելով և տարածելով ժողովրդեան մէջ, և Պօլսոյ մէջ, ուխտաւորաց մէջ, թէ խրիմեան վանքի գանձն էր կողոպտեր, խաչեր ու աւետարաններ էր գողցեր, թէ... և այլն և այլն:

Բայց ինչո՞ւ այս ամենը, միթէ Հայրիկը հացն, հագուստն ապրուստն կտրած էր վարդապետաց, զրկած էր զիրենք, ոչ երբէք, բնհակառակն աւելի շատ և աւելի աղէկն ունէին: Սակայն Հայրիկն կանոն դրած էր, համարատուութիւն, հաշիւ և կարգապահութիւն սահմանած էր: Յառաջ քան զայն՝ Ս. Վերեզմանի ամբողջ արդիւնքը, մոմագին և մատաղագին և զրկուած նուէրները, լուսարար վարդապետին և քանի մը հայր Սրբազաններու սեպհական իրաւունքն էր, այժմ՝ գանձանակ, տումար և հսկող հաստատուեցաւ: Յառաջագոյն մի վարդապետ ունէր քանի մը ձի և սպասաւորներ, որոց պէտքն ու ծախքը վանքէն էր, կանոնը բարձաւ այդ բաները, նուիրակութիւնը տեսակ մը վարձակալութիւն էր և այլն: Թէպէտ կար տումարի պէս թղթատետր, բայց արգեանց թափթփուկներ միայն կը գրուէին և ուխտաւորաց տուած դարպասն, զի ուխտաւորք անձամբ կուտային և կը պահանջէին որ թէ՛ տուրք և թէ՛ իրենց անունը իրենց աչքի առջև արձանագրուէին: Եւ հա թէ ինչո՞ւ կը հալածուէր Հայրիկն: Եւ միթէ այդ խեղճ վանականները այնքան զօրաւոր էին որ այսքան քաջութիւն ցոյց կը տային ընդդէմ Աեդրոնական վարչութեան և ընդդէմ այնքան բազմաթիւ ժողովրդեան և հայ ազգին հանրական ոյժին: Այ՛: Յոյց տուինք կանխաւ նոցա ոյժը, որոցով կը քաջաւերուէին, և այն էր ի Մուշ, ի Վարին և ի Ա. Պօլիս: Այն վարդապետներու շահը այդ ուժերու մէջ կը բաժնուէին: Հասաւ Պօլիս Հայրիկն, և այս անգամ Պատրիարքարանն քննիչ և կարգադրիչ կը կարգէր Սարնոյ առաջնորդ Ահապետեան Տ. Յա-



րութիւն Սրբազանն, որ դնաց վանքը, և երբ տեսաւ որ վանականք ստահակութիւնը չափազանցեցին, վերջապէս տարագրութեան դատապարտեց վարդապետներէն վեցը, զորս Պատրիարքարան Բ. Վրան միջոցաւ շրկեց Ս. Երուսաղէմի վանքը. իսկ մնացեալները հպատակեցան Կեդր. Վարչութեան տնօրինութեանց: Եւ Եր. աքսորեալները յետոյ Հայրիկը ժողովեց և դարձոյց վանքը:

Եւ միջապէս Հ' վերադարձաւ Հայրիկն, նա Կ. Պօլսոյ մէջ անայլայլելի կը մնար. կը գրէր: Եւ միջոցին ի լոյս հանեց «Սարգարիտ արքայութիւն երկնից» մարգարտեայ մատենիկ. և երբ օրը հասաւ, մեկնեցաւ: Սարնոյ կուսակալին նշանաւոր տեղեկագիր մը մատուցեց Ս'նոյ երկրի նկատմամբ. նկատողութեան առնուեցաւ այդ տեղեկագիրը, որոյ արդիւնքն եղաւ Վ. սեմ. կուսակալին անձամբ քննութեան ելնել այն աշխարհին, և եօթանասուն նշանաւոր անձինք տարագրել Բուսիլի կողմերը, որոց մեծ մասն քիւրդ էին:

Սարնոյ մէջ ստացած է Հայրիկն Հռովմայ Ս. Պապին հրաւիրագիր շրջաբերականը, Պապին անսխալութիւնը հաստատող ժողովոյն երթալու՝ իբրեւ Եւաջնորդ Տարօնոյ, ինչպէս Ս. Պատրիարքին և ամենայն առաջնորդաց ևս ուղղեալ էր, ամէնքը լռութեամբ արհամարհեցին, բայց Հայրիկ գրութեամբ մը, ցոյց տալով քրիստոնէական հեզ և ազատ հոգի, մատնանիչ կ'ընէր թէ «Եր. պիտի ժողովոյ մի տեղն լինելու էր Վրիստոսի խոնարհ թագաւորութեան Ծոնդեան Ստուրին կամ Վողգոթային մօտ, և ոչ Հռովմայ վէս աթոռին»:

1868 թ. Հայրիկը Երեմիա վարդապետի հետ եպիսկոպոս կը ձեռնադրուի Տ. Վեորդ Ս. Վաթողիկոսէն, իւր ուխտն ընելով և օծումն ու կոնդակն ստանալով ի վերայ «տանն Տարօնոյ»: Ս. Սիւրբոն օրհնելու հանգիստաւորութեան առթիւ մեծ բազմութիւն թափած էր ի Ս. Եջմիածին, և Հայրիկ ամենեցուն ցանկալին և ամենեցուն ուրախութիւն եղած էր այդ տօնին:

Յետ ձեռնադրութեան, Սրբազան Հայրիկն Ս. Եջման տեղւոյն համօրէն միարանութեան և ժողովրդոց բազմութեան մի հոգեւանդ ճառ խօսեցաւ Սայր Եթովոյն, Հայկական եկեղեցւոյն՝ և հայ եկեղեցականութեան նշանակութեան վերայ, այս իւր ուղերձն էր:

1869ին, կը գտնուէր Ս. Հայրիկն իւր հօտին գաւիթը, և

աշնան մօտ՝ երբ վերստին Ս. Կարապետի վարդապետաց փորը կշտացեր էր, իրենց խայթոցը սրեր էին, մեծ ժողով կար վանքը և մեծ յատակագիծ մը կար գործադրուելու, երբ յանակնկալս Ս՝շոյ փաշան անձամբ վանքը կուգար պաշտօնապէս շնորհաւորելու Ս. Հայրիկին Պատրիարք ընտրուիլը. յայնժամ կը ժամանէր աղգային պաշտօնական հեռագիրն ևս. և ահա ժողովեալք կը փոխեն իրենց դէմքն ու դերը, և երամովին կ'երթան շնորհաւորութեան համբոյր նուիրելու: 'Այն օրերը Սարնոյ կուսակալութենէն ևս յատուկ պաշտօնեայնէր կը ժամանեն «հրաւիրակ» Պատրիարքին. և հոկտեմբեր 3ին կը մեկնէր Ս. Հայրիկն Ս. Կարապետի վանքէն, յուղարկաւորեալ շքեղ հանդիսաւորութեամբ, և միանգամայն անհամար բազմութեամբ հեծելոց և բոկոտն աղքատաց, մերկ ու մատաղ մանկուոյն Տարօնոյ որ կ'աղաղակէին. «Հայրիկ, Հայրիկ, մի՛ մոռանար աղքատ Ս՝շեցին և անոր խեղճ մանկտին»:

Ս. Հայրիկ կը հեռանար Վանէն և Սուշէն, Վարագէն և Ս. Կարապետէն, այդ տեղերը ձգելով խումբ պատանեաց և երիտասարդաց, որք ուսած և զարգացած էին այն կրկին վանքերու գիշերօթիկ վարժարանաց մէջ: 'Առքա արդէն իրենց գտնուած վարժարանաց մէջ և գաւառին այլ և այլ գիւղերը սփռուած էին իրենց գիտցածն ուսուցանելու, իրենց կրցածն ընելու. ոմանք ևս վարդապետ և քահանայ եղած էին. երկար կը լինէր եթէ թուէինք դոցա թիւն և անունները. այդ երկու բազմահայ գաւառները, Վասպուրական և Տարօն, Ս. Հայրիկի երկանց վաւակներ կը կազմեն իրենց քիչ շատ ուսեալ սերունդով: 'Առքա համօրէն Ս. Հայրիկի հոգերով և հոգով սնած որդիք և թուունքն են: 'Անուրոյս և կրթութիւն ծաւալող ընկերութիւնք կազմեալ չէին Ս. Պօլսոյ մէջ, դեռ նոցա առաքեալք առաքեալ չէին այն կողմերը, այլ սակայն վարժարանք և վարժապետք կային, և այն պատրաստ տարերք օժանդակ և դիւրացուցիչ հանդիսացան ընկերութեանց ձեռնարկին:

1869 սեպտ. 4ին Ս. Պօլսոյ Աղգային Արևմտաօսմանական ժողովոյ քուէով ընտրուած էր Ս. Հայրիկն Պատրիարք (Թուրքիոյ Հայոց: Ս. Հայրիկի օրով թէ՛ գաւառաց մէջ ամէն ուրեք կաղմուեցան սահմանադրական ժողովներ և խորհուրդներ, յօրինուեցան հրահանգներ, և Աղգային ժողովն այնքան յաճախ, և այնքան արդիւնաւոր նիստեր ունեցաւ, — չորս տարուան մէջ վաթսու

և չորս նիստ II. Հայրիկի նախագահութեամբ, — և յոյժ կարեւոր և օգտակար ծառայութիւններ մատոյց Ազգին, մասնաւորապէս գաւառացւոց՝ որոց մէջ նշանաւոր տեղ կը բռնեն գաստիարակութեան և ուրիշ կարեւոր խնդիրներ:

II. Հայրիկի օրով ջնջուեցաւ Հիւանդանոցի և Պատրիարքարանի վրայ ծանրացեալ պարտուց ահագին գումարն, և այս տունէ տուն, եկեղեցիէ յեկեղեցի շրջելով, հանգանակելով, և սակայն ըսին թէ՝ տնտեսութիւն չէր գիտեր նա: Սո ժողովողեան շարունակ Աւետարանի հաց և մարմնոյ հաց քարոզող էր. առաքինութիւն և աշխատասիրութիւն, պանդխտութենէ խոյս տալ և խնայողութիւն ընել կը յորդորէր, և սակայն կ'ըսէին թէ՝ տնտեսագէտ չէ: Սորա տեսութիւնք, դիտողութիւնք և առաջարկութիւնք, որք կը տեսնուին Ազգային ժողովոյ և Վաղաքականի ու Տնտեսականի արձանագրութեանց մէջ, մեծ մասամբ լուրջ տնտեսագիտական են: Սա լաւ հասկցած էր թէ Հայ ազգն շատ բանի պէտք ունի, և այս պէտքերը իր գրամով պիտի հոգայ, գրամ շահելու, գրամ ունենալու է որ հոգայ, հոգայ որ ապրի և յառաջանայ: Սորա հրաւերին վրայ զանազան եղանակներ առաջարկուած են ազգային տուրք և գաստիարակութեան գրամագլուխ հաստատելու, հոգեւորականաց վիճակը բարւոքելու, բարիւոք հոգեւորականներ պատրաստելու, առաջարկներ և եղանակներ, որոց մէջ մասնագիտութիւն ունենալ կը թուի կարծես: Սակայն ըսին և կ'ըսեն թէ՝ նա տնտեսագէտ չէր: Ինչո՞ւ կ'ըսեն: Ա՛սան զի երբ պատրիարքութենէ հրաժարեցաւ, պարտական էր իւր անձն: Ի՛ զուր այնքան յարձակումներ տեղացին մամլոյ միջոցաւ II. Հայրիկին վրայ, որոց քրիստոնէաբար համբերութեամբ տարաւ նա, մինչև Ա՛րաժպետեան Սրբազանի պատրիարքութեան առաջին տարին, ուր պատրիարքական ստորագրութեամբ հրատարակուեցաւ II. Կաթողիկոս լրագրի մէջ թէ Խորիմեան Հայրիկն պարտք չունէր Պատրիարքարանին: Հաշիւները ցոյց կուտային թէ II. Հայրիկն բաւական կարեւոր գումար մ'էս պահանջ ունէր, բայց արդէն վաղ անցեր էր, ինքն գոհ էր պարզ հացով և ջրով: Սա ազգային տնտեսութիւն գիտէր, այո՛, բայց անձնականն չգիտէ. այս բանն իրեն ամօթ չէ, այլ պատուարի:

Յոյժ ի խոր խոցեցաւ II. Հայրիկն և ցայսօր բժշկուած չէ այդ խոցը, երբ առին նորա վրայէն Մշտ վանահայրութիւնը:



Նա ոչ միայն կ'ափսոսար իւր քրտինքն և կրածները այդ Ս. տեղին համար, այլ անսահման սիրով կապուած էր և է Տարօնոյ աշխարհի Սրբազան վայրին և հողոյն և մարդոյն: Բողոքներ ըրաւ, իւր եպիսկոպոսական ուխտն և օծումն յառաջ բերաւ «իբրև Տարօնոյ եպիսկոպոս», եկեղեցւոյ օրէնքը յիշեցուց, լսելի չեղաւ: Եւ լռեց: Նորա հոգին վարժ չէ անգործութեան, ամէն կիրակի քարոզներ խօսելով, և նոր Պատրիարքին համակիր լինելով ի բնուստ խորհրդակցութեան կը գտնուէր, և ապա Արօնական ժողովոյ ատենապետ կ'ընտրուէր: Սակայն միւս կողմէն գրաւոր ընտիր գործեր կը հանէր ի հանդէս: Նա գրեց «Եւսէին ճառ», որ մի հիանալի մատեան է, եկեղեցականութեան համար պայծառ քաջ մը, հեղինակին կրօնասիրութեան, վսեմ՝ ոճոյն և ամբողջ պարունակութեան կողմանէ: Վրած է նաև ի մէջ այլոց երկու համառօտ այլ հոգեյոյզ տետրակներ, իրենց անունով ծանօթ: Վրեց «Վրախտի ընտանիք», և «Սիրաք Սամուէլ», ընտանեկան, տնտեսական և բարոյական պարունակութեամբ, սքանչելի պարողութեամբ, ախորժելի եղանակաւ հասկանալի և օգտակար ամէն կարգի անձանց: Վրեց «Եւսմանակ և խորհուրդք իւր» տետրակն, և վերստին տպագրեց «Եւսմանակն Եւրարատեան»ն: Եւս մատեանները ինչպէս և յետոյ սրտառուչ «Ս' անգոյժ» և «Եւսգոյժ» գրքոյկները թարմ թարմ՝ ձեռքէ ձեռք անցան, և այսօր հացի պէս սնունդ կ'ընծայեն բազմաց, մանաւանդ գաւառի Եւսոյց: Եւսպէս ամէն տեղ և ամէնուն մերձ Ս. Եւսրիկն, զոր կը ճանչնայ ժողովուրդն, զոր կը լսէ և կը սիրէ:

Եւրոպայի ուղևորութիւնը յայտնի է ամէնուն: Ս' երջապէս 1879ին կը վերադառնար Ս. Եւսրիկն ի Ս' ատպուրականն ի Ս' արագ, ուր կ'առաջնորդէր զինքն նախախնամութիւնն: Իրմէն քիչ ետքը սոքն կ'սկսէր լափել այդ երկիրը, և երկիրն ի ձայն Ս. Եւսրիկին օգնութիւն կը գոչէր: Եղէտ մի չկայ որ հաւասարի սովու աղէտից, այլ սակայն Եւստուած անգամ զմայլեցաւ տեսնելով համայն աղգին մէջ օգնելու և փրկելու առաքինութիւնը, ի ծագաց Եւսգաստանի մինչև ի ծագս Ուկրաինոսի և Եւսսիսի շարժեցան Եւսոյց սրտերն և ձեռներն: Կ. Պօլսոյ կեդրոնն և իր Պատրիարքարանն ունեցան մի ընտիր վստահելի հանձնախումբ, և Ուստահայք մեծ գործակցութիւն: Վաղցեալն ու մերկն Ս. Եւսրիկին կը դիմէին, նա ազգին գթութեան ներկայացուցիչ և

մատակարար եղաւ. ո՛չ միայն հացն ու հագուստը կը բաժնէր խղճալեաց, այլ նոցա տառապանքն ևս իրեն բաժին կ'ընդունէր, կուլար, կ'ողօքէր, կը յուսագրէր. բան մը՝ որ հացի չափ տեղ կը բռնէ թշուառաց համար, և գթութիւնը կ'աճեցնէ ողորմածա-սիրաց համար:

Ս. Հայրիկի մէկ ջանքն եղաւ Ս. արագայ մէջ երկրագործութեան գիշերօթիկ վարժարան բանալ, և բացաւ, որ շարունակեց իբր երկու և կէս տարի, որոյ ծախքը հոգացուած է Սով. Աեգր. Յանձնաժողովէն և Տփղիսի մասնաւոր նպաստներէ. բայց երեք տարի յառաջ դադարեցաւ այդ դպրոցն ի Ս. արագ, այլ կ'ուզէր շարունակել զայն ի Սալախանէ գիւղ, Հէքարի գաւառը, ուր առատ է հողն և ջուր, և զանազան օգուտներ կը տեսնուին: Ս. արագայ մէջ հին ձեռագիր մատենից թանգարան մի ևս հաստատեց հինգ տարի յառաջ, ուր խնամքով դասաւորած է հազարէն աւելի գիրք:

Լ. հաւաստիկ Խորիմեան Սրբազանի կենաց և ծառայութեանց համառօտ պատկերը, նորա զանազան կողմերը գծելով: Ընշուշտ պակաս կը մնան տակաւին մանրամասնութիւնք. նա կ'ապրի դեռ, և կ'ապրի գործելով: 'Սորա կեանք և գործք կը շարունակուին ուրեմն եռանդով և արդիւնաբերութեամբ. փոյթ չունի նա թէ Պատրիարք է կամ՝ Ս. անահայր մը, մայրաքաղաքի պերճանաց մէջ թէ գաւառաց փոշիներուն հետ, նա ամէն տեղ Խորիմեան վարժապետն է, Խորիմեան վարդապետն է, Խորիմեան Հայրիկն է, լուսաւորող, քարոզող և յանձանձող ժողովրդեան: 'Սա արդէն մտած է կենաց 68 երրորդ տարին. բայց երբէք ծեր չէ. հոգւով զօրաւոր, մարմնով քաջաւոր, սրտով գթած, մտքով խոհուն, լեզւով քաղցրախօս, ի պէտս սակաւապէտ, համբերատար, եկեղեցասէր, աղիին վրայ յուսալից, ժամանակին պահանջից մօտաւորապէս ծանօթ: Խորիմեան Սրբազան պաշտօնի ետեւին վազած չէ երբէք, բայց երբ պաշտօնը զինքն կոչած է, մերժած չէ՝ իբրև իւր ուխտին պարտականութիւնը:







ՄԵՃԱՆՈՐԻ ԲԱՐԵՐԱՐ  
 ՄԿՐՏԻՔ ՍԱՆՈՍԱՐԵԱՆՔ  
 ԵՐԹԱՆԱՍԵՐԵՅ ՏԱՐԵՂԵՐԶԻ ԱՌԹՈՎ

## ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑ

(ՆՈՐԱ ԾՆԵԳԻԱՆ ԻԹՔԱՆԱՍՆԱՄԵԱՑ ՏԱՐԵԳՈՐԶԻ ԱԻԻԹՈՎ \*)

Մկրտիչ Սանասարեանց ծնած է թիֆլիսում 1818 թուին, ապրիլի 10-ին աւագ չորեքշաբթի օրը: Հայրն՝ որի անունն էր Սարգիս և մայրը՝ Սարիամ, Վան քաղաքի պատուաւոր ընտանիքների զսակարգին էին պատկանում: Սոքա տեղափոխուել են թիֆլիս, ներկայ դարուս տառնական թուականներին հետեւեալ հանգամանքների պատճառով:

Եյս միջոցներին Վանում յայտնի էր մուխտիսի Լյորանենց Վէորդի ընտանիքն, որի Սարիամ աղջկան հետ ամուսնանում է Սարգիսը: Լյորանենց Վէորդն, որ յետոյ Լըծրունի մականունը ստացաւ, մի ինչ որ բանի պատճառով ստիպուած է լինում թողնել Վանում իր կինը, Սարիամ աղջկին և Լյրեմիա քրդին և հեռանալ իր ծննդավայրից: Եւ Պարսկաստանով գնում է ուղղակի թիֆլիս: Եւորա այս բացակայութեան միջոցին է, որ Սարգիսն ամուսնանում է նորա Սարիամ աղջկան հետ: Վէորդ Լըծրունին այս լուրն առնելիս՝ շատ ուրախանում է. նա նամակ է գրում Վան իր փեսայ Սարգսին՝ օգնել նորան գործ սկսելու և ի միջի այլոց առաջարկում է՝ թանկագին քարեր ևս ուղարկել իրեն թիֆլիս, որոնք այնտեղ՝ նորա խօսքով, լաւ գնով ծախվում էին: Եյս գործն յիրաւի սկսվում է և յաջող ընթանում: Եւ միևնոյն ժամանակ կարմիր շիւայով առևտուր է անում Սողդակի և Եստրախանի հետ, որտեղից վերադարձին բերում է այնտեղի ապրանքներից թիֆլիս վաճառելու: Սօտաւորապէս 1809 թուին Վէորդ Լըծրունին, առնելով զանազան իրեղէններ և Պարսկաստանի դոհարներ՝ գնում է Փարսիւ վաճառելու համար. գործը յաջող վերջանալուց յետոյ, նա գնում է Եմստերգամ, ուր մի հայի տպարանի տառերի մայրերն է գնում և հետն առնելով ուղեւորում է Սոսկուա 1812 թուի ձմեռն: Եյս մայրերն յետոյ նա ընծայում է Եւերսիսեան զպրոցին: Եյստեղ օգուտ քաղելով

\*) Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ մօտ օրերումս Պետրբուրգի հայ հասարակութիւնը պիտի տօնէ Մեծ. Մ. Սանասարեանի Յոբելեանը:





ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՂԱՐԺԱՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՐՈՐ ԶԵՆՔԸ ԿԱՐԵՆՈՒՄ



դէպքից, նա աժան գնով ձեռք է բերում հին ասսիւգնացիաներ, որոնց արժէքը ֆրանս-ուսական պատերազմին պատճառով ընկած էր. երբ ֆրանսացիները յաղթուած յետ են մղւում, նոցա արժէքը նորից բարձրանում է, որով Արծրունին մեծ դուսար է վաստակում:

Սոսկուայից թիֆլիս վերադառնալով, Վեորդ Արծրունին գրում է Սան իր Սարգիս փեսին, որ նա՝ իր կինը, զոքանչը (Վեորդի ամուսինն) և աներձագն Արեմիան առնէ և գաղթէ թիֆլիս: Սիւնոյն ժամանակ Արծրունին դիմում է և հայոց կաթողիկոսին, որ նա իր ազգեցուծիւնը զօրժ գնէ տաճկաց կառավարութեան մօտ, որպէս զի նորա բնտանիքին իրաւունք տրուի գաղթելու թիֆլիս, որ և յաջողւում է:

Ահա այսպէս մեր յարգելի հօբելարի ծնողները 1814 թուին փոխադրւում են թիֆլիս, ուր չորս տարուց յետոյ, 1818 թուին ծնում է նոցա Սկրտիչ որդին, բացի այս որդուց, Սարգիսն ունենում է և երեք որդի (հովհաննէս, Կարապետ, Սողոմոն) և մի դուստր—Կատարինէ անունով (բժիշկ Լեոն Տիգրանեանցի մայրը): Սողոմոնն, որ շուտով մեռնում է, ամենակրտսերն է լինում. սորա ծննդից յետոյ վախճանում է և մայրը:

1820 ազան թուականների սկզբներում, թիֆլիսում Սուլունու եկեղեցու բակում ուսուցչութիւն էր անում Արամէիք քահանան: Սորա մօտ էին սովորում Սարգիս երկու աւագ որդիներն, որոնց հետ հայրն ուղարկւում էր և փոքրիկ Սկրտիչն տանը մենակ չմնալու համար: Այս միջոցին Վարաբաղցի Պօղոս վարդապետն էլ դասատուութեամբ էր պարապում Տալի թաղի վանքում: Արամէիք քահանայի մօտից հովհաննէս և Կարապետը փոխադրւում են Պօղոս վարդապետի մօտ, ուր առաջին անգամ 5—6 տարեկան Սկրտիչն այբուբեն է սկսում սովորել:

Այս ժամանակ բացւում է Վերսիսեան դպրանոցն, ուր փոխադրւում են Պօղոս վարդապետի մօտ գտնուած բոլոր աշակերտներն, որոնց մէջ էր և Սկրտիչը:

Փոքրիկ Սկրտիչը Վերսիսեան դպրանոցում սովորում է յաջողութեամբ և դասատնից դասատուն փոխադրուելով, աւարտում է ուսման ընթացքը, և իր ընկերակից, յետոյ բժիշկ Ռոստոմեանցի հետ մտադրւում է գնալ Սենեթիկ, հայերէն լեզուի մէջ կատարելագործուելու համար. սակայն այս չէ յաջողւում:

1835 թուի սկզբում վախճանում է նորա հայրը Սարգիս:

Այս տխուր դեպքից մի երկու ամիս յետոյ, Արեմիա Արծրունին, Մկրտչի քեռին, ինչ ինչ տեսակէտներով Մկրտչին տալիս է զինուորական ծառայութեան, որի մէջ գտնվում էր արդէն նորա Կարապետ եղբայրը. իսկ սոցա միւս եղբայրն Յովհաննէս նախ սեղանաւորութեամբ էր պարապում, իսկ յետոյ վաճառականութեամբ:

Արիտասարդ Մկրտիչը 17 տարեկան հասակում, այն է 1835 թուին մայիսի 14-ին մտնում է զինուորական ծառայութեան Մինգրելեան Եգերսկի վաշտում: Օչինուորական նախնական կրթութիւն ստանալով, շուտով արժանանում է ենթապաշտութեան աստիճանին: 24 տարեկան հասակում, 1842 թուին յուլիսի 27-ին Կովկասեան լեռնականների դէմ մղած պատերազմում, իր ցոյց տուած քաջութեան համար բարձրանում է սպայի աստիճան: Ղեռ սորանից առաջ նա 1838 թուին մասնակցել էր Ափսաղիայում տեղի ունեցած կռուին: Մարտի 1-ին նոյն թուին Սուխում լալէ ամրոցին վերայ չուելիս, Սև ծովի զինուորական նաւատորմիցը և վաճառականական նաւերը ազատելու կովում և փոթորկից եղբւրք ձգուած նաւաստիները փրկելու գործում, մեծ անձնուիրութեամբ յաջողում է փրկել իր ընկերակիցների կեանքը: Այս գործերում իր ցոյց տուած հաւատարմութեան, քաջասրտութեան և արիւնքութեան համար Բարձրագոյնս արժանանում է արծաթեայ միդալի («Վտանգեալներին փրկելու համար») վերտառութեամբ և մի հարիւր ռուբլի պարգևի:

Այնուհետև նա անդադար մասնակցում է այն բոլոր կռիւներին, որոնք մղվում էին Կովկասի լեռնականների դէմ: Այս մասնակից է լինում, ի միջի այլոց Աջիախուրի առմանը, Ղերբենդի մօտ տեղի ունեցած գործողութիւններին, Ժողովուրդը թըշնամեաց յարձակումներից պաշտպանելու համար, ինչպէս և 1841 թուին ապրիլի 14-ից մինչ մայիսի 1-ը Վէլիքէնդ գիւղից թէմիրխան Շուրայ ամրոցին վերայ եղած յարձակումին, յետոյ Չիրէկէյ գիւղի մօտերքը Ախաթլինսկի անցքը դիտելու ժամանակ տեղի ունեցած մի կարգ հրացանաձգութիւններին լեռնականների դէմ, և այլն:

1842 թուին յուլիսի 27-ին Շամիլի զօրքերի դէմ խիստ հրացանաձգութեան ժամանակ մեր երիտասարդ զինուորականը թըշնամու հրացանի դնդակներից վիրաւորվում է երկու տեղից, գըլխում և ոտքում: Այս վերջին կովում ցոյց տուած օրինակելի քա-

ջութեան և արիութեան համար արժանանում է Ս. Վեորգի անուան զինուորական շքանշանին և միևնոյն ժամանակ բարձրանում է պոստպորուչիկ աստիճանի:

Ընդ այս պաշտօնի մէջ 1845 թուին յունիսի 26-ին, համաձայն իր խնդիրքին, ստացած վէրքերին պատճառով, Բարձրագոյն հրամանով արձակվում է զինուորական ծառայութիւնից, ըստանալով իրաւունք զինուորական համազգեստ կրելու և լիակատար թոշակ ստանալու մինչև ցմահ: Վա ստանում է լիակատար թոշակ և «Ս իրաւորեալների յանձնաժողովից»:

Ըստեղ աւելորդ չենք համարում յիշել, որ առաջ վիրաւորեալ զինուորականը վէրքի համար թոշակ ստանում էր այն ժամանակ, երբ պաշտօնից դուրս գալուց մինչև խնդիրքը ներկայացնելը չէր անցնում մի տարի: Սակայն Սկրտիչ Սանասարեանը խնդիր է ներկայացնում մի քանի տարուց յետոյ, երբ մեկնում է Պետերբուրգ: Ըստեղ շնորհիւ նորա լաւ յարաբերութիւնների ազդեցիկ անձանց հետ, նորա խնդիրքը ներկայացվում է Վայսեր. Վայսըրը վճռում է յօգուտ Սկրտիչ Սանասարեանի, և այս առիթով, զինուորական օրէնքի վերոյիշեալ յօդուածն էլ այդ օրից փոխվում է:

Պաշտօնից դուրս գալով, իր Վարապետ եղբոր հետ Լըբեմիա Լըծրունու գէմ նա ժառանգական դատ է բաց անում, ըստ որում, ինչպէս յիշեցինք, Սկրտիչ Սանասարեանի մայրն Լըբեմիա Լըծրունու քոյրը լինելով, իրենց հօր մահից յետոյ թողած մեծ կարողութիւնից իրենց մօր մասն էին պահանջում:

Ըստ ժառանգական դատը պաշտպանելու համար Սկրտիչ Սանասարեանց առաջին անգամ գալիս է Սոսկուա և յետոյ Պետերբուրգ, ուր հաստատվում է 1849 թուին, թէև սկզբներում տարուայ մեծ մասն անց է կացնում Սոսկուայում:

Ընդ այս թուականից է սկսում մեծանուն բարերարի հասարակական գործունէութիւնը:

Լըբեմիա Լըծրունու և Սարգսի ժառանգների գործը շնորհիւ մի քանի յայտնի բարեկամ անձնաւորութիւնների վճռվում է յօգուտ Լըբեմիա Լըծրունուն:

Եւ այսպէս 1849 թուից Սկրտիչ Սանասարեանցը սկսում է փոքր առ փոքր հայ հասարակութեան ուշադրութիւնը գրաւել իր կատարած բարի գործերով: Նորա նախկին բարեգործութիւն-



ներն արտայայտուիմ են այն օգնութիւններով, որ նա մատակարարում էր մայրաքաղաքների հայ ուսանողներին:

Մոսկուայում յիսնական թուականներում Մկրտիչ Սանասարեանի արած բազմաթիւ բարեգործութիւնների մի արձագանքը մենք գտնում ենք այն ժամանակի Մոսկուայի մամուլին մէջ 1858 թ:

«Եւստեղ պարտականութիւն ենք համարում նշնակէս», յայտնել մեր առ ի սրտէ անկեղծ շնորհակալութիւնը ազնուական հայկազն, Պ. Մկրտիչ Սարգիսեան Սանասարեանցին: Եւս պատուելի և ազնիւ հոգով, մարդասէր հայկազնը տեղեկանալով, որ հանգուցեալը \*) բացի իւր վարքից ու գիտութիւնից, ոչինչ նիւթական պաշար չէր ճարել, իւր սեպհական արծաթովը հոգաց, ոչ թէ միայն հանգիստւոր թաղման հարկաւոր պիտոյքը, այլ և փառաւոր ճաշ պատրաստեց գերեզմանատնում 70 յուղարկաւորի համար:

«Պարծա՞նք քեզ, Հայաստան, որ, թէև փոքր, այնու ամենայնիւ ունիս զաւակներ, որոնք իւրեանց ազգասիրութեամբը փառաւորում են քո մոռացված ու փոշոտված անունը, որի յիշատակը անգամ ջնջուած է քո շատ զաւակների սրտից: Մի մեծատուն մարդու մարմին մեծարել պատուով ու յարգութեամբ, նորա մահից յետոյ, մեծ բան չէ. — Բայց մի ազգասէր և զգաստ հայրենակէն ճանաչել ու մշտաբար այդ է հաւ. Գործը»:

Թող ներուժի մեղ այստեղ մի երկու խօսք ասել յարգելի Յօրելեարի մասնաւոր կեանքի մասին:

Պետերբուրգ հաստատուելուց ի վեր, Մկրտիչ Սանասարեան պարապում է զանազան ձեռնարկութիւններով, նա որպէս հեռատես և փորձառու մարդ, համարեա միշտ այնպիսի գործերի է ձեռք զարնում, որոնք թէ պատուաւոր գիրք են ընծայում նորան գործնական կեանքի յաւ շրջաններում և թէ դրամներն արգիւնաւոր գործադրութիւն են գտնում առանց վտանգի ենթարկուելու:

Եւս այսպիսի գործերի մէջ մասնաւորապէս ուշադրութեան արժանի է նորա մասնակցութիւնը «Кавказъ и Меркурий» յայտնի շրջենաւային ընկերութեան մէջ, որը միշտ առատ արգիւնք է տալիս ընկերութեան բաժանորդներին, մասնաւանդ մեծ բաժիններ ունեցող անձինքներին: Եւս ընկերութեան վարչութեան մէջ Մը-

\*) Եւս հատուածում յիշուած հանգուցեալը Երեանցի մեծ ձիւղբերով օժտուած Դէորդ Գեղամեանցն է եղել, որը Մոսկուայի համալսարանի բժշկական բաժնում աւարտելուց յետոյ, մեռել է չքաւորութեան մէջ Մոսկուայի հիւանդանոցում:

կըրտիչ Սանասարեանը երկար ժամանակից ի վեր գիրեկտորի պաշտօն է վարում, որը նիւթապէս շատ շահաբեր է պաշտօնատարին: Յառաջիկայ 1889 թուի յունվար ամսին, ինչպէս լսում ենք, «Кавказъ и Меркурий» վարչութիւնը մեծ շքով և հանդիսով տօնելու է Սկրտիչ Սանասարեանի քսան և հինգ ամեայ գործունէութիւնը յիշեալ ընկերութեան մէջ:

Այս գործերի հետ զուգընթացաբար Սկրտիչ Սանասարեանը ձեռնարկել է և այլ գործերի, օրինակ նա զանազան ժամանակներ ունեցած է Պետերբուրգի շրջակայքում մեծ կալուածներ, գիւղեր հարկերաւոր ծխերով և հազարաւոր դեսիատին հողով և հազարն անտառներով: Այս կալուածներն ևս, ինչպէս և մի կարգ ուրիշ յայտնի գործեր, Ս. Սանասարեանցին մեծ օգուտ են մատակարարել: Աս եղել է և 11 տարի լոմբարդի տեսուչ (գիրեկտոր):

Սոսաք յիշել, որ Ս. Սանասարեանց 1865 թ. Պարսից Շահից արժանանում է «Առիւծի և Արեգական» շքանշանի Բ. աստիճանին:

Բաւական համարելով այսքանը նորա կեանքի արտաքին կողմի մասին՝ դառնանք այժմ համառօտակի յիշելու նորա այն գործունէութիւնը, որի պատճառով նա վայելում է ազգի մէջ մեծ սէր ու համակրութիւն:

Սկրտիչ Սանասարեանի գործունէութեան այս մասին խօսելուց առաջ, աւելորդ չենք համարում և մի ընդհանուր հայեացք ձգել մեր մօտիկ անցեալի վրայ: Ինչպէս յայտնի է, մինչև երեսնական թուականները մեղանում չկային կանոնաւոր դպրոցներ (բացի Սոսկուայի Աղարեան ճեմարանից) մինչև որ երջանկայիշատակ Սերսէս Լ. Կաթողիկոսը հիմնեց թիֆլիսումը կրթութեան այն լուսաւոր ծաւալոցը, որն այնքան օգտակար եղած է ազգին:

Վախաւորապէս այս ժամանակից սկսում է հայերի մէջ տարածուիլ կրթութիւն և լուսաւորութիւն, որ հետզհետէ արծարծուելով՝ զարթոնում է սէր դէպի գիտութիւնը:

Այդ ժամանակից հայ երիտասարդները, թէև փոքր թուով, ձգտում են բարձրագոյն կրթութիւն ստանալու: Շատերը նիւթական միջոցի պակասութեան պատճառով անկարող էին գտնւիւմ կրթութիւն ստանալ և իրենց կողմից նպաստել այն ժամակի կրթական շարժմանը, որին մղում էին տուել այն ժամանակուայ մեր սակաւաթիւ գործիչները:

Ահա այս ժամանակներումն է, որ հեռաւոր հիւսիսում, ուր կրթութիւն առնելու էին դիմում մեր երիտասարդները, անտարբերութեան ժամանակ դէպի ազգային լուսաւորութեան գործը՝ երևան է գալիս մեր յարգելի Հօբելսարը, ձեռնարկում է խրախուսել չքաւոր ուսումնաստենչ երիտարդներին իրենց նուիրական ասպարիզին մէջ:

Այստեղ մենք պատշաճ չենք դատում մտնել մանրամասնութիւնների մէջ և յիշել յարգելի բարերարի արած բազմաթիւ օգնութիւնները, որոնցով նա հայ երիտասարդներին միջոց է մատակարարել աւարտելու իրենց ուսումը և դառնալու հայրենի անդաստանում գործելու համար:

Այլ թանկան թուականներին էր, երբ Ս. Սանասարեանց, մօտկից տեղեկանալով մեր գպրոցների վիճակին և տեսնելով, որ ժամանակի պահանջին համապատասխան ուսուցիչներ զգալի կերպով պակասում են հայ ուսումնարաններում՝ հաստատուն միտք յղացաւ իր կարողութեան չափով նպաստել ազգային մանկտի կրթութեան այդ կենսական գործին:

Այս մտադրութիւնն իրագործելու համար, նա ընտրեց բաւականին թուով հայ երիտասարդներ և իր սեփական հաշուով ուղարկեց Աւրոպայի կրթական կենդրոնները ուսուցչութեան պատրաստելու նպատակով: Պարզ է, որ այս երիտասարդներն իրենց ուսումն աւարտելուց յետոյ պարտաւոր էին վերադառնալ Արմէնիա և պարապել մանկավարժութեամբ: Ս. Սանասարեանի ազգին մատուցած այս մեծ ծառայութիւնը արժանաւորապէս գնահատելու համար, որ մեր օրերում մի եղակի բարերարդ երեւոյթ է կազմում, բաւական է միայն յիշել մեր բոլոր յայտնի և ընդունակ ուսուցիչներին և մենք կտեսնենք, որ զոցա մեծագոյն մասը այսօր ուղղակի կամ անուղղակի մաս ունի Ս. Սանասարեանի բարեգործութիւնից: Ի հարկէ, որ հայի համար որ թանգ է իր մատաղ սերունդի կանոնաւոր կրթութիւնը, նորա զարգացումը մայրենի գպրոցում ընդունակ դաստիարակների առաջնորդութեան տակ՝ նա միայն կարող է գնահատել Ս. Սանասարեանի այս յիշատակաց արժանի գործը:

Այս ուղղութեամբ գործելով, Ս. Սանասարեանը իր հեռատես և ազգասէր հոգով, չի մոռանում ծաւալել իր օգնութիւնները և նոյն իսկ կրթական հիմնարկութիւններին: Այս ամբողջ



տարիներով օգնում է այնպիսի դպրոցներին, որոնք գտնվում են աւելի կարօտ և աղքատ ժողովրդի մէջ, որը չէր կարողանայ իր սեփական միջոցներով պահել նրանց (օրինակ՝ Վիժ և Վարդաշէն թրքախօս հայ լուսաւորչական գիւղերում)։

Սկսած Սանասարեանի օգնութիւնը, շատերի թվում, վաշել են լծիֆիսի, Վանձակի, Նարեանի և այլ գաւառների կրթական հիմնարկութիւնները։ Վա այս ասպարիզին մէջ մի որոշ հաստատուն ուղղութեամբ գործելով, չէ մոռացել և դպրոցների զանազան արտաքին կարիքները, նա մատակարարել է շատ դպրոցների, ինչպէս և Վէորգեան Ղեմարանին ուսումնական պիտոյքներ, ֆիզիկական գործիքներ, գրքեր, ևն. տպագրել է տրւել առաջին անգամ շարժական այբուբեն, գասագրքեր։

Բայց բացի վերոյիշեալ ընդարձակ կրթական գործունէութիւնից, նա մտադիր էր նոյն ուղղութեամբ այնպիսի մի մեծ գործ կատարելու, որով նորա անունը անշուշտ կանմահանար ոչ միայն միայն մեր մէջ, այլ նաև օտար ազգերում. սակայն հանգամանքները խոչընդոտ են լինում մեծ. բարերարի մտադրութեանը և նա ի յիշատակ իր չիրագործուած մտքին՝ ձեռնարկում է մի ուրիշ դարձեալ իր տեսակին մէջ բովանդակ հայերի համար եղակի և կենսական գործի, Սանասարեան վարժարանի հիմնարկութեանը Վարինում, որը ինչպէս ծաւալող դրական կրթութեան մեր տաճկաբնակ հայերի մէջ՝ արեգակի նման իր ճառագայթներովը լուսաւորում է իր բոլոր շրջապատը, հայ երկրի չորս կողմերը, ուր գիշատիչ կաթուղիկ միսիօնարներ և զանազան ազգերի քարոզիչներ ոսկու և զօրաւոր պաշտպանութիւնների շնորհիւ, օգուտ քաղելով մեր անտիրական վիճակից, ուսում տալու պատրուակով, երկպառակութիւն և խռովութիւն են սերմանում հարազատ հայերի մէջ և խզում նոցա կրօնական կապը, որ ներկայ ժամանակում մեր ամենազօրաւոր ազգային յատկանիշներից մէկն է։

Այս ուսումնարանը, որի վարչութիւնը և ուսուցիչները մեծ, բարերարի հաշուով Եւրոպայում (Վերմանիա, Շվեյցարիա, Վալիա, Մեդլիա) կրթութիւն առած մասնագէտ մանկավարժներ են կազմում, այն աստիճան կանոնաւոր ընթացք ունի և այնպիսի արդիւնքներ է այժմ տալիս, որ ամեն մի հայի մնում է միայն ուրախանալ և ցանկանալ նորա աւելի և աւելի բարգաւաճման։

Ս. Սանասարեան բացի Եւրոպում ուսումնարանից, շինել է



ԱՄԱՐԱՆՈՅ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ Ի ՍՐՏԱԶՈՐ ԿԱՐՆՈՅ







խորմեան Հայրիկի ձեռքով, և Վանի Սանդիստեան օրիորդաց դպրոցը, և բացի այս պահպանում է միևնոյն նահանգի Խառակոնիս գիւղում Սարիամեան օրիորդաց դպրոցը ամեն տարի Սիացեալ Ընկերութեանց վճարելով մի հազար ֆրանկ:


Ս. Սանասարեան բովանդակ հայ ժողովրդի աղէտների, սովի, հրդեհի, և այլն դէպքերում միշտ փութացել է օգնութեան ձեռք կարկառել իր փնտուած հայրենակիցներին:

Ըրժէ յիշել և այս, որ Ս. Լճմիաճնի տպարանի ձուլարանը և տառերի մայրերը նուիրած է Ս. Սանասարեանցը: Հարկաւոր է ասել, որ այս մայրերը Լճմիաճնի տպարանում պատրաստել է տուել մի պոլսեցի ուսասհայ այժմ հանգուցեալ մի բանաստեղծի առաջնորդութեամբ, բայց պատուիրատու պոլսեցին մայրերը պատրաստելուց յետոյ չէ կամեցել գնել, այն ժամանակ, վերոյիշեալ հայ բանաստեղծը դիմում է Ս. Սանասարեանցին, որ սա ձեռք բերէ այդ մայրերը և իրան ազատէ պատասխանատուութիւնից, ահա՛ այս մայրերն են, որ մեծ, բարերարը նուիրած է Ս. Լճմիաճնի տպարանին: Ս. Սանասարեան, ինչպէս տեղեկանում ենք, գնած է և այժմ ունի իր մօտ Լազարեանց Ճեմարանի երեւելի հայրերն ու մայրերը, որոնք նա պահում է իր ուսումնարանի համար:

Վերջացնելով մեր այս կարճառօտ և յոյժ թերի ակնարկը Սկրտիչ Սանասարեանի կեանքի և գործունէութեան վերայ, մենք չենք կարող, իբրև հայ անհատ, զսպել մեր ջերմ ցանկութիւնը՝ բարեմաղթելու այդ պատկառելի անձնաւորութեան և հայ մանկտիի բարերարին՝ դեռ երկար արդիւնաշատ տարիներ, սա հազուագիւտ մի երեւոյթ է եղել մեր ազգում մինչև այսօր, որ իր բոլոր կեանքին նպատակ է արել, իր բոլոր սէրը կենդրոնացրել է ազգային լուսաւորութեան մէջ, չխնայելով սորա համար ո՛չ աշխատանք և ո՛չ նիւթական զոհաբերութիւն:

Եւ յիշելի, ո՞վ կարող է այսօր ցոյց տալ մեր մէջ նման անձնաւորութիւն, որ իր սաստիկ սէրի և համակրութեան պատճառով դէպի ազգային կրթութիւնը՝ կարծում է իր անձնական վայելչութիւնները, և շոյլութիւն է ցոյց տալիս միայն որբեր խնամելով, որդեգիրներ դաստիարակելով, գրագէտներ, դաստիարակներ պատրաստելով, հրատարակութիւնների օժանդակելով և եկեղեցիներ բարեզարդելով:

Ս. Գ.



## ՀԱՄԲԱՒԱՌՈՐ ՀԱՅԱԶԳԻ ՆԿԱՐԻՑ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Սեպտեմբերի 26ին 1887 թ. Պետերբուրգում Վեդարուեստից Ղեմարանում կատարուեցաւ հայազգի հանրահռչակ նկարչի յիսնամեայ յօբելեանը:

Եւս առիթով «Երաքսի» ընթերցողներին ներկայացնում ենք ականաւոր ծովանկարի համառօտ կենսագրութիւնը:

Յովհաննէս Կոստանդեան Եւփազովսկին ծնուել է թէոդոսիայում 1817 թ. յուլիսի 17ին: Նորա հայրը, հայ լուսաւորչական, իր ժամանակի համար զարգացած, լեզուագէտ, եռանդուն և ժիր մի անձ, գաղթել էր թէոդոսիա Վալիցիայից, ուր մինչև այժմ ևս գտնվում են նկարչի մերձաւոր ազգականները: Եւփազովսկու ծնունդը տեղի է ունեցել իր ընտանեաց նիւթական նեղ կացութեան միջոցին, ըստ որում նորա հայրը վաճառականութեամբ վաստակած նշանաւոր հարստութիւնը, գրեթէ ամբողջովին կորցրել էր 1812 թուին ժանտախտի ժամանակ:

Վեռ մանուկ հասակում նորա մէջ նշմարվում էր սէր դէպի գեղարուեստը, նա սիրում էր և երաժշտութիւն, և ինքն իրեն, առանց ուսուցչի, սովորել էր ջութակ ածել, միևնոյն ժամանակ նորանում արծարծուեց և սէր դէպի նկարչութիւնը. նա իր փափազը յազեցնում էր, պատերի վերայ նաւեր և մարդկանց պատկերներ նկարելով:

Նորա նախկին ուսուցիչը, որը սկզբնական նկարչական տեղեկութիւններ հաղորդեց նորան, եղաւ նորա հօր բարեկամ—քաղաքային ճարտարապետ Կոխը: Բայց անտարակոյս նորա իսկական դաստիարակը եղել է այն ծովը, որի եզերքում նա ըլլաւ աշխարհ է եկել: Նովի անհուն տարածութեան վեհ տեսարանը անշուշտ մեծ տպաւորութիւն պիտի թողնէր զգայուն մանկան երեւակայութեան վերայ: Թէոդոսիայի ծովածոցի սիրուն գծադրութիւնը, ալիքների անդադար ծածանումը, եղերքի ընդհարման հրապուրիչ տեսարանը նորա մէջ արծարծեցին այն ահագին ձիրքը, որը յետոյ զարգացաւ այնպիսի վսեմ, մինչև այժմ անաղօտ փայլով:





ՀԱՄԱԲԱՆՈՐ ՀԱՅԱԶԳԻ ՆՈՒՐԶ  
ՅՈՎՀԱՆՆԵՐՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Հրատ. «Երաս» Հանդիսի:



Սանուկ նկարչի ապագայ վիճակի վերայ վճռողական ազդեցութիւն ունեցաւ թէոգոսիայի քաղաքագլուխ Ալէքսանդր Իվանովիչ Կազնաչէեւը, որը հիմնաւոր գիտութիւնների հետ ունէր նաեւ չափազանց բարի և մարդասէր բնավորութիւն: Սորա անունը անկասկած կապուած է նկարչի փառքի հետ, որովհետեւ նա—առաջինը նկատեց ու գնահատեց նորա մեծ տաղանդը և հոգս տարաւ նորա ապագայ վիճակի մասին:

Տեսնելով ինքնուս նկարչի նկարները, նա ցանկացաւ անձամբ ծանօթանալ տասնամեայ բանաստեղծի հետ: Գովասանքներով փայփայելուց յետոյ, ընծայեց նորան նկարչական գործիքներ և պատուիրեց, որ այնուհետեւ բոլոր նկարածները իրեն բերէ: Նկարների փոխարէն նա տալիս էր փող, որը մանուկը յանձնում իր մօրը տնային պիտոյքները հայթայթելու համար:

1830 թ. Կազնաչէեւը նշանակուելով Տաւրիդայի կառավարիչ, կանչեց թէոգոսիայի գաւառական ուսումնարանից իր սիրած մանուկին և տեղափոխեց Սիմֆերոպոլի գիմնազիոնը: Այստեղ նա տօն օրերին յաճախում էր Սատալիա Գեօգորովնա Սարիչկինի տունը, որ սերտ բարեկամութիւն ունէր Կազնաչէեւի ընտանեաց հետ, և մերթ ընդ մերթ բերում էր նա իր նկարները, որոնց մէջ աւելի յաջող գրչով գծած էր մի նկար, որը ներկայացնում էր հրէաներին աղօթարանում:

Սարիչկինը հիացած այդ նկարով ուղարկեց Սոսկուա իր ծանօթ ճարտարապետ Տօնչիին, որը իշխան Սոլովոնսկու միջոցով ներկայացրեց Նիկողայոս կայսեր, խնդրելով միանգամայն ընդունել Այվազովսկուն արքունի հաշուով Գեղարուեստից ճեմարանը: 1833 թ. այդ խնդիրքը ընդունուեցաւ: Այվազովսկին մտաւ ճեմարան նոյն իսկ կայսեր հաշուով:

Կազնաչէեւի յիշատակը, որ մեր նկարչի ապագայ բաղդի և փառքի գլխաւոր պատճառն է եղել, մինչև այժմ այն աստիճան անմոռաց կնքուած է նկարչի սրտում, որ նա ցանկանալով յաւիտեանս անջինջ պահել իր բարերարի յիշատակը, անցեալ տարի շինեց թէոգոսիայում մի ջրի խողովակ՝ տալով նորան Կազնաչէեւի անունը: Այդ նուէրի ճշմարիտ արժէքն իմանալու համար հարկաւոր է աչքի առաջ ունենալ, որ այդ քաղաքի հասարակութիւնը ամեն ամառ սաստիկ նեղութիւն էր քաշում ջրի պակասութեան պատճառով:



Ճեմարանումը Այվազովսկին եռանդով և սիրով սկսեց ուսումնասիրել իր առարկան, նախ տեսարաններ (paysage) նկարելով յայտնի ուսուցիչների առաջնորդութեամբ միշտ մեծ յաջողութեամբ և արտայայտելով նշանաւոր տաղանդի փայլուն նշոյլներ։ Այս միջոցին պատահեց մի անցք, որ թէպէտ նախ վտանգի ենթարկեց նորա ապագան, սակայն վերջ ի վերջոյ նորա բարձրանալուն նոր առիթ դարձաւ։ Պետերբուրգ եկել էր Փրանսիացի ծովային նկարիչ Տաննէրը, որի նկարներին Վայսըը հաւանելով պատուիրեց, որ ճեմարանի ընդունակ որդեգիրներէց մինը տան նորան աշակերտելու։ Ընտրուածն Այվազովսկին էր։ Այն ժամանակ Այվազովսկին փորձում էր իր ոյժը ծովային նկարներում, ըստ որում նա կարճ միջոցում ըմբռնեց ամբողջապէս նոր ուսուցչի արհեստի գաղտնիքը՝ առանց նոյն իսկ նորա օգնութեան, որը շահւում էր իր աշակերտից իբրեւ մի ձրի ոյժով, հարկադրելով նորան ներկեր պատրաստել և իրեն պէտք եղած գիրքերը բնութիւնից ներկաւ։ Ճեմարանի աշնան պատկերահանդիսին, 1835-ին երեւան եկաւ և Այվազովսկու առաջին նկարն «(Դը ծովի վերայ)»։ Հասարակութիւնն իսկոյն նկատեց այս նկարում մեծ ձիւքի նշան և մեծ համակրութիւն ցոյց տուեց դէպի նկարը։ Բայց այս իսկ յաջողութիւնը պատճառ դարձաւ թէպէտ ժամանակաւոր բայց ծանր ձախորդութեան, ինչու որ նկարչին դժբաղդութեան ենթարկեց։

Նախանձոտ այլազգին վիրաւորուած իր աշակերտի յաջողութիւնով, որով ընդունուեցաւ դեռահասակ նկարչի առաջին ինքնուրոյն քայլը, գանգատուեց Վայսեր Այվազովսկու ինքնակամ վարմունքի վերայ, և Վայսըը անհնազանդութիւն համարելով Այվազովսկու արածը, հրամայեց հանել նկարը պատկերահանդիսից, որ և կատարուեցաւ բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ։ Այս անցքը մեծ հոգեկան տանջանք պատճառեց նկարչին, վեց ամիս տևեց Վայսեր բարկութիւնը և վատ հետևանք չունեցաւ միայն Վայսեր ասպետական վեհափառութեան և արդարասիրութեան շնորհիւ։ Համոզուելով որ Տաննէրի գանգատը անարդար է եղել, Վայսըը հրամայեց Իրեն ներկայացնել արտաքսած նկարը, և հաւանելով՝ պարգևեց նկարչին 1,000 ռուբլի, և բացի դորանից նշանակեց նորան ուղեկից մեծ դուքս Կոստանդնին Ֆիւնական ծոցում առաջին ծովագնացութեան ժամանակ։ Այս ծովաշրջիկ զբօսանքն ահագին օգուտ բերեց Այվազովսկուն, վասն զի

միջոց տուեց նորան աւելի բազմակողմանի նկատողութիւններ ածել և աւելի մօտ ծանօթանալ ծովի հետ:

Իբրև արդիւնք այն ծովային զբօսանքի, Այվազովսկին ներկայացրեց եօթը ծովային նկարներ: Կուկօլնիկ, այդ ժամանակուայ նշանաւոր գրագէտը, տեսնելով պատկերահանդէսը, ի միջի այլոց երկու պատկերները՝ «Շոգէնա— ոյ Դիմ— է Գրանդադ և Նոլլանդայի Նա— լայ Ժողով» պայծառ ապագայ գուշակեց նկարչին, և նորա այս մարգարէութիւնը ստացաւ փառաւոր կատարում: Ահա հա նորա յաջորդ նկարով, «Նոլլանդայ» սկիզբն դրուեցաւ այն յիսնամեայ գործունէութեան, որի ասպարիզում նկարչի ստեղծագործութեան հանձարը՝ նորա անխոնջ աշխատասիրութեան հետ միացած, երևան եկաւ այդպիսի սքանչելի գործութեամբ: Այնուհետև նորա պատկերահանդէսները անպակաս են եղել թէ՛ Ոսկւսիայում, թէ՛ արտասահմանում, ուր նա յաճախել է շատ անգամ, և ամենուրեք այդ պատկերահանդէսներին վիճակուել է ամենասիրալիր ընդունելութիւն թէ՛ հանդիսականների և թէ՛ գրագէտ քննադատների կողմից:

Այվազովսկու ձեռքով նկարուած նկարները գտնվում են ամեն նշանաւոր նկարչական սրահներում, շատերը նոցանից գնել են կայսրներ և թագաւորներ, ի միջի այլոց և սուլթանը: Բազմաթիւ նկարներ ինքը հեղինակն է ընծայ բերել հուշակաւոր հիմնադրութիւններին, ճեմարաններին, վանքերին, ի թիւս որոց և Ս. Իջմիածնի մատենադարանին, Երուսաղէմի Ս. Հակովբայ և Ս. Ենետիկի Ս. Խիթարեանց վանքին և Պետերբուրգի հայոց եկեղեցուն:

Նրկար կլինէր տալ մի առ մի նորա բազմաթիւ նկարների սոսկ անունը և դժուար միանգամայն միայն լաւագոյնների մատնանիշ անելը: Առհասարակ՝ պատմութիւնից անցքեր, որոնց կատարման ասպարէզը եղել է ծովը, կամ ջուրը, ինքը ծովը՝ թէ՛ խաղաղ, թէ՛ ալէկոծ, ամեն տեսակ փոթորիկ, լեռներ և դաշտեր նոցա պարագաներով հանդերձ, վերացական գաղափարով կնքուած նկարներ, օրինակ արարչագործութիւն, մի խօսքով՝ բնութեան բազմատեսակ երևոյթներ՝ հանճարի կնքով դրոշմուած, ահա՛ Այվազովսկու նկարների նիւթը և բովանդակութիւնը: Թէ՛ Ոսկւստան իր հայրենիքում, թէ՛ Խտալիոյ գեղարուեստականների դասական հայրենիքում, և թէ՛ այլ երկրներում նոքա միշտ և ան-

գաղար յարուցել են հանդիսականների զմայլումը և հրճուանքը՝ քննադատների առատ և ճոխ գովասանքները։ Ահա թէ ի՞նչ խօսքերով է յայտնում իր զգացումը իտալացի Ալիչին, որ յետոյ Վարիբալդիի բարեկամն և օգնականն եղաւ, («Նեապոլի Գիւլեր») պատկերի առիթով։ «Ազեորուած մեր երկնքի և ծովու պայծառ երանգով, նկարիչը վրձինի ամեն մի շարժուածովը արտայայտում է իր հրճուանքը և հիացումը, լուսնակի լոյսը, որի շողշողման մէջ նկարիչը ցանկացել է ներկայացնել Նեապոլիսը, այնպիսի ճշտութեամբ և կատարելութեամբ է դուրս բերած, որ նայողը յափշտակուած գոյների խափուսիկ պայծառութիւնով, ցերեկով իրեն գիշերուայ մէջ է երևակայում։ Մորա նկարների մէջ կայ մինը, որ («Փափաքի») է ներկայացնում, երկինքը այդ նկարում պատած է մռայլ ամպերով, միւս մասում լեռնակուտակ ալիքներ, նկարի խորքում երևում է մի նաւ՝ կիսով ծածկուած ահագին ալիքներով և ընկղման մօտ։ Նկարիչը ըմբռնել է այդ վայրկեանը այնպիսի ճշտութեամբ և հանճարով, որ մարդուս կրկնապատիկ սարսուռ է տիրում նաւի վիճակի մասին, և կարծես անձամբ ըզգում է նաւակոծ ալեաց ցողերը»։

Ընդդիացի ()տօրները Այվազովսկուն նուիրած գրքի մէջ նոյն նկարի մասին ասում է, «Բո արհեստը բարձր է և հզօր, որովհետեւ քեզ ոգևորում է հանճարը»։

Թողնենք միւսները, թողնենք այն բազմաթիւ շքանշանները որ նուիրել են նորան ինչան յարգանաց թագակիր անձինք, թողնենք այն պատիւը, որ տուել են նորան Ֆլորէնցիայում, առաջարկելով նկարել իր պատկերը, որպէս զի գնեն Պեդրի պալատի պատկերակոյտի շարքում, ուր ժողովուած կան հռչակաւոր նկարիչների պատկերները, սկսած Սափայէլի դարու մեծ վարպետներից, թողնենք և այն պսակը, որ երեւելի նկարչի գլուխը չրին նոյն Ֆլորէնցիայում՝ նորա հանճարին զմայլած ամերիկացի կանայք և օրիորդներ, թողնենք այս բոլորը և մի քանի խօսքով յիշատակենք միայն յօբէլեանի հանդէսը։

Յօբէլեանի օրը, սեպտեմբերի 26ին, Վեղարուեստից Շեմարանի ընդարձակ բոլորակ սրահը մի առանձին հանդիսաւոր կերպարանք էր առած։ Սրահի մէջ տեղը գրուած էր մի սեղան չորս բազկաթոռներով, օգոստափառ նախագահի, յօբէլեարի և ճեմարանի երկու րեկտորների համար։ Վոցանից փոքր ինչ հեռու եր-



կու կողմերում շարուած էին աթոռներ պատուաւոր անդամների, բարձրաստիճան անձերի և Ղեմարանի խորհրդի անդամների համար: Կախագահի սեղանի հանդէպ մի փոքր հեռաւորութեան վերայ դրուած էր յօբելեարի կիսարձանը զափնիներով և արևադարձային բոյսերով պատած, իսկ կիսարձանի ետեւը բարձրանում էր մի բեմ, որի երկու կողմը շարուած էին հիւրերի համար 160 աթոռ: Ժամի 11<sup>1</sup>/<sub>2</sub> հաւաքուեցին սրահում զանազան պատգամաւորութիւններ, ճեմարանի խորհրդի անդամները, ուսուցչապետներ, պատուաւոր հիւրեր, ճեմարանի անդամները, որոնց մէջ էին հանրային կրթութեան, ճանապարհային հաղորդակցութեանց և ծովային նախարարները, արտաքին գործոց նախարարի օգնականը, նախարարների ժողովի գործերի կառավարիչը, և ուրիշներ, և վերջապէս, հասարակութիւնը, որը բաղկանում էր գլխաւորապէս գիտութեան, արուեստի, գրականութեան և կառավարութեան յայտնի գործիչներից: Սրահի վերնատանը գտնւում էին Լոյսի զովսկու ընտանիքը և մերձաւոր ազգականները: Լոյս ժամանակ Ղեմարանի բեկտոր Համշինը և կրակաու ու Վիլլէվայլէ պրօֆեսորները գնացին Եւրոպա հիւրանոցը, ուր թէրոսիայից գալով իջել էր Յ. Լոյսզովսկին և կառքով նորան բերին Ղեմարան: Ուղիղ ժամի 12ին, Կ. Կ. Բ. Սեծ իշխան Վլադիմիր Ընէքսանդրովիչ, Ղեմարանի օգոստափառ նախագահը, բարեհաճեց յօբելեարին սրահ բերել հանդիսաւոր չուերգի ներդաշնակ ձայնակցութեամբ:

Բոլոր ներկայ եղողները ոտքի կանգնեցին և տիրեց կատարեալ լուութիւն:

Կորին կայսերական Բարձրութիւնը, նստելով նախագահի աթոռի վերայ, յանձնեց Յօբելեարին նորան շնորհած Վլադիմիր 2 աստիճանի շքանշանի նշանները և հետեւեալ խօսքերը արտասանեց:

«Յանձնելով Ձեզ, Սեծարդոյ Իւան կոստանտինովիչ, Բարձրագոյն պարգևը, ես քաղցր պարտականութիւն եմ համարում արտայայտել Ձեզ իմ խորին երաստագիտութիւնս ճեմարանի և ուսւ նկարիչների կողմից ձեր երկարամեայ արդիւնաւոր ծառայութեան համար ուսական արուեստին»:

Երիցս ծափահարութեամբ ընդունուեցաւ արտասանուած այս խօսքերը:

Լսնուհետեւ Ղ'եմարանի աւագ քարտուղար Պ. Խսեեվը, բարձրանալով բեմ, կարգաց մի յոյժ սիրալիւր ուղերձ, որը ստորագրած էին Ղախագահը և խորհրդի անդամները: Լսյա ուղերձում ի միջի այլոց յիշատակւում է հայաղբի նկարչի այն ժամանակները, տարիները, երբ նա իր փառաւոր և զօրաւոր վրձինով նկարչի մեծ տաղանդ ու ոյժ է ցոյց տուել:

Լսյա ուղերձի ընթերցումը դարձեալ ընդունուեցաւ մեծ ծափահարութեամբ: Սորանից յետոյ, Պ. Խսեեվը մի առ մի հրաւիրեց բոլոր պատգամաւորութիւններին, որոնք հերթով մօտենալով նախագահական աթոռին կարգում էին իրենց ուղերձները:

Բոլոր պատգամաւորների թիւը 12 էր: Լռաջինը կայսերական էրմիտաժից, երկրորդ՝ Պետերբուրգի համալսարանից, երրորդը նկարիչներից, չորրորդը ռուսաց աշխարհագրական ընկերութիւնից, հինգերորդը քաղաքական ինքնավարութիւնից, վեցերորդը Թէոգոսիայի քաղաքական ինքնավարութիւնից, եօթներորդ՝ Պետերբուրգի հայ եկեղեցիների ծխականներից, որոնց ներկայացուցիչներն էին. գեներալ Ղալուխանով, Ղերբ, Խորհրդ. Ղամազեան և նկարիչ Յուսիկեանց:

Լսյա ուղերձի մէջ ի միջի այլոց ասուած է, որ Լսվազովսկին իր արտաքոյ կարգի աշխատասիրութեամբը օրինակ է դառնում նոր սերունդին և սորանով, որ մինչև անգամ հանճարի լաւ զարգանալուն աշխատանքը կազմում է մի անհրաժեշտ պայման: Յիշելով այնուհետեւ որ Յ. Լսվազովսկին մարմին և արին է առել հայ ժողովրդից՝ ծխականները խնդրում են նորանից ընդունել այն արուեստի գործիքը, որով նա իրեն փառաւորել է: Լսյա խօսքերը ասելիս՝ Յօբելեարին ներկայացրին մի ընտիր մուշտաբէյլ սև փայտից արևելեան ճաշակով արծաթեայ զարդարանքներով և արծաթեայ գեղեցիկ պալիտրա որի վերայ նկարած էր հայի սուրբ յիշատակը՝ Լարատ լեռը և Պետերբուրգի հայոց եկեղեցին. իսկ միւս երեսին ուղերձը հայերէն լեզուով ծխականների ստորագրութեամբ:

Աթերորդ պատգամաւորութիւնը կայսերական թատրոնների խմբերի կողմից էր, իններորդը բեմի յայտնի գործիչներին նպաստող ընկերութիւնից: Յետոյ կարդացուեցին ուղերձներ «Համբաւաբեր Ղեղեցիկ Լրուեստների» խմբագրութիւնից, Փարիզի Ղեղեցիկ Լրուեստների ընկերութեան կողմից և այս ժամանակ հանճարա-

ւոր նկարիչը այս ընկերութեան պատուաւոր անդամի կոչման դիմումը ստացաւ, և այլն և այլն:

Բացի այս պատգամաւորութիւններից և ուղերձներից, յարգելի Յօբելեարը ստացաւ բաւականին թուով թանկագին խորհրդաւոր ընծաններ:

Պատգամաւորութիւնների ներկայացումից յետոյ, Ղ'եմարանի աւագ քարտուղարը բարձրանալով բեմի վերայ սկսեց կարգաւ զանազան անձերից, և հիմնարկութիւններից շնորհաւորական հեռագիրներ: («Լրաքսի») էջերի սղութեան պատճառով, մենք այստեղ չենք թվում մի առ մի ստացուած հեռագրերը, սակայն պէտք է ասել որ այդ օրը զանազան երկրներից հայադգի ծովանկարը ստացաւ մինչև 300 շնորհաւորական հեռագիրներ:

Ղ'եմարանում հանդիսաւորապէս յօբելեանը տօնելուց յետոյ, երեկոյեան 6 ժամի նախկին գեղարուեստից ակումբում ի պատիւ յօբելեարին տեղի ունեցաւ մի հանդիսաւոր ճաշ:

Լյոստեղ, երբ Յօբելեարը ներս էր մտնում զարդարած դահլիճը, հանդիսի կարգադրիչները նորա գլխին դրին մի դափնեայ պսակ և բուռն ծափահարութիւններով ներս տարան:

Շնորհաւորական հեռագիրներ ի միջի այլոց ուղղած են՝ Բագուի հայ հասարակութիւնը, շանգ. Յովնանեան, Օ. Ստերեանց, Նախիջևանի քաղաքագլուխ Պ. Սալթիկեան, գնտ. Սեծ. Լ. Սեւիք շայկազեան, որը և ընծայել էր մի փառաւոր և մեծածախս նուէր, («Լրեւելքի» և «Սասիսի») խմբագրութիւնները, («Սշակի») խմբագրութիւնը, կոմս Լորիս-Սեւիքեանը, Պօլի Ստրեբոգ կոլլէժի հայ ուսանողները և վերջապէս Երեսիսեան դպրանոցի հոգաբարձութեան կողմից գեր. նախագահ Լորիստակէս եպիսկոպոսը: Լյոստեղ զննում ենք այս վերջինի հեռագրի թարգմանութիւնը. «(Թիֆլիսի հայոց դպրանոցը ողջունում է բարձրատաղանդաւոր Յովհաննէս Կոստանդեան Լյովազովսկուն նորա յիսնամեայ գեղարուեստական գործունէութեան առիթով և աղօթում է առ Բարձրեալն Լստուած՝ երկարել նորա կեանքը յօգուտ գեղարուեստի և ի պարծանք հայ ժողովրդեան: Նախագահ հոգաբարձութեան Լորիստակէս եպիսկոպոս»):




# ԴՈՎՏՈՐ ՅՈՎՍԷՓ ԾԻՇՍԱՆԵԱՆ

(ԾԵՐԵՆՑ)


(1822 ՍԵՊՏ. 6—† 1888 ՄԱՐՏ 17)

Եւ չեմ սխալուիլ, եթէ ասեմ, որ Տաճկաստանի հայ գրողներին մինչև այսօր ոչ ոք այնքան համբաւ ու հռչակ չէ՝ ունեցել մեր մօտ՝ ինչքան հանգուցեալ Օտերենցը: Նորա երկասիրութիւնները՝ որոնք գրուած են Տաճկահայոց բարբառով, նոյնչափ սիրով կարգացուել և տարածուել են Ռուսաստանում որքան և Տաճկաստանում: Սորա պատճառը այն չէ միայն որ հանգուցեալ վիպասանը իւր կեանքի վերջին տարիները անց է կացրել մեր մօտ, գործել է մեր ուսումնարաններում, այլ գլխաւորապէս այն է որ նա իսկապէս Տաճկաստանի բոլոր գրողներինց ամենից բարձրը, ամենից տաղանդաւորն էր: Նորա անունը արդէն ժողովրդական էր դարձել մեր մէջ դեռ ևս այն ժամանակ, երբ նա տակաւին նստած էր Բոսֆորի ափերում և չէր էլ մտածում անցնել Թիֆլիզ ու գործել Ռուսաստանի հողի վերայ: Եւ շատ լաւ յիշում եմ 1876 թուականը, երբ առաջին անգամ Թուրք լեւոնի յայտնի եղաւ Ռուսաստանում: Թիֆլիզի թէ՛ հայ և թէ՛ մինչև անգամ ռուս մամուլը բուռն ոգևորութեամբ ողջունեցին այդ տաղանդաւոր գրուածքի լոյս տեսնիլը, և այն օրից Օտերենցի անունը անցաւ մեր ժողովրդական սակաւաթիւ անունների շարքը. իսկ Թուրք լեւոնի դարձաւ Ռուսահայ հասարակութեան սիրած սակաւաթիւ գրքերից մէկը. նոյն վիճակն ունեցան նաև հեղինակի յետագայ գրուածները՝ Թուրքիոյ Ռաշտիկն և Երկու թուրքի: Սակայն մինչդեռ մենք ճանաչում էինք Օտերենցին միայն իբրև հեղինակի այն մի շարք պատմական վէպերի, որոնց ուղղութիւնը այնքան մօտ և համակրելի էր մեր սրտերին, Շիշմանեանը վաղուց արդէն յայտնի էր Տաճկաստանում իբրև ազգային գործիչ, և այն էլ այն տեսակ գործիչ՝ որոնց նմանը այժմ ևս ճրագով պէտք է փնտռել մեր ազգի մէջ: Ծանօթանալով այդ մարդու կեանքի հետ մարդ չէ իմանում ի՞նչ բանի վերայ աւելի զարմանայ—նորա բազմակողմանի ընդունակութեան, հրատուութեան թէ անյողգողդ եռանդի վերայ:— Սկսած պատանեկու-



ՆՃԱՆՆԵՐՈՐ ՎԻՊԱՍԵՆ  
ՅՈՎԱԷՓ ՅԻՇՄԱՆԵԱՆ (ԾԵՐԵՆՅ)

Հրատ. «Արար» Հանդիսի:





Թեան ամենաթարմ հասակից, նա իւր գործունէութիւնը ամբողջապէս նուիրել է ազգին, և գործել է ազգի համար թէ՛ իբրև ուսուցիչ, թէ՛ իբրև հրապարակասօս, թէ՛ իբրև յայտնի կուսակցութիւնների ղեկավար, և թէ՛ վերջապէս իբրև առաջնակարգ վիպասան: Ամենքին յայտնի է թէ ի՞նչքան մեծ բարոյական և քաղաքական փոփոխութիւններ են եղել մեր տաճկաստանցի եղբայրների դրութեան մէջ յիսունական թուականներից ի վեր: Այդ փոփոխութիւնները կատարուել են տակաւ առ տակաւ շնորհիւ այլ և այլ ընկերութիւնների, հիմնարկութիւնների և ուրիշ հանգամանքների: Առանց չափազանցութեան կարելի է ասել որ այդ բոլոր ձեռնարկութիւնների մէջ չէ եղել մէկը, որի մէջ խառն եղած չլինի Յովսէփի Շիշմանեանի մատը: Արբոր ազգային յառաջադիմութեան ապագայ պատմիչը թերթերով անցեալի յիշատակները կը հանդիպի Ներսէսի անուան, անշուշտ նա սիրով կանգ կառնի այդ համակրելի գործիչի կեանքի վերայ և կկազմէ մի գեղեցիկ կենսագրութիւն, որի մէջ ապագայ սերունդը կգտնէ շատ ու շատ բարձր ու հրահանգիչ կէտեր: Սեք առայժմ անկարող լինելով կատարել այդ նախանձելի գործը, ստիպուած ենք բաւականանալ միայն մի քանի հատուկտոր կենսագրական տեղեկութիւններ հաղորդելով Արապի ընթերցողներին:

## Ա.

Յովսէփի Շիշմանեանը ծնուել է Կ. Պօլսում 1822 թուին սեպտեմբեր 16-ին Հայկաթուղիկ ծնողներից: Ինը տարեկան հասկում ծնողների համաձայնութեամբ նա ուղարկուել է Վենետիկ, Սիսիթարեանների վանքը: Այդտեղ Նոր Անճայարան կոչուած դպրոցում ուսանում էին տասը տասներկու տարեկան պատանիներ և պատրաստուում էին Սիսիթարեան ուխտի անդամներ դառնալու: Այստեղ է ստացել նաև մանուկ Յովսէփը իւր սկզբնական կրթութիւնը, իրեն աշակերտակից ունենալով ի միջի այլոց՝ Վեոնդ Ալեշանին և Աբրահամ Ճարեանին, Սիսիթարեանների այդ երկու պայծառ աստղերին: Զինք թէ վեց տարի Նոր Անճայարանում կրթուելով և ոչ մի կոչում չզգալով իւր մէջ կուսակրօն դառնալու, Շիշմանեանը թողնում է Սիսիթարեանց վանքը և վերադառնում է իւր ծննդավայրը—Կ. Պօլս: Այդտեղ 1837 թուականին հաղիւ տասնուվեց տարեկան հասկում, նա դառնում

է արդէն ուսուցիչ ազգային պատմութեան, ազգային մատենագրութեան և աշխարհագրութեան ( ) րթագիւղի Առաւորէեան կոչուած վարժարանում: Թէ ի՞նչքան տարի է շարունակում նա ուսուցչի պաշտօնը, այդ մեզ յայտնի չէ, միայն այդքանը գիտենք որ 1843 թուին օգոստոսի 23-ին նա թողնում է Ա. Պօլիսը և համարեա դատարկ գրպանով ճանապարհ է ընկնում դէպի Հայաստան, որպէս զի անձամբ տեսնէ ու ծանօթանայ այն երկրի և այն ժողովրդի հետ, որի պատմութիւնը ուսուցանելու բախտն է վիճակուել իրեն և որին նուիրել է նա իւր կեանքի գործունէութիւնը: Անցնելով Տրապիզոնից, Վիւմիւշտանէից, Ռաբերդից, Ալզորումից ու Ղարսից, այցելում է նա նաև Սուսստանի հայաբնակ քաղաքները—Ալեքսանդրապօլ և Թիֆլիզ, ու 44 թուականին ազգային համութիւնների առատ պաշարով վերադառնում է կրկին Ա. Պօլիս: Իւր մահուանից մի երկու շաբաթ առաջ երբ բարեկամներից մէկը հետաքրքրուում էր իմանալ թէ ի՞նչ նպատակով էր ձեռնարկել նա, այն ժամանակուայ համար չափազանց ծանր ուղևորութեանը, Շիմանեանը պատասխանեց. «Այսօր է իմանալ թէ ի՞նչ է նշանակութիւն գտաւ այդ բառին, նա պատասխանեց թէ՝ գտաւ որ Հայաստան նշանակում է շատ խեղճ երկիր: Այդ համառօտ բայց բազմիմաստ նշանակութիւնից երևում է, թէ ի՞նչքան բարձր էր նա իւր ժամանակակից բոլոր ազգասէրներից, և թէ ի՞նչքան ճիշտ էր ըմբռնել նա ճշմարիտ գործիչի պարտականութիւնները: Այս լաւ էր հասկացել որ ինչպէս ճշմարիտ բժիշկը միայն այն ժամանակ է իրաւունք տալիս իրեն ձեռնարկել հիւանդի բժշկութեան, երբ ինքը անձամբ քննելով այդ հիւանդի ամբողջ կազմուածքը և բոլոր գործարանները, հասկացել է հիւանդութեան իսկական տեղը և պատճառները, այնպէս և ազգային գործիչը միայն այն ժամանակ կարող է ճշմարիտ օգտակար գործիչ լինել, երբ նա անձամբ քննել ու հասկացել է այն ցաւերը՝ որոնց դէմ նա ուղղում է իւր դարմանները: Հակառակ դէպքում նորա գործունէութիւնը նոյն հետեանքը կունենայ, ինչ հետեանք որ ունենում է հիւանդին չտեսած ու չքննած բժշկի բժշկութիւնը: Այդ տեսակ բժշկութիւնը բժշկութիւն չէ, այլ մի վիճակախաղ է, ուր խաղացվում է հիւանդի կեանքի հետ: Իսկ եթէ աններելի է խաղալ մի հիւանդի կեանքի հետ, ո՞րչափ ևս

առաւել աններելի է խաղալ մի ամբողջ երկրի, մի ամբողջ ժողովրդի վիճակի հետ: Ահա այդ տեսակ հասկացողութեան տէր գործիչ էր Ղօերենցը և այդպէս էլ միշտ հաւատարիմ մնաց իւր հասկացողութեան: Այդ էր պատճառը որ երբ նա իւր գործունէութիւնը դարձրել էր Կիլիկիայի վերայ, ինքը անձամբ նախ ծանօթացաւ այդ երկրի հետ. նոյնը արաւ նա նաև Սուսական Հայաստանի վերաբերութեամբ:

## Բ.

Պտնելով Հայաստան բառի նշանակութիւնը և վերադառնալով Կ. Պօլիս, երիտասարդ Շիշմանեանը ամենից առաջ կըշռուում է իւր ոյժերը և գտնում է որ այդ ոյժերը տակաւին շատ թոյլ են իւր ցանկացած գործերին ձեռնամուխ լինելու համար: Ուստի նա վճռում է նախ քան գործ սկսելը բաւականաչափ ոյժ ու պաշար հաւաքել, և այդ նպատակով հէնց նոյն տարին թողնում է Պօլիսը և դիմում է Փարիզ, ուր այդ ժամանակ յառած էին բոլոր ուսումնասէնչ հայերի հայուածքները: Վա ընտրեց Փարիզը ո՛չ միայն նորա համար որ Վաղղիան իսկապէս ամենից աւելի բարոյական պաշար ու բաւականութիւն էր տալիս ցանկացողներին, այլ և այն պատճառով որ այդ ժամանակ Փարիզում արդէն սկսել էր իւր գործունէութիւնը նորաբաց Սուրատեան վարժարանը և այնտեղ արդէն կազմուել էր մի ամբողջ խումբ իւր նման ազգային ոգւով վառուած երիտասարդների: Այդ խումբի մէջ էին բացի Շիշմանեանից—Արամեան Ճ'անիկ, Սիւհէնտիսեան Սկրտիչ, Սատթէոս Սամուրեան, Հովհաննէս Սաքըզ, Սեւթումեան (Սեւթոն Խան), Պալեան և ուրիշները: Վալով Փարիզ Շիշմանեանը կատարում էր թէ՛ ուսուցչի պաշտօն Սուրատեան վարժարանում և թէ՛ միևնոյն ժամանակ ուսանում էր բժշկական գիտութիւնները: Հասկանալու համար թէ ի՞նչ ազդեցութիւնների տակ էր կրթուում այդ հայ երիտասարդական խումբը, հարկաւոր է մի վայրկեան աչքի առաջ բերել Վաղղիայի և առհասարակ ամբողջ Եւրոպայի այդ ժամանակուայ դրութիւնը: Ա՛յ չգիտե՛ թէ ի՞նչ թուականներ են քառասնական տարիների վերջերը Եւրոպայի համար. բաւական է եթէ միայն յիշենք, որ սօքա այն տարիներն են երբ մի կողմից Ղուի Վապուէտնը Վաղ-



դիպում, իսկ միւս կողմից Սաճճիկին Խաւիայում դարձրել էին ամբողջ աշխարհի ուշադրութիւնը այդ երկրների վրայ.....:

Այդ տարիները ի հարկէ չէին կարող ամենախորին ազդեցութիւն չունենալ մեր ապագայ գործիչների վրայ, այն էլ Շիշմանեանի պէս անձնաւորութեան վերայ, որ վաղուց արդէն հասկացել էր գաղափարի նշանակութիւնը և վճռել էր ապրել նորա համար: Ահա այդ թուականների գաղափարներով ոգևորուած երիտասարդ Շիշմանեանը իւր բժշկական դիպումը ծոցին ճանապարհ է ընկնում Պօլիս: Բայց նախ քան հայրենիք վերադառնալը նա անցնում է Խաւիա, որպէս զի անձամբ տեսնէ այն երկիրը, ուր, ինչպէս յիշեցինք, այդ ժամանակ ամենից աւելի վառ էր ազգայնութեան և ազգային անկախութեան գաղափարը, բացի սորանից նա ցանկանում էր կրկին անգամ այցելել Վենետիկը և Սխիթարեանց վանքը, որի հետ կապուած էր նա իւր պատանեկութեան և սկզբնական կրթութեան քաղցր յիշատակներով: Այդ ուղևորութիւնը նորա համար առանց արկածների չանցաւ: Պատահմունքի բերմամբ հայ երիտասարդի դէմքը զարմանալի նմանութիւն ունէր Սաճճիկի դէմքի հետ, այն Սաճճիկի, որի անունը միայն սարսափեցնում էր Աւստրիային և որին ձեռք ձգելու համար աւստրիական կառավարութիւնը պատրաստ էր ամեն տեսակ զոհողութիւններ անելու: Աւհա հագիւ Շիշմանեանը իւր ոտքը դրել էր Ամբարտիայի հողի վերայ, աւստրիական ոստիկանութիւնը իսկոյն չըջապատում է նորան և հեռագիրը անմիջապէս աւետում է Վենայում սարսափելի թշնամու ձերբակալութիւնը: Շիշմանեանին ձգում են բանդ, բայց քսանեւորս ժամից յետոյ Աւստրիայի եռանդոտ արբանեակները իմանում են իրենց սխալը և հիասթափուած արձակում են նորան բանդից: Այդ միևնոյն դէպքը կրկնուում է նաև Վենետիկում, ուր արձակում են նորան միայն այն ժամանակ՝ երբ Սխիթարեան վանքի քահայր Վեորդ Հիւրմիւզը իւր վարդապետներից միկին ուղարկելով, ապացուցանում է ոստիկանութեան սխալը և Շիշմանեանի հայ լինելը: Այդպիսի արկածալից բայց և բախտաւոր ճանապարհորդութիւնից յետոյ Շիշմանեանը վերջապէս հասնում է Պօլիս, ուր և անմիջապէս պաշտօնի է կոչուում Հայտարարաշարի հիւանդանոցում:

Գ.

Վաղղիական և իտալական անցքերի գաղափարներով տոգորուած երիտասարդը վերագառնալով հայրենիք, կրկին անգամ համոզուում է թէ ինչքան խեղճ է այդ հայրենիքը և ինչքան անպատրաստ է տակաւին այն սերմերի համար, որը նա բերել էր աղգային անդաստանի վերայ ցանելու: Մինչդեռ այնտեղ—արեւմուտքում, իտալիայի գեղեցիկ երկնքի տակ, տեղի էին ունենում ամենքին յայտնի դէպքերը, այստեղ իւր համազգիները զբաղուած էին անվերջ երկպառակութիւններով և անհաշտելի կռիւներով և այն էլ ինչի՞ համար—միջնադարեան հնացած և մաշած կրօնական խնդիրների համար: Առսաւորչական և կաթողիկ հայերը անսահման ատելութեամբ իրար դէմ զինուած ամեն ջանք ու եռանդ գործ էին դնում վճռելու այն հարցը թէ արդեօք ո՞րն է նոցանից հերձուածող և ո՞րը ուղղափառ. թէ արդեօք չուրիս սուրբ բղխո՞ւմ է շօրից և որդուց թէ միմիայն որդուց, ինչպէս դաւանում է շայաստանեայց Ս. Եկեղեցին: Ի պատիւ հռոմէական հայերի պէտք է ասենք, որ նոցա մէջ կրթութիւնը և արեւմտեան քաղաքականութիւնը աւելի յառաջագիմած և տարածուած էր քան թէ լուսաւորչական հայերի մէջ, և հէնց այդ պատճառով էլ նոցա մէջ արդէն հասունացել էր մի խումբ, որը կարողացել էր աղատուել միջնադարեան նախապաշարմունքներից և կանգնած էր շատ բարձր կրօնական նեղ խնդիրներից: Շչմարտութիւնը խոստովանելու համար պէտք է աւելացնենք նաև որ այդ ուրախալի երևոյթը ծագումն էր առել Սխիթարեանների վանքից և զլիաւորապէս նոցա աշակերտներն էին, որոնք կազմում էին յիշեալ խմբի մեծամասնութիւնը: Այդ խումբը հասկացել էր որ կրօնական համոզմունքների տարբերութիւնը չպէտք է արգելք լինէ միեւնոյն աղգի անհատներին հեռանալու իրարից և զլանալու իրար աջակցութիւնը այն հանգամանքներում, երբ խնդիրը վերաբերում է ընդհանուր հայրենիքի շահերին: Այս միևնոյն ժամանակ հասկացել էր որ եթէ հանգամանքների շնորհիւ եկեղեցին դառնէր աղգայնութիւնը պահպանող տարրերից մէկը, այդ դէպքում աւելի պէտք է վերագասել այն եկեղեցին՝ որը ամենից աւելի պահպանում է աղգային ինքնուրոյնութիւնը և կապում է նորան իւր պատմական անցեալի հետ: Այս պայմաններին ի հար-

կէ ամենից առաւել համապատասխանում էր լուսաւորչական եկեղեցին և հայ կաթողիկոսութեան այն մասը, որը աւելի մօտ էր այդ եկեղեցուն և աշխատում էր աւելի ևս մօտենալ: Ահա մի ճշմարտութիւն, որը դժբաղդաբար մինչև այսօր էլ չեն կարողացել ճշգրտութեամբ ըմբռնել մեր ազգասէրներից շատերը: Այդ խումբն էր որ անուանուում էր Հակահասունեան և աշխատում էր ջանջախել հակառակ խումբին, որի պարագլուխն էր Հռոմի Պրոպագանդայում իւր ուսումը առած վարդապետներից մէկը, Անտոն վարդապետ Հասունը, որի անունով և կոչվում էր նորա կուսակցութիւնը: Հասունեան կուսակցութիւնը ընդհակառակը ներկայացնում էր մի խումբ, որ ոչինչ համարելով ազգայնութեան դադարը, մոլեռանդութեամբ անձնատուր էր եղած միայն կրօնական դադարների և ամենայն ջանք գործ էր դնում ինչքան կարելի է հեռու պահել կաթողիկ ժողովուրդը հայ լուսաւորչականներից և միանգամայն հպատակեցնել նորան Հռոմայ աթոռին: Հասունեանների և հակահասունեանների կռիւը տեւել է համարեա ամբողջ կէս դար, և անտարակոյս մեր վերջին դարու պատմութեան մէջ ժամանակով մեծ տեղ պիտի բռնէ նա: Այդ շրջանը այնքան հետաքրքրական և միևնոյն ժամանակ այնքան հրահանգիչ է, որ արժէր մանրամասնօրէն կանգ առնել նորա վերայ և ի դէմս Հասունի պարզել նորա կուսակցութեան հետաքրքրելի պատկերը: Բայց այդ բանը շատ հեռու կտանէր մեզ, մանաւանդ որ նա բարձր էլ է մեր ուժերից: Աւստի այժմ բաւականանում ենք միայն երկու խօսքով ասել, որ Հասունը յիրաւի մի զարմանալի և նախանձելի տիպար էր իւր տեսակների մէջ: Այս վերին աստիճանի եռանդոտ, խելօք և հաստատակամ անձնաւորութիւն էր, և եթէ նորա այդ բոլոր գեղեցիկ յատկութիւնները ուղղուած լինէին դէպի ազգի ճշմարիտ շահերը, այն ժամանակ Հասունը անշուշտ աշխարհի նշանաւոր հայր պէտք է լինէր: Բայց դժբաղդաբար հայ ազգը ոչ միայն ոչինչ օգուտ չունեցաւ իւր այդ տաղանդաւոր զաւակի ընդունակութիւններից, այլ ընդհակառակը շատ վնասներ կրեց նորանից, կորցնելով երկար տարիներ և ամբաւ եռանդ նորա յարուցած անօգուտ և անշահ խնդիրների վերայ: Ահա այդ տեսակ մարդու դէմ էր մաքառում այն խումբը, որը, ինչպէս ասացինք, կրել էր իւր վերայ հակահասունեան անունը, և որի հետ միացաւ նաև երիտասարդ բժիշկ Շիմանեանը:



Հարկաւոր է յիշել որ Վեննայի և մինչև անգամ Վենետիկի Սը-  
խիթարեաններն էլ, ահաբեկուած Հռոմի սպառնալիքներով, այդ  
ժամանակ սկսել էին կամաց կամաց դուրս գալ իրենց նախկին ա-  
ւանդութիւնից և հակուել դէպի Հասունի կողմը: Այդպէս օրի-  
նակ երբ հանգուցեալ Պարրիէլ եպիսկոպոս Այվազեանը 1859  
թուին առաջին անգամ տպեց իւր նշանաւոր յօդուածը Հասունի քա-  
ղաքականութեան դէմ ուղղուած, Վենետիկի Սիւխիթարեանները  
Հռոմի առաջ իր'նց արգարացնելու համար անմիջապէս շտապեցին  
մի փոքրիկ տետրակով բացատրել, որ իրենք համերաշխ չեն Այ-  
վազեանի մտքերի հետ և յայտնում են իրենց կատարեալ հնա-  
ղանդութիւնը և հպատակութիւնը պապի աթոռին, խոստովանե-  
լով որ «Արտաքոյ Հռոմէական եկեղեցւոյ չիք փրկութիւն»: Սի-  
ւնոյն ուղղութեամբ և բովանդակութեամբ հրատարակեցին մի  
յօդուած նաև Վեննայի Սիւխիթարեանները իրենց Արտաքա-  
նունով լրագրի մէջ, ուր աշխատում էին ցոյց տալ կաթոլիկ եկե-  
ղեցու ուղղափառութիւնը և ապացուցանել որ հայերը անպատ-  
ճառ պէտք է հռոմէականութիւն ընդունեն: Այդ յօդուածի տակ  
ստորագրած էր Վեննայի միաբանութեան ամենանշանաւոր և ազ-  
դեցիկ անդամներից մէկի Հ. Ղ. Լոնդ վարդապետ Յովնանեանի  
անունը:

Այդ յօդուածը մեզ համար նշանաւոր է մանաւանդ այն պատ-  
ճառով, որովհետև նա առիթ տուեց առաջին անգամ ծանօթա-  
նալու Շիշմանեանի գրաւոր հանձարի հետ: Շիշմանեանը, որ,  
ինչպէս յիշեցինք, պատկանում էր հակահասունեան խմբին, և ար-  
դէն բաւական մեծ ազդեցութիւն էր գտել այդ խմբի մէջ, 1853  
թուին ասպարէզ է դուրս գալիս Տաճկաստանի անդրանիկ հայ  
թերթի—Արշալոյս Արարատեանի մէջ և մի կրակոտ յօդուածով ջախ-  
ջախում է Արարատի մէջ տպուած յօդուածի և ի դէմս այդ յօդ-  
ուածի հասունեանների բոլոր փաստաբանութիւնները: Սիւսայդ-  
պիսի սուր յօդուած և մի այդպիսի ջերմ ջատագովութիւն ազգա-  
յին եկեղեցու, այն էլ մի հռոմէական հայ երիտասարդի կողմից,  
ի հարկէ չէր կարող ցնցումն չգործել և չգրաւել ամբողջ ազգի  
ուշագրութիւնը դէպի նորա տաղանդաւոր հեղինակը: Շիշման-  
եանի անունը կարճ ժամանակամիջոցում հռչակուեց և դարձաւ  
ժողովրդական: Իւր ընդունակութիւնների շնորհիւ նա շուտով  
դարձաւ հակահասունեան խմբի պարագլուխներից մէկը և վերջը

ընտրուեց նաև ատենապետ հակահասունեանց երեսփոխանական ժողովի, այդ պաշտօնը նա կատարեց չորս տարի:

# Դ.

Բայց ինչքան էլ որ նշանաւոր և տագնապեցուցիչ լինէին այդ կրօնական խնդիրները, այսու ամենայնիւ նոքա չէին կարող բաւականութիւն տալ Շիշմանեանի և իւր դաղափարակից զարգացած երիտասարդների գաղափարներին և ձգտումներին: Վաղը դիական և իտալական յեղափոխութիւնների մէջ մտուած սրտերը չէին կարող հանգստանալ և ուրախանալ այն թեթև յաղթութիւններով, որ տանում էին նոքա հասունեանների վերայ լրագրական ասպարիզում: Մինչդեռ այնտեղ, բուն հայրենիքում, ժողովուրդը հեծում էր անասելի բռնաբարութիւնների և ճնշումների տակ: Եւ ահա Շիշմանեանը և իւր ընկերները միանալով իրենց գաղափարակից լուսաւորչական հայերի հետ, որոնց թուումն էին Վրիգոր (Ստեան, Սուսինեան և ուրիշները, յիսունական թուականների վերջերում և վաթսունական թուականների սկզբներում հիմնում են մի համազգային բարեգործական ընկերութիւն, որի նպատակն էր մի կողմ թողած կրօնական խտրութիւնները ընդհանուր ուժերով գործել հայրենիքի վերաշինութեան համար: Վրժ բաղդաբար մենք չենք կարող մանրամասնօրէն կանգ առնել այդ վերին աստիճանի հետաքրքրելի հիմնարկութեան վերայ, որովհետև այդ ընկերութեան ծրագիրը և կանոնադրութիւնը մինչև այսօր դեռ անյայտ է մնացել: Եւսքանը միայն կարող ենք աւելացնել, որ բարեգործական ընկերութիւնը իւր գործունէութեան ասպարէզ էր ընտրել ոչ բուն Հայաստանը այլ Ալիլիկիան: Ալիլիկիան իբրև ծովեզրեայ երկիր և իբրև մի այնպիսի անկիւն, որ տեղից շատ հեշտ կարելի էր յարաբերութիւններ ունենալ լուսաւորեալ և ազատասէր Եւրոպայի հետ, աւելի յարմարութիւններ էր ներկայացնում այն շինութեան մասին, որը բարեգործական ընկերութեան անդամները կամենում էին բարձրացնել իրենց հայրենիքի համար: Բացի ստրանից Ալիլիկիան ժամանակով այն վերջին վայրն է եղել, որի հետ կապուած են ազգային անկախութեան յիշատակները. յիշատակներ՝ որոնք այդ միջոցներին տակաւին առկայծում էին Տորոսի լեռներում—Օւշիթում և նորա շրջակայքում: Շիշմանեանը, որ այդ ընկերութեան ամենամոլեռանդ

անդամներից մէկն էր, հաւատարիմ մնալով իւր սկզբունքին՝ թէ բժշկութիւնը սկսելուց առաջ հարկաւոր է լաւ քննել ու զննել հիւանդին, 1862 թուին թողնում է Պօլիսը և իւր բժշկական պաշտօնը ու իւր ընկերների յանձնարարութեամբ ուղևորվում է Կիլիկիա: Ի միջի այլոց նորան յանձնուած է լինում գնել Կիլիկիայում հողեր, հաստատել նոր հայ գաղթականութիւններ և մի երկրագործական գաղոց: Եւր համառօտ ծրագրից արդէն երևում է թէ ի՞նչքան լայն է եղել բարեգործական ընկերութեան հայեցակէտը և թէ ի՞նչքան լաւ է ըմբռնած եղել նա հայրենիքի ճշմարիտ կարիքները:

Վերապատուելի Հասունը, որ անթարթ աչքերով հետևում էր այդ գործին և սարսափելով նկատում էր որ այդ ընկերութեան շնորհիւ հայ կաթողիկոսների և լուսաւորչականների յարաբերութիւնները քանի գնում աւելի սերտանում և ամրանում են, շտապեց օգուտ քաղել ժողովրդի բերանում չափազանցրած լուրերից և ամբաստանեց Ելի փաշայի մօտ: 'Եւ յայտնեց որ այդ ընկերութիւնը ձգտում է քաղաքական նպատակների և թէ նա ընտրել է Կիլիկիան իբրև իւր ապստամբական նպատակների կեդրոնավայր: Թուրք կառավարութիւնը ի հարկէ չզլացաւ օգուտ քաղել այդ մատնութիւնից, որի հետևանքն եղաւ այն, որ ինչպէս յիշեցինք, բարեգործական ընկերութիւնը ստիպուած եղաւ դադարեցնել իւր գոյութիւնը: Շիշմանեանը, որ արդէն Կիլիկիայումն էր, պատուէր ստացաւ թողնել հազիւ սկսած գործերը և անմիջապէս վերադառնալ Կ. Պօլիս: Եւս անգամ Հասունը արդարև յաղթող հանդիսացաւ և յօդս ցնդելով իւր նախկին հակառակորդների սիրած ու գգուած ծրագիրը, մահացու հարուած տուեց իւր թշնամի կուսակցութեան: Եւր շրջանը Ներենցի գործունէութեան ամենափառաւոր շրջանը պէտք է համարել: Չմոռանանք յիշել որ այդ ժամանակ Կ. Պօլսի լուսաւորչական հայերի մէջ արդէն սկսել էր սահմանադրական շարժումը, որը ինչպէս գիտենք պսակուեց կատարեալ յաջողութեամբ: Շիշմանեանը իբրև հայ կաթողիկ իրաւունք չուէր անմիջական մասնակցութիւն ունենալու այդ գործի մէջ, բայց նա ի բոլոր սրտէ համակրելով այդ գործին՝ ոչ միայն էէր զլանում կողմնակի կերպով աջակցիլ նորան, այլ և մեծ նշանակով գործում էր յօգուտ Սահմանադրութեան: Եւստեղ ահամայ հարց է ծագում թէ ինչո՞ւ համար Շիշմանեանը և հա-



կահասունեան խմբին պատկանող միւս անդամները, որոնք ատելով ատում էին կաթոլիկութիւնը և միեւնոյն ժամանակ համոզուած էին թէ լուսաւորչական եկեղեցին աւելի ամուր տարր է ազգային ինքնուրոյնութեան համար, միանգամ ընդ միշտ չէին ձգում իրենց վըրայից այդ ատելի դիմակը և վերադառնում մայրենի եկեղեցու ծոցը: Այդ ըստ երևոյթին հակասական խնդիրը ի միջի այլոց բացատրվում է նորանով, որ հակահասունեանների նպատակն էր իրենց օրինակով ազդել հայ կաթոլիկ ամբոխի վերայ և ցոյց տալ նրան որ կրօնի խտրութիւնը պատճառ չպէտք է լինի ատելութեան և երկպառակութեան միեւնոյն ազգի հարազատ դաւանների մէջ: Այդքա ուզում էին ցոյց տալ իրենց դաւանակիցներին որ հայը, ինչ դաւանութեան էլ որ պատկանի, ամենից առաջ նա հայ է և պէտք է հայ մնայ, և ոչ թէ դաւանութիւնը փոխելով ուրանայ նաև իւր ազգութիւնը, ինչպէս որ անում էին մինչև այդ ժամանակ: Այդ տեսակ ազդեցութիւն նուրա կարող էին ունենալ հայ կաթոլիկների վերայ աւելի այն ժամանակ, երբ իրենք էլ կլինէին պապադաւան քան թէ հակառակ դէպքում: Այս է պատճառը որ երբ ժամանակների ընթացքում նոցա դադարները այնքան տարածուեցին և մարմնացան հայ կաթոլիկների մէջ, որ այլ ևս կարեորութիւն չկար զօրաւոր ազդեցութեան, հակահասունեաններից շատերը թողին իրենց դիմակը և վերջնականապէս հեռացան իւրոքի հպատակութիւնից: Սոցա թուումն էր նաև Շիշմանեանը, որը ինչպէս յայտնի է, մեռաւ ու թաղուեց չայաստանեայց Ս. եկեղեցու ծոցում:

## Ե.

Պառնացած ու վշտացած սրտով Շիշմանեանը 1863 թուին Վիլնիկայից վերադարձաւ Կ. Պօլիս: Այդտեղ ատելութիւնը դէպի խորամանկ շատումը և հասունեանները այլ ևս սահման չունէր: Եւ ահա նա կրկին իւր շանթալից գրիչը ձեռք առած սկսում է բարկութեան կայծակներ տեղալ իւր ատելի խմբի գլխին: Չբաւականանալով շատունեան պապականութեան դէմ թափած հարուածներով, եօթանասուն թուականների սկզբին նա արդէն սկսում է բացարձակօրէն ջատագովել լուսաւորչական եկեղեցին և Սասնի ու Նիսիանի մէջ տպած գեղեցիկ յօդուածներում ախոյեան հանդիսանալ այդ եկեղեցու շահերին: Այնուհետև նա բո-

լորովին անձնատուր է լինում գրականական գործունէութեան և մեք արդէն սկսում ենք յաճախ հանդիպել նորա անունը ազգային լրագրութեան էջերում: Աւելի նշանաւոր էին նորա այն յօդուածները, որոնք գրվում էին ( )տեան էֆէնտիի խորհրդակցութեամբ և որոց նպատակն էր ցոյց տալ քրիստոնեայ ազգերի նըշանակութիւնը և նոցա խաղալիք դերը օսմանեան պետութեան համար: 'Նորա յայտնած մտքերը այնքան լուրջ և այնքան նշանաւոր էին, որ, ինչպէս պատմում են, այդ ժամանակուայ մեծ եպարքոսը—Ալի փաշան թարգմանել էր տալիս և մեծ հաճութեամբ կարդալով օգտուում էր նրանցից: Այդ միւսոյն թուականին էր երբ Ալեքէան Սահմալի—Տաճկաստանի այդ ժամանակուայ ամենալուրջ ամսագրի մէջ, որի խմբագիրն էր Շիշմանեանի նախկին աշակերտ և ընկեր Սատթէոս Սամուրեանը, մէկ մէկի ետեւից սկսում են գուրս գալ մի շարք ֆէյլետոններ 'Գերենց կեղծ անուան տակ: Այդ յօդուածները մի նոր երևոյթ էին տաճկահայ մամուլի մէջ: Այդպիսի ճարտարութեամբ և ընդունակութեամբ յօրինուած յօդուածներ մինչև այդ օրը չտեսնուած բան էր Տաճկաստանի հայ լրագրութեան մէջ: 'Նոցանից հաւասար բաւականութիւն էին ստանում թէ՛ ընթերցողների հասարակ դասը և թէ այն դասը՝ որի ճաշակը նրբացած էր եւրոպական մամուլի ընթերցանութեամբ: Այդ էր պատճառը որ այդ յօդուածները ձեռքէ ձեռք էին անցնում և ամենքը հետաքրքրուում էին իմանալ նոցա իսկական հեղինակին: Հեղինակը շուտով յայտնի եղաւ և 'Գերենց կեղծ անունը հետզհետէ դարձաւ ամենաժողովրդական անուն:

Չնայելով իւր գրականական և բժշկական զբաղմունքներին՝ Շիշմանեանը ժամանակ էր գտնում նաև ուրիշ ասպարէզներում օգտակար լինել իւր ազգին: 'Նորա նախաձեռնութեամբ և աջակցութեամբ էր որ կազմուեց Բարեսէր ընկերութիւնը, Պալեանի պաշտպանութեան տակ, որը այդ ժամանակ կառուցել էր մի փոքրիկ բայց շնորհալի հայկական թատրոն Պօլսի ( )թաղիւղ անուանուած բաժնում: Ահա այդ թատրոնի սրահումն էր, որ բաց արին նաև Աղային Ասարանը ժողովրդական դասախօսութիւնների համար: Այդ գեղեցիկ և կրթիչ հիմնարկութեան հիմնադիրներէց մէկն էր նաև 'Գերենցը, որը 1873 թուի յունվար 29-ին կարգաց առաջին դասախօսութիւնը, նիւթ առնելով «Եւրոպական քաղաքականութեան ներկայ ժամանակներուս հայ ազգին վերայ

ըրած ազդեցութիւնը): Էրապարակախօսի ոյդ պաշտօնը շարունակեց Շիշմանեանը այնուհետեւ թէ՛ Պօլսում և թէ՛ Թիֆլիզում, ուր ընթերցողներէից շատերը անշուշտ չեն մոռացել նորա կարգացած բովանդակալից դասախօսութիւնը Ալիէկիայի մասին: Այդ դասախօսութիւնը տպուած է Փարի մէջ:

Բացի այդ ամենից Շիշմանեանը 1875 թուականին ստանձնեց նաև ( )ըթագիւղի հռոմէական հայոց Առաջաւորչեան վարժարանի տեսչութիւնը, որը դժբաղդաբար երկար չկարողացաւ շարունակել, որովհետեւ միւսնոյն տարին նա կառավարութեան հրամանով ստիպուած էր հեռանալ Ախլարու կողմին: Ասում ենք դժբաղդաբար, որովհետեւ նոյն իսկ նորա սակաւօրեայ տեսչութիւնը այնքան արդիւնաշատ և փառաւոր եղաւ, որ մինչև հիմայ էլ այդ դպրոցի նախկին աշակերտները խորին համակրանքով են խօսում Շիշմանեանի տեսչութեան օրերի մասին:

Այսպէս ուրեմն պատկառելի Ներսէսը իւր արդէն տարիքը անցած հասակում ստիպուած էր կրկին անգամ թողնել իւր հայրենիքը և պանդխտութեան գաւազանը ձեռին աշխարհէ աշխարհ անցնելով միայնանալ Միջերկրականի կողմերից մէկում: Այդ տեղ, գրեթէ այդ հայութիւնից և ամբողջ աշխարհից կտրուած անկիւնում, նորա միակ հայրենակիցը, վշտակիցը և միւսնոյն ժամանակ միսթարիչ ու պահապան հրեշտակն էր իւր միակ գոհտորը, հրեշտականման թագուկը: Անկարելի է յիշել Ներսէսի վերջին տարիները և չյիշատակել նորա այդ չնաշխարհիկ աղջկան: Այս էր, որի վերայ Ներսէսը կեդրոնացրել էր իւր բոլոր ծնողական զգացմունքը ու քնքշութիւնը, նա էր, որին նա նուիրել էր իւր բոլոր դաստիարակչական հարուստ ընդունակութիւնը, նա էր որ ինչպէս մի նոր Անտիգոնէ իւր ծերունի հօր կոնից բռնած թափառում էր նորա հետ աշխարհէ աշխարհ ոչ իրենց այլ իրենց հայրենիքի մեղքերը քաւելու համար: Այս վերջապէս թագուկն էր, որ Ախլարու մենացեալ վայրերում ոգևորում և երկնել էր տալիս իւր տաղանդաւոր հօրը Թորոս Առաքիւն և Կոնստանդինոպոլիսէ: Այս այդպիսով այն վայրը, որը նշանակուած էր Շիշմանեանի անունը մոռացնել տալու համար, նախախնամութեան շնորհիւ ծառայեց նորա յիշատակը անմահացնելու և նորա հռչակը ամբողջ ազգի մէջ տարածելու համար: Ախլարում ծնուեց Թորոս Առաքիւն և այստեղ յղացաւ Արմենիք Թ. Ղարու և գուցէ նաև



Թեոփորոս Աշտուհին—այդ երեք կրթիչ ու տաղանդաւոր գըրուածները, որոնք, ինչպէս յիշեցինք ներկայ յօդուածիս սկզբում, այնքան դժուարեցրին հայ ժողովուրդը և այնքան խոր տպաւորութիւն ու ազդեցութիւն ունեցան նորաբողբոջ սերունդի վերայ: Մեր նպատակից դուրս է քննադատութեան ենթարկել այդ գըրուածները, այդ պատճառով մեք լռում ենք նոցա գեղարուեստական կողմի և բովանդակութեան մասին, որը մանաւանդ անտարակոյս յայտնի է բոլոր մեր ընթերցողներին: Մենք բաւականաւորում ենք միայն երկու խօսքով ասել որ այդ բոլոր գրուածների հոգին և նպատակը միևնոյնն է: Մտնելով պատմական անցեալի խորքերը և ընտրելով այնտեղից նիւթեր իւր վէպերի համար, Ներենցը նպատակ է ունեցել ցոյց տալ թէ ի՞նչ էին անում մեր նախնիքը այն դէպքում, երբ հայրենիքը ոտնակոխ եղած օտարներից ընկնում էր վտանգի մէջ: Աւնա ցոյց է տալիս որ այդպիսի դէպքերում վտանգուած հայրենիքի փրկութեան համար հարկաւորուում էին միայն միաբանութիւն և անձնանուիրութիւն: Մի վարդապետութիւն՝ որը նա քարոզել էր իւր ամբողջ կեանքի ընթացքում և որի ճշմարիտ օրինակը ներկայացրել էր նա նոյն իսկ իւր կեանքով: Ուրեմն իւր վէպերի մէջ ևս նա հաւատարիմ է մնացել իւր մի անգամ ընտրած ուղղութեան: Այդ վէպերով կարելի է ասել որ վերջանում է Ներենցի գրականական գործունէութիւնը, մեզ մնում է միայն աւելացնել որ բացի այդ գրուածներից և բազմաթիւ լրագրական յօդուածներից, որ նա անընդհատ տպագրել է իւր երկարամեայ գործունէութեան ընթացքում, մահուանից յետոյ ինչպէս լսում ենք, մնացել են դեռ ևս շատ անտիպ գրուածներ, ի թիւս որոց և նորա Հայաստանում, Կիլիկիայում ու Կիպրոսում արած ճանապարհորդութիւնների նկարագրութիւնը: Աւելորդ է ասել որ ցանկալի էր ինչքան կարելի է շուտով լոյս տեսած տեսնել այդ աշխատութիւնները, որոնք անտարակոյս շատ թանկագին գանձեր պէտք է լինեն մեր մատաղ գրականութեան համար:

## Զ.

Եթե անսակական թուականների երկրորդ կէսը անմոռանալի տարիներ են ուսաստանային համար: Ամբողջ Աւրոպայի աչքերը յառած էին այդ ժամանակ արևելքի վերայ, ուր մարդասէր թագաւորի հրամանով բարձրացել էր վրիժառութեան սուրբ սլաւո-

նական ազգերի դարաւոր չարչարանքների վրէժը խնդրելու թուրք կառավարութիւնից: Փոքր Մսիայի կողմից շայաստանն էր, որ դարձել էր այդ մեծ պատերազմի արիւնաթաթախ ասպարէզ: Բարբարոս քրդերը, չէրքէզները և տաճիկ զօրքերի ու պաշտօնաւորների հրոսակները գլխիկոր տեղի տալով ռուսաց յաղթական զօրքի առաջ, իրենց բոլոր վայրենի անգթութիւնը և վրէժը թափում էին անմեղ և անզէն հայ ժողովրդի գլխին: Խեղճ ժողովուրդը շուարած չգիտէր թէ ի՞նչ անէ. նա թողնում էր իւր տունը, իւր հայրենիքը, իւր ստացուածքը, իւր ամեն ինչը և միայն իւր գլուխը ազատելու համար առանց յետ նայելու գիմում էր այնտեղ, ուր որ առաջնորդում էին նորան իւր սովից ու տանջանքներից ջլատուած քայլերը: Ահա այդ համատարած շփոթի և աղմուկի միջից էր, երբ յանկարծ գալիս զարնում էր մեր ականջին մի աւելի հուժկու ձայն—անզուգական Բաֆֆիի զօրաւոր ու գիւթիչ ձայնը: Նորան արձագանք էր տալիս արեւմուտքից Օսերենցի թորոս Առոնին: Շնորհիւ դեռահաս մամուլի մանաւանդ Սշակի և Փարչի, այդ ժամանակ մեր մէջ կազմուել էր արդէն մի սերունդ, որ պատրաստ էր ըմբռնելու և արձագանք տալու այդ զօրաւոր ձայներին, որոնք հրաւիրում էին նոցա միտքը ու հոգին դէպի տառապեալ և թշուառ հայրենակիցները:

Թող ներէ մեզ ընթերցողը որ մենք այդքան հեռացնում ենք նորա ուշադրութիւնը Շիշմանեանի կենսագրութիւնից, բայց մենք կամաւ փոքր ինչ կանգ առինք, որովհետեւ այս րոպէին նկարագրած շրջանը շատ սերտ կապ ունի Օսերենցի յիշատակի հետ: Ուստի հայերիս մէջ բորբոքուած այդ ոգեւորութիւնը և այդ զգացմունքներն էին պատճառ որ ստիպեցին Կիպրոսից նոր վերադարձած Օսերենցին թողնել Կ. Պօլիսը և իւր սրտի հատոր թագուկի հետ միասին չուել Ռուսաստան: Եւ ահա 1878-ին բեռնաւորուած աղգային տեղեկութիւնների և հայրենագիտութեան պաշարով՝ գալիս է նա Թիֆլիզ, իրեն նպատակ դնելով աւելի մօտիկ կերպով ծանօթացնել ռուսահայերին այն ժողովրդի և այն երկրի հետ, որոնցով այնքան հետաքրքրուում էին նոքա: Այդ թուականից սկսուում են Օսերենցի մի շարք հայրենագիտութեան վերաբերեալ դասախօսութիւնները թէ՛ հասարակութեան առաջ և թէ՛ մասնաւոր տներում: Թիֆլիզեցիներից շատերը անշուշտ դեռ չեն մոռացել այդ վերին աստիճանի յարգելի զոյգը—ծերունի հօրը և


մատաղահաս ու չքնաղ աղջկան, որոնք կազմում էին բոլոր ընտանեկան երեկոյթների ամենաբեղեցիկ զարդը: Առևտրահայերից շատերը առաջին անգամն էին տեսնում թագուկի նման մի հայ օրիորդ, որ այդքան գեղեցիկ ու մաքուր կերպով խօսում էր հայերէն և յայտնում էր թիֆլիզի գեղեցիկ սեռի համար անծանօթ մտքեր ու զգացմունքներ: Այդ թուին էր որ ես առաջին անգամ բախտ ունեցայ տեսնել Պերենցին Ալմիաժնի ճեմարանում: Այդ ժամանակ ես հազիւ 15—16 տարեկան պատանի էի. բայց մինչև այսօր էլ շատ լաւ եմ յիշում այդ միջահասակ, լայն թիկունքով, երկայն մազերով և վերին աստիճանի ինտելիգենտ դէմքով թխադէմ և բաւական գերուկ ծերունուն: Այդ տեսակ դէմքեր ես այնուհետև հանդիպել եմ միայն համալսարանների պրոֆէսորների մէջ: Վաղապէս իմ անձնական ծանօթութիւնս Պերենցի հետ այդ կէս ժամուայ տեսակցութիւնից աւելի չէ եղել: Ալմիաժնից իւր բժշկական գեղերը և գործիքները հետը վերցրած Շիմանեանը գնաց Սան Իւր օգնութիւնը մատուցանելու հրդեհուած և սովատանջ վանեցիներին: Չմոռանանք ասել որ Պերենցը այդ երկրորդ անգամն էր որ հանդիպում էր թիֆլիզում: Առաջին անգամ, ինչպէս յիշում են ընթերցողները, նա եղել էր 35 տարի առաջ, քառասնական թուականների սկզբներում: Այդքան տարուայ ընթացքում ռուսահայաստանը համարեա զբոսայիտի կերպարանափոխ էր եղել: Առաջուայ վրախօս և թմրած հայերի փոխանակ Պերենցը թիֆլիզում այժմ գտնում էր մի սերունդ, որ խօսում էր իւր մայրենի լեզուով, որ հետաքրքրուում էր իւր երկրով և որ անօրինակ եռանդով դիմում էր դէպի ուսումը ու քաղաքակրթութիւն: Պերենցի հայրենասէրի սիրտը ի հարկէ չէր կարող չուրախանալ տեսնելով այդ նախանձելի բարեփոխումները: Սա սիրեց ռուսահայերին և մնաց թիֆլիզում նուիրելով իւր կեանքի մնացած օրերը մեր մատաղ սերունդի դաստիարակութեան: Ինչպէս յայտնի է, նա մի քանի տարի շարունակ Սերսիսեան դպրոցում կատարել է ազգային պատմութեան, ազգային գրականութեան և կարծեմ նաև ֆրանսերէն լեզուի ուսուցչի պաշտօն: Այնուհետև 1883 թուին կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, մենք կրկին հանդիպում ենք նորան լրագրական ասպարիզում, ուր նա իւր զօրաւոր գրչով հանդէս է գալիս պաշտպանելու Խրիմեան Հայրիկի ընտրութիւնը. երբ այդ



ընտրութիւնը չյաջողուեց նա մատնացոյց է լինում անմոռանալի՝ Վերսէս պատրիարքի վերայ. բայց ամենքին յայտնի հանգամանքները արգելք են լինում Գերեցնցի և նորա հետ միասին ամբողջ ազգի ջերմ ցանկութեան: Այդ դէպքերը այնքան նոր և այնքան յայտնի են, որ մենք աւելորդ ենք համարում սորանից աւելի կանգ առնել նոցա վերայ:

Կովկասի երկնքի տակ բաղդը երկար չէ ժպտում պատկառելի ծերունուն: Նորա ծերութեան նեցուկ (նազուկը, որը արդէն տիկին Սէլիք Աղարեանց էր դարձել, տարածամ մահուամբ վախճանվում է երկունքի մէջ: Բարոյական երկունքի հեղինակը հարուածուում է ֆիզիքական երկունքից: Գերունի Շիմանեանը, որ իւր կեանքի մէջ այնքան փոթորիկներ էր տեսել, չէ կարողանում տանել ճակատագրի այդ ծանր հարուածին և ահա վշտահար ու ջղակտուր վերադառնում է կրկին Ս. Պօլս: Այդ տեղ, խոր վշտերի ազդեցութեան տակ, նա կաթուածահար է լինում և զրկուում է ձախ ձեռքի և ձախ ոտքի գործածութիւնից: Բայց չնայելով սորան նա անցած տարի կրկին վերադառնում է Կովկաս, մէկ անգամ էլ տեսնելու այն վայրերը, որոնց հետ այնքան սերտ կապով կապուած էր իւր միակ զաւակի յիշատակներով: Բայց ի՞նչքան տառապուած, ի՞նչքան փոխուած էր նա այժմ. նախկին Գերեցնցի միայն թոյլ և նսեմ ստուերն էր մնացել նորանում: «Այդ արծիւը, ասում է նորա բարեկամներից մէկը, որ իւր ձագը մեր ոլորտներում կորցնելուց յետոյ, սիրտն արիւնոտ դարձել, գնացել էր իւր բնագաւառը, մի նոր դրդում կրկին մղղել էր նորան դառնալ դալ մեր կողմերը. երբ եկաւ հասաւ, մենք տեսանք վաղեմի բարձրաթուիչ հաւքը՝ ձախ թեւը կախ ձգած և ձախ ոտը քաշ տանելով: Բախտը հարուածել էր նորան նոր մէկ անգամ: Վա՛ որ կորուսել էր կեանքի կէսը իւր ձագի հետ, այժմ՝ կորուսած էր և մարմնի կէսը. կարո՞ղ էր միթէ աւելի դիմանալ: Վա՛ որ հնոց էր և բոց էր արձակում խօսելիս, այժմ բեկուած էր հոգին և իւր հանճարը կայծեր էր միայն տալիս ընդհատ ընդհատ. բայց կայծեր, որ թռչում էին արագ և ազդում էին՝ ուր ընկնում»): Այդ տաժանելի կեանքը երկար չտևեց: Ներկայ թուի մարտի 17-ին մահը եկաւ վերջ դնելու նորա անտանելի չարչարանքներին: Նոյն ամսի 21-ին (Թիֆլիզի Սոչնու Ս. Վահրգ եկեղեցում կատարուեց թաղման հանգեսը և մարմինը ամփոփուեց





ՀԱՅԱԿԱՆԻՐ ՎԻՊԱՍԱՆ  
ՅԱԿՈՎ ԵՆԻՔ ՅԱԿՈՎԵԱՆ (ԲԱՓԻ)

Հրատ. Վրացա. հանդիսի:



Խօջիվանքի գերեզմանատանը իւր աննման թագուկի շիրմին կից:

Հարկաւոր է արդեօք աւելացնել որ բոլոր հայերը անկեղծ զգացմունքով սգացին իրենց ճնաշխարհիկ հայրենակցի մահը: Այդպէս ուրեմն յանձին Շիշմանեանի հայ ազգը զրկուեց մի այնպիսի զաւակից, որը իւր խորին հմտութեամբ, անկեղծ հայրենասիրութեամբ, ահագին տաղանդով և աննկուն եռանդով կարող էր պարծանք լինել ամեն մի ազգի համար: Սեղ մնում է միայն Պ. Եղեկեանի հետ ձայնակցելով դառնալ դէպի անմոռանալի հանգուցեալի յիշատակը և բացականչել. «Եւրոպայի հայ հասած, և դու ինքդ խանձուեցար և աճիւնացար բուն ըղձերիդ բոցերի մէջ... այն՝ որ դու զգացիր, քարոզեցիր և գործեցիր, ցոյց կուտայ իւր արդիւնքը, և այժմ իսկ երկունքի մէջ է: Դու այժմ մաղթէ Սաբաթով Տիրովն որ մեզ շնորհք և հանճար պարգևէ հողի մէջ ընկած ցորենը խնամելու և տածելու, և Խնքն էլ երկնքէն ցօղ շընորհէ և անոյշ արև, որ ցորենն աճի և հասկանայ»։ Այլ թող օրհնեալ լինի բազմավաստակ աշխատաւորի յիշատակը հայրենեաց երկնքի տակ:

Թ. Օստաթեան



## ՅԱԿՈԲ ՄԷԼԻՔ ՅԱԿՈԲԵԱՆ

(ՐԱՖՖԻ)

(Ծն. 1835 թ.—† 1888 ԱՊՐ. 25)

1888 թուականը կատարեալ օրհասական տարի է հայ գրականութեան համար: Արդեւ չէս չեղած արդէն երկու նշանաւոր զոհ է տարել առանց այն էլ սակաւամիւս հայ գրողների շարքից: Հազիւ երկու ամիս էր անցել այն օրից երբ անողորմ մահը խլեց մեզանից մեր անմոռանալի գործիչ և վիպասան Կերենցին և նորա գերեզմանը դեռ ևս չկանաչացած ահա բացուում է մի նոր—աւելի նշանաւոր, աւելի կսկծալի և աւելի տարածամ գերեզման—անդուգական Բաֆֆիի գերեզմանը: Կայ արդեօք աշխարհքի երեսին մի հայ, մի ճշմարիտ և անկեղծ հայ, որ այդ անսպասելի մահուան բովի լսելուս՝ զգացած չլինի իւր սրտի խորքերում մի սաստիկ սուր, սաստիկ դառը կսկիծ: Սենք այլ ևս

չենք հարցնում թէ կայ արդեօք մի հայ, որ լսած չլինի Ռաֆֆիի անունը, որ ծանօթ չլինի նորա գործունէութեան ու գրուածների հետ: Յանձին Ռաֆֆիի մատաղհաս հայ գրականութիւնը զրկուում է իւր ամենապայծառ աստղից, իսկ հայ ժողովուրդը այն մարդուց, որի յիշատակի հետ կապուած են հայութեան ամենասուրբ յատկութիւնները, նորա ամենագեղեցիկ յոյսերը: Այդ կորուստը այնքան ահագին, այնքան զգալի է որ մեք մինչև անգամ դժուարանում ենք առայժմ որոշել նորա բոլոր չափը և սահմանը:

Արաբի յետագայ համարներում մենք աւելի ընդարձակօրէն և մանրամասնօրէն կանգ կառնենք Ռաֆֆիի գործունէութեան և գրուածների վերայ, որոնք այսուհետև անտարակոյս առաջին տեղը պէտք է բռնեն մեր մանուկ գրականութեան պատմութեան էջերում: Այս անգամ մենք շտապում ենք բաւականութիւն տալ մեր ընթերցողների հետաքրքրութեան ներկայացնելով նորան միայն Ռաֆֆիի պատկերը և համառօտ կենսագրութիւնը:

Ռաֆֆին ծնուել է 1835 թուականին Պարսկաստանի Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղում: «Նորա հայրը բաւական ունեւոր վաճառական էր և շատ անգամ առևտրական գործերով հանդիպում էր թիֆլիզում: 1847 թուին նա իւր հետ բերում է թիֆլիզ նաև իւր 12 տարեկան որդուն Յակոբին, որին և յանձնում է այդ ժամանակուայ նշանաւոր ուսուցիչ Սարապետ Իշխանեանցին: Սօտ հինգ տարի աշակերտելով Իշխանեանցի զբարոցում, փոքրիկ Յակոբը կարողանում է այնքան ուսումնասիրել գրաբար լեզուն, որ ազատ կարգում և հասկանում է Հոմերոսի, Վիրգիլիոսի, Միլտոնի, Վիսների, Ֆենելոնի և ուրիշ կլասիկների գրաբար թարգմանութիւնները: Այդ հեղինակներն էին, որոնք կազմում էին նորա մանկական ընթերցանութեան պաշարը և որոնք անտարակոյս մեծ գարկ են տուել այն բանաստեղծական տաղանդի զարգացման, որով նա ապագայում այնքան պէտք է փառաւորուէր և իւր արդիւնքներով փառաւորէր նաև մեր մատաղ գրականութիւնը: Շնորհիւ իւր արտակարգ ընդունակութեան պատանի Յակոբը գրաւում է արքունական գիմնազիոնի այդ ժամանակուայ վերակացու Յովհաննէս Տէր Յովսէփեանցի ուշադրութիւնը, որի միջնորդութեամբ և աջակցութեամբ 1852 թուականին մտնում է գիմնազիոնի չորրորդ դասարանը: Այդտեղ նա շա-

րունակում է իւր ուսումը մինչև 1856 թուականը, երբ հայրը յետ է կանչում նորան կրկին Պարսկաստան և ստիպում է պարապել վաճառականութեամբ: Այս ահա մատաղահաս երիտասարդը՝ թափառաշրջիկ հայ առևտրականի մախաղը ձեռին՝ ընկնում է քաղաքէ քաղաք և գիւղէ գիւղ ու շրջագայում է պարսկական և տաճկական շայաստանի հայաբնակ տեղերը: Այդպիսով նա առիթ է ստանում անձամբ տեսնելու և ծանօթանալու այն ժողովրդի և այն երկրի հետ, որին նա պիտի զոհէր իւր բոլոր ապագայ գործունէութիւնը: Արկնատուր տաղանդով օժտուած հակորը ի հարկէ չէր կարող բաւականութիւն գտնել վաճառականական մանր և ցամաք զբաղմունքների մէջ և իւր երկարատև թափառմունքների ժամանակ առևտրական կեդրոնները և տօնավաճառները չէին, որոնք գրաւում էին նորա միտքը և հոգին, այլ այն աւերակ վանքերը և աւանները, այն տառապուած երկիրը և ժողովուրդը, որոնք յափշտակում էին նորա բանաստեղծական երեակայութիւնը, յիշեցնելով նորան իւր հայրենիքի անցեալ փառքը և շքեղութիւնը: Ահա այդ ոգևորութիւնների արդիւնք են այն մի շարք ոտանաւորները—*Աբուլ Բիւնի, Գեպի Լապայի, Խարայիլ Խաթելան-ճի, Լըպի պարսկալի Կաղան-ճ Էն*, որոնք իրենց բոլոր պակասութիւններով միասին ցոյց են տալիս հեղինակի բնածին տաղանդը և նորան բորբոքող զգացումները ու գաղափարները: Այդ միևնոյն ճանապարհորդութեան արդիւնք է նաև նորա անդրանիկ յօդուածը «*Աղթամարայ վանքը*» վերնագրով, որ տպուեց *Հիւսիսափայլի* մէջ 1860 թուականին և իւր ժամանակին բաւական ազդեցութիւն ունեցաւ ընթերցող հայ հասարակութեան վերայ: Պէտքէքար բանաստեղծի նիւթական սուղ միջոցները թոյլ չեն տալիս նորան միանգամայն անձնատուր լինել իւր սիրած գրականական զբաղմունքներին և ստիպում են դեռ ևս շատ տարիներ կորցնել այն ասպարէզի վերայ, որի մէջ մշել էին նորան իւր հօր կամքը և հանգամանքները: Սակայն այդ ասպարէզն էլ չէ յաջողում հակորին և ահա վաթսուական թուականների վերջերում մեք հանգիպում ենք նորան *Թիֆլիզում* դատարկ գրպանով, ուր օրական ապրուստը հայթայթելու համար նա պարտաւորուած էր երբեմն ուսուցչութիւն անել իւր նախկին ուսուցիչ *Բէլախեանցի* դպրոցում, երբեմն ևս կատարել հասարակ հաշուապահի պաշտօն մի հայ դերձակի և մի թուրք վաճառականի



մօտ: Բայց ոչ հաշուապահի դառը վիճակը, ոչ նիւթական աղ-  
քատութիւնը և ոչ կեանքի անյաջողութիւնները չեն կարողանում  
մեռցնել նորա մէջ ստեղծագործութեան շնորհքը և ահա նոյն իսկ  
այդ անյաջող պայմանների մէջ նա արտագրում է այն բազմաթիւ  
մանր ու խոշոր վէպերը և պատկերները, որոց մի մասը 1874-ին  
լոյս ընծայուեց «Փունջ» վերնագրով երկհատորի մէջ:

1872 թուին թիֆլիզում սկսուում է հրատարակուիլ «Մը-  
շակ» լրագիրը իբրեւ շաբաթաթերթ: Շճարտութիւնը պահան-  
ջում է խոստովանիլ որ այդ լրագրի խմբագիրը ծանօթանալով  
Յակոբի հետ մի անգամից հասկանում ու գնահատում է նորա  
հարուստ գրականական ընդունակութիւնները ու տաղանդը և լայն  
կերպով բաց է անում նորա առաջ իւր թերթի էջերը: Թէ ար-  
դեօք Մշակի ազդեցութեան տակ է զարգացել այն ուղղութիւնը,  
որը նա այնպէս փառաւոր կերպով հետեւեց իւր բոլոր գրականա-  
կան գործունէութեան ընթացքում, ինչպէս կամենում է ապացու-  
ցանել Պ. Լործունին այդ մասին մեք տարակուսում ենք, բայց  
անհերքելի է մեզ համար այն հանգամանքը որ «Մշակ»ը իւր  
յաջողութեան եթէ չասենք աւելին բայց գոնէ կէսը պարտական  
է Բաքիի աշխատակցութեան: Համենայն դէպս Բաքիին աւելի  
հեշտութեամբ կարող էր գտնել մի ուրիշ «Մշակի» նման լրագիր  
քան թէ «Մշակը» Բաքիի նման մի աշխատակից: Սորան ապա-  
ցոյց է այն հանգամանքը որ նա ոչ պակաս տաղանդով և ոչ պա-  
կաս յաջողութեամբ աշխատակցեց և «Փորձին» և մինչև վերջին  
օրերը «Լորճաբանք» շաբաթաթերթում: Եւսպէս թէ այնպէս  
1872 թուին Յակոբ Մէլիք Յակոբեանը Բաքի ստորագրու-  
թեամբ առաջին անգամ է դուրս գալիս «Մշակի» էջերում իւր մի  
շարք «Պարսկաստանի նամակներով», որոնք մինչև այսօր էլ կար-  
դացուում են մեծ հաճութեամբ: Եւր ժամանակուանից այդ ա-  
նունը այլ ևս չէ իջնում գրականական ասպարիղից և քանի դը-  
նում այնքան աւելի հոգնակուում ու ժողովրդական է դառնում:  
Եւստեղ չմոռանանք յիշել որ հայ մամուլը այդ ժամանակ զեռ  
այնքան աղքատ էր, որ չէր կարողանում ապահովել մինչև ան-  
գամ Բաքիի նման գրողին, որը իւր ապրուստը հայթայթելու  
համար ստիպուած էր, ի վնաս գրական զբաղմունքների, պարա-  
պել ուրիշ պաշտօններով: Ինչպէս յայտնի է մինչև 1877 թուա-  
նը նա ուսուցչութեամբ էր պարապում նախ (ձաւրիզում և ապա

Ագուլիսում: Այդ ժամանակին են վերաբերում նորա մի շարք յօդուածները, Սէրիպադէ և այլ ստորագրութեամբ, որոնք նուիրուած են այլևայլ հասարակական խնդիրների լուծման, և որոնց մէջ երևան է գալիս նորա հարուստ հրապարակախօսական տաղանդը: Առհասարակ պէտք է նկատենք որ Ռաֆֆին համարեա նոյնչափ օգտակար է եղել ազգին հրապարակախօսի գերում որչափ և իբրև վիպասան: ‘Նորա «Հայ կինը», «Հայ երիտասարդութիւնը» և ուրիշ ազգային հարցերին վերաբերեալ յօդուածները իրենց համոզիչ և առողջ գատողութեամբ արգար և անկաշառ ուղղութեամբ և վերին աստիճանի կոկ ու սահուն ոճով պատկանում են այն տեսակ գրուածների շարքին, որոնց տակ չէր քաշուիլ ստորագրուել եւրոպական մամուլի մէջ հռչակ ստացած ամեն մի հրապարակագիր: Բայց Ռաֆֆիի անօրինակ ժողովրդակաշունթիւնը իսկապէս սկսում է 1877 թուականից, երբ մէկ մէկի ետեւից սկսում են երևան գալ այն մի շարք վէպերը, որոնք իրենց բովանդակութեամբ այնչափ համապատասխանում էին հայ ազգի ժամանակակից տրամադրութեան և ելեքտրական հոսանքի նման բորբոքում էին նորա ջղերը: Այդ վէպերի մէջ աւելի քան թէ նորա նախընթաց գրուածքների մէջ արդարաւիայլում են Ռաֆֆիի հարուստ գրականական տաղանդը, նորա վառ երևակայութիւնը, գաղափարների լայնութիւնը և զննողական ընդունակութիւնը: Մենք խոստովանում ենք որ գեղարուեստի տեսակէտից նայող խիստ քննադատը արդարև կարող է Ռաֆֆիի գրուածների մէջ գտնել կէտեր, որոնք չեն համապատասխանիլ նորա բոլոր իրաւացի պահանջներին, բայց և ոչ ոք չէ կարող ուրանալ, որ այդ գրուածները իրենց բոլոր պակասութիւններով միասին, միշտ անմահ կմնան այն ազգի պատմութեան էջերում, որի վերայ նոքա ունեցել են մինչև այդ ժամանակ չտեսնուած ազդեցութիւն, որոնք կրթել են մի ամբողջ սերունդ և հիմն են դրել մի ամբողջ շէօլայի: Այսպիսով յաջորդ համարներից մէկում մենք առանձնապէս կանգ կառնենք Ռաֆֆիի այդ գրուածների վերայ և ցոյց կտանք նոցա նշանակութիւնը հայ ազգի և հայ գրականութեան համար, առայժմ բաւականանաք միայն յիշելով որ Ռաֆֆին մեր մինչև այսօրուայ գրողներից ոչ միայն ամենատաղանդաւորը այլ և ամենաբեղմնաւորն էր: Աչքէ անցնելով նորա գրուածների սոսկ ցանկը, մարդ զարմանում է թէ ինչպէս այդ ոչ մի տեղ կանոնաւոր

ուսում չստացած, ոչ մի նոյն իսկ միջնակարգ դպրոց չաւարտած մարդը կարողացել է արտագրել այդքան բազմաթիւ և այդքան բազմակողմանի գրուածներ: Աւ դեռ ինչքան բան կարելի էր սպասել նորանից եթէ տարածամ մահը չգար վերջ դնելու այդ անխոնջ մշակի կեանքին:

Ապրիլի 25-ը անմոռանալի սուգի օր պէտք է լինի մեր մատաղ գրականութեան համար: Այդ օրը գիշերուայ ժամը 12<sup>1</sup>/<sub>4</sub>-ին սակաւատե, բայց ծանր հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր կեանքը Րաֆֆին: Հեռագիրը մի քանի օրուայ մէջ հաղորդեց այդ գուժը աշխարհի բոլոր մասերում գտնուող հայերին, և ի պատիւ այդ հայերին, որոնք առհասարակ շատ ժլատ են իրենց գործիչներին յարգելու մէջ, պէտք է ասենք որ այս անգամ ամենքն էլ, առանց կարծիքների և կուսակցութեան խտրութեան մեծ համակրութեամբ վերաբերուեցին դէպի նշանաւոր ազգակցի յիշատակը: Սորա թաղումը, որ տեղի ունեցաւ նոյն ամսի 29-ին, կատարուեց այնպիսի պատուով և շքեղութեամբ, որի նմանը մինչև այդ օր տեսնուած չէր թիֆլիզում: Ութսունի մօտ պսակներ, բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ, պատգամաւորութիւններ զանազան քաղաքներից, ծաղկեայ կամարներ և վերին աստիճանի սըրտաշարժ ցոյցեր նոյն իսկ ժողովրդի ամենահասարակ դասակարգի կողմից այդ տիտուր հանդիսին տալիս էին մի յաղթական մուտքի կերպարանք: Բացի այդ ցոյցերից Ուսաստանի համարեա բոլոր հայաբնակ քաղաքներում և մինչև անգամ գիւղերում կատարուեցին հոգեհանգիստներ և հաստատուեցին ստիպանդիաներ Րաֆֆիի յիշատակին: Արկու բարեգործ հայեր—Պ. Պ. Ա. Մանթաշեան և Ա. Մ. Մէլիք Հայկազեան յանձն առին իրենց հաշուով կրթութիւն տալ նորա որբ մնացած որդիներին: Այդ բոլոր ցոյցերը մէկ անգամ էլ ապացուցեցին թէ ինչքան ընդարձակ էր Րաֆֆիի վայելած ժողովրդականութիւնը և թէ մինչև որ աստիճանի խոր էին թափանցել այն մտքերը և գաղափարները, որոնց զոհել էր նա իւր տաղանդը ու կեանքի օրերը:

Այդպէս ահա մօտ 53 տարեկան հասակում հանգաւ մեր մատաղ գրականութեան ամենափայլուն աստղը, սուգի մէջ թողնելով իւր ազգի անկեղծ բարեկամներին: Միակ բանը, որ այժմ կարող է փոքր ի շատէ փոխարինել այդ անփոխարինելի կորուստը, այդ նորա թողած բազմաթիւ տպուած և անտիպ գրութիւն-



ներն են, որոնք ցանկալի է ինչքան կարելի է շուտով լըս հանել և տալ Ռաֆֆին պաշտող ժողովրդի ձեռքը: Բարեբաղդաբար, ինչպէս լսում ենք, այդ միտքը արդէն յղացել է նորա բարեկամների մէջ և արդէն կազմուել է մի մասնաժողով, որ աշխատում է իրագործել նորան:

Ի բոլոր սրտէ համակրելով այդ ձեռնարկութեանը, ցանկանում ենք նորան կատարեալ յաջողութիւն:

Գ. Կոպչ

---

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### Տ Ա Պ Ա Ն Ա Գ Ի Ր

(ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ)

Պարզասիրտ որդին վեհ ազատութեան  
Ռզացմանց համար կեանք չէր խնայում  
Եւ ճիշդ պատկերը չքնաղ բնութեան  
Նա կենդանազրել յաճախ էր սիրում:

\*  
\* \*

Նա հաւատում էր մութ գուշակութեանց,  
Հաւատում սիրոյն, թիլիամաններին,  
Եւ նա զոհ բերեց օրերն իւր կենաց  
Շատ անբնական ջանկութիւններին:

\*  
\* \*

Վշտաց, կրքերի և երջանկութեան  
Նրա մէջ հողին պահում էր պաշար,  
Փչեց նա շունչը: Ահա՛ գերեզման:  
Մարդկանց համար չէր նա եկած աշխարհ:

Եղ. Ծափոս-Եան

Մոսկուա

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾ ՏԵՍՆՈՒՄ Է ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, ԲԱՅՑ ՈՒՇ Է ՅԱՅՏՆՈՒՄ.

Այլադիմիր քաղաքում ապրում էր Ահսենով անունով մի երիտասարդ վաճառական: Այս ունէր սեպհական երկու խանութ և մի հատ էլ տուն:

Ահսենովը խարտեաշ, սիրուն և խուճուճ մազերով տղամարդ էր. միևնոյն ժամանակ նա լաւ երգիչ էր և անչափ զուարճասէր: Արիտասարդ հասակում Ահսենովը թունդ խմողներին էր և հարբած ժամանակ՝ լստուած ազատէր նրա արարմունքներին: Բայց երբ ամուսնացաւ, այն օրին նա թողեց արբեցումը և միայն հազարէջ մի անդամ էլի համտես էր անում, այն էլ պատահաբար:

Լմառ էր: Սի օր Ահսենովը պատրաստվում էր Ախժնիի տօնավաճառը գնալու: Հրաժեշտի ողջոյնը տալիս իր ընտանիքին՝ կինն ասաց նրան.

— Ի վա՛ն Ախմիդրիեվիչ, արի՛ դու այսօր մի՛ գնար, որովհետեւ այս գիշեր ես մի վատ երազ եմ տեսել:

Ահսենովը ժպտալով ասաց.

— Չ'ի՛նք թէ վախենում ես, ա՛յ կնիկ, որ ես տօնավաճառում քէֆի ետեւից ընկնեմ:

— Նքս էլ չը գիտեմ թէ ինչի՛ց եմ վախենում, — պատասխանեց կինը, — միայն թէ տեսած երազս շատ վատ էր, տեսայ իբր թէ, քաղաքից տուն ես վերադարձել, գլխարկդ վերցրիր և ես ի՛նչ տեսայ — գլխիդ մազերն ամբողջապէս սպիտակել էին:

Ահսենովը ժպտաց:

— Ե՛, ասաց, եթէ այդպէս է, այդ ոչինչ, դա դատումի նշան է: Արեանես, թէ ինչ լաւ ատուտուր կանեմ, ի՛նչ թանկագին ընծաներ կբերեմ:

Այս նա մնաք բարեն ասելով ընտանիքին՝ ճանապարհ ընկաւ:

Այն ճանապարհին Ահսենովը մի ծանօթ վաճառականի հանդիպեց և իջևանում նրա հետ մնաց միասին գիշեր անցկացնելու: Արանք թէյը միասին խմեցին և ապա իւրաքանչիւրը գնաց քնելու է ատանձին ատանձին սենեակ որ միմեանց հետ կից էին:

Ահսենովը երկար քնել չէր սիրում, ուստի կէս գիշերին զարթեց և, որպէս զի կարողանայ գիշերուայ հովին աւելի հանգիստ ծանապարհորդել, զարթեցրեց նաև կառապանին ու պատուիրեց ձիերը լծել: Յետոյ մտաւ տանտիրօջ խրճիթը, հաշիւ տեսաւ նորա հետ և ծանապարհ ընկաւ:

Քառասուն վերստ գնալուց յետոյ՝ նա դարձեալ իջաւ իջևաններէից մէկում՝ ձիաներին խօտ տալու, և ինքն էլ իջևանի նախասենեակում հանգստացաւ: Ճաշի ժամանակ Ահսենովը դուրս եկաւ սրահը, պատուիրեց ինքնաեռ պատրաստել և ապա վերցրեց կիթառն և սկսեց ածել:

Այդ միջոցին լսուում է յանկարծ փոքրիկ զանգակի զնգզնգոցը և իջևանի դռն առջև մի սայլակ է կանգնում: Սի աստիճանաւոր երկու զինուորների հետ միասին իջնում է կառքից, մօտենում է Ահսենովին և սկսում հարց ու փորձ անել:— Ո՞վ ես, ո՞ր տեղացի ես: Ահսենովը բոլորը ինչ որ կայ պատմում է և խնդրում է. «Չէի՞ք կամենայ արգելք ինձ հետ միասին թէյ վայելել»: Եւ այց աստիճանաւորն շարունակում է միշտ իր հարց ու փորձը:— Ո՞ր տեղ անցկացրեցիր այս գիշերը: Սենա՞կ էիր, թէ վաճառականի հետ: Տեսա՞ր առաւօտեան վաճառականին, ինչո՞ւ դուրս եկար վաղ առաւօտեան:

Ահսենովը զարմացաւ թէ ինչո՞ւ նրան հարցնում են այս բոլորը: Այս նա մանրամասնօրէն պատմեց ինչ որ ինքը գիտէր, և յետոյ աւելացրեց. «Ինչո՞ւ դուք ինձ այդպէս խոր հարցմունքներ էք անում: Այս գող կամ աւաղակ չեմ, գնում եմ իմ սեպհական գործերիս և ինձ հարցուփորձ անելը բոլորովին ի գուր է»:

Այդ միջոցին աստիճանաւորը ձայն տուեց զինուորներին, ասաց. — Այս ոստիկան եմ և քեզ նրա համար եմ հարցնում, որ այն վաճառականը, որի հետ դու գիշերը անցես կացրել-կտրտուած է: Հի՛շ տուր բաներդ, իսկ դո՛ւք, զինուորնե՛ր, խուզարկեցէ՛ք նորան:

Չինուորները մտան բնակարանը դուրս բերին այնտեղից ճամբրուկն ու պարկը և սկսեցին կապերն արձակել, փնտռել, տակնուվրայ անել: Յանկարծ ոստիկանը պարկի միջից մի դանակ հանեց և գոչեց.

— Այս ո՞ւմ դանակն է:

Ահսենովը նայեց տեսաւ որ մի արիւնաթաթախ դանակ իր պարկի միջից հանեցին և երկիւղից դողաց:



— Բայց ինչո՞ւ դանակն արիւնոտ է:

Լիսենովն ցանկանում էր պատասխանել, բայց ոչ մի խօսք արտասանել չ'կարողացաւ:

— Ես... ես չը գիտեմ... ես... դանակը... ես... իմա չէ...:

— Լուսուտեան վաճառականին դտել են անկողնում կտրտած,

— Բացի քեղանից ո՛չ ոք չէր կարող այդ բանն անել: Տան դուռը ներսից փակած էր եղել, իսկ տանը միայն դու ես եղել: Լիսա՛ և արիւնոտ դանակ գտնուեցաւ քո պարկում և, վերջապէս, դէմքիցդ էլ երևում է այդ: Լիսա՛, ի՞նչպէս սպանեցիր դու նրան և ո՞րքան փող յափշտակեցիր նրանից:

Լիսենովը սկսեց երգուել, որ այդ բանն անողն ինքը չէ, որ դանակն ամենեւին իրենը չէ, որ նա վաճառականի հետ միասին թէյ խմելուց յետոյ, էլ նրա երեսը չէ տեսել, որ նա հէնց այս րոպէիս էլ 8,000 րուբլի փող ունի գրպանում, սակայն իր սեպհական փողն է այդ:

Բայց Լիսենովի ձայնը խեղդվում էր, դէմքը գունատուել էր. և նա ամբողջ մարմնով յանցաւորի պէս դողում էր:

Աստիկանը հրամայեց ղինուորներին կապել Լիսենովի ձեռք ու ոտքը և տանել, նստեցնել սայլակը: Արբ կապկպուած Լիսենովին տեղաւորեցին կառքում, նա երեսը խաչակնքեց և լաց եղաւ...: Լիսենովից խլեցին բոլոր փողերն ու իրերը և յետոյ տարան մօտակայ քաղաքի բանդը: Սարդ ուղարկեցին Վլադիմիր քաղաք՝ իմանալու, թէ ի՞նչ վարք ու բարքի տէր մարդ է Լիսենովը: Վլադիմիրի բոլոր բնակիչները վկայեցին, որ Լիսենովն երիտասարդ ժամանակ թէև խմող է եղել և քէֆ սիրող, բայց լա՛ւ մարդ է:

Լյուսիսե տե նրան դատում են:

Գատում են նրան մեղադրելով այն յանցանքում որ նա սպանել է Ռեզանի վաճառականին և դողացել է նրանից 20,000 ռուբլի:

Աինն ամուսնու վշտից հալումաշ էր լինում և չգիտէր թէ ինչ կարծիքի կանգնէր: Նրա բոլոր երեխայները դեռ փոքր էին և մէկը դեռ ծծկեր: Նա բոլորին էլ վերցրեց իր հետ գնաց այն քաղաքը, որտեղ բանտարկուած էր ամուսինը: Սկզբում նրան թոյլ չէին տալիս իր ամուսնու հետ տեսնուելու, բայց վերջը նա շատ աղաչեց, շատ պաղատեց մեծաւորներին և նրան թողին ա-

ամուսնուն տեսնել: Երբ կինը տեսաւ Մկսենովին կալանաւորի հագուստով, ձեռք ու ոտքը շղթայած, աւազակների հետ միասին — ուշաթափ գետինը դիպաւ և երկար ժամանակ չէր կարողացանում ուշքի գալ: Յետոյ նա հաւաքեց մանուկներին իր շուրջը, նստեց ամուսնու կողքին և սկսեց պատմել նրան ընտանեկան գործերի մասին, հարց ու փորձ անել ինչ որ պատահել էր խեղճ ամուսնուն:

Մկսենովը պատմեց բոլորը.

— Դա, այժմ ի՞նչ ճար կայ անելու, հարցրեց կինը:

— Կա ասաց պէտք է խնդրել թագաւորին, կարելի է մի՞թէ որ անմեղ մարդ կորչի:

Կինը յայտնեց, որ ինքն արդէն խնդիր է տուել թագաւորին, բայց խնդիրը տեղ չէ հասել:

Մկսենովը ձայն չը հանեց և միայն գլուխը քաշարեց...

— Յիշում ես, ասաց կինը, զուր չէր իմ այն ժամանակուայ տեսած երազս, որպէս թէ մազերդ սպիտակել էին: Մհաւասիկ դու այժմ իսկապէս ալեւոր ես տառել վշտից: Կու չպէտք է հեռանայիր տանից:

Եւ նա սկսեց իր ամուսնու մազերը փայփայել և ասեց.

— Դա՛նեա, հոգիս, ե՛կ դու ինձ ճշմարիտը խոստովանուիր, դու չե՞ս արել այդ բանը:

— Կու էլ ինձ վերայ կարծիք տարար — ասաց Մկսենովը և երեսը ձեռքերի մէջ ծածկելով՝ սկսեց լաց լինել:

Միտ միջոցին զինուորը ներս մտաւ և՝ ասաց որ կնոջը, որդկերանց հետ ժամանակ է հեռանալու:

— «Մկսենովը — վերջին անգամ ողջոյն տուեց իր ընտանիքին:

Երբ կինը դուրս գնաց, Մկսենովն սկսեց միառմի մտաբերել իր և կնոջ ասածները: Երբ նա յիշեց, որ կինը նոյնպէս կասկած տարաւ իր վերայ, և հարցրեց, թէ ինքն չէ արդեօք վաճառակաշին սպանողը՝ նա ինքն իրեն ասաց. «Ինչպէս երևում է, բացի Մստոժուց, ոչ ոք չէ՛ կարող ճշմարտութիւնն իմանալ. միայն՝ Կրան պէտք է խնդրել և միայն Կրանից սպասել գթութիւն»:

Միտ օրից Մկսենովը դադարեց խնդիր տալուց, դադարեց յուսալուց և միայն աղօթում էր Մստոժուն:

Մկսենովին դատապարտեցին խարաղանով ծեծել և ուղարկել տաժանակիր աշխատանքների:

Լ՝յդպէս էլ արին:

Երբ խարազանից գոյացած վէրքերը բուժուեցան, միւս յանգաւորների հետ միասին նրան էլ ուղարկեցին Սիբիր:

Տաժանակիր աշխատանքների ենթարկուած՝ 26 տարի ապրեց Լ՝կսենովը Սիբիրում: Նրա գլխի մազերը ձիւնի պէս սպիտակեցին, միրուքը նոյնպէս դառաւ երկար և սպիտակ: Նրա զուարթութիւնը կորաւ. մէջքը կռացաւ, քայլում էր դանդաղ. խօսում էր շատ քիչ: Երբէք չէր ծիծաղում և յաճախ Լստուծուն աղօթք էր անում:

Բանդում Լ՝կսենովը սովորեց կօշկակարութիւն. աշխատած փողերով մի յայսմաւուրք առաւ և բանդում լուսով կարդում էր, իսկ տօն օրերին նա գնում էր բանդի եկեղեցին, կարդում էր Լուսբելոց գիրքը և երգում էր դասում: Նրա ձայնը դեռ լաւ էր: Բանդի գլխաւորները Լ՝կսենովին սիրում էին նրա հեղ բնաւորութեան համար: Իսկ ընկերակից բանդարկուածները խիստ յարգում էին Լ՝կսենովին և «պապի» ու «Լստուծոյ մարդ» էին անուանում: Երբ աքսորեալները խնդրելու բան էին ունենում, ընկերները միշտ Լ՝կսենովին էին ուղարկում վարչութեան մօտ: Իսկ երբ աքսորեալների մէջ վէճ էր բացվում, վիճողները միշտ Լ՝կսենովի մօտ էին գալիս որ նա դատաստան անի: —

Տանից ոչ մի նամակ չստացաւ Լ՝կսենովը և նա չգիտէր թէ իր կինն ու որդիքը կենդանի՞ են տակաւին:

Սի օր նոր կալանաւորներ բերին բանդը: Երեկոյեան դէմ բոլոր հին աքսորեալները շրջապատեցին նորեկներին և սկսեցին հարց ու փորձ անել, թէ նրանցից որը՝ որ քաղաքից կամ որ գիւղիցն էր և որն՝ ինչ բանի համար էր ընկել այստեղ: Լ՝կսենովը նոյնպէս նստեց թախտի վերայ, նորեկների կողքին և գլուխը կախած լսում էր ով ինչ որ պատմում էր: Նորեկներից մէկը՝ մի բարձրահասակ, առոյգ 60 ամեայ ծերունի էր սպիտակ մօրուքը խուզած: Նա պատմում էր իրեն բանելու պատճառը:

— Ի զո՛ւր, եղբայրներ, չնչին բանի համար ես այստեղ ընկայ, — ասում էր նա. — կառապանի ձին յետ արի սահակից. ինձ բռնեցին: Լսացին, «ձին գողացել ես»: — Նս պատասխանեցի. ես միայն ցանկաւնում էի շուտով տեղ հասնեմ, արձակեցի ձին և առաջ ընկայ: Բացի այդ կառապանն էլ իմ բարեկամն է: Չէ, ասում են — գողացել ես: — Իսկ այն չը գիտեն, թէ ինչ և որտեղեմ գո-



ղացել: Աղել են գործեր, վաղուց արժանէր ինձ այստեղ ընկնել, բայց՝ չը կարողացան վերաս հաստատել. իսկ այժմ բոլորովին անիրաւ ինձ այստեղ քշեցին: Բայց, թող չ'պարծենամ՝ եղել եմ Սիբիրում, միայն երկար ժամանակ հիւր չեմ մնացել...:

— Իսկ դու ճորտեղից ես, հարցրեց կաւանաւորներից մինը:

— Այ՛, վաղիմիւ քաղաքիցն եմ՝ այնտեղի քաղաքացի: Այնուհետ Սակար է մականունս Սեմեօնովի:

Ահսենովը գլուխը բարձրացրից և հարցրեց.

— Բայց, Սեմեօնովի՛չ, լսել ե՞ս վաճառական Ահսենովնց մասին Վաղիմիւ քաղաքում: Կա՞ն դեռ:

— Ինչպէս չէ հարուստ վաճառականներ են, թէև նրանց հայրը Սիբիրումն է: Արեւի, նա էլ մեզ պէս մեղաւորի մէկն է: Բայց դու, պա՛պի, ինչ գործերի պատճառով ես այստեղ:

Ահսենովը չէր սիրում իր անբախտութեան մասին խօսել: Կա հոգոց հանեց և ասաց.

— Իմ մեղքերիս պատճառով ահա 26-դ տարին է տաժանակիր աշխատանքների մէջ եմ:

— Բայց այդ ի՞նչ մեղքեր են, հարցրեց Սակար Սեմեօնովը:

— Ե՛հ, երեւի արժանի էի այս վիճակին, ասաց Ահսենովը և էլ չուզեցաւ աւելի մի բան պատմել. բայց բանդի նրա միւս՝ ընկերները պատմեցին նորեկին, թէ ինչ բանի համար Ահսենովն ուղարկուել էր Սիբիր: Կրանք պատմեցին թէ՛ ինչպէս ճանապարհին մի մարդ սպանել էր մի վաճառական՝ դանակը դրել Ահսենովի պարկի մէջ և թէ՛ ինչպէս այդ բանի համար ի զուր դատապարտել են նրան:

Սակար Սեմեօնովը լսելով այդ՝ նայեց Ահսենովին, ձեռքերը խփեց ծնկներին և բացականչեց.

— Ա՛յ, քեզ հրաշք, որ հրաշք, բայց ինչպէս ծերացել ես, պա՛պի:

Աքսորեալներն սկսեցին հարց ու փորձ անել Սակար Սեմեօնովին, թէ ինչո՞ւ նա զարմացաւ և ճորտեղ էր տեսած նա Ահսենովին: Բայց Սակար Սեմեօնովը չէր պատասխանում. նա միայն ասաց.

— Երա՛շք է, տղերք, հրաշք:— Ե՛հ թէ ճորտեղ պատահեցաւ մեզ իրար տեսնելու:

Լսելով այդ խօսքերն, Ահսենովը մտածեց.— Չլինի՞ այս մարդը տեղեկութիւն ունի վաճառականին սպանողի մասին:

—Երևի դու հէնց առաջուց լսել ես այդ բանի մասին, Սեմեօնի՛չ, կամ գուցէ առաջ տեսած կաս ինձ, ասաց Լևսենովը:

—Ի՛նչպէս չեմ լսել, պատասխանեց Սակար Սեմեօնովը, — աշխարհիս լուրերը հեշտ և շուտ են տարածվում, բայց շատ ժամանակուայ բան է այդ. ինչ որ լսած կամ՝ էն էլ համարեա մոռացել էլ եմ:

—Բայց գուցէ լսած լինես, թէ ո՛վ սպանեց վաճառականին, — հարցրեց Լևսենովը:

—Ի հարկէ նա կլինէր սպանած, ում պարկում որ դանակը գտնուել է: Եթէ նոյն իսկ ուրիշն էլ լինէր այդ դանակը ծածուկ քո պարկի մէջ դրած, բայց ով չի բռնուել — նա գող չէ: Եւ վերջապէս, ի՞նչ կերպով նա կարող էր դանակը պարկիդ մէջ դրնել. չէ՞ որ պարկը գլխիդ տակն էր, դու կիմանայիր:

Լևսենովը լսելուն պէս այդ խօսքերը՝ մտածեց, որ հէնց այս մարդն է վաճառականին սպանողը: Վա վերկացաւ և հեռացաւ: Եւ օրն Լևսենովն ամբողջ գիշեր չը կարողացաւ քնել: Տխրութիւնը պատեց նրան և նրա աչքին սկսեցին զանազան պատկերներ ներկայանալ անցեալից: Վա տեսնում էր իր կնոջը այնպէս, ինչպէս որ էր՝ նա իրեն դէպի տօնավաճառը ճանապարհ ձգելիս — առօր, առօր ռա աշխոյժ. տեսնում էր նրա երեսն, աչքերը. լսում էր, թէ ինչպէս նա խօսում էր նորա հետ ու ծիծաղում: Յետոյ ներկայանում էին Լևսենովին իր որդին այնպէս, ինչպէս որ նրանք առաջ էին — փոքրահասակ, մատղա՛շ, մէկը մուշտակը հագին միւսը դեռ ծծկեր: Վա յիշեց և՛, իրեն՝ իւր նախկին դրութիւնը — ուրախ, զուարթ, երիտասարդ. յիշեց՝ թէ ի՛նչպէս իջեանում, որտեղ նրան ձերբակալեցին, նստած դռան առջև կիթառ էր ածում և ի՛նչպէս նրա սիրտն այդ բոպէին ուրախ էր: Վա յիշեց — և այն պատժի հրապարակը որտեղ նրան մըտրակով թակեցին, յիշեց դահճին, շրջապատող ժողովրդին, յիշեց շղթաները, կալանաւոր ընկերներին, իր 26 տարուայ տաժանակիր աշխատանքների ենթարկուած ողբալի կեանքը, իր ծերութիւնը յիշեց և արտասուեց: Եւ տխրութիւնը այնպիսի պատեց նրա սիրտը, որ մօտ էր ինքն իրեն սպանելու:

— Եւ այս բոլորն այդ չարագործի պատճառով, — մտածեց նա:

Եւ այնպիսի մի ատելութիւն դէպի Սակար Սեմեօնովն տիրեց նորան, որ նորա համար բաղձանք դառաւ վրէժ առնել նրա-

նից թէպէտ և վրէժխնդրութիւնը իրեն կորուստ պատճառի: Վա ամբողջ գիշերն աղօթք անելով անցկացրեց, բայց դարձեալ չը կարողացաւ հանդարտուել: Յերեկները նա չէր մօտենում Սա-կար Սեմեօնովին և չէր նայում նրա վերայ:

Մայակէս անցաւ երկու շաբաթ: Գիշերներն Մկսենովի քունը չէր տանում: Վրան պատում էր այնպիսի մի տրտմութիւն, որ չգիտէր ինչ անի:

Սի անգամ, գիշերը, բանտի միջովն անցնելիս՝ Մկսենովը նկատեց, որ թախտի տակից հող էր թափվում: Վա կանգնեց և սկսեց նայել: Հանկարծ թախտի տակից դուրս վաղեց Սակար Սեմեօնովը և գունամափ գէմքով նայեց Մկսենովին: Մկսենովն ուզեց անցնել, որպէս զի նրա երեսը չտեսնէ, բայց Սակար Սեմեօնովը բռնեց նրա ձեռքից և պատմեց, թէ ինչպէս ինքը պատի տակովն արդէն անցք է բացել և ինչպէս ամեն օր, երբ նրանց դուրս են տանում բանելու, հողը կօշիկների ճիւղերի մէջ լցրած՝ դուրս է կրում և թափում փողոց:

— Սիայն ձէն-ծպտուն չհանես, ծերո՛ւկ, ես քեզ էլ կազատեմ: Իսկ եթէ, բան է, կասես, ի հարկէ ինձ մօրակի տակ կ'մեռցնեն, բայց լա՛ւ իմանաս, որ ես քեզ չեմ ներիլ առաջուց կսպանեմ:

Մկսենովը տեսնելով իր կեանքը տուժողին բարկութիւնից ամբողջ մարմնով դողաց: Վա դուրս խլեց իր ձեռքն ու ասաց.

— Նս ազատուելու կարիք չունիմ, իսկ սպանելը ինձ աւելորդ է: Գու ևնձ վաղուց արդէն սպանել ես: Իսկ թէ ես կ'յայտնեմ կամ չեմ յայտնել քո այդ արարմունքը—այդ էլ թէ Մս տուած ինչ միտք կտայ:

Սիւս օրը, երբ աքսորեալներին դուրս բերին բանելու, զինուորները նկատեցին, որ Սակար Սեմեօնովը հող էր թափում փողոց: Իսկոյն սկսուեց խուզարկութիւն բանդի մէջ և անցքը գտան: Սեծաւորն եկաւ բանտ և սկսեց հարց ու փորձ անել թէ ո՞վ էր բացել անցքը: Մենքն էլ ուրացան: Վրանք, որոնք տեղեակ էին, չէին մասնում Սակար Սեմեօնովին, որովհետեւ գիտէին, որ այդ բանի համար նրան մտրակով կ'իսամեռ կանէին: Սերջը մեծաւորը դարձաւ Մկսենովին: Վա գիտէր, որ Մկսենովն արդարաւէր մարդ էր:

— Օերո՛ւկ, ասաց մեծաւորը, դու մի ճշմարտախօս մարդ ես. արի՛, գո՛ւ լինես քո Մստուածն, ուղիղն ասա՛— ո՞վ է արել այս բանը:



Սակար Սեմեօնովն իւր թէ բանից անտեղեակ, լուռ կանգնած նայում էր մեծաւորին և աչք չէր դարձնում Ակսենովի կողմը: Իսկ Ակսենովի ձեռքերն ու շրթունքները դողում էին և նա երկար ժամանակ չկարողացաւ ոչ մի խօսք արտասանել: Վաժառակութեամբ, ծածկեմ նորան արդեօք և փրկեմ պատժից, բայց ինչո՞ւ, երբ նա իմ կեանքը մաշեց: Թող իմ տանջանքի փոխարէն նա էլ չարչարուի: Իսկ եթէ յայտնեմ, պարզ է, կիսամեռ կանեն մտրակով, բայց մի՞թէ նորա վերայ ի զո՞ւր եմ կարծիք տանում: Եւ թակեն էլ ի՞նչ օգուտ ինձ, մի՞թէ դրանով սիրտս կը հովանայ, վիճակս կը թեթեւանայ):

Սեծաւորը կրկնեց իր հարցը:

— Զե՛ք, ի՞նչ ես սուս կացել, ծերո՞ւկ, ասա՛ ճշմարիտը, ո՞վ է բացել այս անցքը:

Ակսենովը նայեց Սակար Սեմեօնովին և պատասխանեց.

— Չեմ կարող ասել, տէր, Նստուած չէ հրամայում ասել, և չեմ ասի, ի՞նչ ուզում էք արէք ինձ հետ, — կամքը ձերն է.

Ստիկանն ո՞րքան էլ որ աշխատեց, ճիգը թափեց այնուամենայնիւ Ակսենովը ոչինչ չասեց:

Եւ չիմացան թէ փորողը ո՞վ էր:

Սիւս գիշերը, երբ Ակսենովը պառկեց իր թախտի վերայ և հէնց այն էր որ աչքը նոր էր կպցրել, մէկ էլ լսեց, որ մինը մօտեցաւ իրեն և նստեց իր ոտքերի մօտ: Վա՛ միմեծումը նայեց և ճանաչեց Սակար Սեմեօնովին:

— Ե՛կ ի՞նչ ես ուզում դու ինձանից, ինչո՞ւ համար ես երկել այստեղ:

Սակար Սեմեօնովը լուռ էր. Ակսենովը տեղից վեր բարձրանալով՝ ասաց.

— Ի՞նչ ես ուզում: Զե՛ռացի՛ր, թէ չէ զինուորներին կը կանչեմ:

Սակար Սեմեօնովը թեքուեցաւ դէպի Ակսենովը և շըշընչաց.

— Թողութիւն արա ինձ, Իվան Վիմիդրիեւիչ:

— Բայց ի՞նչ բանի համար թողութիւն անեմ, — ասաց Ակսենովը:

Եւ եմ որ վաճառականին սպանեցի և ես ծածուկ քեզ

քցեցի դանակը: Եւ ուղղում էի քեզ էլ սպանել, բայց գաւթում ձայներ բարձրացան, դանակը դրի անարկիդ մէջ՝ և սպառուհանից դուրս եկայ:

Եկսենովը լուռ էր և չէր իմանում, ինչ ասել:

Սակար Սեմեօնովը ցած իջաւ թախտից գլուխ վերբերեց մինչև գետին՝ և ասաց.

— Թող ինձ իմ մեղքը Իվան Գիմիդրիեւիչ, ի սէր Աստուծոյ: Կը յայտնեմ, որ վաճառականին ես եմ սպանել և քեզ կազատեն. դու կը վերադառնաս տուն:

— Քեզ համար այդ հեշտ է ասել, բայց ինձ հեշտ է տանջանքիս դիմանալ: Ո՞ր գնամ ես այժմ... կինս մեռել է, որդիքս մոռացել են ինձ. ես էլ գնալու տեղ չունեմ...:

Սակար Սեմեօնովը գետնից վեր չէր կենում: Գլուխը գետնին էր զարկում ու ասում.

— Կերի՛ր, Իվան Գիմիդրիեւիչ, երբ ինձ մորակով թակում էին, աւելի հեշտ էր ինձ դիմանալ քան թէ այժմ՝ քեզ վերայ նայելիս...: Իսկ դու դեռ խնայեցիր և չը մատնեցիր ինձ: Կերի՛ր, ի սէր Քրիստոսի, ների՛ր անիծեալ չարագործիս:

Եւ Սակար Սեմեօնովը սկսեց հառաչել:

Եկսենովը տեսնելով, որ Սակար Սեմեօնովը լալիս է, ինքն էլ լաց եղաւ ու ասաց.

— Թող Աստուած թողութիւն տայ քեզ գուցէ ես հարիւրապատիկ աւելի վատթար եմ քեզանից:

Եւ յանկարծ թեթեւութիւն զգաց նորա սիրտը: Եւ նա դադարեց տան մասին դարդ անելուց, էլ բանդից հեռանալ չէր ուղղում և միայն մտածում էր իր վերջին, օրհասական ժամի վերայ:

Սակար Սեմեօնովը ականջ չարեց Եկսենովին և իրեն յանցաւոր յայտնեց: Բայց երբ Եկսենովի տուն վերադառնալու թոյլ տուութիւնը ստացուեցաւ՝ Եկսենովը արդէն մեռել էր...:

Եւ Վասիլիան



# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

## ԾՐԱԳԻՐ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՒԱՔԵՑ ԵՒ ԿԱԶՄԵՑ ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ

« Ով որ կամենում է հասկանալ իւր սեփական կեանքը՝ նա անշուշտ պէտք է ճանաչէ այն յաջորդական աստիճանները, որոց վերայով անցել են նորա հայեացքներն ու սովորութիւնները, մինչև իրանց ներկայ դրութեան հասնելը»:

ՏԷՅԼՈՐ

. . . Խմբագիր, Ձեր խմբագրած Հանդիսի ծրագիրն և նորա Ա. համարում արտայայտուած միտքն ինձ կարծիք են տալիս, թէ ներկայ յօդուածս տեղ կգտնէ Արաբիէ Էջերում: Ես կամենում եմ մի քանի խօսք ասել Գրիգոր Խալաթեանցի զրքին առիթով, որ կրում է վերնագիր՝ «Օրագիր Հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների», Մոսկուայ, 1887: Թէև մեր պարբերական մամուլը արդէն խօսել է նորա մասին, այսու ամենայնիւ մենք մեծ նշանակութիւն տալով Օրագրին՝ կարևոր ենք համարում մեր կողմից մի քանի նկատողութիւններ անել նորա առիթով: Պ. Խալաթեանցի զիրքն, իմ համոզմամբ, կարևոր տեղ պիտի բռնէ մեր հրկրի և ժողովրդի զիտական ուսումնասիրութեան պատմութեան մէջ. իսկ ներկայումս նա ընթերցողի մտքում յարուցանում է ամենակենսական և ամենակարևոր խնդիրներ:

Եւ յիշաւի, թէ ի՛նչ ենք ներկայացնում մենք իբրև ազգ, ի՛նչ տեղ ենք բռնում միւս ազգերի շարքում, որտեղից են յառաջ եկել մեր սովորութիւններն և հայեացքները, ի՛նչ աշխարհատեսութիւն ունի մեր ժողովուրդը, ընդունակ ենք մենք արդեօք կատարելագործուելու, թէ, ինչպէս ուրիշ մի քանի ազգեր, հասել ենք մեր դադարման կէտին, և այլն, և այլն.— մեզանից ո՞վ չէ հետաքրքրվում այս խնդիրներով, բայց և ո՞վ կարող է ներկայ ժամանակում գոհացուցիչ պատասխաններ տալ սոցա: Այս խնդիրների անյապաղ լուծումը պահանջում են մեզանից նոյն իսկ կիանքը, մեր ներկայ վիճակը և այն հաւատքն ապագային վերայ, որից մենք զուրկ չենք: Ի՛նչպիսիք մենք ոչ միայն չգիտենք մեր ներկայն, այլ նաև զուրկ



ենք մեր անցեալի արժանահաւատ պատմութիւնից: Ինչ որ մենք այժմ ունինք՝ դրեթէ լիքն է առասպելներով, և բերնից բերան անցած և արժանահաւատութիւնից զուրկ աւանդութիւններով: Այս կերպով մենք, կենդանի ազգ լինելով հանդերձ, մնում ենք միւսնոյն ժամանակ ասես թէ առասպելական ազգ,—չունենալով որոշ անցեալ և զիտակցական ներկայ: Այս բոլորն ամենքին յայտնի է, և արդէն շատերը մեղադրել են մեր զարգացած դասակարգը նորա դատապարտելի անտարբերութեան պատճառով և յիշեցրել են նորան՝ թէ նա պարտաւոր է աշխատիլ հետազօտել, և այլն: Չարմանալին այս է, որ խիստ շատերը մեր զարգացած դասակարգից պատրաստ են իրանց վերայ բարդուած այս ծանր մեղադրութեանց մի մասին յանձնառու լինելու, իրանք իրանց մեղադրելու՝ որ անտարբեր, անգործունեայ են, խղճի խայթ զգալու և դժգոհելու՝ որ չեն կատարել իրանց բարոյական պարտաւորութիւնը—այսինքն այս կամ այն կերպով իրանց լուման տալ յօգուտ իրանց հայրենիքին կամ ընդհանուր մարդկութեան: Իսկ երբ այս զգոյնից և բարի ցանկութեան արտայայտութիւնից յետոյ խնդիրը դալիս է գործելուն, երբ անհրաժեշտութիւնն զգալուց յետոյ կարգը դալիս է ձգտելուն դէպի որոշ նպատակ, այսինքն այն կէտին, որ կաղմում է մտքի և խորհրդածութեան արգասիքը՝ ահա այստեղ մենք այլ ևս թուլանում ենք: Այս երևոյթն այնքան աչքի է զարնում, որ ինքն ըստ ինքեան կարող է նիւթ դառնալ ուսումնասիրութեան: Վիտակցական գործունէութեան յայտարարութեան —կամքի այս պակասութիւնը, նախաձեռնութեան և հաստատամտութեան այս չգոյութիւնը, որ նկատվում են մասնաւոր անհատների մէջ՝ սոքա գուցէ մեր կազմական թերութիւններն են. գուցէ մեր նախորդներից մենք ժառանգութիւն չըստացանք այն յատկութիւնները, որոնցով զերազանցօրէն օժտուած են եւրոպական ազգերը: Այս հարցմունքը կարող է ծաղիլ ոչ միայն մի քանի անհատների, մի խմբի, այլ և ամբողջ ազգի վերաբերութեամբ: Երբև օրինակ մտաբերենք, թէ ի՞նչպէս ենք մենք յայտնում մեր ցանկութիւնները, ինչով ենք բացատրում մեր նկրտումներն այս նշանաւոր ժամանակում, երբ բոլորի հայեացքներն ուղղուած են արևելքի վերայ, երբ

ամենքը պատրաստվում են, կարելի է ասել կազմ և պատրաստ սպասում են ձեռք բերելու ժառանգութիւնն այն ասիական պետութիւններից մէկին, որի մասն ենք կազմում մենք վաղուց: Թեւեալ մեզ ասեն, թէ մեր այս բարոյական թմրութեան պատճառը ժամանակաւոր և անցողական պայմաններն են . . . Թեւեալ այս էլ լինի: Մեզանում ամեն հարցմունքի կարելի է պատասխանել ըստ կամի, որովհետեւ պակասում են մեր մէջ *դրական գիտութիւններ*, որոնք մեր դատողութեանց հիմք լինէին: Միւսնայն ժամանակ չէ կարելի ասել, թէ մենք խոյս ենք տալիս գիտութիւնից, կամ չենք հասկանում նորա նշանակութիւնը. ոչ մենք մինչև իսկ փնտռում ենք նրան. բայց մենք ուզում ենք, որ այդ գիտութիւնն ինքն իրանից գար մեզ գտնէր առանց մեր կողմից աշխատութեան, և երբ պատրաստ ստանում ենք այն ուրիշներից՝ ընդունում ենք իբրև երկնային մանանայ: Մեզանից ո՞վ ամենամեծ յարգանքով չէ նայում այն օտարազգի գիտնականներին վերայ, որոնք հետազօտել են մեզ—մեր լեզուն, պատմութիւնը, վիճակը, միով բանիւ մեզ ծանօթացել են մեզ հետ. միթէ մենք *չէ՞նք* պարզեցնում Մէն-Մարտէնի, Լանգլուայի, Պիլլերի, Զիւպլմանի, Պուտշմիդի, Փր. Միլլէրի և այլոց անուններով, թէպէտ և խիստ քիչ ծանօթ ենք նոցա հետ. բայց այս բաւական չէ. մենք յաճախ իբրև մասունք յարգում ենք որեւէ տեսական, որ խօսում է մեր վերայ, և պատրաստ ենք պաշտել ու փառաբանել նորա հեղինակին, եթէ նա գովում է մեզ, մատնացոյց է լինում մեր լաւ յատկութեանց վերայ և ծածկում է վատերը—հէնց ինչպէս փոքրիկ երեխաներն են անում: Աւարդարեւ շատ գիպուածներում մենք նմանում ենք երեխայի, թէպէտեւ աշխարհի վերայ ապրում ենք ներկայ գրեթէ բոլոր ազգերից աւելի երկար ժամանակ: Ինչպիսի այստեղ հարկաւ նորանում չէ, որ ում և իցէ պարսաւենք և մեղադրենք, որովհետեւ եթէ մի երեւոյթ գոյութիւն ունի՝ նա ունի ուրեմն և իւր գոյութեան բաւական պատճառները. բայց լռելն էլ հարկաւոր չէ, այլ պէտք է աչքի առաջ ունենանք այդ երեւոյթն, և իբրև այդպիսի երեւոյթ՝ դէմը մաքառինք:

Ինչպէս և իցէ՝ մեր զարգացած զասակարգին մէջ վերջին ժամանակներս նկատվում է դարձ այս անհոգ անտարբե-

րութիւնից դէպի լուրջ ինքնուսումնասիրութիւնը, նկատ-  
վում է ձգտում՝ գիտնականապէս ուսումնասիրելու հայ ժողո-  
վուրդն, իբրև պատմական որոշ միութիւն: Մտքերն արդէն  
զբաղվում են այսպիսի ուսումնասիրութեան վերաբերեալ խն-  
դիրներով, երևան են գալիս մասնաւոր հետազոտութիւններ,  
որոնք թէպէտ աւելի յարմար է համարել հետազոտութեան  
փորձեր՝ բայց այնու ամենայնիւ նոքա ապացուցանում են, որ  
մեզանում զարգանում է ճաշակը դէպի գիտական հետազո-  
տութիւնները:

Մասնաւորելով մեր խօսքը էթնոգրաֆիայի (ազգագրու-  
թեան) ուսումնասիրութեան մասին՝ ուսուցչապետ Խալա-  
թեանցի վերոյիշեալ գրքի հրատարակութիւնը նշանաւոր երի-  
ւոյթ է, իբրև յայտարար մեր մէջ զարթած այս գիտակցու-  
թեան՝ թէ մտքի և գործի դաւառնելով անհրաժեշտ է ար-  
գասաւոր աշխատանք յօգուտ մեր և յօգուտ գիտութեան,  
ինչպէս լինում է քաղաքակրթութեան հրկրներում: «Հայ ազգա-  
գրութեան» հեղինակը նոյնպէս իւր յառաջաբանում մատնա-  
ցոյց է լինում այս ուրախառիթ երևոյթին—ժողովրդական  
կեանքի ուսումնասիրութեան երևան գալուն վերայ մեր մէջ:

Եւ ահա որպէս զի այդ հետազոտութիւնները կարողա-  
նային մատակարարել գիտութեան նիւթ, որպէս զի նոցա  
վերայ գործածուած ժամանակն ու աշխատանքն ի զուր չը  
կորսուէին (որ դիւրին կարող է պատահիլ, եթէ հետազոտո-  
յը լաւ ծանօթ չէ այդ գիտութեան ներկայ վիճակին), որպէս  
զի այդ հետազոտութիւնները կատարուէին որոշ ուղղու-  
թեամբ և միևնոյն ծրագրով՝ այս նպատակներին ծառայելու  
համար հրատարակում է Պ. Խալաթեանց իւր գրքոյը: Մենք  
պէտք է շնորհակալ լինինք Խալաթեանցից, որ այսպէս լաւ  
հասկացաւ մեր պէտքերը և խիստ յարմար ժամանակին մա-  
տակարարեց իւր օգնութիւնը մեր երիտասարդ ոյժերին, ո-  
րոնք ցանկանում են աշխատիլ գիտութեան ասպարէզում:  
Բացի այս գրքոյից՝ նա խոստանում է «միւս տարուանից  
սկսել հրատարակել (ինչպէս ընդունուած է Ռուսաց կամ  
Պերմանացոյց մէջ) մի հաւաքածու մասնագիտապէս հայ ազ-  
գագրութեան նուիրած» (Ժէ). և մենք կարծում ենք թէ շա-  
տերն անհամբերութեամբ սպասում են որ յարգելի ուսուցչ-



չապեալը շուտով հրատարակէ իւր մօտ հաւաքուած նիւթերը, ինչպէս խոստացել է:

Հասկանալի է, որ Պ. Խալաթեանցը մենակ, մինչև իսկ մի քանի անձերի աշխատակցութեամբ, չէ կարող շատ բան յառաջացնել, մանաւանդ եթէ այդ աշխատակիցները պատահական սիրաբաններ են. այս գործում բացի հասարակութեան համակրութիւնից զէպի զազաւարը՝ հարկաւոր է և նիւթական օժանդակութիւն և համերաշխ աշխատակցութիւն մեր զարգացած երիտասարդութեան կողմից: Մենք կարծում ենք, որ այսպիսի գործն հարկաւոր է հէնց սկզբից հաստատուն և լայն հիմքի վերայ դնել, որպէս զի նորա հետևանքն էլ զգալի և զրական լինի: Բայց ինչպէս պէտք է այս անել: Այս մասին հարկաւոր է խօսել և արժէ, որ այս խնդրով հետաքրքրուող իւրաքանչիւր ոք պարզէր իւր կարծիքը, արժէ, որ մեր մամուլն իւր պարտաւորութիւնն համարէր ամեն յարմար դիպուածում արծարծել այս յոյժ կարևոր խնդիրը, ինչպէս է մեր կուլտուրայի ուսումնասիրութիւնը, և չթողնէր որ հասարակութեան մէջ նոր զարթած գիտակցութիւնը նորից թմրի:

Օրագրի մասին մի քանի կարծիքներս յայտնել կամենալով՝ նախ և յառաջ հարկ եմ համարում յայտարարել, որ ես դիտաւորութիւն չունիմ մանրամասնօրէն քննելու այդ դրբոյկը, որովհետեւ նախ որ ինքս անձամբ մասնագիտապէս պարապած չեմ էթնոգրաֆիայով, և երկրորդ որ ես կարծում եմ, թէ այդպիսի մի ծրագիր ինչպէս կազմելը, նոյնպէս և մանրամասնօրէն քննադատելը կարելի է միայն հաւաքական ոյժերով և ժամանակի փորձով: Այս խնդրում ես բոլորովին ընդունում եմ Պ. Խալաթեանցի հեղինակութիւնն, և եթէ ինձ թոյլ եմ տալիս մի քանի դիտողութիւններ անել նորա գրքոյկի մասին՝ իմ միմիայն նպատակս է այս ընդհանուր խնդիրը աւելի բազմակողմանի կերպով քննել, և պարզել այն մի քանի թերիմացութիւնները, որոնք ծագում են վերոյիշեալ գիրքը կարդալիս: Բոլորովին հասկանալի է Պ. Խալաթեանցի յայտարարութիւնը, թէ «... շատ հարցեր մեր Օրագրում կարող են պակաս լինել, որ առաջանում է զլիաւորապէս հաւաքուած նիւթերի պա-

կատութիւնից, կգանուին և այնպիսիք, որոնք աւելորդ են: Այս բոլորը՝ այլ պահասորւոյնի հետ կբարեփոխուին ու կը լրացուին երկրորդ տպագրութեան միջոցին: Այսպէս կարող չէ լեհաստան լինել այսպիսի ծրագիրը» (ԺԴ). և հարկաւ թերութիւններ ու սխալներ կարող են պատահիլ ոչ միայն առաջարկուած մասնակի հարցմունքներում, այլ և ընդհանուր դրութիւններում:

Նախ և յառաջ տարակոյս կարող է ծագեցնել, և յիշատակի ծագեցնում է, Պ. Խալաթեանցի զբոյժի նոյն իսկ վերնագիրը, իսկապէս ի՞նչ է նշանակում «Օրագիր հայ ազգագրութեան», եթէ կարող է լինել հայ ազգագրութիւն, ուրեմն կան և գերմանական, ֆրանսիական, անգղիական և ըն ազգագրութիւններ, մինչդեռ ազգագրութիւնը (էթնոգրաֆիան) գիտութեան մի ճիւղ է, և ինչպէս իւրաքանչիւր գիտութիւն՝ չէ կարող պատկանիլ որեւէ ազգի: Իսկ եթէ «հայ ազգագրութիւն» խօսքով պէտք է հասկանալ «հայոց ազգագրութիւն»՝ այս հասկացողութիւնն ևս պայմանական է. որովհետեւ ազգերի վերաբերեալ այն գիտութիւնները, որոնք համառօտապէս յիշում է Պ. Խալաթեանց իւր յառաջաբանի սկզբում՝ միմեանցից խիստ որոշակի չեն տարբերվում, և հեղինակները միատեսակ չեն սահմանում էթնոգրաֆիան (ազգագրութիւնը) էթնոլոգիան (ազգաբանութիւնը), և նոյն իսկ անթրոպոլոգիան (մարդաբանութիւնը): Չոր օրինակ Պ. Խալաթեանցն ասում է. (եր. և. դ.) «Մինչդեռ ազգագրութիւնը ուսումնասիրում է ազգերի ցեղական տարբերութիւնները՝ մարդկային սեռի տեղադրական տարածման հետ միասին, նորա ծագումը, բնակութեան տեղը և նորա ֆիզիկական կեանքը պայմանաւորող նիւթական պարագաները, — ազգագրութիւնը իւր ուսումնասիրութեան առարկան չէ սահմանափակում՝ ազգերի կեանքի ֆիզիկական երևոյթներով միայն, այլ գիտում ու քննում է նաև նոցա հոգեկան շարժումներն ու արտագրութիւնները. նա հետազոտում է մարդկութիւնը կազմող ազգերի առանձնաշատութիւնները, ջանք է անում ճանաչել ազգային ողին, որ երևան է դալիս լեզուի, հաւատքի, բարք ու սովորոյթի, ժողովրդի անարուեստ բանաւոր գրականութեան, որպէս և նորա իրաւաբանական սովորութիւնների մէջ»: Աս գիտմամբ

արտագրեցի այս երկար հատուածը, ի միջի այլոց այս նպատակով, որպէս զի այն ընթերցողներին, որոնք Պ. Խալաթեանցի զիրքը դեռ չեն կարդացել՝ ցոյց տամ, թէ որչափ հետաքրքրական է մեզ համար այս առարկան, որը նա յանձնարարում է մեր հասարակութեան ուշադրութեանը: Վերոգրեալ հատուածից պարզ երևում է, որ Պ. Խալաթեանց «ազգազրութեան» (էթնոգրաֆիա) տալիս է հետազոտութեան աւելի ընդարձակ պարունակ, քան «ազգազրութեան»<sup>1)</sup> (էթնոլոգիա), մինչդեռ, օրինակի համար, Տոպինար իւր Անթրոպոլոգիայի յառաջաբանում<sup>2)</sup> այլևայլ զիտնականների կարծիքները մէջ բերելուց յետոյ ասումէ. «1866 թուին Բրոկիս այսպէս սահմանեց էթնոլոգիան. «Մարդկային ցեղերի մասնական նկարագրութիւն և սահմանում, հետազոտութիւն նոցա նմանութիւններին և տարբերութիւններին, թէ նոցա ֆիզիկական կազմութեան և թէ մտաւորական և հասարակական զարգացման վերաբերութեամբ, հետազոտութիւն նոցա իսկական ազգակցութեան և նոցա դասակարգութեան ներկայումս և անցեալում, նոցա պատմական կոչման և նոցա համայնական գրութեան մարդկային ցեղի շարքերում—ահա սոքա ևն անթրոպոլոգիայի այն մի մասին առարկան, որ կոչւում է էթնոլոգիա»»: Նորա ազգիւնները, որոնցից քաղում է տեղեկութիւններ՝ բաղմամբ ևն. ի միջի այլոց, նա առնում է նիւթեր էթնոգրաֆիայից, որ է նկարագրութիւն ազգերի:

Լիարէի տուած սահմանը համապատասխանում է այս բոլոր բառակազմական իմաստին. «Էթնոգրաֆիան, ասում է նա, այն գիտութիւնն է, որ առարկայ ունի այլևայլ ազգերի հետազոտութիւնն ու նկարագրութիւնը. իսկ էթնոլոգիան քննում է ազգերի ծագումն և դասակարգութիւնը»:

Տրիգրիս Միլլէրի կարծիքով անթրոպոլոգիայի դործն

1) Պարծում եմ, որ եթէ առհասարակ հարկաւոր համարուի թարգմանել աւելի նպատակայարմար կլինէր . . . ποτρία վերջաւորած բառերը (յունական λόγος = բան բառից) թարգմանել . . . բանութիւն, (zoologia — կենդանաբանութիւն, ethnologia — դիցաբանութիւն, anthropologia — աստղաբանութիւն, ևն): Սա թէ լեզուաբանութեան ճիշտ կլինէր, և թէ ամենուրեք միօրինակութիւն կպահանջէր այս բառերի գործածութեան մէջ, մանաւանդ մեր լեզուի ներկայ վիճակում, երբ պէտք է մեծ զգուշութեամբ և խնայողութեամբ գործածենք մեր բառերն և բառական նորակազմութիւնները:

2) Մուսերէն թարգմ. հրատ. 1879 թ. Երես 7 և յաջ.



է ցեղերի Հետազօտութիւնը, իսկ էթնոլոգիայի առարկան է ազգերի Հետազօտութիւնը: Արդէն Ահտամ ապացուցել էր, թէ էթնոլոգիան՝ փիլիսոփայական, իսկ էթնոգրաֆիան՝ նկարագրական մասն են կազմում ազգերի զիտութեան: Վերև յիշատակուած Տոպինար յայտնում է այս կարծիքը, թէ «անթրոպոլոգիան և էթնոլոգիան կազմում են մարդի Հետազօտութեան տարբեր կողմերը միայն երկու ահալս զիտութիւններ են նոքա, որ իւրաքանչիւր քայլափոխում միմեանց մատակարարում են երկուստեք օգնութիւն: Անթրոպոլոգիան պարագում է մարդի և մարդկային ցեղերի բնական պատմութեամբ, որոնք նա ինքն է բաժանում այլ և այլ ցեղերի: Իսկ էթնոլոգիան զբաղվում է տոհմերով և ժողովուրդներով՝ այն ձևով ինչպէս որ տալիս են աշխարհազրութիւնն և պատմութիւնը. նա բաժանվում է երկու մասի.—էթնոգրաֆիա, որ նկարագրում է ամեն մի ազգ, նորա բարքը, սովորութիւնները, կրօնքը, լեզուն, ֆիզիկական յատկանիշները և պատմական ծագումը, և բուն էթնոլոգիա, որ զննում է նոյն կողմերը միասին առնուած, բոլոր ազգերի կամ զոնէ մի քանի ազգերի վերաբերութեամբ»:

Վերջիշեալ Հեղինակաւոր անձերի կարծիքները մէջ բերելով ևս կամեցայ ցոյց տալ, որ Հասարակօրէն ընդունվում է, թէ էթնոգրաֆիան է կազմում մօտ էթնոլոգիայի, և ոչ ընդհակառակն, ինչպէս կարելի է մակաբերել Պ. Խալաթեանցի Հասուածից, որը վերևում ներս բերի: Բայց ինչպէս և իցէ՞ ամենքը, որոց թուում և Պ. Խալաթեանց, էթնոգրաֆիայի առարկայ են համարում ազգերի ֆիզիկական տարբերութեանց և «ֆիզիկական կեանքը պայմանաւորող պարագաների» Հետազօտութիւնը, որոնք ընդարձակ պարունակ ունին:

Սորանից հետևում է, որ չէ կարելի երևակայել մի ժողովրդի էթնոգրաֆիական նկարագրութիւն «ինչպէս մի վերացական երևոյթ», բայց անբաժան այն տեղից, որ բռնում է ժողովուրդն երկրի վերայ: Ուստի և էթնոգրաֆիա բառը, թէև բառացի նշանակում է ազգերի նկարագրութիւն, բայց, ինչպէս Հասկացողութիւն, իսկապէս վերաբերում է տեղի և զաւառի. իսկ այս Հասկացողութեան մէջ ինքն ըստ ինքեան մանում է և զազափարը այս ինչ ազգի կամ ազգերի մասին, որոնք

բնակում են այս ինչ տեղում: Այս պատճառով չէ կարելի  
ասել «Այցոց ազգագրութիւն», որովհետեւ Այսիրը չեն ապրում  
մի որոշեալ տեղում, և չեն կազմում մի որոշ խումբ, այլ ու-  
րիշ ազգերի հետ խառն ապրելով կմտնեն այս ինչ տեղի  
էթնոգրաֆիական նկարագրութեան մէջ, օրինակ Աովկասի,  
Պարսկաստանի, Տաճկաստանի և այլն: Վուցէ ես սխալվում  
եմ, բայց ինձ թուում է, թէ ինչպէս որեւէ տեղի բուսական  
և կենդանական ամբողջութիւնը (Ֆլորա և Ֆաունա) անշուշտ  
ս'րտ կապուած են այն տեղին հետ՝ նոյնպէս և ազգերի նկա-  
րագրութիւնն, այսինքն էթնոգրաֆիան:

Արգարև յարգելի հեղինակն իւր գրքում այս խնդիրնե-  
րին վերայ միայն հարեանցի ակնարկ է ձգում, իւր յառաջա-  
բանում մի քանի խօսքով բացատրելով էթնոլոգիայի և էթ-  
նոգրաֆիայի գաւառները. — նորա առաջադրած նպատակը բո-  
լորովին ուրիշ է: Բայց ես զիտմամբ կանգ առայ այս խըն-  
դիրներին վերայ՝ որպէս զի յայտնեմ այս միաբը, թէ զիտու-  
թիւնը, այսպէս ասած, ևւրոպական հողից մեր հողին վերայ  
փոխադրելիս՝ ցանկալի է որ տեղի չունենային տարաձայնու-  
թիւններ մինչև իսկ մանրամասնութեանց մէջ: Մինչև իսկ  
ես կարծում եմ, թէ «էթնոգրաֆիա» և «էթնոլոգիա» բառերի  
թարգմանութիւնն իսկ աւելորդ է, այս բառերը գործ են ա-  
ծում բոլոր ևւրոպական ժողովուրդները, և սոցանով հասկա-  
նում են մի որոշ գաղափար, մի յայտնի զիտութիւն, իսկ  
թարգմանութիւնս՝ նոքա կարող են չտալ բոլորովին միևնոյն  
նշանակութիւնը:

Աւելի ցանկալի է որ մեր ինքնուրոյնութիւնը երևէր  
այս և այն զիտութեան առաջարկած խնդիրների մշակութեան,  
և ոչ թէ այդ զիտութեան անունների թարգմանութեան  
մէջ:

Պ. Խալաթեանցը իւր յառաջաբանում բոլորովին համո-  
զողաբար ապացուցանում է, թէ «ոյքան կարևորութիւն ունի  
էթնոգրաֆիան մեզ համար» և ի՛նչ գործնական հետեանքներ  
կարող է ունենալ մեզ համար մեր ազգի զիտական ուսումնա-  
սիրութիւնը, յիշում է, թէ «ոյքան մեծ բարոյական պարտա-  
կանութիւն կայ ամեն մի կրթուած հայ մարդու վերայ այս  
անհրաժեշտ գործը կատարելու», թուում է այն զրուածքները,

որոնք պարունակում են նիւթ հայ էթնոգրաֆիայի ուսումնասիրութեան համար, (մանաւանդ Հ. Սրուանձտեանի նշանաւոր երկասիրութիւնները), և աւելցնում է, «սակայն պէտք չէ չափազանց դադափար կազմել այն քանակութեան մասին, ինչ որ արած է մեր ազգագրութեան համար. այս՝ գործի սկիզբն է միայն և լաւ սկիզբն, որին հարկաւոր է այս գլխից կանոնաւոր ընթացք առնել: Հայ ազգագրութիւնը այնքան լայնածաւալ է, այնքան ճոխ և առատ բազմատեսակ նիւթերով, որ մինչև այսօր արածը՝ կարելի է ասել, նորա ամենաաննշան մասն է և այն՝ նկատելի թերութիւններով» (Ժ): Յետոյ հեղինակը ապացուցանելով, թէ նրբափ միակողմանի և անկարգ են մինչև այժմ պատրաստուած նիւթերը, որոնք հաւաքել են ոչ թէ գործին հմուտ մասնագէտ անձինք, այլ պատահական սիրաբաններ՝ այս հետեանքին է դալիս, թէ գործին յաջողութեան համար անհրաժեշտ է, որ էթնոգրաֆիայի համար նիւթեր հաւաքէին «գիտնական պատրաստութիւն ունեցող, գործին տեղեակ անձինք՝ մասնագէտներ»... «պէտք է որ մեզանում կրթուած, բարձր ուսում ստացած երիտասարդները համակրէին հայ ազգագրութեան գործին և ինքեանք անմիջապէս նիւթեր հաւաքելու պարապէին՝ ամենը իւր մասնադիտութեան մասին, շրջելով գիւղից գիւղ, դաւառից դաւառ: Աւելի օգտաւէտ կլինէր և հաճելի, եթէ այդ աղնիւ զբաղմունքը կատարուէր խմբով, ընկերակցութեամբ»: Բայց որովհետեւ, հեղինակի կարծիքով, մեր երիտասարդութեան մէջ այս ձգտումը կարող է յառաջ դալ ոչ թէ իսկոյն մէկ անգամից, այլ հետզհետե՝ ուստի այս գործը փութացնելու և «սիրաբան հաւաքողներին և մասնագէտներին» աշխատանքը դիւրացնելու համար՝ նա առաջարկում է իւր Օրագիրն իբրեւ «առաջին փուլ»: Նա կրկնում է, և կարծեմ չափազանցութիւն արած չեմ լինիր, ասելով, որ ամեն մէկը, կարգալով այս Օրագիրը՝ խորին շնորհակալութիւն կ'մատուցանէ Պ. Խալաթեանցին նորա այս պատուական գործին համար, և մանաւանդ այս պատճառով, որ նա արծարծեց Հայոց էթնոգրաֆիայի դիտական ուսումնասիրութեան նոյն իսկ խնդիրը: Սակայն ես ամենևին չեմ կարող համաձայնել Օրագրի պատուարժան հեղինակին այս խօսքերին հետ. «Մենք կցանկայինք,



որ այս ծրագիրը զրաւէր ճանապարհ մեր զաւառական ուսուցիչներին ուշադրութիւնը, որոնք՝ մեր կարծիքով ամենքից աւելի ձեռնհաս են այժմ այսպիսի մի ձեռնարկութիւն իրագործելու... «Մենք յոյս ունինք նաև մեր Համալսարանական և այլ բարձր ուսում ստացող երիտասարդութեան վերայ, որ նոյնպէս մեծ ծառայութիւն կարող էր մատուցանել ընդհանուր գործին, եթէ իւր պարապմունքից ազատ ժամանակի մի մասը (ամառուայ արձակուրդին՝ հայրենիք եղած ժամանակ) նուիրէր ծրագրի որևէ բաժնի ուսումնասիրութեան» (երես ժթ): Այս մէջ բերուած հատուածն հակառակ է այն մտքին, որ նախապէս յայտնել էր Պ. Խալաթեանը, թէ «հարկաւոր է այս զլխից կանոնաւոր ընթացք տալ: Հարցը պարզեւր Համար արժէ փոքր ինչ կանգ առնել այս էական կէրին վերայ: Որովհետև հեղինակն իւր Ծրագիրը կազմելիս աչքի առաջ ունեցել է հէնց յիշեալ սիրաբաններին (կարծեմ այլապէս չէ կարելի կոչել «զաւառական ուսուցիչներին և համալսարանական և այլ բարձր ուսում ստացող երիտասարդութիւնը») ուստի բոլորովն հասկանալի է, որ Պ. Խալաթեանցն ստիպուած է հրահանդ տալ նոցա, թէ առ հասարակ ինչպէս պէտք է հաւաքել տեղեկութիւններ (եր. ժէ, ժը): Նա, զոր օրինակ նախադրուշացնում է, թէ անհրաժեշտ չէ, որ ծրագրի իւրաքանչիւր հարցմանին անշուշտ պատասխան գրուի, չնայելով որ այս հարցմունքները 500-ից աւելի են, որոց մէջ կան այնպիսիները, որոնք պահանջում են մասնադիտական պատրաստութիւն, և իւրաքանչիւր զարգացած մարդ կարող է նկատել, որ սա մէկ անհատի յոյժից վեր է: Նոյնպէս որ այս տեղեկութիւնները պէտք է հաւաքել «ամենայն ճշտութեամբ և բարեխղճութեամբ», թէ պէտք է կարգով կատարել և ոչ թէ ցիրուցան նկարագրել, թէ տեղեկութիւնները պէտք է հաւաքել անմիջապէս ժողովուրդից և ոչ թէ ի լըոյ, թէ «պէտք է համբերութեամբ հարցուփորձ անել և զգուշանալ որ չխաբեն, թէ մեծ ուշադրութեամբ և յարգանքով պէտք է վերաբերուիլ բոլոր տեղեկութիւններին, որ ինքն կժողովէ անմիջապէս, թէ հարկաւոր է գրել այն, ինչ որ է, և ոչ թէ այն, ինչ որ պէտք է լինի բանահաւաքի կարծիքով»: Հասկանալի է, որ այս հրահանգներն աւելորդ են նոցա համար, որոնք ընդ-

Հանրապէս զիտան Հաւաքել զիտական նիւթեր. իսկ չգիտցողներին Համար՝ այս Հրահանգները միւսնոյն է կիման լոկ խօսքեր: Բոլորովին տարբեր բաներ են, մէկ կողմից ասելը և Հասկանալը, թէ այն նիւթերն են յարգի, որոնք Հաւաքուած են ամենայն ճշտութեամբ և բարեխղճութեամբ, և միւս կողմից՝ նոյնը դործադրելը:

Ինձ անշուշտ Հարկ չէ յիշել Պ. Խալաթեանցին, թէ էթնոգրաֆիայի, էթնոլոգիայի ևն Համար նիւթեր Հաւաքելը այնքան զիւրին չէ, և թէ մինչև իսկ ոչ ամեն մի՝ որևէ առարկայում մասնագէտ անձ կարող է այս անել, մինչև անգամ իւր առարկային Համար նիւթ Հաւաքելը: Այսպիսի մասնագէտն Հարկաւ աւելի շուտով կրնոյ լինայ գործին, քան բոլորովին անՀմուտը. բայց դարձեալ այստեղ Հարկաւոր է առանձին մասնագիտութիւն, այսինքն Ժողովրդի կեանքի նիւթեր Հաւաքելու Հմուտութիւն: Ուրեմն և աւելի զժուար է այս գործը սիրաբանին Համար, որ «ի միջի այլոց, գործերից Հանգչելու Ժամանակ», իւր բաւականութեան և Ժամանակ անցկացնելու Համար պիտի ձեռնարկէ զիտական գործ կատարելու: Ահա այստեղ խնդիր է ծագում, որ եթէ այսպիսի նիւթերն Հաւաքուին գործին անՀմուտ և չպատրաստուած անձերի ձեռքով՝ արդեօք սա խառնաշփոթութիւն չի՞ յառաջ բերեր, որ յետոյ մեծ աշխատանքով Հարկ կլինի պարզել կարգաւորելը: Այս Հեռեանքը ոչ միայն կարելի, այլ և անխուսափելի է, որովհետև ոչ միայն նիւթեր Հաւաքելու Համար Հարկաւոր է ընդհանուր զարգացում, բայց և այս պատճառով, որ Օրագրի մէջ կան շատ Հարցմունքներ, որոց պատասխանելու Համար անհրաժեշտ են մասնագիտական գիտութիւններ. կան և այնպիսիներ, որոնք թէպէտ ըստ Երևոյն շատ պարզ են և նոյա պատասխանելը շատ զիւրին, որ կարող է անել սիրաբանն առանց մասնակի պատրաստութեան՝ բայց իրօք շատ զժուար են: Օրինակի Համար առնենք Օրագրի 3 երեսից Հեռեալ Հարցմունքները. «Մը Հասակը Համեմատաբար աւելի յաճախ է պատահում բնակիչների մէջ և չկայ արդեօք այդ մասին առանձին տարբերութիւն աղամարդոց և կանանց մէջ, սրպէս և զանազան դասակարգի մարդոց մէջ: Պրքան յաճախ են պատահում սովորականից երկար կամ

սովորականից կարճ հասակի մարդիկ» (յօդ. 8): Այստեղ նախ  
և յառաջ կատարելապէս պարզ չէ, թէ ինչն է վերաբերում  
«համեմատաբար» բառը առաջին նախադասութեան մէջ: Հե-  
տադասուելու դաւառի բնակիչների հասակը ուրիշ ի՞նչ բանի  
հետ պէտք է համեմատել: Եթէ իւրաքանչիւր հետադասող  
իւր համեմատութեանց համար միջին չափ վերցնէ միջակ  
հասակն այն դաւառին, որտեղ ապրում է սովորաբար, և գոր-  
ծածէ հեռեեալ անորոշ համեմատութիւնները—միջակ, միջա-  
կից բարձր, բարձր ևն հասակ—այն ժամանակ այս որոշումները  
իւրաքանչիւր հետադասողի մօտ տարբեր մեծութիւններ կը  
նշանակեն: Նոյնն և աւելի մեծ իրաւունքով կարելի է ասել  
և այն հետադասողների մասին, որոնք էթնոգրաֆիական նիւ-  
թեր ևն հաւաքում այլ և այլ երկիրներում, օրինակ Սովկա-  
սում, Տաճկաստանում, Հնդկաստանում, Ամերիկայում: Ուս-  
տի և արժէք չեն կարող ունենալ այս կերպով հաւաքուած  
նիւթերից դուրս բերուած հետեանքները: Չոր օրինակ, եթէ  
ես երկար տարիներ ապրում եմ «Վետերբուրգում» երկարժա-  
մանակեայ տպաւորութիւններով ես ոչ ոք դադարեմ եմ կազ-  
մում միջակ հասակի մասին. ամսօր ես վերադառնում եմ  
մի գիւղ, և այստեղ աչքիս կարող են ընկնել մի քանի հաճ-  
մասքաբ բարձր կամ կարճ հասակներ, և ահա ես նկատ-  
ողութիւն եմ անում, թէ այս ինչ տեղի բնակիչների մեծա-  
մասնութիւնը այս ինչ հասակն ունի: Այսպիսի նկատողու-  
թիւններն անտարակոյս մեծ արժէք չեն կարող ունենալ:  
Իսկ համարենք, թէ ես շատ շրջանկաւ եմ իմ նիւթ հա-  
ւաքելիս, շատ զգուշաւոր եմ հետեութիւններ հանելիս և  
հիմնվում եմ թուանշանների փաստերին վերայ. այս դէպքում  
ես ոչ միայն հաղորդում եմ իմ անդիտակցաբար ստացած  
նկատողութիւններից հանուած հետեութիւնները, բայց և  
բերում եմ ապացոյցներ, որոնցով իւրաքանչիւր ոք կարող է  
ստուգել իմ այս ինչ նիւթագրութեան ճշտութիւնը: Աւելի  
յառաջ երթանք. համարենք թէ ես մասնագէտ եմ գիտութեան  
որեւէ ճիւղում, օրինակ բժիշկ եմ կամ բժշկութեան ուսանող.  
այս դէպքում, հասակի վերայ խօսելիս, ես մէջ եմ բերում  
թուանշաններ, թէ այս ինչ տեղում այսքան անհատների հա-  
սակները չափուած են. միջակ հասակն այսինչքան է. մարմնի



այսինչ մասի (յօդ. 9) համեմատական երկայնութիւնը այս ինչքան է եայլն: Բայց բաւական է արդեօք այս: Նախապէս կարելի է մակաբերել, թէ ոչ միայն երկու, այլ և միւսնոյն հետազոտողին մօտ միւսնոյն տեղում տարբեր թուեր կստացուին: Որովհետեւ թէպէտ դիւրին է հասակի երկայնութիւն չափելը, բայց պէտք է ծանօթ լինել այն «մէթըն» (методъ) հետ, որոնք մշակուած են մասնաւորապէս անթրոպոլոգիայի, էթնոգրաֆիայի եւ այլն համար, որոնք բոլոր հետազոտութեանց մէջ մտցնում են ֆու-նկ-ն, և ստանց որոյ անկարելի է որեւիցէ գիտական հետեւութիւններ հանել: Ուրեմն և բժիշկը պէտք է քանօշմանայ, թէ ինչպէս պէտք է չափել մարդի հասակը, պատկանձ, նստանձ, ո՞ր կէտից մինչև ո՞ր կէտը, մէկ խօսքով նա պէտք է զիտնայ ճշգրտան կէտերը, որտեղից որ պէտք է չափել: Իսկ հակառակ դէպքում, որչափ որ ըստ Երևոյնի ճշգր լինի հետազոտութիւնն՝ այնքան աւելի վատ, որովհետեւ առ երկայթ ճշտութիւնը (թուանշանները) դիւրաւ կարող է աչք խաբել, որով և աւելի դժուար կլինի ուղղել նորա մէջ սարդած սխալները: Եթէ այսպիսի խնդիրներ լուծելիս հարկաւոր է ծանօթ լինել հետազոտութեան ոճին՝ որչափ աւելի դժուար է ժողովրդի մտաւոր և բարոյական կեանքի հետազոտութիւնը կամայական հայեցակէպից: Այսպիսի օրինակներ կարելի է շատ բերել՝ Օրագրի հարցմունքներից, բայց պարզութեան համար ես մէջ կբերեմ մի քանի ամենահասարակները, մի կողմ ժողոնելով միւսները, որոց մասին պէտք կլինէր աւելի երկար խօսել: 28-րդ երեսում, 111-րդ յօդուածում կարգումենք այս հարցմունքները, ժրաժշտական դործիքներ, թէ ի՞նչ նիւթից ինչպէս են պատրաստվում, և ինչ յատկութիւն ունի սոցանից հանած ձայնը (սուր, խուր, ախորժ, անախորժ ևն), նոյնպէս և հետեւալ յօդուածում, երգեցողութեան մասին, հարցվում է. «Ի՞նչ յատկութիւն ունի երգը, ուրախ, թէ տխուր» ևն. 300-րդ երեսում 121-րդ յօդուածում հարցվում է. «Ի՞նչ դաղափար ունի ժողովուրդը քաղ-ոյ և չափ, ճշմարտութեան և ստութեան, բարեպաշտութեան և ամբարշտութեան, աղնոտութեան և ստորութեան վերայ» եւ այլն: Այս հարցմունքներին պատասխանը կախուած է անձնական ճշտակից կամ հայեցակէպից ինչ որ մէկին ախորժ է թուում՝ միւսին

կարող է անախորժ երևալ, և ժողովրդական միենոյն երգին համար մէկը կասէ՝ ուրախ է, միւսը՝ թէ տխուր: Նոյնը կարելի է նկատել և այն վերացական հասկացողութեանց մասին, ինչպէս են բարի և չար, բարեպաշտութիւն, ազնուութիւն և այլն: Այստեղ ամեն ինչ կախուած է հետազոտողի տեսակէտից, և մինչև իսկ արդէն գոյութիւն ունեցող փաստերը յակամայից կըլսաբանուին այս անձնական հայեացքից՝ եթէ, կրկնում եմ, հետազոտողը չզիտանայ հեգապոս-իւնեան ոճը, պարսպապատ-ած չլինի նիւթեր հաւաքելու: Թեև ևս հարցնող լինի, թէ ինչ գիտութիւն է պէտք, հաւաքելու համար, օրինակ, ժողովրդական հէքեաթներ, ասացուածներ, առասպելներ, սովորութիւններ և այլն — ինչ որ տեսնես կամ լսես՝ գրիր, պրծաւ գնաց: Բայց այս դէպքերում ևս անշուշտ հարկաւոր է ունենալ մեծ վարժութիւն և փորձառութիւն:

Նս այսպէս եմ հասկանում Պ. Խալաթեանցի միտքը, թէ էթնոգրաֆիական նիւթեր հաւաքելու և ընդհանրապէս ինքնուսումնասիրութեան համար հարկաւոր է, որ գործի ձեռնարկէին մասնագէտ, բարձրագոյն ուսում ստացած մարդիկ, որոնք պակաս չեն մեզանում: սա շատ ցանկալի և կարևոր է. բայց թէ որովհետև յոյս չկայ որ շուտով այս իրագործուի՝ մինչև այն ժամանակ պէտք է օգնել գոնէ նոցա, որոնք աշխատում են այս նպատակով, տալ նոցա ծրագիր, նիւթերը հաւաքել մի տեղ և այլն: Այստեղ երևում է անդատութիւն հարկի առաջ. բայց ես կարծում եմ, որ գիտական խնդիրներում զեջում տեղի պէտք է չունենայ\*): Ինչ թուում է, թէ ներկայ ժամանակը բոլորովին յարմար է կազմակերպելու՝ ժողովրդական կեանքի նիւթերի բազմակողմանի հաւաքումը, և գիտական ինքնուսումնասիրութեան գործը հաստատ հիմքի վերայ դնելու եւրոպացի ազգերի օրինակին համաձայն: Սորա համար պատրաստ կան բոլոր հարկաւոր միջոցները: Մենք ունինք բարձր ուսում ստացած բաւական մարդիկ, սոցանից

\*) Ի նկատի առած մեր արդի գրութիւնը, մեր յարգելի աշխատակցի այս հայեացքը մենք շատ խիստ ենք գոնում: Ըստ որում, մեր կարծիքով, այս գործին ձեռնարկելու են անշուշտ այնպիսի ուսուցիչներ, որոնք ձեռնարկելի գործի վերայ փոքր ի շատե գաղափար ունեն, և մենք կարծում ենք, որ մեզանում գիտութեան այսպիսի մտաւոր աղքատութեան մէջ, գիտական հետազոտութեան ճիւղում անգամ նոցա գործունէութիւնը եւ կարող է փոքր ի շատ է լաւ արդիւնք ունենալ:

քիչ չեն նոցա, որոնք ապրելով Պետերբուրգում և Մոսկուայում, կարող էին օգտակար լինել այս կազմակերպութիւնը իրադրութեւում (անմիջական յարաբերութիւն ունենալով կամ զիտամբ յարաբերութեան մանկելով տեղական աշխարհագրական, էթնոգրաֆիական անթրոպոլոգիական ընկերութեանց հետ)։ չեմ յիշում զեռ նոցա, որոնք որեւէ պատճառով չեն կամենում կամ չեն կարող սկզբնապատճառ լինել այսպիսի դործի, բայց երբ դործն արդէն կազմակերպուած է՝ ուրախութեամբ կմասնակցէին նորան։ Ուրեմն այս դործն իրադրութեւում համար պակասում է միայն սկզբնապատճառ։ Թերեւս և հարկաւոր չէ առանձին ընկերութիւն հիմնել մեզանում, բայց աւելի լաւ կլինէր միանալ արդէն գոյութիւն ունեցողներին հետ։ Եւ հարկէ այս անել կարող է մեզանից իւրաքանչիւրը, բայց աւելի ցանկալի է, որ մենք մեր ընդհանուր ոյժով ձեռնարկէինք այս դործին, որ այս աշխատութիւնը կազմակերպուէր մեր շրջանում, ապա թէ ոչ առանց մեզ ուրիշներն սկսում են անել այն, ինչ որ մենք վաղուց պէտք է արած լինէինք։

Բայց ի՞նչպէս պէտք է իրադրուէլ այս։ Սորա համար հարկաւոր են նախ՝ դործին անձնատուր մարդիկ, և երկրորդ՝ փող։ Ի՞նչպէս պէտք է միաւորել այսպիսի մարդոց, եթէ կան, ի՞նչպէս գտնել փողը, թերեւս և ուրիշ պայմաններ, որոնք կարեւոր կլինին հայ ժողովրդի ուսումնասիրութեան ընկերութիւնը կազմակերպելու համար։—Այս հարցմունքներին երևի շատ պատասխաններ կգտնուին։

Հետաքրքրական է, թէ ի՞նչ են ասում այս մասին թերահաւատները։ Սոցանից ոմանք ասում են. «մարդ տուէք, փողը կգտնուի»։ Իսկ միւսներն ընդ հակառակը, թէ «փող տուէք, մարդիկ կգտնուին»։ Հարկաւ խնդիրն ինքն ըստ ինքեան կլուծուէր, եթէ սոցանից իւրաքանչիւրը տար այն, ինչ որ ինքը խոստանում էր գտնել։—Աս թէպէտ միտք չունիմ այստեղ առաջարկելու այսպիսի մի ընկերութեան կազմակերպութեան լիակատար ծրագիրը՝ բայց անհրաժեշտ եմ համարում յայտնել մասնաւոր կարծիքս, թէ ի՞նչպէս պէտք է ձեռնարկել այս նպատակն իրադրութեւում։ Նախ և յառաջ հարկաւոր է, որ մի քանի, հէնց զոնէ 4—5 մարդ, որոնք յիշեալ կազ-



մակերպութեան կարեւորութիւնն և անհրաժեշտութիւնը զգացել են՝ միանային մի աւելի Հեղինակաւոր անձի, օրինակ Վ. Պատկանեանի, կամ նոյն ինքն Պ. Խալաթեանցի շուրջը. հարկ չկայ, որ նոքա անշուշտ միւսնոյն քաղաքում տպրին— նոքա կարող են պայմանեալ ժամանակներում հաւաքուիլ միասին, կամ զրաւոր հաղորդակցութիւն ունենալ: Այս խումբը պիտի խմբադրէ ապագայ ընկերութեան ծրագիրը, պէտք է աշխատի նորա կանոնադրութիւնը հաստատել տալու, անդամներ դնելու, եկամուտի աղբիւրներ վնասելու՝ ընկերութեան համար ևայլն ևայլն: Պործի ամենալթուար մասն, հարկաւ, այս խմբակի վերայ կրնին, բայց նա անտարակոյս, թերեւ և ուշ սակայն կհասնի իւր նպատակին, որովհետեւ հասարակութեան կողմից նա կգտնէ համակութիւն խօսքով ու գործով: Այս խմբակի պարտաւորութիւնը կլինի նոյնպէս մամուլի միջոցաւ արծարծել այս ընկերութեան համը կազմող զազաւարներն և նպատակները, թերեւ նա կարողանայ և հրատարակել հայերէն լեզուով ժողովրդականացրած քաղաքացիներ և գիտական հետազոտութիւններ՝ անթրոպոլոգիայի և լեզուաբանութեան ճիւղերում արդէն եղած փաստերի մասին, որպէս զի այս խնդիրներին ծանօթ չեղողները զործնականապէս համոզուէին նմանօրինակ հետազոտութեանց կարելիութեան: Այս կերպով կարելի է հետաքրքրել և երիտասարդութիւնը, որի մէջից թերեւ շատերը կամենային այս առարկաներն իրանց մասնագիտութիւն անել: Արբ գործը կազմակերպուի՝ ընկերութիւնն հաւանօրէն միջոց կունենայ նոցա օգնելու իրանց նպատակն իրագործելու, նոցա կրթելու համապատասխան փարժոցներում (ինչպէս է, օրինակի համար հնաբանական ճեմարանը Պետերբուրգում) կամ յուղարկելու արտասահմանի համալսարաններն և աշխատանոցները (лабораторія). փող ունենալուց յետոյ հարկաւ կարելի կլինի ընկերութեան անդամներին յուղարկել այլ և այլ գաւառներ որոշեալ ծրագիրներով, ժողովրդական կեանքի այս կամ այն կողմերն ուսումնասիրելու համար: Մէկ խօսքով, այս նիւթին վերաբերութեանմբ կարելի է «ազատ երեւակայել» և «օգային ամրոյցներ» շինել. բայց եթէ ճիշտ է խիստ շատերի նկատողութիւնը, թէ մեր ինքնաճանաչութիւնը սկսում է զարթիլ՝ բոլորովին

բնական է, որ նախ և յառաջ ծնի մեր մէջ ցանկութիւն մեզ ինքներիս ճանաչելու. ամեն խօսք երեակայութիւն է, մինչև որ զործի փոխուի. բայց յաճախ՝ սկսուած զործն այնպիսի իրական հետեանքների է հասցնում, որոնք չէր համարձակում զուշակել նոյն իսկ երեակայութիւնը:

Իմ կարծածից աւելի երկար դուրս եկաւ այս նամակս: Եւ որպէս զի «Արաքսում» աւելի շատ տեղ չբռնեմ» չեմ կարող աւելի ընդարձակօրէն խօսիլ այս խնդրի զործնական մասին վերայ: Ուրիշ անգամ, յարմար առիթով, թերևս մասնաւորապէս խօսիմ խնդրի այս վերջի կէտին վերայ: Եւրաքանչիւրը, ով որ հետաքրքրվում է Խ. Խալաթեանցի յարուցած խնդիրներով՝ թող յայտնէ իւր կարծիքները. որչափ շատ մտաքեր արտայայտուին՝ այնքան լաւ: Հող չէ, եթէ այս կարծիքներից իւրաքանչիւրը ճշմարտութիւն չեն արտայայտի. ճշմարտութիւնը շատ տեղամ ծագում է մտքի հակառակ և ընդդիմական ընթացքներից:



## ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Այստեղ դնում ենք հանգուցեալ նշանաւոր վիպասան Յովսէփ Եփմանեանի (Ծերենցի) նամակը, որը նա մահից առաջ դրած է մեզ սակայն անողորմ մահի հաւրուածի տակ, անկարող է եղել վերջացնել, և որը մենք մեծ շնորհակալութեամբ ստացանք հանգուցեալի փեսայ Պ. Աղեքսանդր Մելիք Ազարեանցից:

Յարգելով հանգուցեալի յիշատակը, տպագրում ենք այստեղ այս, թերևս նորա վերջին տողերը նշխարութեամբ:

Եւ Պ. Վառլամիրեանց

Խմբագիր «Արաքս» հանդիսի

Աիմանալով թէ սկսած էք հրատարակութիւն մը Ս. Բեդրպուրգ և կը փափաքիմ յաջողութիւն ձեր աշխատութեանց մանաւանդ օգտակարութիւն ազգերնուդ համար որովհետև այդ օրագրութեանց և լրագրութեանց հանդիսից շաբաթաթերթից բարիլոնին մէջ խմբագրաց եթէ հարցնենք թէ ինչ նպատակի համար և ինչ սկզբանց վրայ է իւրեանց հրատարակութիւնը հաւանական

Թէ շատերը շփոթին և չկարենան պատասխանել, միայն ոմանք պիտի պատասխանեն Թէ մեր պաշտօնն է մտրակել ~~հմարակել~~ <sup>հմարակել</sup><sup>1)</sup> ամենայն ինչ որ կայ հայ ազգին մէջ և այդ կործանմանց և աւերակաց վրայ կանգնել նոր և փառաւոր շէնքը որ մենք կ'երևակայենք արդար և ուղիղ. մենք վերանորոգիչք ենք բարոյականի որովհետև մոլորութիւնք մարդկային ընկերութեան անհանգուրժելի են մեր առաքինասիրութեան. քանի քանի տարիներ են որ մենք գրչով և մեր կենաց օրինակաւ կ'աշխատինք այս ազգը բարոյականացնել իրեն ամեն առաւօտ քարոզելով Թէ նախապաշարմունքներն պէտք է թօթափել վտարել. բայց մեր այսչափ տարիներու ջանքը անօգուտ եղաւ. ասացինք ամեն դասու մարդկանց և մեզ չ'լսեցին, ոչ քաղաք ոչ գիւղ ականջ չունեցան մեր անշահասէր ձայնը լսելու և կը շարունակեն մուծ նախապաշարմանց տղմին մէջ լողալու. նոր սերունդը տողորեալ հին գաղափարներով չի կրցաւ հասկնալ Թէ նախ հայրենի տնէն սկսելու է վերանորոգել. հրէական ծթած գաղափարք դեռ կը տիրեն ամեն հայ տանց մէջ. որդին դեռ չի կրցաւ իմանալ Թէ ծեր պառաւ ծնողաց հնազանդութիւն յիմարութիւն մի է անարժան ազատամրտութեան և ժամանակիս լուսաւոր...

## ԼՐԱԳՐԱՅ ՇՈՒՐՋԸ

«Երևելք» 10 մարտ թուահամարաւ թերթի մէջ հաղորդում է, որ խմբագրութիւնը Տիգրանակերտից և Երզնիից ստացած է երկու նամակներ, որոնք դառնապէս գանդատվում են Երզնիի Բարձրահայեաց Ս. Եստուածածնի վանուց վահանայր Փափաղեան հովհաննէս վարդապետի յուր վարչութեան դէմ:

Եւրոպականներից երևում է, որ վերոյիշեալ վանահայրը երեսի վերայ թողած աղգային գործերը, իր մասնաւոր շահերի վերայ է դարձրած բոլոր մտահոգութիւնն և ջանքը: Իրերի այս տրտուր կացութեան պատճառաւ, ոմանք սկսած են պապականութեան գիմել, և որոնք մինչև անգամ իրենց նոսրաները զատում են կառավարութեան տուժարից:

«Մենաստաններն եկեղեցականաց ոմանց ըղձից և հաճոյից համար կառուցեալ են Թէ յօգուտ և ի վերաշինութիւն ազգին» դառնութեամբ գոչում է Երզնիի զգացեալ նամակագիրը:

1) Ծանօթութիւն:—Ռեպրուկ նօտր:



«Արևելք»ի 1271 թուահամարի մէջ Սուշի թղթակիցը խիստ տխուր գոյներով է նկարագրում Տարօնի վանքերն, որոնք հայրենիքի նուիրական հողին վերայ փռուած, հնումը հայ ժողովրդի յոյսն ու լոյսն, նորա շնորհն ու մխիթարութիւնն էին, սակայն այժմ այդ սրբազան վայրերը տխուր պատկեր և մեղամաղձիկ տեսարան են ներկայացնում իրենց աննախանձելի և միանգամայն անկեալ կացութիւնովը: Այսպիսի վիճակի մէջ է և Սասունի Գոմաց կամ Առաքելոց անուամբ վանքը:

«Այս վանքի վանահայրութիւնը, գրում է «Արևելք»ի թղթակիցը, ժառանգական է մի գերդաստանի ձեռքում: Վանահայրը անպատճառ իրենց տնէն պէտք է լինի, եթէ ոչ, արեւ ու լոյս չկրնար տեսնել»:

«Վանահայր կամ տնահայրն է Պետրոս վարդապետ. անունը լսեր ենք, բայց երեսը ո՞վ կը տեսնէ:

Էր մուգաթան կուտայ Սանոյ Բիւրդ աղաներուն, զի ինչպէս Սիմ Լեւան բռնակիչ ամէն Հայ, նոյնպէս տեղւոյն ազգային հաստատութիւնք ևս ունին իրենց աղաներն, որոց կուտան իսպիւրութիւն անուամբ տուրք մը, և ի հարկին խաֆիւրութիւն տուողները կրնան ծախուիլ ու առնուիլ:

«Չնայելով թէ՛ Սանոյ Հայք կը պահեն իրենց նախնական կորովն և իրենց պարթև ու առողջ կազմուածքին հետ՝ ունին առնական քաջատրուութիւն, մտաւորական վիճակին երիցս արգահատելի է:

«Ափ մը կորեկ, հատիկ մ'ընկուզի, և ճութ մը խաղողի՝ այս է իրենց օրապահիկն, և այս պէտք է լինի քարոքածներու մէջ ապրող և հազար ու մէկ յիշատակներով անոնց փակուող ժողովրդի կեանքը: Տակաւին կրօնասէր ու ջերմեռանդ են իրենց հարց հաւատին ու Լուսաւորչի կրօնքին աչաց լոյս չ'իմացող, և աւեր ժամին ու մատուռին, աւանդական, այլ նուիրական համարուած շիրմանց ու սրբութեանց հոգի տուող, կեանք պարգևող:

«Ո՛վ է սակայն, որ քարոզէ իրենց, և քաջալերէ պիւրնք կրօնքի համար, հաւատի կամար, Պետրոս վարդապետ մը, որ աւելի ստոր է և տկար քան զանոնք իր կարգով ու վարքով, իր խօսուածքով ու ընթացքով:

«Վանոնաւոր յարաբերութիւն չկայ ոչ կեդրոնի և ոչ առաջնորդարանի հետ»:

Ահա, ինչո՞ւ յաջողութիւն են գտնում զանազան ազգերի մարդորսները մեր մէջ:

Պ. Պ. Թուրքիին և <sup>9</sup>Վալէճիօ յաջողած են որոշ պայմաններով իրենց ձեռքն անցնել Արդնիի պղնձի հանքերի շահագործումն, շահագործման պայմանաժամը նշանակուած է յիսուն տարի:

Ահա դարձեալ եւրոպացիներ, որոնք շարունակ փոքր Ասիոյ հանքերը իրենց ձեռքն անցնելով՝ մի ժամանակից յետոյ երկրի բնական հարստութիւնների միակ տէրն են դառնալու ի վնաս բնիկ ժողովրդի և տէրութեան շահերի:

Սերոնք, փոխանակ սոցա օրինակին հետեւելով միանալու և ձեռք զարնելու երկրի բնական հարստութեանց շահագործմանը, սորա հակառակ շարունակ իրար միս են ուտում և տուն քանդում, որ և է ժողովի անդամ ընտրուելու համար, և կրօնական մի կարգ վէճերով մշտական խռովութիւնների դուռ են բանում:

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ համբաւաւոր հայազգի նկարիչ Յովհաննէս Ալազուլսկին, այս ամառը Թէոդոսիայում նկարելու է Արարատ լեռը:

1880-ին Հայաստանի մէջ տիրած սովին՝ ըստ եւրոպական վիճակագրութեան Աղբակի մէջ մեռած են 150 անձինք, Վանի մէջ 400, որոնցից 100-ը երիտասարդ և 300-ը մանուկներ են:

Վրո-Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդական փոխարորդ արժ. Խաչատուր վարդապետ Արապետեան ցանկութիւն ունի իր հայրենիքում, Ջուղայի մէջ հաստատել մի բարձրագոյն հայկական ուսումնարան:

Այս ուսումնարանի ձեռնարկութեան համար, արժ. վարդապետը նուիրում է իբրեւ զրամագլուխ իր պատրաստի ունեցած 400 օսմ. ոսկին և մի գիւղ Չիգրա անունով, Ջուղայից 24 ժամ հեռու, որ արժէ մօտ 1000 ոսկի և որը տարեկան տալիս է 150 օսմ. ոսկի:

Ուսումնարանի գործը յառաջ տանելու համար ընտրուած է արդէն մի հոգաբարձութիւն հինգ անդամներից:

Բացի իր նուիրած գումարից, արժ. Խաչատուր վարդապետը Հնդկաստանի, Իիրմանիայի հայերից հանգանակել է մօտաւորապէս 1200 ոսկի, որը աւելացնելով արժ. հոգեւորականի նուիրած 1400 ոսկու վերայ կանէ 2600 օսմ. ոսկի: Այս գումարը կազմում է հաստատութեան ուսումնարանի զրամագլուխը, և ինչպէս երևում է կարող է 300 ոսկի եկամուտ բերի տարին:

Բաղաւիայի հայերը բացի հանգանակութեանը մասնակցելուց, խոստացել են իրենց ազգային ժողովի միջոցով ամեն տարի կանոնաւոր նպաստ ևս տան ուսումնարանի պահպանման համար, որպիսի նպաստ հայթայթելու են և Ջուղայեցիները: Այժմ պատրաստութիւններ են տեսնվում ուսումնարանի բացման համար, որի շէնքն արդէն պատրաստ է:

Փառք և պատիւ Հայաստանեայց եկեղեցւոյ այսպիսի արժանաւոր հոգեւորականներին: Ի բոլոր սրտէ ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն այս գործին, մանաւանդ որ ուսումնարանը բացվում է այնպիսի մի հայաբնակ քաղաքում, ուր դորա պակասութիւն խիստ զգալի է:

Ալիլիկիոյ մէջ, տեղացի բուն հայերը, մտադրութիւն ունին կրօնական նպատակով, Առաւորչեան անունով մի ընկերութիւն

կազմելու: Այս ընկերութեան գլխաւոր նպատակն է պաշտպանել ազգային ուղղափառ եկեղեցին հռովմէականութեան, բողոքականութեան և այլ զանազան աղանդների դէմ: այս ուղղութեամբ գործելու համար, Առաւելագոյն ընկերութիւնը պատրաստելու է քարոզիչներ և ուսուցիչներ, Այնթապում հիմնելի բարձրագոյն վարժարանում, որոնց ուղարկելու է երկրի զանազան կողմերը, քաղաք, գիւղ, մի կողմից միսիոնարների ջանքերը չէզոքացնելու համար, իսկ միւս կողմից վառ պահել հայ մարդի մէջ իր նուիրական սուրբ ուղղափառ կրօնը: Այս ընկերութիւնը տպագրելու է և գրքեր, որոնք կցրուին զանազան կողմեր:

Խմանում ենք, որ տաճիկ կառավարութիւնը պատրիարքական Եփեսոսի վերայ արգելում է այսուհետեւ թափառաշրջիկ հայերին Ամերիկա գաղթելը:

Եգիպտոսի հայերից մեծահարուստ Աշղեան Յակոբ էֆէնտին մեռնելով, հետեւեալ ազգաշահ կտակն է արած:

Այս կտակի համաձայն բարեյիշատակ Աշղեան Յակոբ էֆէնտին իր կալուածներից Աղեքսանդրիա քաղաքի մէջ թողած է եօթը կտոր ստացուածքներ, որոնց տարեկան հասոթը տաճկական փողով հասնում է 2500-ից մինչև 3000 ոսկու: Կալուածներից ամեն տարի այս ստացած հասոյթը 100 մասի է բաժանած, որից 58 մասը կտակած է ազգային այլ և այլ հաստատութիւնների, իսկ 42 մասը մասնաւոր անձինքների:

Այս կտակի գործադրութիւնը միանգամայն ապահովեալ է, շնորհիւ կանխօրէն ձեռք առած պաշտօնական զօրաւոր միջոցների:

Տաճկական կառավարութիւնը մտադիր է յաջող պայմաններով անգղիական մի ընկերութեան արտօնութիւն տալու, երկաթուղու նոր գծեր հիմնելու փոքր Ասիոյ մէջ:

Տաճկական կառավարութիւնը մտադիր է մօտերս կայսերական անձնական գանձի նախարարութեան հովանաւորութեան ներքեւ Համիդէ անունով մի ընկերութիւն կազմել, որի նպատակն է լինելու նաւային կանոնաւոր երթևեկութիւն հաստատել Ափրատ և Տիգրիս գետերի վերայ: Այս ընկերութիւնը կազմուելու է երկրի տեղական գրամագլխոց միջոցով և իր մասնաճիւղերն ունենալու է Պաղատ, Պասրա և Սուսու: Համիդէ ընկերութիւնը կամենալով շօշափելի զարկ տալ փոքր Ասիայի այդ գաւառների վաճառականութեան զարգացմանը աշխատելու է կարողացածին չափ ընդարձակել նաւային այս երթևեկութիւնը:



Յայտնի է, որ Տաճկաստան իր հպատակ քրիստոնեայ ժողովրդից զինուոր չէ վերցնում. այլ սորա փոխարէն հին ժամանակներից սկսած մարդագլուխ տուրք է առնում: Այժմ կառավարութիւնը նշանակուած տուրքի մէկ երրորդ մասի յաւելում է արած. մինչ վերջերս մարդագլուխ միջին հաշուով առնում էր 27 ղուրուշ զինուորական տուրք. այն ինչ այժմ, մէկ երրորդ մասի յաւելումով, այս տուրքը բարձրանում է 36 ղուրուշի կամ քիչ ակելի: Խացի զինուորական տուրքից աւելացած է նաև զանազան արհեստավորներից և խանութպաններից առնուած թէմէթթիւի տուրքը որ 100-ին 5 ղուրուշ բարձրացած է:

Վերջապէս կալուածական տուրքի վերայ ևս մէկ չորրորդի յաւելում է արած, որը ծանրանալու է գլխավորապէս միջին և աղքատ դասակարգի գիւղացիների վերայ: Այնչէս այժմ 20,000 ղուրուշից նուազ արժէք ունեցող կալուածների տուրքը, որ 100 ին կառավարութիւնը 4 ղուրուշ էր առնում, այժմ բարձրացած է 5-ի:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՆՈՐ ԴԱՐ», քաղաքական-գրականական ամենօրեայ թերթի տարեկան գինն է 10 ռուբլի, վեց ամսուան՝ 6 ռուբլի: Ըրտասահմանի բաժանորդները վճարում են 30 ֆրանկ. Զապէն. Тифлисъ, въ редакцію ежедневной газеты «Норъ-Даръ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

«ՄՇԱԿ» գրականական և քաղաքական լրագիր «Աշակի» տարեկան գինն է 10 ռուբլի, վեց ամսուանը 6 ռուբլի: Զապէն. Тифлисъ. Редакция газеты «Мшакъ», կամ Tiflis. Redaction du journal «Mschak».

Խմբագիր հրատարակիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍՐԾՐՈՒՆԻ

«ԱԳՐԻՐ», միամսեայ պատկերազարդ հանգէս երեխաների և դաստիարակների համար: «Աղբիւրի» բաժանորդագինը 3 ռ. է. Զապէն. Тифлисъ, редакция «Агбюръ» կամ Tiflis, Rédaction du journal «Agbur».

Խմբագիր հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

«ՀԱՆԳԻՍ ԱՄՍՈՐԵԱՑ» բարոյական, ուսումնական, արուեստագիտական. բաժանորդագինն է՝ տարեկան 4 ռուբլի կանխիկ. վեցամսեայ՝ 2 ռուբ. 50 կոպ. Իւրաքանչիւր թիւ կարժէ 50 կոպ. Զապէն. A la Rédaction de la Revue «Hantess». Au Couvent des RR. PP. Mechitaristes. A Vienne (Autriche). VII Mechitharistengasse, 4.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 іюня 1888 года.

Типографія И. К. Скороходова (Надеждинская, 39).

